Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8857

281.64
4-47

04 NOV 20

98 Գեորգեան
Դ-97

ՀՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՉԻ ՄԵՌՆՈՒՄ

«Արդ, զի՞ Թշնամի լիցի եղկ, հեզ, զի զասոյգն խոսեցայ» (Գաղ. Դ. 16)։

ԳՐԵՑ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻՈՒՐԱՆ

Բարդուղիմէոս եպիսկոպոս Գէորգեան (Ճուղուրեանց)

Վ. ազարշապատցի

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Ա. Մ. Մալխասեանցի.
1906

281.62
Գ-97
309
1385-ՀՈՒ

ՀՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՀԻ ՄԵՌՆՈՒՄ

«Արդ, զի՞ թշնամի լիցի եղէ հեզ, զի զսուտսն խօսեցայ» (Գաղ. Դ. 16)։

11863

ԳՐԵՑ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆ
Բարդուղիմէոս եպիսկոպոս Գէորգեան (Ճուղուրեանց)
Վաղարշապատցի

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Ա. Մ. Մալխասեանցի
1906

16.03.2013

8857

ՀԱՅԿԱԶՍՏԱՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Ճշմարտութիւնը չի մեռնում.—այս են սովորեցնում աշխարհի փորձերը եւ պատմութիւնը: Ոչ ոք այնման թշնամի չունի, ոչինչ այնպէս անտանելի չէ՝ ինչպէս ճշմարտութիւնը: Նորա դէմ ատամներ են կրճտեցնում, նորա կռնդ գլխին թոռնիցներ են տեղում չորս կողմից. նորան հալածում են, նորան քարկոծում—նահատակում են, նորան այրում խորովում են Արիմնի արքաներակները, սակայն նա ոչ մի անգամ չի մեռնում. ընդհակառակն՝ միշտ յաղթանակում—նոռանում է՝ իբրեւ յաւիտենական անողոք տիտան: Դա բարոյ եւ չարի, լոյսի եւ խաւարի կռիւն է: Ցիմար զոհեր են մեծողները՝ որ աշխատում են խափանել ճշգի լոյսը: Իսկ ճշմարտութեան առանց մի այսպիսի թագուն զօրութեան, ընդհանուր լիռմն պիտի տիրէր եւ խափանուէր իսկ մարդկութեանը կատարելութեան տանող ուղին:

Հերը ճշմարտութեանն է, եւ մերկ ճշմարտութիւնն է՝ որ պիտի խօսէ, ապտակէ եւ սեռէ ստութեան երեսները: Սա չառարտուած մի մարտիրոսազրութիւն է: Եւ թէպէտ իմ անձի եւ պատուոյ պաշտպանութեան համար եմ գրել, սակայն պատմուած դէպքերը հետաքրքիր են, խրատական եւ արժանի ուշադրութեան:

Ընթերցող, երբ իմ այս ու այն խօսքը կամ բառը ձեզ դիւր չգայ, չը շտապէք դատաստան կտրել նախ քան գրքիս մինչեւ վերջին տողին հասնելը: Կոպտութեամբ շօշափուած վերքը կսկծում է եւ բորբոքում, իսկ վիրաւորը—ճչում: Այդպէս պատահեց ինձ հետ, երբ Մխիթարեանց Բազմավէպն էլ անքարոյականացաւ:

Բարդուղիմէոս Եպիսկոպոս Գէորգեան (Ճուղուրեանց)
Վաղարշապատցի.

17 Յուլիսի 1906 թ.
Ի Ս. Էջմիածին:

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՀԻ ՄԵՒՆՈՒՄ

Ա.

«Արդ, զի՞ Ընչամբ ինձ եղեալ չէր զի զպարտեսցէ ինձ» (Գաղ. Դ. 16)։

Անցած 1902 թուին լոյս տեսած իմ գրքի—«խորհնացուն խորհնացով պէտք է հասկանալ» երկրորդ հատոր—Յառաջաբանիս մէջ, էջ ԺԷ—ԻԳ, ակամայ պատասխանել էի «Լումայ» վեցամսեայ հանդիսի խմբագիր Գիւտ ք. Աղանեանցին՝ նորա թոյլ տուած մի անտեղի և չարամիտ զրպարտութիւն առթիւ։ Իմ իրաւացի պատասխանը թէպէտ տեղին, բայց խիստ էր նորան շշմեցնելու չափ, խիստ էր՝ որովհետև նա երկրորդ անգամ պնդերեսութիւն ունեցաւ փախուստ տալով պահանջուած բացատրութիւնից՝ կրկնել նոյն անհիմն և անտեղի զրպարտութիւնը, բացարձակ ստութեամբ դարձեալ մոլորեցնելով Լումայի ընթերցողներին՝ ասելով. «տես էջ 71, ծան. տող 7, ներքևից»։ Մինչ 71 էջում, և ոչ ամբողջ գրքում, չկայ ոչինչ՝ որ վկայ կամ ապացոյց լինէր Բարդուղիմէոս վարդապետի «անխղճութեան» կամ «շահասիրութեան»...

Լումայի 1903 թ. Յունվար—Փետրվարի № 1 գրքի մէջ, եր. 267—274, Գիւտ ք. իմ հասցէին մի պատասխան գրեց։ Այդտեղ նա արդէն լռելեայն յանձն է առնում որ Լուման արդարև փորձել է զրպարտել Բարդուղիմէոս վարդապետին.

բայց և ճիգն է թափում մի կերպ արդարացնել խմբագրին— իրեն՝ յանցանքը ամբողջովին ձգելով արդէն մեռած իւր աշխատակից Արշակ Տէր-Միքէլեանի վերայ։ Նորա խօսքերին նայելով՝ իբր թէ խմբագիրը, մանաւանդ Լումայի խմբագիրը մի դռնապանի չափ էլ պարտաւորութիւն կամ պատասխանատուութիւն չունի՝ հաշիւ բռնելու թէ ո՞վ կամ ինչ ներս մտաւ կամ դուրս ելաւ։

Միանգամայն աւելորդ եմ համարում պատասխանել տ. Գիւտին թէ այն մասում որ «պարդիս» ջանք է անում արդարանալ, և՛ թէ այն մասում որ փաստերը դարձեալ յեղաշրջելով տքնում է մեղադրել ինձ՝ որպէս թէ զրպարտում եմ իրեն կամ անարդար վարւում. նախորդ գրածս արդէն շատ է, և Գիւտ ք. արդարանալ երբէ՛ء չի կարող և ոչ մի կէտում։

Կարիք չկայ աւելի կանգ առնելու տ. Գիւտի իմ մասին արած բարբանջմունքների վերայ։ Նա որ առաջ իմ մասին հրատարակել էր թէ «ինքնաշխատութեամբ յառաջադիմել է», այժմ գրում է թէ՝ «ողջ ժամանակը բամբասանքի է նուիրած»։— Ողջ ժամանակը բամբասանքի նուիրել և մի և նոյն ժամանակ ինքնաշխատութեամբ յառաջադիմել։ Ինչպէս և Լումայի այն առաջին յօդուածի մէջ գրել էին թէ Բարդուղիմէոս վարդապետը «գիտէ անշարժ պահել ճշմարտութիւնը ամեն քննադատութեան առաջ, սակայն... շահի և խղճի տեսակէտով»։— Ճշմարտասէր՝ մի և նոյն ժամանակ անխիղճ կամ շահասէր։ Կեղտով սնուած ուղեղները դորանից առողջ լոգիկայի անընդունակ են ի հարկէ։ Այլև գրել է թէ՝ պաշտօն չեմ յանձնառնում. թէ՝ իւր (տ. Գիւտի) ջանքերով կտակուած փողերը «Ս. Ճուղուրեանցի նմանները, —կարծեմ թէ իւր նմանը միայն ինքն է,— 30 և աւելի տարիներ պարապ նստած վայելում են»։— Ա՞յն փողերը, որով Հայոց Եկեղեցու օրէնքները շահագործւում են։ Ո՞չ. դա Յուդայի արծաթն է և Էջմիածինը, ինչպէս ես, բնաւ մասն չունի դորանից։

Պարապ նոյնպէս և բամբասասէր մարդը դատարկաշրջիկ կը լինի, ծակամուտ կը լինի, կը թափառի այլոց դռներում. սակայն փաստ է որ Վեհարանը և մեր Միաբանութիւնը ինձնից տրտնջում են՝ որ ես փոխադարձ այցելութիւն ևս չեմ գնում։—Պաշտօնները չէ՞ որ իբրև շնորհ են բաժանւում՝ խլխլուելով միմեանցից, և ո՞վ ինչ պաշտօն ցանկանում է։ Կազմուել է արդէն մի կարրիէրիստ և արծաթի ծարաւ Լուչէ՛ء Միաբանութիւն։ Եւ միթէ Գիւտ ք. կարող էր անտեղեակ լինել, որ մեր Վեհ. Հայրապետը այնքան բարի է՝ որ ուրիշ կերպ պատժած չունի իւր միաբաններից և ոչ մէկին, բացի անպաշտօն թողնելը...։ Որպէս զի ես պաշտօն ընդունեմ, արժան էր որ Ում անկ է՝ նախ իմ պատիւը և անհատականութիւնը փրկէ, գո՛նէ ինձ թոյլատրէր արդարադատութեան դիմել և փրկել. սակայն այս ևս ինձ զլացան։ Որ իմ փրկութիւնը ցանկալի չէ և վախեցնում է հէնց տ. Գիւտի բարեկամներին՝ յայտնուած է վաղուց, կարդացէք 1895 թ. Յունիսին Պետերբուրգից իշ. Կ. Բէհբութեանի՝ Յովհաննէս Յովհաննիսեանին գրած նամակը.—

«Բարդուղիմէոս վարդապետի դատը չբացինք, որովհետև նա չհամաձայնեց Երեմիայի, Սեդրակեանի և Կանչելու՝ Սինոդում կատարած զեղծումների մասին բողոք տալ Ն. Գ. Մինիստրին, որից պէտք է հեռացնել՝ որ նա ապագայում Սեդրակեանի հետ հաշտուելու միտք ունի»։

Յայտնի է որ Վեհ. Կաթուղիկոսը 1894 թ. իմ խնդրագրի (ի 17 Դեկտ. 1894 ամի) համաձայն ինձ տարաւ Պետերբուրգ, որպէս զի իմ բողոքին գոհացումն տրուէր այնտեղ, սակայն ինձ առաջարկուած այդ ստոր պայմանը յանձն չառնուլս արգելք դարձաւ։ Ի վերայ այսր ամենայնի, պարապ չեմ նստած, միայն թէ շահաւէտ պաշտօններից եմ զրկուած, այն էլ ի վնաս իմ՝ ինչպէս ասացի։ Տանում եմ և բազմադիմի վիրաւորանքներ, զրկանքներ և վշտեր՝ անմռունչ։

Բայց կարող են արդեօք տ. Գիւտերը հասկանալ՝ որ ծառայութեան չափը կամ արժէքը ոռոշի մէջ չէ, այլ ոլոշի։

Ունիմ մատուցած բացի սովորականից միշտ բարձր գնահատելի ծառայութիւններ, այլ և այնպիսի փրկչաբար ծառայութիւն՝ որ տ. Գիւտի և՛ Ծայրագոյն, և՛ Գերապատիւ, և՛ Բարեշնորհ, և՛ Իշխան, և՛ Իրաւաբան (Գ. Եւանգուլով) հանդերձ ընկ. փոքր ընկան։ Այդ իմ ծառայութեանը ոչ մի ծառայութիւն չի կարող զուգակշռել՝ երբ և ում և իցէ. դա մի յայտարարութիւն է ի 4 Դեկտ. 1894 ամի, հազիւ մի երես, սակայն հասկացողի համար՝ նորա իւրաքանչիւր մի բառն էլ թանկ արժէ տ. Գիւտի «Դիւանների» և Լումայի մի-մի գրքերից։ Տես յաւելուած Ա։

Եկեղեցական կալուածքների գրաւման առթիւ Միաբանութեան ժողովներում իմ մատուցած եզական ծառայութիւնները չեն մոռացուի։ Հարցը միջազգային դարձնելը գոնէ ում ենք պարտական։ Պոլսոժենիայի ձձէ յոդուածը,— մինչև այդ անհասկանալի և աննկատելի մնացածը,—երբ առաջին անգամ Յուլիս 30-ի (1903) ժողովում կարդացի և բացատրում էի Միաբանութեանը թէ՝ «Վաղարշապատի ծխ. եկեղեցու կայքը և կալուածքը այնպէս էն իրէն պատկանում, ինչպէս պատկանում էն Կալկաթայի, Դավրէժի, Գահիրէի հայ էֆէնդիներին, էֆենդարչին...», չկարողացան ըմբռնել. ապա Մխիթար վարդապետը կանգնեց և ասաց. «Այդ յոդուածը՝ այդ միտքը չունի... հրաւիրուած փաստաբանները վաղը կը գան՝ կը հարցնենք դորա մասին և կը տեսնէք։» Հարցրին...։ Ապա գրուեց թելադրուեց արտասահման, որ հիմնուեն այդ յոդուածի վերայ. և հիմնուեցին։ Չի մոռացուի և այն, որ եթէ գնացած լինէին իմ լաւ համարած ճանապարհով, այսքան չէինք տուժիլ, և պիտի տուժենք։

Սուտ չէ ասում Գիւտ ք. միայն այն՝ թէ «իւր նմանը միայն ինքն է». ես դորա տակ կը ստորագրեմ։ Չէի ցանկայ ուրիշի նմանը լինել։

Գիւտ ք. իմ յիշեալ գրքի մասին ևս ցանկացել է բան ասած լինել, նա գրել է. «Գրքոյկը չբացած՝ մենք սպասում էինք կարդալ թէ դեռ էլի ինչ անհեթեթ կարծիքներ պիտի լսենք մեր բազմաչարչար պատմագրի մասին։ Կամի ասել թէ անհեթեթութիւններ են գրածները։ Ստիպուած եմ յիշեցնել տ. Գիւտին և նման տգէտ նախանձոտներին. «Կոշկակարն ոչ ի վեր քան զկօշիկն»։ Եւ առհասարակ չար լեզուները բունը դնելու համար՝ առաջ եմ բերում պ. Մինաս Չերազի խմբագրութեամբ Փարիզում հրատարակուող Ֆրանսերէն ամսաթերթի գերազանց գնահատութիւնը և վկայութիւնը.—

„Mgr B. G. Djoughouriantz, membre de la congrégation d'Etchmiadzin, vient de publier à Tiflis le second volume de son ouvrage, intitulé: C'est par Moïse de Khoren qu'on doit interpréter Moïse de Khoren. Sans être un spécialiste, le savant évêque parvient à expliquer un grand nombre de passages de l'Histoire arménienns de Moïse de Khoren que d'éminents philologues arméniens et étrangers n'avaient pu déchiffrer jusqu'ici. Grâce à une étude consciencieuse du style de Moïse de Khoren, il a fait de véritables découvertes, guidé uniquement par sa pénétration d'esprit et une logique rigoureuse (L' Arménie, 1-er Mars 1903).—Սրբազան Բ. Գ. Ճուղուրեանց, անդամ Էջմիածնի Միաբանութեան, Տփղիսում հրատարակեց իւր շարադրութեան երկրորդ հատորը՝ անուանուած «Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ»։ Առանց մասնագէտ լինելու, գիտնական եպիսկոպոսը յաջողել է բացատրել Մովսէս Խորենացու Հայոց պատմութեան բազմաթիւ տեղերը՝ զորս հայ և օտարազգի հռչակաւոր ֆիլոլոգներ չէին կարողացած ցայսօր բացատրել։ Փառք այդպիսի մի բարեխիղճ ուսումնասիրութեան Մովսէս Խորենացու գրուածքի. նա արել է իսկական գիւտեր՝ առաջնորդուելով միմիայն իւր մտքի թափանցողութեամբ և ուժգին լոգիկայով» *)։

Այժմ երկու բան ևս ընթերցողի ուշադրութեան ընծայելուց յետոյ, կ'անցնեմ տ. Գիւտի պատասխանի վերջին

*) Մինաս Չերազը և Սուք. վ. Պարոնեանը Փարիզում ստացել են իմ գրքերը «Բանասէր»-ի խմբագիր Կ. Բասմաճեանից, վերջինիս հաստատով և մի ծրարով ուղարկած էի L'Arménie-ի այդ համարը ուղարկել են ինձ փակ նամակաբարով. այսօր ևս չգիտեմ թէ ո՞վ է ուղարկել։

մասին, որը ինքն ըստ ինքեան ոչ մի առնչութիւն չունէր գործի հետ, բայց որ Գիւտ ք. արժան է համարել կցել իւր պատասխանին։ Այդ երկու բանը. առաջինն այն է՝ որ Գիւտ ք. սխալ է ըմբռնել յիշեալ գրքիս Յառաջաբանի (էջ ԻԳ) մի պարբերութիւնը։ Թէպէտ Գիւտ ք. այն անուանում է «վարդապետական», սակայն նա իւր էութեան յատուկ և բոլորովին ի-րոպեսոկ միտք է դուրս բերել նորանից։ Այնտեղ պարզ գրուած է—«խեղճը աչքերը բացած օրից ճանաչել է... այդ պրոբի խղճով և անշահասէր մարդկանց» (Հայի Յակովբ և Մակար արքեպիսկոպոս, ապա Կաթուղիկոս)։ Խօսքը խղճի և անշահասիրութեան մասին է միայն, և այն թէ՝ մի որը անտէր տղայ՝ ինչպիսի մարդոց ձեռքերի տակ է աչք բացել. և ոչ թէ նորա...։ Ուստուած մի՛ արասցէ. ես գոնէ իմ գրքին կը խնայէի։

Երկրորդ բանը։ Իմ չափաւոր խօսքին թէ՝ Գիւտ ք. «Ս. Էջմիածնի մատենադարանից իւրացրել է «Դիւան Հայոց պատմութեան» պարբոպ նի-ռնելը», նա պատասխանել է. «Էջմիածնի, ինչպէս նաև ամեն մի մատենադարանից օգտուելը ինձ պատիւ եմ համարում և կարծեմ ոչ մի խելքը գլխին մարդ այդ բանում չի մեղադրի ինձ»։ Ինչպէս տեսնում է ընթերցողը, Գիւտ ք. միամիտ ձևանալով՝ այլոց սեպհականութիւնների «ի-ռոյնելը» նոյնացնում է անմեղ օգտո-ելու հետ։ Ուստի ես այժմ առաջարկում եմ հետևեալ բացարձակ վկայութիւնը, տ. Գիւտի չափ գոնէ «մի խելքը գլխին մարդու» վկայութիւնը.—

«Այս ձեռագիր պատմութիւնը*), որպէս և Սիմէոն Կաթուղիկոսի յիշատակարանը, որ մինչև 1890 թ. պահւում էր ս. Էջմիածնի մատենադարանում, 1893 թ. լոյս տեսաւ Թիֆլիզում «Դիւան Հայոց պատմութեան» հրատարակութեան մէջ, կազմելով նորա Առաջին գիրքը» («Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցի կենսագրութիւն», գրեց Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեան։ Ս. Պետերբուրգ, 1898 թ. երես 214, ծան. 5)։

*) Երկասէրութիւն Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցի։

Արդ, որովհետև «Դիւանների» հէնց այդ երկու հատորներն են Սահակ Մեսրովբեան մրցանակին արժանացել, ուստի արդարութիւնը պահանջում է՝ որ Իզմիրլեան կտակի կըտակակատարները հանդիսաւորութեամբ յետս կոչեն տ. Գիւտի խարդախութեամբ կորզած մրցանակագրամները։

Իբրև փակագծում։ Վաթսունական թուականներից մինչև 1891 թ. Ս. Էջմիածնի մատենարանապետն էր Ներսէս եպիսկոպոս Խուդավերդեանը. ուրեմն Յովհ. եպիսկոպոս Շահխաթունեանցի և Սիմէոն Կաթուղիկոսի այդ ձեռագիր երկասիրութիւնները, և՛ ըստ վկայութեան Ա. եպիս. Սեդրակեանի, Ներսէս եպիսկոպոսի միջոցաւ են օտարացել։ Բացի այս. ես այժմ մատնացոյց կ'անեմ և մի այլ ձեռագրի կորուստը՝ նոյն եպիսկոպոսի մատենադարանապետութեան օրով։—Ո՞ւր է Կարապետ վարդապետ Շահնազարեանցի՝ Փարիզում 1859 թուին «Շարf Հայոց պատմագրաց – Ստեփաննոս եպիսկոպոս Օրբէլեան» Ա. հատ. հրատարակութեան յառաջաբանի մէջ, եր. 7—8, յիշած ձեռագիր պատմութիւնը Դաւիթ բէկի.—

«Ո՞ր հայ է որոյ ոչ իցէ լուեալ զգովանի գործս հայրենասիրութեան Դաւիթ բէկի Սիւնեցւոյ, որոյ վառեալ նուիրական սիրով ազատութեան ազգին՝ փորձ փորձեաց ի սկզբան ուրեմատներորդ դարուն առ ի ազատել աջակցութեամբ քաջաց ոմանց զերկիր մեր յօտար լծոյ։ Ես ևս հէգ պանդուխտ որ... կոխէի զերկիրն ոռոգեալ արեամբ քաջարանցն և յանդիման աչացս ունէի զաւերակս Հալիձորոյ, Կապանի, Բաղաբերդի իբրև ցաւագին յիշատակարանս աշխարհաշէն փութոյ մերոց նախնեաց և շինեալ փառաց նոցա, սիրէի նստել բազում անգամ ընդ հովանեաւ ալևոր բեւեկնեաց Պեղս գեղջ և լսել զվէպս հարիւրամեայ Ստեփաննոս աւագ քահանային՝ Թոռին գովելւոյն Պալայ՝ միոյ յընկերացն Դաւթի։ Ասի ի նմանէ նաև զստոյգ պատմութիւն քաջագործութեանց Դաւթի, եւ եղի ի մատենադարանի սրբոյ Էջմիածնի ընդ ձեռն Շահխաթունեան Յովհաննէս եպիսկոպոսի»։

Ինչպէս ասացի՝ Գիւտ ք. իւր պատասխանի վերջում կցել է, «զիջանելով բարեկամների խորհրդին», մի ընդար-

ձակ արտատպութիւն Արարատ ամսագրից։ Հէնց այդ արտատպութեան համար ես յատկապէս շնորհակալ եմ տ. Գիւտից՝ որ յիշեցրեց ինձ. թէպէտ նա և իւր Բ-ուրիպոս «բարեկամները» դորանով ցանկացել են հարուածել ինձ։ Շնորհակալ եմ՝ որովհետև այդ գրեթէ մոռացուած հին արկածը հէնց իմ փառքն է, դորանով ես միշտ հպարտ եմ եղել, որպիսի վեհ և սուրբ զգացումից զուրկ են եղել և միշտ էլ զուրկ պիտի մնան Գիւտ ք. և նորա «բարեկամները». այդպիսիները, ինչպէս ասել եմ, «ուրիշ տեսակի մարդ ճանաչելու ճաշակ չունին», սիրում են կեղտ, և միշտ կեղտ...

Արարատից այդ արտատպութիւնը թէպէտ հազիւ Լումայի մի և կէս երես է բռնել, սակայն որովհետև շօշափում է շատ տարիների ծայրաքաղ մի պատմութիւն—անցքեր, արկածներ, գործեր, որոնք Մանկունու ս-աղկայն խմբի անսանձ վրէժխնդրութեամբ՝ միակողմանի և կամայական կերպով ծայրէ ի ծայր ստութեամբք են այդտեղ դուրս բերած, ինչպէս ահա պիտի տեսնէ ընթերցողը։ Եւ որովհետև այդ մտացածին զրպարտութիւնները ժամանակին անմիջապէս պարզուած և բացէ ի բաց հերքուած են պաշտօնական թղթերով, արձանագրութիւններով, վճիռներով և լրագրական յօդուածներով։ Բայց և որովհետև այս վերջինները է՛ որ անկիւններում են մնացել կամ ջ-ոշ-ոչ-ոչ, է՛ որ գաղուել, է՛ որ ցրուած այս և այն թերթերում և, որ գլխաւորն է, այսօր մոռացութեան են տրուած, որպիսի հանգամանքից օգուտ ուզեցին քաղել Լումայի խմբագիր Գիւտ ք. և նորա ջղջիր «բարեկամները»՝ ի վնաս իմ թիւրելու հասարակաց կարծիքը։ Ուստի ես այժմ ժողովեցի և ամբողջացրի այդ բոլորը՝ հանդերձ յարակից պատմութիւններով, հաստատուն փաստերով և դոկումէնտների վերայ հիմնուած բացատրեցի և պատմեցի անցած դէպքերը, որպէս հերքումն Սինոդի, աւելի ճիշտ՝ Մանկունեան ս-աղկայն խմբի այն զրպարտութեանց, որպէս զի Լումայի, այժմ էլ Բազմավէպի, ընթերցողների տեղեկութիւնները միակողմանի չլինին և կարողանան վերահասու լինել ճշմարտութեանը և արդարութեանը։ Ես կ'աշխատեմ չ'պատմել աւելորդ ոչինչ, բայց և զանց չ'անել՝ ինչ որ կարծում եմ թէ պիտի պարզէ—լուսաբանէ ընթերցողին խնդիր եղած դէպքերը։ Խօսք եմ տալիս՝ որ ընթերցողը հետաքրքրութեամբ պիտի կարդայ մինչև վերջը *)։

Գործի ամբողջութեան և ընթերցողի դիւրութեան համար, Լումայից յետոյ այստեղ սկզբում ես ևս առաջ եմ բերում Սինոդի, իմա՛ իմ թշնամիների շարադրած և կայացրած զրպարտական օրագիրը։ Թշնամիների՝ որոնց ես 7—8 օր միայն առաջ ենթարկել էի քրէական դատի՝ իրենց այնքան գողութեանց և կաշառակերութեանց համար։—

«Ի 29 Հոկտեմբերի 1881 ամի։ Ի վաղուց անտի Բարդուղիմէոս վարդապետն միաբան սրբոյ Աթոռոյս ըմբոստ և չարագրգիռ բնաւորութեամբ խրով դարձուցեալ էր առ ինքն զուշադրութիւն Վեհափառ Հայրապետի Աղգիս։ Թէև բազմիցս ի կիր արկան մեղմ միջոցք համոզման և խրատուց առ ի բաց կացուցանել զնա ի վատթար բնաւորութենէն և ի վարուց, սակայն ի դերև ելին ամենայն ջանք Ծայրագոյն Հոգևոր իշխանութեան, և զոգցես անհնարին եղև ի զգաստութիւն ածել զնա։ Իսկ ի մօտոյ յանդգնութիւն նորա էանց քան զչափն՝ յոխորտալով անգամ ի վերայ Անդամոց Սինոդիս։ Դեռ ի 1872 ամի, մինչ սարկաւագ էր**), թոյլ ետ անձին միջամտել ի գործ վանական կառավարութեան սրբոյ Աթոռոյս և անձնական զջուրս անտառի Մայր Աթոռոյս յափշտակեալ՝ հասուցանելով վէրս ի գլուխս յայնժամեան անտառապահի, տուեալ էր եղբարց իւրոց յոռոգանել զանդաստանս իւրեանց։ Բայց զթացեալ Նորին Վեհափառութեան Կաթուղիկոսի ամենայն Հայոց յերիտասարդական անփորձ հասակ նորա, և տածելով զոյս տակաւ ուղղութեան նորա յապագային՝ Հայրաբար ներեաց նմա յանդգնմանելով և պատուիրելով յամենայնի կալ ի հնազանդութեան և ի զգաստութեան և ի կանոնի միաբանական կենաց։ Եւ յետ ձեռնադրութեան յաստիճան կուսակրօն քահանայու-

*) Այսքանը, ինչ-ինչ տարբերութեամբ, հրատարակուած է «Նոր-Դարում» 1903 թ. № № 96 և 97։

**) Ոչ սարկաւագ, այլ Զօրդորդ աստիճանաւոր Ուբարակիր էր։

թեան, և զկնի անցանելոյ սակաւ մի ջոցաց, ըստ խնդրանաց Գեր. Անդրէաս արքեպիսկոպոսի առաքեցաւ Բարդուղիմէոս վարդապետն ի Դավրէժ յուսուցչութիւն ի դպրոցին Հայոց. որ ի վարելն և զԹոխանորդական պաշտօն վիճակին Ատրպատականի ի բացակայութեան Անդրէաս արքեպիսկոպոսի և Մայր Աթոռոջ՝ նշանաւոր անձինք հայկազունք ի Դավրիժոյ բողոք բարձեալ առ Վեհափառ Հայրապետն Ազգիս ամբաստանեցին զԲարդուղիմէոս վարդապետէ յաղագս անբարոյական գնացից նորա, զորպիսեաց ամբաստանեալ էր քանիցս ի սարկաւագութեան իւրում։ Եւ առ ի խաղաղել զյուզմունս Պարսկահայ մերազնեայց՝ բարեհաճեցաւ Նորին Վեհափառութիւնն հրամայել Անդրէաս արքեպիսկոպոսի կոչել զնա այսր ի Ս. Աթոռս. Ցօրէ յայնմանէ հակառակ կուսակրօնական և միաբանական ուխտին յաճախեաց և յաւել նոր ի նորոյ ի կիր առնուլ զիւր բնածին զանպատեհ արարս ըստ վարուց և ընթացից իւրոց, որպէս և ի ներկայումս կեղծելով զանցս ինչ ի Վեհարանէ՝ իբր զի մի ոմն ի միաբանակցաց իւրոց սպառնացեալ լցէ կենաց նորա, և առ ոչինչ գրեալ զվանական կարգ և զկանոն եկեղեցական պարտաւորութեանց և զիրաւունս ընդհանուր Գլխոյ Ազգիս և Եկեղեցւոյ Հայաստանեայց՝ անմիջապէս զիմեալ է յոտիկանութիւն Վաղարշապատայ՝ ամբաստանելով զմիաբանակցէն իւրմէ. առ որ Նորին Վեհափառութիւնն կամելով վերջին անգամ ի կիր առնուլ զմիջոց ինչ յուղղութիւն նորա և ի զդաստութիւն՝ հրամայեաց Սինոդիս առաքել զնա ի վանս Խորվիրապու յապաշխարութիւն անսահման ժամանակաւ։ Վասն որոյ Սինոդս ի 21 ներկայ ամսոյս օրագրեաց և տնօրինեաց՝ յետ ի ժողով գումարելոյ զմիաբանս սրբոյ Աթոռոյս կոչել զԲարդուղիմէոս վարդապետն յԱտեան Սինոդիս վասն յայտնելոյ նմա զհրաման Նորին Վեհափառութեան, սակայն յետ երիցս հրաւիրման միջոցաւ բարեշ. Դարեգին վարդապետի Սաթունեանց անդամոյ վանքական կառավարութեան և Շարթիր Ցարութիւնի Մարգարեան զանազան պատճառանութեամբ բացէ ի բաց հրաժարեցաւ խսպառ Բարդուղիմէոս վարդապետն յանդիման լինել յԱտենի, յաւելլով բանս անպատշաճս՝ առանց գիտելոյ թէ՝ առ ինչ կոչեն ի Սինոդս. ուստի ընթերցեալ զօրագրութիւն Սինոդիս ի լուր Միաբանից, ապա հրամայեցաւ անդամոց վանքական Կառավարութեան առաքել զԲարդուղիմէոս վարդապետն ի տեղի ապաշխարութեան. բայց նա կրկին անսաստեալ հրամանի Իշխանութեան՝ խոյս տուեալ է ի սենեկէ իւրմէ և նախ ի բնակութիւն Կիւրեղ վարդապետի և ապա առ Երեմիա եպիսկոպոսն փութացեալ է և հակառակ կացեալ է երիցս հրաւիրման և աղդարարութեան անդամոյ վանքական Կառավարութեան, և հուսկ յետոյ ի ձերբակալելն զնա սուրհանդակաց Մայր Աթոռոյս՝ յանդգնեալ է նա ի պայքար մտանել և նախայարձակ լեալ, ջանացեալ է բռնցել և ապտակել զսուրհանդակս։ Ուստի ի զեկուցանելն զայսմ ամենայնէ՝ Նորին Վեհափառութիւնն յաւել հրամայել Սինոդիս ի ձեռն Վանահօր Խորվիրապու առնուլ ի Բարդուղիմէոս վարդապետէ զվեղար, գլխիկոն և զվարդապետական խաչն ականակուռ ընդ վկայական կոնդակին Հայրապետականի և բերել այսր ի Սինոդս. որ և ածեալ եղև ի կատար» (Արարատ 1881 թ. № 10)։

Բանն այն է՝ որ այժմ էլ երբ Վենետիկի Մխիթարեան հարք գողգոթան իմ սեպհական բացատրութիւնները և յանդիմանուեցին (տես Հովիւ 1906, №№ 4 և 9), սոքա էլ ալա Մանկունի և Աղանեանց՝ գրեցին—«...Բարդուղիմէոս եպիսկոպոս Գէորգեան և նորա նմաններ,—եթէ եղած են և կամ պիտի ըլլան,—իր անզգոյշ գրչով և բարուք՝ իր մերձաւորաց շրջանին և հեռաւորացս ալ յայտնի մէկը...» (Բազմ. 1906 Յուլիս, եր. 323)։—Այս գրողն է «մարմնաղնուելիաբ» վատահամբաւեալ Հ. Ա. Տիրոյեանը, Բազմավէպի այժմեան խմբագիրը։ Ս. Ղազարում Մխիթարեանց կեանքի և բարքերի՝ երկար տարիների ականատես վկայն այժմ մեզ մօտ է Բառնաբաս վարդապետը։ Ես լռում եմ։ Մխիթարեանք իզուր տրքնում են աճպարարութեամբ և հայհոյանքներով թեթևացնել իրենց գրական գողութեանց ամօթանքը։ Տես յաւել. Բ։

Բ.

Հերքը ճշմարտութեանն է։

1872 թ. գարնանը, իմ հայրենական Կիսահամիկայ տունը*), որը ծխական և հողային ամենամեծ հարկերն էր վճարում,

*) Վաղարշապատում 7 տուն միայն Կիսահամիկայ կար, մնացածները՝ Զարկը=$^1/_4$ հին, Պանեղ=$^1/_8$ և Բոգրոյ (անհողատէր). իսկ Համիկայ =($^4/_4$) ամենևին չկար։

ցանում է երկու արտ բամբակ։ Բոլոր ծախքերն արդէն արուած և մի անգամ էլ քաղհանը արուած և ջրուած, ամառնամուտի սկզբում Հայրս—որպէս փորձառու երկրագործ—հէնց որ նկատում է թէ ջրերը պակաս են՝ պատուիրում է եղբարցս չջրել մի արտը, թողնել որ անջուր չորանայ, որպէս զի միւս արտը գոնէ ջրելու լիակատար իրաւունք ունենան։ Ցուլիս—Օգոստոս ամիսներն են, ջրի մեծ կարիք է զգացւում Վաղարշապատում և շրջակայքում. Վաղարշապատի հասարակութիւնը ժողովներ է կազմում, որոնց մասնակցում է և մեր Վանքական կառավարութեան կողմից մարդ։ Վճռւում և արձանագրւում է՝ որ ջուր տրուի միայն այգիներին, Ս. Էջմիածնի անտառին և իւրաքանչիւր ծուխի ամառնային այն մի-մի ցանքերին (բամբակ, բոստան, կունճիթ, եօնջայ), որոնց տէրերը այգի չունին. այդ պայմաններից դուրս ցանքերին արգելւում է ջրելը և դատապարտւում են չորանալու։ Այս միակ հնարաւոր և արդար վճռի կատարումը և կարգապահութիւնը յանձնարարւում է գիւղի հասարակութեան կողմից՝ Տանուտէրին, իսկ Վանքի կողմից կարգւում է մեր անտառի և այգիների ջրի բաժնի վերայ հսկելու՝ մի յայտնի անբարեխիղճ և շահամոլ վարդապետ, Ս.ջաբոյ վերակոչուած, և նորան օգնական՝ մեր ընկեր Արշակ սարկաւագ Շատուորեանը։ Հայրս դիմում է Տանուտէրին և իւր միակ բամբակի համար ջուր խնդրում։ Այդի չունի։ Տանուտէրը մի քանի անգամ տանում—բերում է խեղճ Հօրս՝ փող կորզելու փորացաւ ունելով, ձգձգում է և բամբակը կիսամասուլ լինում։ Այդ օրերում բացարձակ խօսւում էր թէ վանքում և՝ թէ գիւղում՝ որ Արաբոն և Տանուտէրը մի շահաւէտ դաշնակցութիւն են կազմել և շահագործում են ջուրը։ Վարդապետը ի հարկէ շատ ու քիչ բաժին կը հաներ իւր հովանաւորող Սինոդականներին, իսկ Տանուտէրը՝ Շինական դատաւորներին։ Եւ այդպիսի կեղեքիչ ընկերակցութիւնը սովորական երևոյթ է գիւղերում, մանաւանդ այն

ժամանակ։ Հայրս դիմում է Շինական դատարանը (Սուդ) հետևեալ խնդրագրով.—

«Ի Շինական դատարանն Վաղարշապատ գեղջ,

ի Գէորգայ Ճուղուրեանց խոնարհաբար խնդիր.

«Որպէս քաջ իսկ յայտ է յարգոյ Անդամոց Ատենիդ, զի չիք ինձ բնաւ այգի, այլ միայն մի արտ բամբակ, և այն ևս արդէն ծարաւի։ Թողում ասել և զայն, զի ի սկզբանն տեսեալ զպակասութիւն ջուրցն, և յայն սակս զնեղութիւն ժողովրդականացս, զմին յերկուց (արտ) չորացուցի խպառ ինքնայօժար խմով կամօք՝ չնայեցեալ ի բազում ծախս նորա. այլ միայն զայս մին հավիւ ցարդ դեռ երկիցս ոռոգեալ պահպանեցի։

«Վասն որոյ այսու խնդրագրութեամբ գիմեալ յԱտեան Ձեր, խնդրեմ շնորհ արարեալ՝ տալ ինձ զիրաւունս ջրելոյ զբամբակն, ոչ շատ համարեալ զայն գերդաստանի իմոյ։ Ի 16 Օգոստ. 1872 ամի, ի Վաղարշապատ։

Գէորգ Ճուղուրեանց։

«Սուդայաւ Դատարանն այս խնդրագրէն 1872 ամի 16 Օգոստոսի Սուդ-Եայ Պէսարտանեանց։

«Վաղարշապատայ հասարակութեան Տանուտէր Եօվանի Շատուորեանց այսու Դատարանն հրաւիրէ մեզ այս խնդրատու Գէորգի բամբակի համար երկու մարդով տեսնես եթէ արժան կիամարէք ջուր տալ 1872 ամի 16 Օգոստոսի, ըստ կարգադրութեան մեր եւ հասարակութեանն։

Սուդեայք { Գէորգ Տէրգրիգորեան Յովհանջանեանց
Նիկողայոս Կ. Արամեանց
Մկրտիչ Յովհաննիսեանց։

Շինական դատաւորները ճանաչելով և միանգամայն իրաւացի գտնելով Հօրս խնդիրը, ահա վերոյիշեալ մակագրութեամբ հէնց նոյն օրուայ համար առաջադրում են Տանուտէրին՝ գնալ «երկու մարդով» տեսնել, որ եթէ բամբակը ծարաւ է՝ ջուր տալ՝ «ըստ կարգադրութեան»։ Դատաւորների մակագրած այս խնդրագիրը*) Տանուտերը

*) Իսկական խնդրագիրը, Դատաւորների մակագրութեամբ, այժմ մեզ մօտ է։

11865

կարդալով՝ պատասխանում է եղբօրս. «ինչ գնամ տեսնեմ, ամեն օր մօտիցը անցնում ենք, գիտեմ որ վաղուց ծարաւ է, բայց վարդապետը չի թողնում որ ջուր տամ. Տեղապահին յայտնեցէք՝ թող հրամայէ վարդապետին՝ որ չ՝արգելէ»։

—Այս՝ գիւղական պարզ գործ է և մեր իրաւունքը, վարդապետին կամ Տեղապահին դիմելու ինչ կարիք կայ. պատասխանում է եղբայրս։

Պէտք է այս էլ ի նկատի ունել, որ այն Տանուտէր աստուածը՝ Ուրմեցի գաղթական, փոքր հասակից վանքում ծառայած մարդ, մառանապետի, շիրաչու, գործակալ Ղուկաս վարդապետի մօտ սպասաւորած,—գիւղացիք նորան սովորաբար կոչում էին «Գործակալի Եօվանի».—ապա Մատթէոս Կաթուղիկոսի մօտ Շաթիր, յետոյ դարձեալ մառանապետ կամ շիրաչի։ Այնպէս որ նա վանքով էր ապրել, ուրիշ գործ չունէր, այս պատճառաւ էլ նա, թէպէտ ոչ-վատ մարդ, չէր կարող վարդապետի՝ այն էլ չարաճճի Արաբոյի՝ կամայականութեանը հակառակ վարուել։

Մնում էր որ եղբայրներս, իրենց իրաւունքը ճանաչելով և կրած զրկանքը ի նկատի ունելով՝ վարուէին այնպէս ինչպէս առհասարակ վարւում են գոնէ գիւղացիք.—վերցնել բահերը՝ գնալ ջրի վերայ, կամայականութիւն գործ դնողի, եթէ դարձեալ համարձակուի՝ գլխի խոշը քէր անել։ Սակայն չէ՞ որ Երանը (իմ անունը) վանքում Ուրարակիր և Զորրորդ աստիճանաւոր է և ծառանգաւորաց դպրոցում ուսուցիչ (Հայերէնի), իսկ եղբարց այդպիսի մի վարմունքը՝ նորա համար պակասութիւն կը լինի,—մտածում է խեղճ Հայրս և զսպում եղբայրներիս՝ չանել այնպիսի անպատեհ և վճռական բան։

Եղբայրս գալիս է ինձ պատմում շատ բան. ես բարուրք եմ համարում և գնում յայտնում եղելութիւնը Տեղապահ Գր. արքեպիսկոպոս Սաղինեանցին։ Տեղապահը իսկոյն կոչում է Տանուտէրի որդի յիշեալ Արշակ սարկաւագին և պատուիրում՝ գնալ թէ իւր հօրը և՝ թէ վարդապետին ևս գտնել և ասել իւր կողմից, որ գնան ջուրը տան եղբարցս, «ինչի որ չիմաչպար իրաւունք անին ջրելու»։ Սարկաւագը գնում գտնում է վարդապետին և իւր հօրը Ղռի այգում «էֆ» անելիս, ասում է Տեղապահի պատուէրը։ Հայրը — Տանուտէրը պատասխանում է. «քէֆներս հո՞ խանգարելու չենք, թող գնան ջրեն». իսկ նենգաւոր վարդապետը՝ սուս է մնում։ Սարկաւագը վերադառնում ասում է ինձ թէ Տեղապահի պատուէրը և՝ թէ իւր հօր պատասխանը. եղբօրս կոչում ենք կալիցը և յայտնում և նա գնում է բամբակը ջրելու։ Մի-երկու մարդ դեռ ևս չջրած, վարդապետը ձին նստած հասնում է այնտեղ իւր թուանքչու հետ, հայհոյում անպատուում է եղբօրս և ջուրը կտրում։ Վարդապետի այդպէս անզգամաբար վարուելու մի պատճառն էլ այն էր՝ որ ես նորան արհամարհում էի և լայիղ չէի անում խնդրել։

Ես այստեղ ընդհատում եմ պատմել, որովհետև իւր տեղում յառաջ պիտի բերեմ հէնց իւր ժամանակին Գէորգ Դ. Կաթուղիկոսին և Սինոդին իմ գրած պատասխան յայտարարութեանց և լրագիրներում հրատարակուած յօդուածներիս պատճէնները, որոնք կազմում են սորա շարունակութիւնը։

Գ.

1876 թուին ժամագիրքը ձայնագրելուցս յետոյ*), Նոյեմբերի 21-ին ձեռնադրւում եմ աբեղայ։ Այդ ժամանակնե

*) Ձայնագրեալ ժամագիրքը, տպուած 1877 թ. սկզբից մինչև «Հարցը», եր. 275, երգել է Ինքն Տ. Գէորգ Դ. կաթուղիկոսը և ձայնագրել եմ ես միայն, առանց ոչ ոքի մասնակցութեան։ Մնացեալ չէջին մասն է որ ուրիշներն են ձայնագրել (Եկմալեան և Ճէպէճեան). Թէպէտ այդտեղ էլ կան իմ՝ առաջուանից (1874 թուից) ձայնագրածներ։ Բայց նոյն ժամագրքի յառաջաբանի մէջ Վահրամ եպիսկոպոսը բաւականացել է անորոշ կերպով գրել. «մերս Հայրապետ... հաճեցաւ անխոնջ թելադրութեամբ տալ ձայնագրել ի ձեռն քաջարուեստ ձայնագրագէտ դպրաց Մայր Աթոռոյս»։ Այսպէս իմ ձայնագրածներն են և Էջմիածնի և կաթուղիկոսական ատենին երգուող մաղթանքը (երգել է Գր. արքեպիսկոպոս Յովրեանցը), պատարագի «Ցայս յարկ... բարեխօսութեամբ», «Հոգի Աստուծոյ», «Քրիստոս պատարագեալ բաշխ.», և այլն։

ռում Դավրիժում Հայերի մէջ տեղի են ունենում խռովութիւններ, Դավրիժեցի և Ղարադաղցի կուսակցութիւնները իրար ոտքում են։ Դավրիժեցիք, մասնակցողները, 6—7 հոգի են. սորանց պարագլուխն է գերազնիւ Ծատուր խանը, թէպէտ թագուն լարող մեքենայողն է Յովսէփ ա. քահանայ Տէր-Յովսէփեանցը։ Ղարադաղցիք բազմաթիւ են, հարուստ և ոյժ են կազմում և արդարև ճնշում են ընիկ Դավրիժեցիներին, իսկ մատնութիւնը միւս թոյլ կուսակցութեան սիրած զէնքն է։—Արամեան դպրոցի Հոգաբարձութիւնը դադարում և լուծւում է կառավարչական մի կարգադրութեամբ։ Ծատուր խանը ֆոտ անելով Հոգաբարձուներին՝ հանում է դպրոցից իւր 13 և 15 տարեկան տղայքը, որոնք աւելի քան երկու տարի պարապ տանը մնացած՝ թռուցիկ էին խաղացնում կտուրների վերայ։ Այդ ազգավնաս խռովութեան թէ ոչ բուն պատճառ, այլ կրքերի փռնգման գոնէ տեղիք տըուողը լինում է Արամեան դպրոցում ուսուցիչ Յակով Մէլիք-Յակովբեանցը (Բաֆֆի)՝ իւր այն յոդուածներով «Մշակում» հրատարակուած, որոնցով անվայել լեզուով շօշափած է լինում երկրի տիրող ազգի կրօնը և Կրօնապետների պատիւը, նաև Յովսէփ ա. քահանայի պատիւը, որը այն ժամանակ, ինչպէս և միշտ, Առաջնորդական Տեղապահն է եղել և Հոգաբարձութեան նախագահը՝ Առաջնորդական Աթոռի թափուր ժամանակներում։ Պէտք է խոստովանած՝ որ Դավրիժում եղած—չեղած քահանայների մէջ նա միակ հասկացող և իրեն դիրք տուող ու պահողն էր։ Այս նենգաւոր քահանայն ժողովրդին աւելի գրգռելու համար՝ գրում և փակցնում է եկեղեցու դրանը հետևեալը.—

Ծանուցումն.

«Պատուելի ժողովրդականաց Հայոց Դավրիժու Ս. Աստուածածին Մայր Եկեղեցւոյն։

«Յովսէփ աւագ քահանայ Տէր Յովսէփեանց յայտնում է ընդհանուր Հայազգի ժողովրդականաց յիշեալ եկեղեցւոյն, զի ես երեսուն

տարի միջոցաւ ծառայելով ազգի ամենայն հարազատութեամբ, որքան կարողութիւն իմ կը խոստանայը։ Ուստի տեսանելով այժմ ի ծերութեան հասակի իմոյ, և զիս միանգամայն անկարող, որ տկարանամ վարել քահանայական պաշտօնը, վասնորոյ ես կամաւորապէս հրաժարիմ ի պաշտօնէ քահանայութեան։ 30 Մարտի 1877 ամի։» *)։

Տ. Յովսէփի մի փորացաւն էլ այն է եղել, թէ ինչու Վանեցի տ. Մեսրովբ քահանայ Փափազեանցն է դպրոցում կրօնուսոյց և ոչ ինքը։ Իսկ Յ. Մէլիք-Յակովբեանցի փորացաւը՝ որ տեսուչ Սամուէլ Գիւլզատեանցին արձակել տայ և ինքն յաջորդէ նորա տեղ։ Գիւլզատեանցն ստանալիս է եղել մօտ 1500 ր. ռուճիկ, որը գրգռել է կարօտ, խիստ կարօտ Մէլիք-Յակովբեանցի իշտահը։ Դավրիժեցի կուսակցութիւնը կամենում էր Գիւլզատեանցին պահել տեսուչ, իսկ Ղարադաղցիք՝ Մէլիք-Յակովբեանցին։

Ֆարրաշները գալիս հանում են Յ. Մէլիք Յակովբեանցին դասարանից և տանում դնում բանտը։ Ղարադաղցիք հազիւ մեծամեծ ջանքերով և ծախքերով յաջողում են ազատել նորան բանտից և խնդրագիրներ տալով ձեռքը՝ ուղարկում են Ս. Էջմիածին։ Քաղաքի ազգայինք՝ անխտիր խընդրում են Տ. Գէորգ Դ. Կաթուղիկոսին՝ վերադարձնել Դավրէժ Անդրէաս արքեպիսկոպոսին։ Սա մի տարի էր արդէն որ Էջմիածնումն էր, իսպառ հրաժարուած Ատրպատականի Առաջնորդութիւնից։ Յոյս են ունենում որ թերևս հնարաւոր լինի այդ խոհեմագոյն, բարեհամբոյր և հեզ եկեղեցականի շնորհիւ հաշտութիւն խաղաղութիւնը վերականգնել։ Առանձին գրերով պաղատում են և Անդրէաս արքեպիսկոպոսին՝ յանձնառնուլ վերադառնալ Դավրէժ, գոնէ ժամանակաւորա-

*) Յովսէփ ա. քահանայի «Ծանուցման» այս պատճէնը գրել և տուել են ինձ Բաֆֆին կամ Միրզա-Ալազ Ազթանդիլեանցը. այժմ էլ ինձ մօտ է ձեռագիրը։—Մշակում (1903 թ.) հրատարակուեց նոյն Միրզա-Ալազի, այժմ խան, «Պատկերներ Բաքվի կեանքից» ընդարձակ յօդուածը։ բայց բոլոր Դավրիժեցիներին, Ազթանդիլեանցին և ինձ յայտնի իրողութիւնները յեղաշրջուած են և օտար գոյներով ներկայացուած, տես յատկապէս № № 80, 81։

պէս։ Սա չի համաձայնում վերադառնալ, սակայն Կաթուղիկոսի խոստումով որ մի տարի չանցած յետ կը կոչէ՝ վերջապէս պարտաւորւում է վերադառնալ Դավրէժ և վերստանձնել Առաջնորդութիւնը։ Ահա այդ ժամանակ—Յունիս 1877 թ. Տ. Գէորգ Դ. Կաթուղիկոսը բարեհաճում է Անդրէաս արքեպիսկոպոսի հետ ուղարկել ինձ Դավրէժ՝ ուսուցիչ անունով, թագուն միտք ունելով՝ որ առ ժամանակ վարժուիմ Ատրպատականի վիճակի գործերին։ Գնում ենք։ Մէլիք-Յակովբեանցին պատուիրւում է չ՝հետևել մեզ, այլ սպասել Կովկասի քաղաքներում, երբ դիպող ժամը հասնի՝ իմաց կը տրուի իրեն։ Մենք ամառուայ շոգերին տաժանելի ճանապարհորդութեամբ (ձիով) ժամանում ենք Դավրէժ. Մէլիք-Յակովբեանցը թագնաբար մեզ հետամտած՝ բուսնում է այնտեղ հէնց երրորդ օրը։ Նորա հակառակորդները դրդռւում են նոյն իսկ և՛ Անդրէաս արքեպիսկոպոսի դէմ՝ կարծելով թէ եպիսկոպոսը անպատճառ միտք ունի նորան դարձեալ մտցնել դպրոց։ Անցնում է հազիւ երկու—երեք օր՝ յանկարծ հեւալով գալիս է ինձ մօտ ուսուցիչ Միրզա-Ալաղ Ադթանդիլեանցը, յայտնում է՝ որ Մէլիք-Յակովբեանցին տարան դրեցին բանտը, և այս անգամ՝ մահապարտների բանտը։ Առաջնորդն այդ օրը վաղ գնացել էր մեր Ռուսաց Հիւպատոսին այցելութեան՝ ամարանոցում (Մամէդ-աբադ). յատուկ սուրհանդակով նամակ հասցրի նորան՝ որպէս զի հէնց այնտեղ Հիւպատոսի օգնութիւնը ևս խնդրէ։ Չօգնեց ոչ Առաջնորդի և ոչ պ. Գրեբէլի (Հիւպատոսը) միջնորդութիւնը. բայց, ով զարմանք, նորան բանտից և կապանքից ազատեց պ. Խալիֆայ Օհան Ցէր-Զաքարեանցը՝ իւր երաշխաւորութեամբ և փախցրեց ռուսական սահմանը։ Իսկ նորա կարօտ և անոք ընտանիքին՝ երկար ժամանակ խնամարկեց Օհանի մեծ եղբայր պ. Խաչատուրը։ Մեռաւ Բաֆֆու զաւակներից մին և թաղեցին։

Ահա հէնց այստեղից սկսած, Բաֆֆու երեսից, անյա-

ջող գնաց Անդրէաս արքեպիսկոպոսի առաքելութիւնը, այնքան խոհեմ ջանքերը՝ հաշտութիւն կայացնել, Հոգաբարձութիւնը վերակազմել։ Անձամբ շատ վիրաւորանքներ ևս կրեց Ծատուր խանի երեսից, նոյն իսկ այնտեղից մեկնելու նախընթաց օրն ևս։ Ուսումնարանը բացուեց ժամանակին, սակայն չկայ Հոգաբարձութիւն, չկայ Տեսուչ. Առաջնորդը և՛ Հոգաբարձու է և՛ Տեսուչ։ Մահտեսի պ. Սիմէօն Թումանեանցը՝ իւր Հոգաբարձու եղած ժամանակից շարունակում է դպրոցի գանձապահութիւնը։ Սա էլ երբեմն հաշուեմատեանները բերում դնում է սեղանի վերայ և խնդրում որ իրեն ազատ կացուցանեն։ Իսկ ես՝ ուսուցիչ եմ հայերէն լեզուի և Գայնագրութեան, ռոճիկս է 400 ռուբլ (ոսկւով). գրում եմ Առաջնորդական թղթերը, ապրում եմ ինձ յատկացրած մի սենեակում՝ կերակուրի ծախս չանելով։ Ծատուր խանը ինքնին կտրել է իւր յարաբերութիւնը Առաջնորդարանից, նորա կրից անմեղ զոհ տղայքը դարձեալ տանը պարապ նստած են, ամենքի սիրտը ցաւում է նոցա համար՝ բացի հարազատ հօրը. Առաջնորդը, ես լուր ենք ուղարկում, յորդորում խնդրում ենք ուղարկել տղայներին դպրոցը, բայց ի զուր, նա Ցեփթայեայ ուխտն էր արել։ Ափսոս որ այժմ տեղեկութիւն չունիմ, արդեօք նորա որդիքը ինչպիսի մարդիկ դարձան։

Դավրէժ մեր ժամանելէն մի քանի ամիս յետոյ, գալիս են Մուժամբար գիւղացիներ բողոքով Առաջնորդի մօտ. ժողովներ են լինում, ներկայ են լինում երկու կողմի մարդիկ և տեղացի քահանայք և կողմերի բարեկամները։ Խնդիրը նորանում է՝ որ գիւղի մի հարուստ տան տղայ, Մէլիք-Յովհաննէսի եղբօրորդին, որը, հրապուրել է հարևան աղքատ ժամակոչի աղջկան և սա արդէն յղացած է։ Աղջկայ ազգականք, —հեռու ազգական էր իրեն ցոյց տալիս և Առաջնորդի ծառայ Յակովբը,— պահանջում են որ պսակեն այդ անխոհեմ զոյգը. հակառակ դէպքում՝ պիտի դիմեն Պարսից Դիւանին։

Իսկ տղայի կողմնականք՝ չեն համաձայնում, Մելիք-Յովհաննէսը շարունակ աղաղակում է. «ուրիշից է յղացել՝ մեր տղային շառով է տալիս». բայց և սարսափում է Դիւանի ճանկն ընկնելուց։ Վերջապէս Մելիքը յաղթահարուեց, վճռում էր պսակել. ես խօսք եմ խնդրում.—«գործի այս վիճակում և միայն ստիպմամբ պսակելը՝ անտանելի պիտի դառնայ տղայի և առ հասարակ նորա կողմի համար, որովհետև կարող է ճշմարիտ որ զրպարտութիւն լինել... Ուստի որպէս զի քիչ-շատ արդարութեամբ վախճան տրուի այդ գործին, իմ կարծիքով՝ նախ պէտք է ցուցմունք ստանալ աղջկանից թէ ո՞ր օրը կամ գոնէ ո՞ր շաբաթն է անձնատուր եղել. դորանից յետոյ վճռել, որ եթէ ճիշտ ժամանակին—ինն ամսում ծնանի՝ ապա պսակել. իսկ այժմ այսպիսի համաձայնութեան պայման միայն ստանալ տղայից և աղջկանից և սպասել»...

Առհասարակ, մանաւանդ Մելիք-Յովհաննէսը, ուրախութեամբ ընդունեցին իմ խորհուրդը, բայց աղջկայ կողմը բուռն անբաւականութիւն արտայայտեց և սպառնաց դիմել ուղղակի Դիւանին, ասելով. «մինչև այն ժամանակ կարող է տղայն խոյս տալ փախչել Բաքու, Ռուսաստան, յետոյ մենք ի՞նչ անենք»։ Պատասխանեցի. «այդ մասին ձեզ ապահովեցնելու համար պայմանի մէջ կը մտնի, որ եթէ տղայն փախչի՝ Մելիք-Յովհաննէսենք պարտաւորուեն տալ աղջկանը, օրինակ՝ այսքան թուման։ Ընդունուեց իմ այս առաջարկութիւնը. երկու քահանայք առանձնապէս լսեցին աղջկանից՝ որ գայթակղութիւնը տեղի է ունեցել, երբ Մելիք-Յովհաննէսենք ընտանեօք հրաւիրուած են եղել քաղաք՝ իրենց մի ազգականի հարսանիքին և տունը 3—4 օր խալի է եղել։ Ճշդուեց հարսանիքի ժամանակը և գրուեց ստորագրուեց պայմանագիրը։ Այդ թուղթը պահուած է Ատրպատականի Հայոց Առաջնորդական գործերում։

Այսպէս մի քանի դէպքեր, օրինակ. Ծատուր խանի

տեղ ընտրել մի այլ Խան՝ Հոգաբարձական ընտրութեան ժողովում իմ խորհուրդը, և այլ մանր մունր բաներ, և ահա մի քանի ամսուայ կամ հազիւ մի տարուայ աբեղայ Բարդուղիմէոսը ամենքի ուշադրութեանն է արժանանում։ Ծատուր խանը, չնայելով որ նորա յարաբերութիւնը Առաջնորդարանի հետ իսպառ կտրուած է և թշնամական, այնուամենայնիւ դուրսը ծանօթ շրջաններում շատ գովասանքով է խօսում Բարդուղիմէոս աբեղայի մասին. նա չի մոռանում մինչև անգամ Կաթուղիկոսի կոնդակը պարսկերէն թարգմանելու համար բառերի իմաստները «նրբութեամբ» բացատրել հասկացնելս...

Համառօտ պատմեմ Հոգաբարձական ընտրութեան այդ ժողովի մասին։—Ժողովը կայանում է Առաջնորդարանում, ներկայ են 50 հոգու չափ։ Ժողովից 2—3 ժամ առաջ գալիս է Զարգեարբաշի պ. Ս. Առ. Պատմագրեանցը,—մի համեստ բարեպաշտ մարդ,—մի կտոր թուղթ ձեռքին բռնած կարդում է 6—7 անուն և յաւելացնում. «Ծատուր խանը ասում է՝ այս մարդկանցը դրէք Հոգաբարձու»։

—Ծատուր խանին իմ կողմից բարև արէք և ասացէք նորան, որ ես, իբրև Առաջնորդ՝ ընտրութեանը նախագահող և վաւերացնող եմ, և ո՛չ թէ ընտրող կամ ընտրողներին հրամայող։ Թող ինքը դրսում համոզէ ընտրողներին՝ որ դրանց ընտրեն, ինձ համար մի և նոյն է. պատասխանեց Անդրէաս արքեպիսկոպոսը։

Սկսուեց ընտրութիւնը. մեծամասնութիւնը ձայն տուեց, այլ և ոտքի կանգնելով՝ վերընտրեց Նախորդ Հոգաբարձուներին. նստած մնաց Ծատուր խանը և ուրիշ 4—5 հոգի։ Որոշուեց որ արձանագրութիւնը կազմեմ և ստորագրեն. հէնց այդ րոպէին տեղիցը ցատկեց Ծատուր խանը, գնաց մինչև դահլիճի կէսը և յետ նայելով դէպ առհասարակ ժողովականները՝ սրտմտած ասեց. «Այդ ընտրութեանը համաձայնող—ստորագրող պարսկահպատակների հէրը գեօռիցը կը

հանեմ», և շտապով հեռացաւ։ «Հերը գեօռիցը հանել՝» Պարսիկների այլև Հայերի համար ծանր նախատինք և վրէժխնդրութիւն է (տես Խոր. գ. ԻԷ)։ Այժմ ևս վրէժխնդրութեան այդ անարդ տեսակը լսւում է։ Մի ինչ որ հին թուղթ կար նորա ծոցում, որով նա սպառնում և բռնանում էր այդ աստիճան. օտարահպատակներին արգելւում էր մասնակցել տեղական գործերին։ Առաջնորդը և ժողովականները յանկարծակիի եկած՝ շուարեցան, խօսւում էր ընտրութիւնը չկայացրած ցրուել. ես շտապեցի խորհուրդ տալ. «Պէտք է ընտրութիւնը կայացնել, բայց որպէս զի մի նոր գէնք չտրուի նորա ձեռքը, ընտրել նորա տեղ մի այլ Խան—պաշտօնեայ Տէրութեան»։ Բարւոք համարուեց այդ իմ խորհուրդը. Ծատուր խանի տեղ Հոգաբարձու ընտրեցին Միրզա Անտոն խանին. մի խոհուն և միանգամայն բարեխիղճ և վստահելի մարդ։ Այդ ընտրութիւնը մնաց չեղած։ Տէսէք թէ որքան քաջ էր Ծատուր խանը...

Նախորդ Հոգաբարձուների վերընտրութեանը Ծատուր խանի դէմ լինելը՝ բացատրում էին այն յետին մտքով, որ իբր թէ նա թոյլ մարդիկ է ուզում իւր ընկեր Հոգաբարձու, որպէս զի փողի կարիք ունեցած ժամանակ օգտուել կարողանայ դպրոցի փողերից։ Հէնց այն ժամանակ էլ նա վաղուց անշահ—անթամասուդ պարտ էր դպրոցին 7—8 հարիւր ռուբլի և չէին կարողանում ստանալ։—Արդարութիւնը պահանջում է վկայել՝ որ Ծատուր խանը, իւր սիրայօժար սատարութեանց համար Առաջնորդական և ազգային գործերում, արժանի էր վարձատրութեան կամ գոնէ մի դատարկ շնորհակալութեան, որ չէ արուել։ Մախլաս։

Դ.

1878 թ. Մայիսի վերջերում Անդրէաս արքեպիսկոպոսը ստանում է Պետրոս արքեպիսկոպոս Վեհապետեանից՝ Տ. Գէորգ

Դ. Կաթուղիկոսի հրամանաւ գրուած մի գրութիւն, որով պատուիրւում է նորան՝ տալ ինձ «Մանուսոր Իշխանութիւն Վարդապետական Գաւազանի» և կարգելով Առաջնորդական Փոխանորդ վիճակին Ատրպատականի՝ ինքն շտապել ի Ս. Էջմիածին։ Սա գրում է ինձ.—

«Արժանապատիւ Բարդուղիմէոս վարդապետի Գէորգեան.

«Վերակոչելով զմեզ վեհափառ Կաթուղիկոսն ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգ Դ. ի Սուրբ Էջմիածին, հրամայեալ է մեզ կարգել զՁեզ Առաջնորդական Փոխանորդ վիճակին Ատրպատականի։

«Ըստ այսմ տնօրէնութեան Նորին Վեհափառութեան յանձնելով մեր Ձերում Արժանապատուութեան զնոյն պաշտօն Փոխանորդութեան և կարգելով միանգամայն զՁեզ Տեսուչ Արամեան ուսումնարանին Դավրիժու, կարէք ի հարկաւոր դէպս միայն նկատողութեամբ Ձերով դիմել մեզ թէ ըստ վիճակային գործառնութեանց և թէ ըստ ուսումնարանական կառավարութեան», № 70. 8 Յունիսի 1878 ամի ի Դավրէժ։

Վիճակաւոր Առաջնորդ թեմին Հայոց Ատրպատականի
Անդրէաս Արքեպիսկոպոս։

Ապա Տ. Գէորգ Դ. Կաթուղիկոսը գրում է՝ «Փոխանորդ Ի—ր». ինձ ճանաչելու մասին՝ Ատրպատականի Արտաքին գործոց Պաշտօնէին։ Վերջինս իւր պատասխան գրութիւնը ուղարկում է ինձ, իւր այցետոմսի հետ, որպէս զի ես ուղարկեմ Էջմիածին Նորին Սրբութեանը և ուղարկում եմ։

Անդրէաս արքեպիսկոպոսը 1878 թ. Յունիսի 8—9-ին մեկնում է Դավրէժից։ Ես զբաղուած եմ դպրոցի հարցաքննութիւններով։ Հէնց այդ ժամանակ Արտաքին գործոց (Ատրպատականի) պաշտօնեայ Ղուլի խանի կողմից, որի դիւանատանը թարգմանի պաշտօն ունէր Ծատուր խանը և հին բարեկամական սերտ յարաբերութեան մէջ էին, գալիս է ինձ բերանացի մի առաջարկութիւն՝ ինչ որ մի հիջլաթ (իրաւախոհական ժողով) մասնակցելու, որի ժողովականներն իմ պաշտօնի և աստիճանի մարդիկ չէին։ Այդ նոր խաղը փորձել էր խաղալ հէնց իմ պաշտօնի սկզբում մեր Ծատուր խա-

նը։ Այնպիսի մի պատշաճ ջ—ոբ (պատասխան) եմ ապսպա-
ռում Ղուլի խանին՝ որ նա հէնց նոյն օրը ուղարկում է իւր
Դիւանի մի ծառայող և, յայտնելով որ սխալմունք է տեղի
ունեցել՝ ներողութիւն է խնդրում մեր ուսուցչաց խմբի
ներկայութեամբ։—Զգացին՝ որ ինձ հետ հանաք անել չի կա-
րելի. այն՝ աններելին ևս ներող, միշտ տեղի տուող, ան-
պայման բարի Անդրէաս արքեպիսկոպոսը ոտքերի փոշին թօ-
թափել հեռացել էր։ Հետզհետէ տեղի ունեցան դէպքեր,
օրինակ. Ծատուր խանի՝ որդիքը իշխանաբար դպրոց ուղարկելը
և իմ՝ նոյնչափ իշխանաբար և իրաւամբ մերժելը, որպէս զի
դպրոցի կարգը և հասարակաց պատիւը պահպանուած լի-
նէին։ Ապա նորա զղջումը և հրապարակաւ նուաստանալը
տեսնելուց յետոյ միայն ընդունեցի։ Այս դէպքում տ. Յովսէփը
Ծատուր խանի համար արջի ծառայութիւն կատարեց, որ օրից
էլ իւր ոտքը Առաջնորդարանից կտրել ստիպուեց տ. Յովսէփը։
—Ծատուր խանից 250 թուման դպրոցին պարտքը պահան-
ջելս. նա ստիպուած՝ տան ֆարշը—փռուածք գորգերը առա-
ջարկեց պարտքի տեղ. բայց ես խնայեցի նորա օճախի պատ-
ուին և ժամանակ տուի։ Այդ ժամանակ նա յանկարծ խոյս
տուեց դէպի Տփխիս, Ռուսաստան։—Ղարադաղի Զալաբեան
Մահմուդ խանի դարձեալ դպրոցին պարտուց մուրհակի գո-
ղացուելը խաբէութեամբ՝ Անդրէաս արքեպիսկոպոսի. օրով,
իսկ իմ օրով յայտնուելը։ Այդ մուրհակի թագցնելում Միր-
զա Յարութիւնի՝ Ծատուր խանին (բացակայ) մեղսակից ճա-
նաչուելով՝ նորան դպրոցից—ուսուցչութիւնից դուրս ձգելս.
և այլն, և այլն։ Դէպքեր՝ որ մեր դերազնիւ Ծատուր խա-
նին շատ ստրջացնել տուին Անդրէաս Արքեպիսկոպոսի դէմ
և առ հասարակ իւր վարմունքը. նա զղջաց չարաչար։ Հաշ-
տուել այն պայմանով, որ մի՛ ամբողջ տարի շարունակ զիջա-
նում առաջարկում՝ էր Անդրէաս Արքեպիսկոպոսը իսկ նա
մերժում, այժմ ինքն է առաջարկում խնդրում՝ բայց մեր-
ժւում է։—Առաջարկում էր որ հրաւէր սարքուի մի տան

և ուր ես և ինքն գտնուելով՝ հաշտուէինք, իսկ ես պատաս-
խանում էի. «Իբրև Առաջնորդական Փոխանորդ՝ ես պիտի ժո-
ղովրդականներից խռովածներին հաշտեցնեմ. թոյլ տամ որ
ժողովրդից որ և իցէ մին մեզ տանէ հաշտեցնէ... Ես հաշտ
եմ, դուռս էլ միշտ բաց է, երբ ցանկաք՝ կարող էք գալ»։

Հարցաքննութիւնները վերջացնելուց յետոյ պայմանա-
գրուեցի ուսուցչաց հետ յաջորդ ուսումնարանական 1878—
1879 տարուայ համար։ Նոր պայմանները շատ խիստ էին
ուսուցչաց համար և նպաստաւոր դպրոցին, բայց վարձա-
տրութիւնը ոչինչով աւելի քան նախորդ տարուանը։ Այս իմ
խստապահանջութիւնը հետևանք էր նախընթաց տարում
յաճախ նկատուած ուսուցչաց նուազ պարտաճանաչու-
թեանց և զանցառութեանց։ Օբական մի ուսուցիչ, հերթով,
վերակացութիւն պէտք է անէին և զանկի կանոնաւոր ճըշ-
դութեամբ խփելը միայն նորա պարտաւորութիւնն էր։ 5 ро-
պէ ուշ դասարան մտնողը զրկւում էր նոյն դասի վարձա-
տրութիւնից. իսկ ի նկատի առնուած հանգամանքներից դուրս
մի դաս բաց թողնողը՝ զրկւում էր աւուր ամբողջ վարձից.
և այլ պայմաններ։ Պաշտօնից վաղուց դադարած Հոգաբարձուք
և առհասարակ իշխանները տեղեկացան նոր պայմանների մա-
սին և անչափ գոհ մնացին։ Ապա շտապեցի Դավրիժեցոց հա-
մար միակ ամարանոց Մուժամբար գիւղը. ապրում էի արժա-
նապատիւ տ. Մկրտիչ քահանայի խիստ համեստ տանը։ Դա
հոգւով և մարմնով ժիր մի քահանայ էր. շատ հմտօրէն գի-
տէր Մատնատոմարը։ Այնտեղ ինձ շատ մխիթարում էին և
ամարանոց եկած Դավրիժեցիք։

Ահա իմ հէնց այնտեղ ամարանոցում գտնուած ժամա-
նակ ծնեց այն անձնատուր եղած աղջիկը. հաշուեցինք՝ ճիշդ
9 ամիսը լրացած։ Վաղուց կնքուած պայմանագրի համաձայն՝
ստիպեցի Մէլիք Յովհաննէսին և գիշեր ժամանակ դժուա-
րութեամբ տարան տղային եկեղեցին և պսակեցին իւր արա-
տաւորած աղջկայ հետ։ Սակայն հաբ-էն չ՛տարան փեսայենց

տունը, այլ մի մարագում նստեցրել էին և մի կտոր հաց և չուր դրել մօտը. բայց ընդհանուր կարծիքն այն էր թէ շուտով կը հաշտուին։

Ես դեռ ևս ամարանոցումն էի՝ քաղաքում ժողովրդական շատ մեծ խռովութիւն տեղի ունեցաւ, խուժանը յարձակուեց երկրի բարձրագոյն Դատաւորի (Սահիբ-Դիւան) տան վերայ՝ մի ինչ որ նոր հարկ դրուած լինելու առթիւ։ Ուարի տուին ամբաւ հարստութիւն, տակն ու վրայ արին նորա տունը և արքունի Դիւանը. ինքը Սահիբ-Դիւանը հազիւ իւր կեանքը ազատել էր փախչելով Վալիաթի—Թագաժառանգի (ներկայ Շահը) ապարանքը։ Կանանոցը միայն անմատչելի էր մնացել Միւշտեիդի շնորհիւ. Սա շտապել բռնել էր դուռը և ամբոխին ձայն տուել. «Սաաանց ինչ պրոբելու՝ Լոյլ չէմ պայ ֆէղ անյնել այս հողմը», և կատաղած ամբոխը, ինչպէս ոչխարի մի ստուար հօտ՝ լսել—հնազանդել էր իւր Հովուին և յետ դարձել։ Ցիշատակած արժանի Նասրէդդին Շահը հեռագրով պաշտօնանկ էր արել, ի թիւս այլոց, յիշեալ Դուլի խանին, իբրև խռովութեան դրդողներից մին և 24 ժամուայ մէջ աքսորել, իսկ նորա պաշտօնում կարգուել էր Աբդիւլ-Ռահիմ խան—Սայդուլ-Մուլքը։

Մի քանի օր յետոյ երբ վերադարձայ քաղաք՝ գնացի առաջին այցելութեան այդ նոր կարգուած Դատաւորին. այնտեղ նախասենեակում փորձով տեսայ՝ որ մեր խիզախ Ծատուր խանը որբացել էր...։ Պաշտօնական այցելութեանց ժամանակ սովորաբար միմեանց առողջութիւնն են հարցնում, օդի և եղանակի մասին են զրուցում, բայց մեր խօսակցութիւնը շուտով անցաւ օրուայ դէպքի—ժողովրդեան մեծ խռովութեան վերայ։ Նա հարցրեց. «Ջանաբը Խալիֆայ, խռովութեան ժամանակ ամբողջ Թէբրիզը ոտքի վերայ էր, յուզուած՝ ինչպէս փոթորկալից ծով։ Այն ինչ Տէրութեան բոլոր պաշտօնեայները և զօրքը սրերով միջամտում և չէին կարողանում հանդարտեցնել ազգաբնակութեանը, Աղայ Միւշտեիդը երևալով

և մկ—երկու խօսք ասելուց յետոյ՝ խաղաղեց խռովութիւնը։ Ի՞նչ է պատճառը՝ որ ժողովուրդը Կառավարութեան պաշտօնեայներից, զէնքից, սպանուելուց իսկ չի վախենում, իսկ Հոգևորականին այդպէս լսում հնազանդում է։ Այսպէս էլ ձեր ժողովուրդը պիտի լինի ի հարկէ»։

—Կառավարութիւնը, զօրքը, սուրը՝ գործ ունին մարդու մարմնի հետ. բայց մարմինը առանց հոգու՝ մի գունդ միս է, մարմինը գործում է հոգու տրամադրութեան տակ՝ ինչպէս մի մեքենայ։ Իսկ Հոգևորականը, ինչպէս Աղայ Միւշտեիդը՝ գործ ունի մարդու հոգու և սրտի զգացմունքների հետ, այս պատճառաւ էլ նա աւելի զօրեղ է ներգործում և իշխում մարդկանց գործողութեանց վերայ...

Այժմ եմ մտածում՝ որ խորամանկ պարսիկը թերևս ուզեց հէնց առաջին անգամից չափել Հայոց այս բարակ, նիհար, ջահիլ (30 տարեկան) Խալիֆային, որը իւր մօտ գործ պիտի ունենար այնուհետև։ Բարեբախտաբար՝ իմ պատասխանը լաւ տպաւորութիւն թողեց Դատաւորի և ներկայ երկու բարձրաստիճան Պարսիկների վերայ, որպէս և ինձ ուղեկցող երկու քահանայից և իմ թարգման Միրզա Աստուածատուր Փանուէլեանցի վերայ։

Իմ յարաբերութիւնը այս նոր Դատաւորի հետ սկզբից՝ մինչև Դավրէժից իմ մեկնելը անցաւ շատ ախորժ և մի աստիճան բարեկամական. այդ լաւ յարաբերութեան շնորհիւ էր, թերևս, որ կարողացայ յաջողեցնել Դավրիժում թատրոնի սկզբնաւորութիւնը (1879 թ. ապրիլ), որ հակառակ այնքան երկիւղի և վարանմանց, անցաւ անվտանգ՝ կանխաւ ստացուած լինելով նորա հաւանութիւն և գրաւոր երաշխաւորութիւնը *). և այլ չլուսացած և Պարսկաստանում իսկապէս անհնարին բաներ, ինչպէս Խոյում և Դավրիժում հայ

*) Տես «Արձագանք» 1897 թ. № 17. յոդ. «Քսան տարի առաջ»։ Այդտեղ գրած եմ Դավրիժու Թատրոնի թէ սկզբնաւորութեան և՝ թէ առաջին ներներկայացման համառօտ՝ բայց մաքուր պատմութիւնը։

աղջիկների կրօնափոխութեան գործերը։ Այն էլ առանց մեր Ռուսաց կամ միւս քրիստոնեայ Հիւպատոսներին էլ ձանձրութիւն տալու։ Թատրոնի առաջին ներկայացման № 1 տոմսակը ինքս ուղարկել էի նորան՝ որի հովանաւորութեան տակ պիտի կատարուէր Պարսկաստանում առաջին անգամ թատրոնական ներկայացումը. միւս տոմսակների ցրուել — վաճառելը թողուած էր ուսուցչական խմբին. Միրզա Աստուածատուր Փանուէլեանցը՝ պիտի տաներ Խաներին, իսկ Միրզա Աւագ Աֆթանդիլեանցը՝ Հիւպատոսներին։ Մեր Հիւպատոս Գրեբէլը հարցնում իմանում է որ № 1 տոմսակը ես ուղարկել իմ Աբդիւլ-Ռահիմ-խանին, Աֆթանդիլեանցին յանձնարարում է. «Խալիֆային ասա՛ որ ես չ՝ Միրզա Աբդիւլ-Ռահիմ-խանից մեծ մարդ եմ»։ Պաշտաճ պատասխանը վերադարձրի։ Ճշմարիտ որ գերման Գրեբէլը այնքան մեծ էր՝ որ երկու անգամ կը կշռէր միջահասակ, նուրբ ու խելօք դիմագծերով Աբդիւլ-Ռահիմ-խանին։ Փակագծում մի-երկու խօսք պ. Գրեբէլի մասին. նա տ. Յովսէփին գործիք ունելով՝ անյայտ մի փորձ փորձեց Ատրպատականի Հայոց Առաջնորդութեան Փոխանորդիս «մօլեբին» կատարել տալ հիւպատոսարանի մատուռում։ Նա Կովկասի Փոխարքայ մեծ իշխան Միխայէլի՝ երկու տարուայ նուէրը Հայոց դպրոցին — 400 ոսկին ձգձգում պահում էր հիւպատոսարանում. հազիւ ստացայ։

Ընթերցող, այժմ հենց այս մի և նոյն Աֆթանդիլեանցը աչքերը խփելով գրում է. «Երիտասարդ վառվռուն ոյժերը... սկսեցի կազմել Թաւրիզում... թատրոնական ներկայացումներ» (տես «Պատկերներ Րաֆֆու կեանքից», Մշակ 1903 թ. № 81)։ Խան Աֆթանդիլեանցը գիտէ որ ես Աստուծով ողջ եմ, ողջ են և՛ ժամանակակիցներ և մասնակցողներից ոմանք. պէտք էր նորանցից գոնէ քաշուել։ Վերջապէս չէ՞ որ իմ և Աբդիւլ-Ռահիմ-խանի փոխանակած գրերը թատրոնի մասին՝ կարուած պահւում են Դավրիժու Առաջնորդական գործերում.. ։ Եթէ Րաֆֆու այդ կենսագրութեան միւս պատմուածքներն էլ այդպէս գունաւորած են, որ շատ հաւանական է, պէտք է խաչագծել Աֆթանդիլեանցի յիշեալ շարադրութեան վերայ։ Թատրոնի ներկայացման իրաւունք ձեռք բերելս և առաջին ներկայացման անվտանգ և յաջող անցնելը իմ մասնաւոր նամակում գրել ծանուցել էի Առաջնորդին (Անդ. արքեպիսկոպոս), և նա 18 Մայիսի 1879 թ. իւր նամակում գրում էր. «Թատրոնի մասին մխիթարուեցայ, սակայն զայն ներկայացնել մանաւանդ Պարսկաստանում առաջին անգամ, մեծ շրջահայեցողութեան պէտք ունի»։

Դպրոցում դասերն սկսուեց սովորական ժամանակին. առանց մի որ և իցէ միջադէպի, օրինակելի կարգապահութեամբ հասանք ուսումնարանական տարուայ (1878—1879) վերջը։ Այդ տարուայ նման յառաջադիմութիւն որ այն դպրոցը չէր տեսել՝ վկայեցին հարցաքննութեանցը յաճախող նոյն իսկ բծախնդիրները և ուսուցչաց ոմանց վերայ անհաշտ աչքով նայողները։ Զեմ մոռանում Դավրիժեցոց Հայկաբան Ստեփաննոս անուն ծերունուն. կամ Արշակ (թէ՞ Տիգրան) Գորոյեանցի «Հողմաշունչ քամիները». ուսուցիչ Խիզանեանցի՝ հրաբուխի բացատրութիւնը։ Հապա Աֆթանդիլեանցի հարցերից ճնշուած 7—8 տարեկան փոքրիկի «վերջապէս»-ը։ Արժան է որ յիշեմ. Դավրիժեցի տղայոց չափ ուսման ընդունակ աշխոյժ աշակերտութիւն՝ ես չեմ տեսել ուրիշ տեղ։ Ընչէն վերագրել։

Ե.

1879 թ. Զատկից մի-երկու շաբաթ առաջ գալիս է ինձ մօտ Մուժումբարցի անծանօթ մի երիտասարդ, բողոքում է. «Այն տղան, որ իմ քրոջ հետ պսակել տուիք, այժմ չի պահում, ինքն թողել եկել է այստեղ քաղաքում Միրզա Դանիէլենց տանը ծառայում, իսկ քրոջս էլ՞ է տուել, ես եմ

պահում։ Խնդրեմ, որ չի պահում՝ առէք նորանից պայմանում գրուած փողը, նորանով ես կը պահեմ իմ քրոջը»։

—Այն պայմանը զօրութիւն ունէր մինչև պսակուելը, եթէ տղայն փախչէր կամ չպսակուէր՝ այն ժամանակ իրաւունք կունենայիք այն փողը պահանջելու. իսկ այժմ պիտի միայն պահանջէք՝ որ պահպանէ քրոջդ կամ ապրուստ տայ։ Դու գնա, ես Միրզա Դանիէլին կը խնդրեմ որ աշխատեն համոզել տղային՝ ընդունէ իւր կնոջը և միասին ծառայեն նորանց տանը, կամ՝ ապրուստ տայ։ Եթէ չյաջողի, այն ժամանակ ձեզ կը մնայ Դիւանին դիմել։

Միրզա Դանիէլ Շահպազեանց, ընիկ Դավրիժեցի, բարեպաշտ, պատուաւոր և հարուստ ընտանիք են, բոլորովին անմասն կուսակցական ինտրիգաներին։ Հրաւիրում եմ նորան ինձ մօտ, խօսում եմ իւր ծառայի և նորա թշուառ կնոջ մասին՝ որին ձգել է գիւղում անխնամ։ Նա պատասխանում է. «Եթէ կամիք՝ ես կ'արձակեմ իմ ծառային, թող գնայ պահէ իւր կնոջը"։—„Դորանով ինչ օգուտ, ասացի, այն ժամանակ նա կը գնայ մի ուրիշի մօտ ծառայելու„։ Ես սկսեցի որպէս վարդապետ յորդորել նորան՝ թէ բարեպաշտական մի գործ կատարած կը լինի, մի կորուսեալ գտած՝ եթէ ինքն և իւր ընտանիքը յօժարին և ապա իրենց ծառային մի կերպ համոզեն՝ որ ընդունէ իւր կնոջը և ապրին նորանց տանը իբրև ծառայ և աղախին, գոնէ առ ժամանակ, մինչև հաշտուին։ Միրզա Դանիէլը յօժարութիւն տուեց և ասաց. «Եթէ կարողանամ մեր ընտանեացը համաձայնեցնել»...

Զատիկ կիւրակէ (1 Ապրելի) պատարագիչ էի, երկուշաբթի և երեքշաբթի ԽՈՐՀՈՒՐԴ շրջեցի՝ պարտաւորեալ ըստ տեղական սովորութեան։ Չորեքշաբթի առաւօտ ժամի 9—10 կը լինէր, ես հէնց դուրս ելայ եղբօրս հետ Առաջնորդարանի մուտքի կողմի պատշգամը, որի դէմ նայում է խոհանոցը, ուր դուռն և լուսամուտը բաց և խոհարարը այնտեղ, տեսնում եմ ցնցոտիներով և կեղտոտ չարսաւ վերան առած՝

մուրացկի դրութեամբ մի խեղճ կին սանդուղքների գլուխը նոր բարձրանալիս։ Հարցրի, ով ես, ինչ ես կամենում։ Նա պատասխանեց. «Այն Մուժումբարցի կինն եմ, մարդս ինձ չի պահում. դէ որ չի պահում՝ առէք նորանից իմ ԽԵՔԻՆՓՈՒՐԼԻՆ, որ դրել տուեց Առաջնորդը հարիւր թումման, ես այդ փողով կը պահեմ իմ գլուխը»։—Այն փողը քեաբինփուլի չէ, պատասխանեցի, ես քո եղբօրը անցած օրը հասկացրել եմ. դու գնա սպասէ, ես խօսել եմ Միրզա Դանիէլին՝ որ տղային համոզեն պահէ քեզ կամ ապրուստ տայ։

Ինչպէս այս կնոջ և նորա եղբօր խօսքերից ինձ թուաց, սոքա կամ յոյսները կտրած էին տղայից և կամ հետամուտ էին միայն փողը ստանալու։

Կինը իսկոյն վերադարձաւ, եղբայրս գնաց շուկայ, ես բալկօնում, դարձեալ անոյշ արևի տակ մի քանի անցուդարձ անելուց յետոյ, խոհարարին ինչ որ պատուիրեցի հէնց այնտեղից և դարձայ սենեակս։ Ապրելի 13-ին գալիս է մի բարի մարդ և պատմում թէ՝ «լուր է տարածուած, որ իբր թէ դուք ձեր մօտ խնդրով եկած Մուժամբարցի մի կնոջ բերանը փակելով բռնաբարել էք»։—«Մուժամբարցի խեղճ կինը սանդուղքի գլխից իսկոյն յետ է դարձել, ասացի, երևի դրպրոցից արտաքսուած Միրզայ Յարութիւնը և ամեն չար գործում նորա մտերիմ ընկեր Զարդևը (տ. Յովսէփի թագուն անունը) սարքած կը լինին. ես դորանց հախիցը եկել եմ, թող գոնէ վայրախօսեն՝ սրտները հովանայ„...։ Այս պարոնին ճանապարհ դրեցի. ապա եկաւ ուսուցիչներից մին և պատմեց նոյնը, այլ և յաւելացրեց թէ՝ «աշակերտներն ևս լսել են»։ Աշակերտների անունը լսելուս՝ շատ խոր վիրաւորուեցի, մտածեցի՝ որ այլ ևս արհամարհել կամ անուշադիր թողնել չեմ կարող։ Իսկոյն հրաւիրեցի քաղաքի մի քանի պատուաւոր մարդիկ և երկու քահանայք, պատմեցի իմ լսածը. նոքա գրեթէ առանց բացառութեան ասացին՝ որ իրենք ևս լսել են. և յաւելացրին—«սակայն կարևորութիւն պէտք չէ.

տալ, երկու տարի է այստեղ էք և մենք ճանաչում ենք ձեզ, ոչ ոք այդ չի հաւատում ձեր մասին»։

—Պարոններ, ես այստեղ գործ-պաշտօն ունիմ և՛ դրպրոցի 200—300 աշակերտների հետ, որոնք ձեր չափ դատել անկարող են. նոցա համար ես հայրենասէր եմ։ Անհրաժեշտ եմ համարում որ երդմամբ քննութիւն կատարուի, արդարութիւնը յայտնուի և իմ պատիւը փրկեմ։

Ամենքն էլ համաձայնեցին իմ առաջարկութեանը. խորհեցին թէ ուր պէտք էր այդ քննութիւնը կատարել։ Տէր Աբրահամը յայտնեց՝ թէ այն կինը դրսի թաղում (Լիլավայ) իւր ազգականի տանն է լինում. որոշուեց գնալ այն թաղում մի յարմարաւոր տան ժողովել և՛ այն թաղեցի մի-երկու պատուաւոր մարդիկ ևս և կանչել խօսեցնել այն կնոջը։ Գընացին և 3—4 ժամ անցած՝ բերին հետևեալ արձանագրութիւնը։

«Մեք ներքոյ ստորագրեալքս՝ վկայումեմք վասն այն՝ որ Մուժումբարցի Սալվի կինն՝ մեր ամենեցունց առաջ խօստացաւ և ասաց՝ թէ գնացած էի վարդապետի մօտ այն խնդրի համար՝ որ իմ և իմ ամուսնոյս հետ ունեցածներս անբաւականութիւնը մին կարգի դնի՝ և երբ որ պատասխան ստացայ թէ լաւ է կհրաւիրեմ քոյ մարդին և Միրզա Դանիէլին՝ ինչ անելի է մին կերպ կանենք. և երբ որ յետ էի դառնում տուն գնալի՝ եկեղեցւոյ Հայաթումն ստօրօժ Յակոբն պատահեց և հարցրեց թէ ինչ եղաւ քո գործն՝ պատասխանեցի թէ՝ վարդապետն խօստացաւ կանչել իմ մարդին և խօսացնել և կարգին դնել գործն. մի և նոյն ժամանակին Յակոբն ասաց թէ՝ վարդապետն բան չինող չի՝ ես խօսացել եմ այն քո մարդի հետ, և 50 թուման կառնեմ կտամ քեզ *). միայն այնքան լինի որ դու ամէն տեղ ասես թէ վարդապետն ինձ բռնաբարեց, և այլն։ Բայց խօստանում եմ (խոստովանում) որ սուտ է՝ և ինձ վարդապետն ոչինչ մէկ անպատուութիւն չէ արել։ Վասն որոյ և մեք այն Սալվի կնոջ խսկան և հրապարակական խօստմամբն վկայումեմք՝ մեր ստորագրութեամբ։ Թաւրիզ 13 Ապրելի 1879 ամի Տեառն»։

Վկայումէմ Ստուածատուր քահանայ Տէր Զաքարեան
Վկայումեմ Մարտիրոս քահանայ Տէր Յակոբեան
Վկայ եմ Աբրահամ քահանայ Միքայէլեան
Միրզա Անտոն խան Մ. Երուանդեանց
Սալվի կընոջ իրան խսկական խոստմամբ վկայ եմ Ասրի Միքայէլեան
Նոյնպէս վկայեմ Մահտեսի Սիմոն Թումանեանց
Նոյնպէս վկայեմ երեսփոխ Ղազար Առաքելեան
Նոյնպէս վկայեմ երեսփոխ մահտեսի Մխիթար
Աստատուր Բուդաղով
Խաչատուր Տէր Զաքարեանց.
Օհան Տէր Զաքարեանց
Թովմաս Աբրահամեանց.

Ընթերցողը տ. Յովսէփի և դպրոցից արտաքսուած ուսուցիչ Միրզա Յարութիւնի մասին շատ ու քիչ տեղեկութիւն ունի, կարևոր է որ «ստօրօժ» Յակովբի մասին ևս տեղեկութիւն ունենայ։—Անդրէաս արքեպիսկոպոսը որքան ժամանակ Ատրպատականի Առաջնորդ է եղել՝ այդ Յակովբն էլ (Լիլավայ թաղից) նորա սպասաւորը։ 1876 թ. աշնանը Անդրէաս արքեպիսկոպոսը եկաւ ի Ս. Էջմիածին և խսպառ հրաժարուեց Ատրպատականի Առաջնորդութիւնից, ուր Յակովբը դարձեալ նորա մօտ էր։ Անդրէաս արքեպիսկոպոսը 1877 թ. վերկին ուղարկուեց Դավրէժ Առաջնորդ, որի հետ այս անգամ և ես ուղարկուեցի. Յակովբը այնտեղ ծառայում էր և՛ ինձ։ Ինչպէս նա գիշերը, ամենքի խոր քնի ժամանակ, հրացանը արձակեց դահլիճի լուսամուտով, որպէս թէ գող է նկատել պատի վերայով բարձրանալիս. և այդ հէնց այնտեղի վերայ՝ ուր Առաջնորդարանի երկու սարվազներն են լուսամուտի տակ բակում պարկած։ Ես այդ գլուխը քարշ մուր մարդուն ատում էի։ Առաջնորդը երբ պատրաստուում

*) «Տէր Յովսէփը սաղ լինի»։ Տարաւ ինձ տ. Յովսէփի տունը, նա ասաց. «լաւ, դու գնա՝ մենք քո բանը կը վերջացնենք»։ Ժողովականներն, ուր կայն և տ. Յովսէփի բարեկամ մարդիկ, ինչպէս տ. Աբրահամը, Միրզա Անտոն խանը, պ. Ասրին և երեսփոխ Ղազարը, խոհեմութիւն են համարում տ. Յովսէփին վերաբերեալ այդ խօսքերը (կնոջ պատմած) չը մտցնել արձանագրութեան մէջ։

էր կրկին մեկնիլ դեպի Ս. Էջմիածին՝ միջնորդեց ինձ. «Գիտէք, Յակովբի տունը երեխայքը այստեղ են, խնդրում աղաչում է որ պահէք ձեզ մօտ ծառայ»։ Ես կարճ և կտրական կերպով մերժեցի։ Յակովբը անգործ չմնալու համար՝ Անդրէաս արքեպիսկոպոսի հետ դարձեալ գնաց Էջմիածին. բայց նոյն աշնանը Անդրէաս արքեպիսկոպոսը կարգուելով Ճեմարանի Տեսուչ և տեղափոխուելով այնտեղ, Յակովբին արձակում է և մի նամակ տալով ձեռքը՝ վերադարձնում Դավրէժ։ Առաջնորդ Անդրէաս արքեպիսկոպոսը այդ նամանակով դարձեալ միջնորդում է որ Յակովբին ընդունեմ ինձ մօտ ծառայ կամ գոնէ ուրիշ գործի դնել աշխատեմ։ Ես նորան չեմ ընդունում ծառայ, սակայն պատուիրում եմ. «դու քեզ համար տեղ փնտրի, ես էլ կը միջնորդեմ ուրիշների՝ որ քեզ մի գործի դնեն»։ Ում խնդրում եմ նորան իրենց մօտ գործի դնել՝ հրաժարւում են. անցնում է 2—3 ամիս, նա պարապ է և կարօտ, ճարահատեալ՝ դպրոցի ծառայ այն պատուական համեստ մարդին (Մնացական անուն, յետոյ գիւղի վրայ քահանայացած) տեղաւորում եմ ուրիշ տեղ, իսկ Յակովբին կարգում դպրոցում «ստօրոժ». մի և նոյն ժամանակ պատուիրում եմ խոհարարիս՝ որ Յակովբին ցերեկները անխափան ճաշ կերցնէ։ Բացի այս. վաղուց—Անդրէաս արքեպիսկոպոսի մեկնելէն և իմ Փոխանորդ նշանակուելէն հետէ, հոգում եմ նորա փոքրիկ տղայի դպրոցական պիտոյքները. այսքանը, և միայն ի յարգանս Անդրէաս արքեպիսկոպոսի միջնորդութեան։ Սակայն Յակովբը դժգոհ է, մի քանի անգամ սարկաւագ (միրզա) Յարութիւնին և տ. Յովսէփին (սկզբում) միջնորդ է ձգում խնդրում՝ որ ընդունեմ ինձ մօտ, մինչև յոյսը իսպառ կտրելս։—Ուրիշ բան է Առաջնորդարանի ծառայ լինելը, ռոճիկը աւելի, հանգիստ, պատուաւոր, մանաւանդ որ բազարի ծախքը իւր ձեռքում. կը պատահի որ եկող գնացողներն էլ մի քանի շահի կը դնեն բուռը...

Անցքի մասին Առաջնորդին (Անդ. արքեպ.) 1879 թ. Ապրելի 14-ին գրած նամակումս գրուած է. «այն կնոջը թելադրողը, որին և հեռու ազգական, Ձեր ծառայ Յակովբն է՝ 50 թումանի խոստումով նորան տ. Յովսէփի տունը տանողը, Յակովբը՝ որի համար գրում էիք թէ գործի դիր և ես ուրիշին արձակելով՝ նորան կարգած էի դպրոցում։ Այսպէս և՝ անառակ, անարժան և աւազակ Սարկաւագի համար էիք խնդում*)։ Դուք և ես միայն կամք յԵրուսաղէմ»...

Ապրելի 13-ի վերոյգրեալ արձանագրութիւնն (եր. 36—37) ստանալուց անմիջապէս յետոյ ահա թէ ինչ արի.— (նոյն նամակից) «Յակովբիդ դատաստանը շատ արդարութեամբ տեսայ իսկոյն, կոչեցի Ղալաբէկու տանից երեք ֆարրաշ և մեր երկու սարվազներով կապել տուի Ֆալաղայի և զոր դու պատուիրեցեր ջարդել տուի. և եթէ կնոջ այս խոստովանութեան արձանագրութեան մէջ թագցրած չէին լինի տ. Յովսէփի տուն տանելը...»։

Հէնց այն րոպէին որ Յակովբի ոտքերը դեռ ևս նոր ուզում էին դնել Ֆալաղա, վազնիվազ հասաւ Նազար էֆէնդի Գորոյեանցը։ Տէր Յովսէփը և սարկաւագը շտապել էին նորան իմաց անել։ Այդ յարգելի պարոնը փաթաթուեց ինձ, մինչև ծնկներս փարեց պաղատեց, որ ներեմ «գղեհիկ մարդուն», բայց իզուր։ Նորա ներկայութեամբ բարբարոսական պատժով պատժելուց յետոյ՝ հրամայեցի քարշ տալ ձգել փողոցը, որովհետև արձակելուց յետոյ՝ չէր ուզում վերկենալ կորչել, «մկան սատկ» էր տուել։ Այդ րոպէին ես բարբարոս էի և աւելի քան բարբարոս։ Չեմ ստրջանում։

Հաջի Աղախանը (Ղալաբէկին) ինձ լուր է ուղարկում. «երանի թէ ինձ յանձնած լինէիք Յակովբի դատաստանը, ես նորա հէրը գէօ-իշը էլ հանէի»։

---

*) Գրում միջնորդում էր՝ որ Սիրզա Յարութիւնին, մի բհակի խարկութեամբ գողացողին դարձեալ ընդունեմ դպրոցը։

—Այն ժամանակ ես ստիպուած՝ դարձեալ պիտի Ձեզ միջնորդէի՝ որ նորան արձակէիք. պատասխան ուղարկեցի։

Յակովբին խրատում են և նա կաղալով գնում մտնում է մեր Ռուսաց հիւպատոսի դրօշակի տակ բռնել (ապաստանել), նախ՝ հիւպատոսին ևս յայտնի արած լինելու համար, և երկրորդ՝ Ղալաբէկու Ֆարրաշբաշու ձեռքից ազատուելու համար. որովհետև չարչարելու և փող կորզելու համար մտածած են եղել բանտարգել նորան։ Հիւպատոսը իւր պաշտօնեաներից տեղեկանում է այդ մարդու կեղտոտ արարքը, հրամայում է իսկոյն դուրս վարել նորան այնտեղից։ Իսկ ես դարձեալ լուր եմ ուղարկում Ղալաբէկուն և խնդրում՝ հանգիստ թողնել չար ծառային։

Ապրելի 15-ին արձանագրում են Միրզա Դանիէլի ցուցմունքը. ահա և՛ այդ.—

«Մեք 'ի ներքոյ ստորագրեալներս վկայումեմք վասն այն՝ որ Մեծապատիւ Միրզայ Դանիէլ Շահպասեանցն հրապարակաւ ասաց այս խօսքերը. Բարդուղիմէոս վարդապետն ինձ տուաւ մէկ յանձնարարութիւն, որ երբև իմ ծառայ Սօղոմոնին համոզացնեմ, որ կամ իւր կնոջ Սալպին պահի երբև կին՝ և կամ նորա ծախքերը տայ. և ես ընդունեցի այն յանձնարարութիւնը այն Սօղոմոն իմ ծառային զանազան խօսքերով և զանազան յորդորանքներով համոզացրի որ էլն իւր կնոջն պահի, և ես էլ ընդունեցի որ այդ անելէն յետոյ՝ Սօղոմոնն իմ տանն մնայ երբև ծառայ և կինն երբև աղախին։ Ապա մեր ընտանիքը այն Սալպի կնոջն գոչեցին և նորան էլ այս խօսքերը ասացին. երբև թէ քո մարդն քեզ ընդունում է իւր կին, և դու կմնաս մեր տանն երբև աղախին և քոյ այրն երբև ծառայ, յետոյ այն Սալպի կինն ասում է՝ շատ բարի՝ երբ որ այսպէս է ապա գնամ իմ բարեկամներին խորհուրդ անեմ, և մեք ասացինք թէ շատ բարի. այն կինն գնում է քանի օր պատասխան չէ բերում. և յետոյ մարդ ուղարկումեմք նոյն կնոջ մոտ, թէ ինչ եղաւ՝ կրկին գալիս է և ասում է թէ լաւ է, պատասխան կբերեմ. և այնպէս գնում է և քանի օր անցնում է և պատասխան չէ բերում. այս յետեալ խօսակցութիւնն մեք պարոն Միրզայ Դանիէլէն լսելով վկայումեմք. 15 Ապրելի, 1879 ամի Թաւրիզ»։

Դանիէլ Մ. Շահբազեանց.

Մարտիրոս քահանայ Տէր Յակոբեան.
Աբրահամ քահանայ Միքայէլեան.
Այս պատմութիւնն Միրզա Դանիէլեցն լսեցի, Միրզա Անտոն խան Մ. Երուանդեանց.
Մահտէսի Սիմոն Թումանեանց.
Վերոյգիրս խօսակցութեան վկայեմ Հարոն Զարգարեանց.
Վկայեմ Ասրի Միքայէլեանց.
Մկրտում Ա. Պատմագրեանց
Վկայեմ Գասպար Շահնազարեանց.
Վկայեմ Սարգիս Յունանեանց
Վկայեմ Եսայի Ա. Մ. Վարդանեանց.
Վկայեմ Ալէքսան Տէր Սհանեանց
Վկայեմ Խաչատուր Տէր Զաքարեանց։

Այս արձանագրութիւնից երևում է՝ որ մարդի դէմ կնոջ (և եղբօր) բողոքին օրինաւոր բաւականութիւն էր տրւում աւելի քան յուսալի կամ հնարաւոր էր, իսկ կինը «բարեկամների (ստորոժ Յակովբ, Միրզա Յարութիւն և տ. Յովսէփ) խորհրդով» ձգձգում խոյս է տալիս գնալ իւր մարդի հետ ապրել, այն էլ ոչ թէ գիւղի մոլոգամ երեսի վերայ ձգուած, այլ Միրզա Դանիէլենց տանը։ «Բարեկամները» Բարդուղիմէոս վարդապետին վրէժխնդրութեամբ անուանարկելու միակ պայմանով խոստանում են ազքատ կնոջը 50—100 թուման չէ՞ քինոֆոլին ստանալ, և նա (և՛ եղբայրը դուցէ) 170—340 ռուբլին գերադասում է,—անիրաւ փողը դորանց նմաններին է գայթակղեցրել,—սակայն երբ բանը բացւում է և նորան ուզում են երդուեցնել և քննել (տես Ապրելի 13-ի արձանագրութիւնը եր. 36—37), արտասւում է աղիողորմ և անիծելով Յակովբին և տ. Յովսէփին՝ խոստովանում է ճշմարիտ եղելութիւնը, որ և արձանագրւում է ներկայ գտնուած մարդոց իսկական ստորագրութեամբ։ Երկու արձանագրութիւններն ևս, իսկականները, այժմ ինձ մօտ պահուած են։ Դավրէժի այն ժամանակուայ եղած-չեղած

«ենշանաւոր» մարդիկն սոքա էին։ Այս արձանագրութիւնները կազմուած և ստորագրուած են հէնց ժողովի մէջ առ տեղեաւն և ոչ շրջեցնելով։ Բաց է մնում 4 «ենշանաւոր» մարդոց ստորագրութիւններ, որոց երկուքը բացակայ էին քաղաքից, այն է՝ Աբրահամ Վարդանեանց և Ծատուր խան. երրորդին՝ ձանձրութիւն չեն կամեցել տալ ժողովի գալու, այն էր՝ վաճառականապետ ծերունի Արզուման Նազարբէկեանը. իսկ չորրորդը՝ հեռագրատան պաշտօնեայ Սօլոմոն խանը, որ «ենշանի» չէր խառնուում ոչ մի ազգային կամ ժողովրդական գործի։

Մի վերին աստիճանի զուգադէպ նմանութիւն. առաջ Մուժումբարցի կնոջ Բարեկամների խորհրդով որոգայթ է լարուում Բարդուղիմէոս վարդապետի դէմ, ահա 24 տարի յետոյ էլ «Լումայի» խմբ. տ. Գիւտի դարձեալ «Բարեկամների խորհրդով» արտատպուում է «Արարատից» նոյն դէպքի մասին Սինոդի ՀՐՊՈՐՈՒՄՆ օրագիրը։ Մուժումբարցի կնոջը և նորա խորհրդատու «բարեկամներին» տեսաւ ճանաչեց ընթերցողը. մնում է տ. Գիւտի խորհրդատու «բարեկամներին» ևս անուանել, որ են՝ Սինոդի նախորդ Ատենադպիր, պատլոգներ շինող Սիմ. Փիլիպոսեան, Կորիւն վարդապետ, Գարեգին եպիսկոպոս Սաթունեանց։ Մուժումբարցի կնոջը և տ. Գիւտին իւրաքանչիւրին իւր «բարեկամների» խմբով դրէք դէմուդէմ, նայեցէք. այդքան բնական նմանութիւնները...

Զ.

Դավրիժում, գոնէ այն ժամանակներում, Առաջնորդի կամ Փոխանորդ վարդապետի շրջանը խիստ նեղ-փակ էր, մի և նոյն ժամանակ զբաղմունքներս անչափ. և՝ Առաջնորդական Փոխանորդ եմ,—չկայ կոնսիստորիայ, ոչ գործավար և ոչ գոնէ մի գրագիր,—և՝ հոգաբարձու եմ, և՝ տեսուչ և՝ ուսուցիչ։ Առաջին անգամն էր օտարութիւն տեսնելս. նուազ էի՝ աւելի նուազում էի։ Վճռել էի դպրոցի հարցաքննութիւնները աւարտելուց յետոյ հրաժարուել է և վերադառնալ Ս. Էջմիածին, և սորա համար՝ դեռ ևս Մարտի 10-ի (1879 թ.) գրած նամակումս խնդրում եմ Առաջնորդ Անդրէաս արքեպիսկոպոսին, որ Վեհափառին խոնարհաբար յայտնէ իմ մտադրութիւնը և Վիճակի մասին վաղօրօք հոգան։ Իմ այս նամակը ճանապարհին, ստանում եմ Առաջորդից նամակ,—դարձեալ նոյն Մարտի 10-ին գրուած,—որ ի միջի այլոց գրում է. «Հրամանաս— Վեհափառի երէկ ներկայացուցի Իրեն իմ յայտարարութիւնը, որով խնդրեցի պարգևել Ձեզ ականակոռ խաչ. յուսամ թէ մինչև Զատիկ ստանայք այդ պարգևը։ Եթէ յաջողի այս, կարծեմ այս պետի մնայ միայն Ձեր մօտը երբև յիշատակ Ձեր Փոխանորդութեան. ինձ համար այն ևս չմնաց իմ Առաջնորդութենէն»։

Մի քանի օրից յետոյ ստանում եմ Հայրապետական պարգև խաչը և կոնդակը.—

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ԲՐԻՍՏՈՍԻ *եւ անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Արոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Տրոյ Կաթուղիկէ ԷՋՄԻԱԾՆԻ. Շնորհաւնակ Բարդուղիմէոս վարդապետի Գէորգեան հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս ողջոյն և օրհնութիւն։*

Ուրախ եմք, զի որպէս Առաջնորդն Ատրպատականի Սրբազան Անդրէաս Արքեպիսկոպոս սիրելին մեր յայտարարութեամբ ծանուցանէ մեզ, ամենայն ժրութեամբ և ջերմեռանդն գործունէութեամբ վարես զպաշտօն Փոխանորդի Առաջնորդութեան վիճակին Դավրիժու, արժան համարեցաք մերով այսու Հայրապետական օրհնութեան Կոնդակաւ առաքել առ քեզ զխաչ ականակուռ կրել ի կուրծսդ, զի խրախուսցիս սովաւ առաւելուլ ի քեզ զշնորհդ վարդապետութեան անարատ և սուրբ վարուք յօրինակ ժողովրդոցդ, որոց միջի

պաշտօնավարես, և ջանասցես միշտ ի պայծառութեան պահել զսուրբ եկեղեցիս, և զդպրոցս ի յառաջադիմութեան, ողջ լեր։

Գէորգ Դ. Կաթուղիկոս ամենայն Հայոց:

Թ. 93, ի 13-ն Մարտի 1879 ամի, ըստ տուժարիս ՌՃԻԸ
ի Սուրբ Էջմիածին։

Առաջնորդ Անդրէաս արքեպիսկոպոսը նոյն Մարտի 19-ի նամակով յայտնելով որ Հայրապետական պարգևը արդէն փոշտով ուղարկուած է, ի միջի այլոց գրում է. «Մարտ ամսոյս 10-ին գրած նամակդ կարդացի...։ Դուք գիտէք Ձեր գալուն կամ չգալուն խորհուրդը. միայն թէ լաւ չէ որ պարգևը ստանալէդ յետոյ չուտով գալ ուզէք. դա բաւական անքաղաքավարութիւն կը լինէր»։

Ի՞նչ կարծիք որ անքաղաքավարութիւն կը լինէր։—Ես տեղեկութիւն ունէի Առաջնորդի նամակներից՝ որ Դավրիժում վարկ և կշիռ ունեցող պարոններ իրենց նամակներով շնորհակալութիւններ էին յայտնել իմ «բարուրք կառավարութենէն», իսկ Կաթուղիկոսը՝ նորան իմ մասին քանիցս ասել էր. «նա ընդունակ անձն է... դուք կը մնաք ժամանակ մի ևս Առաջնորդ անուամբ և նա ձեր Փոխանորդ. տեսնենք»։ Իսկ մեր օծակից Յուսիկ վարդապետը (այժմ եպիսկոպոս) իւր՝ Յունվար (1879 թ.) 30 թուակիր նամակում ի միջի այլոց գրում է. «Այժմ խնդրեմ որ Ձեր մասին հաղորդէք թէ ինչպէս է առողջութիւններդ. այստեղ միշտ լաւ են խօսում Ձեր վերայ, ինչպէս լսում է՝ և Վեհափառ Կաթուղիկոսը լաւ համարում ունի Ձեր վերայ և նորընծաներիս մասին խօսած ժամանակ Ձեր անունը առանձին զոհութեամբ է յիշում. այս ասում եմ անկեղծօրէն... Ձեզ ողջունում են եղբարք, որոնք Ձեզ յարգում են և ուրախ են Ձեր յաջողութեան համար»։ Բայց հազիւ $2^1/_2$ տարուայ վարդապետ՝ չէի կարող սպասել խաչ ստանալ, այն էլ Գէորգ Դ. Կաթուղիկոսից։ Որոշեցի գոնէ առ ժամանակ յետաձգել հրաժարուելու մտադրութիւնս։ Սակայն Զարադևի վերջին արարքից վշտացած և խպառ զզուած, մանաւանդ որ իմ իրաւունքից վեր էր

նորան ուղղուած պէս հարգի թերթը։ Ապրելի 13-ի և 15-ի այդ արձանագրութիւնները (եր. 36.—37, 40—41) դնելով իմ ընդարձակ նամակների մէջ, պատմելով ճիշդ եղելութիւնը՝ խնդրեցի Առաջնորդից .ա) ցոյց տալ այն արձանագրութիւնները Վեհափառին և նամակներս կարդալ կամ բովանդակութիւնը պատմել նորան։ բ) Դադարեցնել տ. Յովսէփին քահանայութիւնից կամ կոչել նորան Էջմիածին և Ղազարապատում փտեցնել։ գ) Յամենայն դէպս՝ թոյլատրուի ինձ թողնել Ատրպատականը և գալ Էջմիածին, մանաւանդ թէ առողջութիւնս ևս չի տանում։

Անդրէաս արքեպիսկոպոսը Ապրելի 21-ի նամակում գրում է ինձ. «Ես այնքան չեմ զարմանար այդ դէպքի վերայ, որոյ նման աշխարհիս մէջ շատ են պատահած և կը պատահին, որքան ուրախ եմ որ արդարացել էք այդ չարաչար զրպարտութենէն. «Առաքինութիւնն ի ձախողակս անՀի»։ Եւ խորհուրդ է տալիս որ նոր նամակ գրեմ, հանդարտ ոճով, այլ և տ. Յովսէփի մասին լռել՝ քանի որ արձանագրութեան մէջ էլ չկայ նորա անունը. որպէս զի Կաթուղիկոսին յայտնէ-կարդայ։ Ես պատասխանում եմ պնդելով նոյնը, որովհետև այդ արձանագրութիւններն Իրեն կամ Կաթուղիկոսին ուղարկելու և բողոքելու միակ նպատակս էր տ. Յովսէփին հարգանքն անել, ապա թէ ոչ ինչ պէտք ունէի ուղարկելու։ Եւ ահա Նա Մայիսի 18-ի նամակով գրում է. «Ամսոյս 5-ին և 6-ին գրած նամակներդ ստացայ և վերջինի բովանդակութիւնը յայտնելով Վեհափառին, խնդրեցի յանցաւորին պատժել Ձեր ծանուցած պատճառներուն համար և միանգամայն կոչել Ձեզ այստեղ հիւանդութեանդ առիթով։ Մի քանի օրէն կրկին ներկայացայ և նոյն առաջարկութիւնը անելէս յետոյ ամենալուրջ խոսքերով մի ժամու չափ, երբ բացասութիւնը կրկնուեցաւ, հետևցուցի թէ նորան կանչուի այստեղ մի սաստ կամ գոնէ խրատ լսել տալու, բայց դարձեալ ի զուր, որովհետև միշտ կասէր թէ «նա կողմնակիցներ ունենալով կամ գրաւելով, մեծ խռովութիւն կելնէ տեղոյն ժողովրդոց մէջ, ուստի լաւ է խոհեմութեամբ կառավարուի վարդապետը»։ Կարծեմ հիւանդութեանդ ևս չհաւատաց կամ ուշադրութիւն չդարձուց, որ ստէպ ստէպ առաջ կը բերէի, և

մինչև անգամ իմ վերայ կասկածեց որպէս թէ առանձին մի դիտումն ունենայի։ Ահա Վեհափառի դիտողութիւնը։ Վերջապէս ինչ որ Ձեր ցանկութիւնն էր՝ կատարել ամեն ջանք ի գործ դրի. եթէ արժան կը համարիք, այստեղ Ձեր ամենէն մերձաւորաց ևս գրեցէք միջնորդելու որ գոնէ Ձեզ գրուի վերադառնալու. որուն կը ցանկամ պարզ սրտիս, կը հաւատա՞ք արդեօք»։

Կաթուղիկոսը տեղիք ունէր կասկածելու, որովհետև Անդրէաս արքեպիսկոպոսը Ատրպատականի Առաջնորդ անունը կրում էր, սակայն Առաջնորդական արդիւնքից մի հոպէ չէր հասնում նորան. մինչդեռ եթէ իմ տեղ Փոխանորդ ունենար տ. Յովսէփին՝ արդիւնքից մեծագոյն մասը իրեն կուղարկուէր։ Այս այսպէս. սակայն ես խոր համոզուած եմ որ հանգ. Անդրէաս արքեպիսկոպոսը, իբրև միանգամայն անշահասէր մարդ, այդ հաշուով չէր առաջնորդւում։ Բնական էր որ այդպիսի հաշիւ տ. Յովսէփը կունենար անշուշտ. իմ հեռանալը սորան ձեռնտու պիտի լինէր ըստ ամենայնի։

Առաջնորդը գարձեալ նոյն Մայիսի 24-ին գրում է. «Ծատուր խանը եկաւ Էջմիածին ամսոյս 19-ին և հետևեալ օրը գնացերուան առաջին պահուն վերադարձաւ յԵրևան։ Նա երկու անգամ եկաւ իմ մօտ և շատ ցանկութիւն ցոյց կտար որ դարձեալ գամ Դավրէժ. նոյնը յայտնած էր և Վեհափառին մի քանի անգամ ներկայանալիս. բայց պատասխան լսած էր թէ նա ինձ շատ հարկաւոր է այստեղ ձեմարանի համար. և այսպէս դարձեալ մնաց Դավրիժու Առաջնորդութեան հարցը անորոշ։... Ուրեմն դեռ ևս անորոշ ժամանակաւ ես կը մնամ ձեմարանում և Դուք Դավրիժում փոխանորդ։ Ինչպէս նախընթաց նամակաս ծանուցած եմ, այժմ ևս կը կրկնեմ. ես խնդրած եմ Ձեր ցանկութեան համաձայն, բայց անկատար մնաց իմ խնդիրը. ահա այս ժամուն Վահրամ եպիսկոպոսը վերադարձաւ (Կ. Պոլսէն), եթէ կամիք դիմեցէք նորան պարզաբար հիւանդութիւն յառաջ բերելով, որ գործը չբարդուի. գուցէ Ձեր վերադառնալը յաջողի»։ Շարունակում է. նամակի չորրորդ երեսում. «Ց. Գ. Այս րոպէիս միայն կարողացայ իմանալ մի լուր, որ Վեհափառը մինչև անգամ ինձ չէր յայտնել. Նորին Վեհափառութիւնը յանձնել է Ծատուր խանին, որ Դավրէժ գնալիս հանդիպի Կարմիր վանքը Յովակիմ եպիսկոպոսին և համոզէ նորան ընդունելու Ատրպատականի

Առաջնորդութեան պաշտօնը եթէ համոզուեց այս մասին և մէկ էլ հին անցքերու համար մի մեղայագիր տուաւ, այն ժամանակ պիտի նշանակուի ինքը նոյն պաշտամանը. տեսնենք այս կարգադրութիւնը ինչ հետևանք կունենայ»։

Յովակիմ եպիսկոպոսը և մեղայագիր. այդ աներևակայելի բան էր։ Բայց թէ մի «դուդուկ» էր որ տուել էր և ճանապարհ դրել Ծատուր խանին, և՝ թէ հէնց նորա ցանկացած «Բոյ-Բուսալով» մարդն էր։ Սակայն Յովակիմ եպիսկոպոսը այնպիսի զայրոյթով էր լսել մեղայագրի առաջարկը՝ որ Ծատուր խանը փոշմանելով էր դարձել Կարմիր վանքից, դարաբաղցիք ասում են՝ խելքի գուռած։ Մազալու պատմում է Յովակիմ եպիսկոպոսի սպասաւոր Ադամ վարդապետը։

Հիմնուելով և դատելով Անդրէաս արքեպիսկոպոսի և Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսների ինձ գրած նամակների, յետոյ էլ Էջմիածնում իմ լսածների վերայ, բարոյական պարտք եմ համարում այստեղ ասել ի պատիւ Ծատուր խանի՝ որ նա ոչ մի վատ բան չի խօսել իմ մասին Էջմիածնում, չնայելով մեր սուր յարաբերութեան։ Նա Բարդուղիմէոս վարդապետին գովելով հանդերձ՝ յաւելացրել է. «բայց խիստ մարդ է և դեռ երիտասարդ, իսկ մեր Պարսկաստանում պէտք է եօլ-պանող մարդ, մի և նոյն ժամանակ եպիսկոպոս և արտաքինը — բոյուբուսալը փառաւոր»։

Ապա Առաջնորդը իւր Յունիսի 12 թուակիր նամակում գրում է. „Մայիսի 19 և 26-ին և Յունիսի 2-ին գրած նամակներդ ստացած եմ։ Վեհափառը ամսոյս 9-ին գնաց Բիւրական հիւանդութեամբ. մի քանի օր էր որ կարելի չէր լինում տեսնել և կրկնել այն խօսակցութիւնները, որը ինքը բացաւ անցեալ կիւրակէ օր։ Ես խնդրեցի որ հիւանդութեանդ և վերջին զրպարտական անցքերու համար Ձեզ վերակոչելու շնորհ անէ. պատասխանեց թէ վիճակը առանց իշխանութեան թողուլը լաւ չէ, պէտք է սպասել դեռ ևս, աւելցուց։ Ահա տեսնում էք, որ մեր արշինն համեմատ կատ.. չեն տալիս։ Ես մի քանի օրէն Վահրամ եպիսկոպոսին գրելու եմ ձեզ համար. դուք ևս գրէք նորան»։

Ես Անդրէաս արքեպիսկոպոսին գրել էի, ի պատասխանի նորա՝ Մայիսի 18-ի և 24-ի նամակների. „Դուք էք Առաջնորդը վիճակիս, իսկ ես՝ Թէպէտ Վեհափառի հրամանով, սակայն Ձեր թղթով՝ Ձեր Առաջնորդական Փոխանորդն եմ. օրինաւոր եմ համարում Ձեզ միայն դիմել և Ձեր միջոցաւ Նորին Վեհափառութեան հաճութիւնը ստանալ հրաժարուելու և գալու ի Ս. Էջմիածին։ Պարտք չեմ համարում և ոչ պատշաճ այս խնդրում Վահրամ եպիսկոպոսին կամ իմ «ամենէն մերձաւորաց» ես գրել միջնորդելու որ գոնէ ինձ զրուի վերադառնալ»։ Ուստի խնդրում եմ որ Դուք անձամբ, որպէս վիճակիս Առաջնորդ և գործին տեղեակ, առանց ուրիշի միջամտութեան աշխատէք և շտապէք Վեհափառի հաճութիւնն ստանալ՝ որ վերադառնամ»։ Բայց երբ ստացայ նորա Յունիս 12 թուակիր վերոյիշեալ նամակը, և հէնց այդ օրերումն էր որ Ծատուր խանը ճիշտ մի զոյգ և մի կէնտ իւր արբանեակներով մտնելով գպրոցի գանձապահ մահտեսի Սիմէոն Թումանեանցի հիւրէն՝ ասել էր խոնարհի. «վարժապետների ռոճիկը շատ է. պահանջում ենք որ ամառուայ արձակուրդի (2 ամիս) ռոճիկները չտաք»։ Նորան ինչ փոյթ որ ես իբրև Տեսուչ և Առաջնորդի Փոխանորդ՝ գրաւոր պայման ունէի ուսուցիչների հետ։ Խօսքին եշող չեղաւ Թէպէտ, այնու ամենայնիւ ատելութիւնս փոխուեց զզուանքի և Յունիսի 16-ին մի կարճ նամակ գրեցի Անդրէաս արքեպիսկոպոսին. — «Իւր իշխանաւորի դէմ որոգայթ լարող չարագործին անպատիժ թողնելուց յետոյ ինձ սափրել որ դարձեալ մնամ Փոխանորդ՝ ինձ համար անհասկանալի է. ի՞նչ է նշանակում վարդապետին պաշտօն յանձնել ժողովրդի միջ՝ բայց ի հարկին վրէժխնդիր—տէր չլինել նորա պատուին։ Վերջին անգամ խնդրում եմ որ ինձ թոյլատրուի վերադառնալ ի Ս. Էջմիածին։ Կը սպասեմ, յուսով՝ որ Վեհափառը զիջանի իմ աղաչանքին, այնքան ժամանակ՝ որքան պէտք է նամակիս տեղ հասնելուն և պատասխան ընդունելու համար։ Եթէ պատասխանը դարձեալ բացասական լինի՝ ես կը գամ Էջմիածին, Վեհափառ Հայրապետը եթէ կընդունէ՝ շատ լաւ, թէ ոչ՝ կը գնամ իմ հօր տունը։

Բարի Անդրէաս արքեպիսկոպոսը զգում է հետևանքի ծանրութիւնը, շտապում է նոյնը զգալ տալ Բիւրականում

Վեհափառ Կաթուղիկոսին և Վահրամ եպիսկոպոսին. այս անգամ կարողանում է Կաթուղիկոսի հաճութիւնը ստանալ՝ ինձ ի Ս. Էջմիածին հրաւիրելու։ Մինչ այս մինչ այն՝ կ'անցնէր ի հարկէ մի քանի օր, երկնչելով թէ մի գուցէ ես չ'սպասեմ և առանց թոյլտուութեան մեկնեմ Դավրէժից, նոյն Յունիսի 23-ին հեռագրում է.—

A Tauris.

A Archimandrit Bartholéméos.

Restez à Tauris jusqu' à recevoir ma lettre officielle pour la prochain poste.=Կացէք Դավրիժում մինչև մերձաւոր փոշտով ստանալդ իմ պաշտօնական գրութիւնը. Անդրէաս արքեպիսկոպոս *)։

Հասկացայ որ ուրեմն յաջողել է իմ խնդիրը և սիրտս հանգստացաւ։ Մի քանի օրից յետոյ ստացայ Առաջնորդից պաշտօնական թուղթը, № 9, ի 26 Յունիսի 1879 ամի։ Կաթուղիկոսը տակաւ յոյս է ունենում, որ կը գամ Էջմիածին և կարօտս առնելուց յետոյ՝ թերևս կը ցանկամ վերադառնալ Դավրէժ։ Ահա պաշտօնական թուղթը։

«Արժանապատիւ Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեան. Ըստ բարձու հրամանի Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց ունելով աւանդել Ձերում Արժանապատուութեան զինչ ինչ հրահանգս, հրաւիրեմ զՁեզ ի սուրբ Էջմիածին։ Ուստի յանձնելով Ձեր առ ժամանակեայ զպաշտօն Փոխանորդութեան Յակովբ վարդապետի Եղիազարեան... ի Ճանապարհ անկանիջիք ի Մայր Ս. Աթոռս»...

Բաց թողած տողերը վերաբերում են վիճակային դրամական հաշիւներին։ Իսկականը կարած պահում է Դավրիժու Առաջնորդական գործերում, իսկ ինձ մօտ կայ հարազատ պատճէնը։ Յակովբ վարդապետին (Սալմաստի իմ փոխանորդը) նշանակելու համար՝ ես էի մատնացոյց արել, որպէս զի Տէր-Յովսէփը չնշանակուէր։

---

*) Այս հեռագրի իսկականը այժմ ինձ մօտ է։

Ծանրակշիռ մի հանգամանք.—Սինոդի անդամ Գրիգոր և Ներսէս վարդապետները ձեռնադրուում են եպիսկոպոս 1879 թ. Մայիսի 27-ին. իմանում եմ լրագիրներից, շնորհաւորում նմ նոցա՝ երկուքին մի նամակով։ Նոքա էլ երկուքը մի նամակով, գրուած 1879 թ. Յուլիսի 10-ին, յայտնում են ինձ շնորհակալութիւն։ Այդ նամակը վերջանում է հետեւեալ պարբերութեամբ. „Ցուսով և սիրով մաղթեմք և մեք վասն Ձեր հասանիլ ի նոյն աստիճան ըստ յիրաւի արժանեաց Ձեր, որ այժմէն իսկ ի նմին պաշտաման ճգնիք առաջնորդելով հօտին եկեղեցւոյ, և յուսամք զի ամենայն արժանաւորութեամբ հասանիցիք ըստ վկայելոյ մինչև ցայսօր ընթացեցն Ձեր"։ Ծանրակշիռ այն և անվիճելի փաստ է՝ որ մինչև 18։9 թ. Յուլիսի 10-ը, ուրեմն մինչև Ատրպատականի թէմի Փոխանորդութիւնից այնքան դժուարութեամբ հրաժարուելով արձակուելուցս 15 օր յետոյ էլ Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսները չէին վարանում վկայել. «հասանիլ Ձեր ի նոյն աստիճան ըստ յիրաւի արժանեաց Ձեր .. ամենայն արժանաւորութեամբ հասանիցիք ըստ վկայելոյ մինչև ցայսօր ընթացեցն Ձեր»։ Ի հարկէ նոքա չէին կարող գուշակել՝ որ երկու տարի յետոյ իրենք, նոյն Բարգուղիմէոս վարդապետի համար, ստիպուած պիտի լինէին հակառակը սուտ վկայել, սիւել իրենց երեսը և խիղճը և Սինոդի 1881 թ. Հոկտեմբերի 29-ի օրագրով զրպարտէին։ Նորան մատացածին ամենայն բամբասանքներով և Դավրիժեցոյ՝ չէղած «բոզոքի» անունով. զոր «Լուսայի» կեղտասէր խմբագիրը և նորա «բարեկամները» 24 տարի յետոյ էլ փորձեցին հալած իւղի տեղ ծախել, գիտելով հանդերձ՝ որ Վրէժխնդրութեամբ զրպարտած են ինձ։ «Լուսային» կուրօրէն հետեւեց այժմ էլ «Բաղմավէպը»։ Այնտեղ, ուր «Մխիթարեանց գրական գողութեանց» մասին միայն պէտք է խօսք լինէր, «Քարէ» մասին է խօսք անում «ռէքարչոյֆոն» Հ. Ա. Տիրոյեան խմբագիրը։ Բայց ես չվերջացրի։

Սայդուլ-Մուլքի (Աբդիլ-Ռահիմ-խան) բարեհայեցողութիւնը դէպ ինձ և դէպ իմ հօտի առհասարակ խնդիրները,

ինձ յոյս էր ներշնչել՝ փորձել պետական հարուածով լուծուած Հոգաբարձութիւնը վերակազմելու արտօնութիւն ձեռք բերել։ Դեռ 1878 թ. Հոկտ. Նոյեմբեր ամիսներից ես նորան պատմելով գործի էութիւնը, առանձնապէս խնդրել էի դարման տանել այն աղէտին, — միջնորդել՝ արտօնել մեզ ըստ առաջնոյն Հոգաբարձութիւն կազմելու։ Մի քանի անգամ յատկապէս այս գործի համար գնացել-եկել էի և նա միշտ յուսադրում էր ինձ։ Այդ ընթացքում մի հայ Խան (գաւառներում պաշտօն ունեցող), ուսեալ և կրթուած համակրելի մի մարդ, զրոյցի մէջ ասաց. «կարող էք 250—300 թիւմէն դընել այդ գործի յաջողութեան համար»։—Թերևս կարողանամ, միայն իմանայի թէ ո՞ւմ հետ գործ պիտի ունենամ, պատասխանեցի. իսկ նա դժուարացաւ անուանել։—Երբ Ս. Էջմիածին վերադառնալու հրաւէր ստացայ, դեռ ևս ոչ ոքի չը-յայտնած՝ գնացի Սայդուլ-Մուլքին ասացի. Ահա առաջիկայ Օգոստոսի կիսէն դպրոցի ուսումը կը սկսուի. ինչպէս շատ անգամ Ձեզ ասել եմ՝ առանց Հոգաբարձութեան ես միայնակ դժուարանում եմ այնքան բարդ գործերը վարել. արդեօք մի հոգս արել էք կամ կարող էք ինձ խօսք տալ՝ թէ մինչև այն ժամանակ գոնէ կը յաջողեցնէք։ Ես այս դժուարութիւնների երեսից հրաժարականս տուել և կոչուած եմ գնալ Էջմիածին, բայց եթէ Դուք այդ դժուարութիւնը հարթէք՝ ես կարող եմ յայտնել Մեծ Խալիֆային և դարձեալ մնալ այստեղ նոյն պաշտօնում։ Սայդուլ-Մուլքը նախ անկեղծօրէն ցաւ յայտնեց՝ որ հրաժարուել եմ, ապա յաւելացրեց. «Այդքան կարճ ժամանակի համար հաստատ խօսք տալ չեմ կարող, այդ կախուած է Վալիաթից. յաջողութիւն յուսալու համար, պատեհ առիթի պէտք է սպասել»։

Առաջնորդը թէ պաշտօնական թղթում և՝ թէ նորա հետ ծրարած նամակով պատուիրում է, Կաթուղիկոսից հրահանգուած, որ չը յայտնեմ թէ իսպառ հեռանում եմ. բայց ես յայտնեցի։ Եկան մի-երկուքը իշխաններից. «Այս ինչ արիք,

Հայրսուրբ, Հոգաբարձութիւն չունենք, դուք գնում էք. ինչ պիտի լինի Վիճակի և դպրոցի հալը. ի սէր Աստուծոյ, կացէք. խնդրում ենք։ Մենք մեր մէջ արդէն խօսում էինք հանրագրութիւն կազմել՝ խնդրել Կաթուղիկոսից որ ձեզ եպիսկոպոս ձեռնադրէ և նշանակէ Առաջնորդ Ատրպատականի, իսկ դուք յանկարծ ձգում գնում էք»։

—Վիճակի համար՝ իմ կողմից ևս կը զգացնեմ որ շուտով Առաջնորդ ուղարկեն. մինչև Առաջնորդի գալը՝ ուսուցիչները մի կերպ կը կառավարեն դպրոցը։ Իսկ ինձ եպիսկոպոսացնել տալու Ձեր բարի դիտաւորութեան համար՝ շնորհակալ եմ. ես տակաւին չահիլ վարդապետ եմ, ինձ շատ ժամանակ պէտք է. պատասխանեցի։

1879 թ. Օգոստոսի 3-ին մեկնեցի Դավրէժից։ Սկսած Առաջնորդարանի դարբանդից, ուր Միրզա Յարութիւնի կինը կտուրից բարձր ձայնով աղաղակում անիծում էր ինձ, մինչև Էջմիածին շարունակ անախորժութիւնների էի հանդիպում. կարծես դորանք չարագուշակ նշաններ էին յետոյ գալիք իմ անվերջ դժբախտ փորձութեանց։ Մի քանի օրից ժամանեցի ի Ս. Էջմիածին։ Կողմնակի կերպով տեղեկացան իմ տրամադրութիւնը և համոզուեցին՝ որ ես Դավրէժ վերադառնալու ցանկութիւն չունիմ. ահա այդ ժամանակ Մուշեղեան Գրիգոր եպիսկոպոսին ուղարկեցին Դավրէժ Առաջնորդ։

Է.

Ս. Էջմիածնում Միաբաններից ոմանք ինձ նկատում էին. «դուք փոխուել էք»։ Էջմիածնի վիճակը աննախանձելի էր. կարծում էի թէ նա էր փոխուել, և իսկապէս փոխուել էր։ Դավրիժում, ուր անարգել ստացուում էին Կ. Պոլսի և առհասարակ արտասահմանի թերթեր, և ուր տարբեր կարգերի և սովորութիւնների ծանօթանում էի և իրական բազմակողմանի կեանքի հետ այնքան առիթներով շփուում։ Ժողովրդա-

պետի ամենալաւ տպաւորութիւններ թողել էին իմ վերայ պարսիկ մեծ Կրօնապետները,—«ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ԷՍ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՆՄԱՆ ԴԵՌ ԱՆԲԱՐԵԿԱՐԳ ՄԻ ԵՐԿՐՈՒՄ, ՈՎ ԻՆՉ ՈՒԶՈՒՄ Է ԹՈՂ ԱՍԷ *),—ոչ պակաս և բարձր կառավարչական մարդիկ, մանաւանդ յիշեալ Սայդուլ-Մուլքը։ Միայն ամբոխն էր, որ ամեն տեղ ամբոխ է։ Էլ չեմ ասում Անդրէաս արքեպիսկոպոսի նման տիպար հոգևորականի առաջին ծանօթութիւնս։ Հանգամանքներ, որոնք օգնել էին իմ հայեացքների որոշ չափով ընդարձակուելուն և կազմակերպուելուն։

Մի ընդ միշտ խրատական օրինակ Վերջինի կեանքից.—1878—1881 թ. Սեպտեմբերի վերջը Անդրէաս արքեպիսկոպոսը Տեսուչ էր Ճեմարանում, ապրում էր այն աղմուկի մէջ և մի փոքրիկ սենեակում կծկուած՝ որպէս զի տեղ չխափանի. իսկ Վահան վարդապետ Բաստամեանց և Խորէն վարդապետ Ստեփանէն ուսուցիչ էին նոյն Ճեմարանում։ Վերջինները հէնց սկզբից տրտնջում և ռոճկի պահանջ են անում. Կաթուղիկոսը կոչում է Անդրէաս արքեպիսկոպոսին և ասում. «Ուսուցիչ վարդապետները ռոճկի դաւի կընեն, ես ալ պիտի նշանակեմ անոնց, և՝ ձեզ ի հարկէ, ռոճիկ։ Ձեր ռոճկի քանակը ես կ'որոշեմ, բայց անոնց իւրաքանչիւրին որքան նշանակեմ»։—Վեհափառ Տէր, անոնք ռոճիկ կը պահանջեն, Դուք ալ կ'ուզէք տալ՝ բարի. սակայն կ'աղաչեմ որ ինչ վարչական տեղ չընդունիք, ես միաբան եմ և պարտական որ և է մի ծառայութիւն անել. պատասխանում է։ Ուսուցիչ վարդապետները ստանում են տարեկան իւրաքանչիւրը 1000 ռուբլ ռոճիկ, իսկ Տեսուչ արքեպիսկոպոսը ծառայեց երեք տարի ձրի... Միայն թէ Կա-

*) Այս տողերը ես գրել եմ 1903 թուին, դեռ այն ժամանակ, և ցայսօր, երբ ուրիշներ—Բաֆֆի, Վ. Փափազեանց, Շահրիար և առհասարակ մեր վիպագիր և յօդուածագիրները պարսիկ Կրօնապետներին պարսաւել են՝ մեր ի վերոյ զրոյցների վերայ հիմնուած։ Հէնց այսօր, Իրանի իրաւազուրկ ժողովրդի շահերը պաշտպանող, «Արդարութեան տուն»—Սահմանադրութիւն պահանջող և ձեռք բերողը՝ այդ Կրօնապետներն եղան ահա...

թուղիկոսը առաջին երկու տարին Իր ձեռքով նորան տուել է պարգև տարեկան 400—500 ռուբլ. թէպէտ Մայր Աթոռի ծախուց մատեանում տարեկան 1000 ռուբլ գրուելու մասին 22ուկ հասել էր նորա ականջին։

Տ. Գէորգ Դ. Կաթուղիկոսը կարծես յոգնած ընկճուած՝ յետ էր քաշուել, նորա անունով յախուռն գործում էր Վահրամ եպիսկոպոս Մանկունին։ Մանկունի, Ստեփանիկ (աղայ) Դէմիրճեան, Գրիգոր և Ներսէս եպիսկոպոսները,—վերջին երկուքը՝ անգամ էին Սինոդի, գանձապահ և վանքական կառավարութեան նախագահ,—կազմակերպել էին մի կեդրոնական ընկերութիւն, շահագործում են վանքի ընդարձակ ագարակները, խոտատեղիները, ցանքերը, անասնեղէնները, լծկանները, գութանները, ջրաղացները, գիւղերի աճուրդով տալը, ծախսարարական գործերի անսպառ աղբիւրը փող շահելու համար, և այլն, և այլն։ Ունին թէ հոգևորական և՝ թէ աշխարհական ագէնտ-գործակալներ ամեն գաւառում, ամեն քաղաքում, այլ և գիւղերում. որոշ պաշտօն (սակագին) են սահմանել քահանայի ձեռնադրութեան։ Ահա ագէնտներից մէկի տուած պայմանագիրը *)—

«1881 ամի 5 փետրվարի ես ալէքսան յարութիւնովս վաղարշապատցի, ըստացա շուրակեալու նահանկի աղին գիւղացի Գէորգ տէր Սէֆտիսովից չորս հարիւր մանէթ թխտադրամ վասն քահանա ձեռնադրելու մասին եթէ ձեռնադրվեց մինչև սուրբ յարութիւնին իրավունկ չունի փող պահանջելու եթէ չը ձեռնադրվեց իրավունկ ունի իւր փողերը պահանջելու ալէքսան յարութիւնով
ես ըստացա ութանասուն մանէթ շարականի գրեանգի և յիրուշ ծախսերու մասին ալէքսան յարութիւնովս
ներկա եմ մուքէլ թաթոսովս բոզտողանցի
ներկա եմ սահակ թաթոեովս աղինցի»։

Ալէքսան Յարութիւնեանը և նորա եղբայր Յակովբը,—սոքա Վաղարշապատում յայտնի են «քիւրդ Ալէքսան և

*) Իսկականը այժմ ես ինձ մոտ է։

քիւրդ Ցագո» անուամբ,—Վանի կողմերից գաղթեցին 73—74 թուերին ընտանեօք։ Սա այն Ալէքսանն է, որը և 1885 թուին ամառը 8,000 ռուբլի փողով հասաւ Կ. Պոլիս, լրագիրներ կաշառելու։ Հինգ հազարը գրպանից կորցրեց, դիմեց Ռուսաց Դեսպանին, լրագիրներում գրեցին. սակայն լաւ որ առանց այդ փողերի էլ Մակարը, Յարութիւն Պատրիարգի ջանքերով՝ կաթուղիկոս «Ճշմարտ» Հայոց ընդունուեց ազգային երեսփոխանական ժողովից, Պատրիարգի հեռագիրը հասաւ օծումից հազիւ մի օր առաջ...

Տգէտ, գրել կարդալ չիմացողներին ևս քահանայ են ձեռնադրում դիւժիններով։ Տ. Յովսէփ Կոստանեանցը մի անգամ երկու Փուրգուն-24 հոգի-տիրացու ուղարկեց Շիրակից՝ Հաջի տ. Մարտիրոսի հետ՝ Մուշնի, ուր Կաթուղիկոսի Պետրոս եպիսկոպոսը գնաց և մի ամբողջ շաբաթ ձեռնադրում էին։ — Երեսուն տուն ծուխ ունեցող գիւղի համար,—օրինակ՝ Նոր-Բայազիտու գաւառում Ծակքար գիւղի համար,—ձեռնադրում են երկու տգէտ քահանայ. այս մինը գոնէ պատմեմ։—Մի տիրացուից ստանում են 800 ռուբլի և ուղարկում Սևան՝ ձեռնադրւում է քահանայ։ Սա առաջին պատարագը դեռ ևս չմատուցած, ստանում են միւս տիրացուից 1,100 ռուբլի և ձեռնադրում նոյն գիւղի վերայ քահանայ։ Նոր-Բայազիտում իմ Գործակալութեան ժամանակ (1883—1884) առաջին քահանան արտասուելով պատմեց, թէպէտ ես վաղուց գիտէի, թէ ինչպէս հայրենական ջրաղացներ. լծկաններ և ոչխար ու տաւար ծախել են և դեռ չեն ազատուել այն պարտքերից։ Պարտքը վերցրել էին պ. Մատթէոս Ափրիկեանից. Ափրիկեանը ինքն ևս հաստատեց այդ պատմութիւնը, այսօր ևս նա կը վկայի։—Էլ չեն քաշւում գոնէ, զեղծումները հրապարակական և սովորական երևոյթներ են դարձել. Գրիգոր և Ներսէս եպիսկոպոսները քանի քանի անգամներ սակարկել են քահանայաց-ուների կամ միջնորդների հետ. «չորս հարիւր կտամ.»—«ոչ,

վեյ հարի-ջեյ պակաս չի՛ լինի»։ Մեր օծակից Յուսիկ վարդապետը (այժմ եպիսկոպոս) որ կարողացաւ իւր հօրեղբօրորդուն ձեռնադրել տալու համար 400 ռուբլով բաւականացնել՝ դորա համար իրեն երախտապարտ էր համարում Գրիգոր և Ներսէս եպիսկոպոսներին։ Այսպէս և Հմայեակ վարդապետը՝ իւր մի երկու հայրենակիցների համար։ Իսկ մի երրորդը, Գարեգին վարդապետ Սաթունեանց,—որ աշակերտ ժամանակից սկսած՝ ընկերի փակ արկղից փող գողանալով. Եղիազար արքեպիսկոպոսի թագի համար Մոսկուայում Լազարեանցների շինել տուած անդամանդեայ խաչը՝ խորանում զգեստները ծալելու ժամանակ սղոկելով. Գէորգ եպիսկոպոս Աբամելիքեանի լուսամուտը գիշեր ժամանակ քանդող գող սրիկաներին գործակցելով. և այլն, և այլն, — ագէնտ և արբանեակ էր նոցա և իւր չափով արածում (տես «Պսակ» 1881 թ. № 34) *)։

Բացի Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսները, Սինոդի անդամ էին և՛ Մկրտիչ արքեպիսկոպոս Բաբամեանց, Մեսրոպը եպիսկոպոս Սմբատեանց և Երեմիա եպիսկոպոս Գալստեան։ Սոքա առաջինների չափ ԼՈՒՆԿԲՈՂՐ չէին, 300 ռուբլով խօսք էին տալիս, սակայն տարին 1—2 տիրացուի գործ հազիւ կարողանում էին հոգալ, այն էլ երկար քարշ տալով։ Մկրտիչ արքեպիսկոպոսը իմ մօրաքրոջորդուն քահանայ ձեռնադրել տալու համար նրանց շեն օճախը աւերեց, Տէր-Առաքելը և մօրաքոյրս պարտքի տակ հեծելով վախճանեցին, որդիքը մնացին հոյի ֆարշ։ Այս մի քանի մերձաւոր օրինակները ես պատմեցի նմուշի համար միայն։

Ամենից վճռական ազդեցութիւն գործեց իմ վերայ մի արտասովելի դէպք.—Գրիգոր եպիսկոպոսը հարևան էր ինձ,

*) Որը և՛ յեռոյ նոյնատեսակ կեղտոտութեամբ պարապելով, եպիսկոպոսական ատիճանով նստեց Նահանգական դատարաններում (Շուշիում) յանցապարտների շարքում. տես Տփխիսի հայերէն և ռուսերէն լրագրները 1902 Մարտ ամսի։ Այլ և Էջմիածնի Սինոդի դատաստանական մասի գործերը։

Ներսէս եպիսկոպոսը ամեն օր յաճախում էր նորա մօտ։ Մի անգամ ես սենեակիս առաջ պտտում էի, Ներսէս եպիսկոպոսը եկաւ և միասին մի—երկու անցուդարձ անելուց յետոյ՝ նստեցինք մեր սենեակի առաջ, այն դարաւոր չինարիների ստուերում. խօսում էինք։ Ո՛ր տեղից Ապարանցի մի մարդ, բարձրահասակ, սպիտակ շալից՝ ուսը պատռած չուխայով, թագուն գալով հետևից՝ յանկարծ ընկաւ երեսի վերայ Ներսէս եպիսկոպոսի ոտքերի առաջ և պինդ բռնելով նորա քղանցքը և ոտքը, լալով-հեծկլտալով աղաղակեց. «եամանն, խայրսուրբ, աաէ՛ չէր աջխամբո՛ւրբ՝ իմ տղին էլ ձեռնադրէք, ընկերներից յետ մի քձէ՛ք»։ Ցատկեցինք տեղներից, բայց նա չէր թողնում Ներսէս եպիսկոպոսի փեշերը։ Ներսէս եպիսկոպոսը իմ ներկայութիւնից մանաւանդ սաստիկ այլայլուեց և կատաղեց.—«Թո՛ղ, շո՛ւն քեօփակ, գնա՛ հրէ «աջխամբուրը» ա՛յնտեղ են առնում, տա՛ր նորանց տուր» (ձեռքը մեկնելով դէպի Վեհարան)։ Մարդը վախեցած՝ բաց թողեց նորա ոտքերը. բայց երկիւղածութեամբ պատասխանեց. «չէ՛ վալլահ, խայրսուրբ, ՊՈ՛ ՈՒ ՊՈ՛ ԸՆԷՐ ԿԱՆԷՔ. առէ՛ք ձեր աջխամբուր՝ իմ տղին էլ ձեռնադրէք, մենք մեռանք, քանդուանք»...։ Ներսէս եպիսկոպոսը գոչեց. «թուանքչի՛, դա՛նապան», որ գան այն մարդուն թակեն դուրս անեն. մարդը վախեցած՝ հեռացաւ վշտաբեկ։ Ես Ներսէս եպիսկոպոսին նկատեցի (ոտքի վերայ պտտելով). «ինչո՞ւ էք խեղճի վերայ այդպէս զայրանում, չգիտէ՞ք նորա ցաւը. խեղճը դեռ այնքան քաղաքավարի է՝ որ «աջխամբո՛ւրբ» է անուանում»...

Ահա այն ճակատագրական և վճռական րոպէն, որ ինձ խորից ցնցելով՝ ստիպեց անտարբեր չմնալ, զինեց մղեց ինձ մաքառելու չարիքի դէմ՝ մինչև նախատեսուած և աչքիս տակ առած կամաւոր նահատակութիւնը։

Տ. Գէորգ Դ. Իւր Կաթուղիկոսութեան առաջին տարին,—երբ դեռ դառնութիւն էին անում նորա մարդիկը,—լսելով

որ քահանայացու տիրացուաց գործերը կաշառքով են առաջ տարուում, մի կոնդակով հրամայում է Սինոդին՝ մերժել ոչնչացնել անխիղճ մօտ 250 տիրացուաց սկսուած և շարունակութեան մէջ եղած գործերը և երբէք պարի չձեռնադրել ոչ մի քահանայ։—Մի-երկու խալվար ցորենի համար ամբաստանուող կալաչափ վարդապետներին (Գ. վարդապետ Գառնակերեան, Թ. վարդապետ Տէր-Դանիէլեան. և Գ. վարդապետ Տէր-Յակովբեան) Սինոդը Կաթուղիկոսի հրամանով դատապարտեց՝ որ իւրաքանչիւրից պահանջուի է՝ պարիզը և վեղար փիլոնից զրկուած՝ գնան ապաշխարեն Սևանում և Երնջակի վանքում։—Արաբոյին (Ստ. վ. Մխ.) մի այլ անհաւատարմութեան և շահամոլութեան համար՝ արգելել էին Ղազարապատի մի կեղտոտ սենեակում, ուտելու հաց էլ չէր տրուում նորան վանքից. իսկ նա Կաթուղիկոսին ամաչեցնելու համար, ուղարկել էր բազար իւր վերարկուն և կախել տուել հացագործի խանութի դռնից, որպէս զի իւր նեղուած վիճակը տեսնէ ժողովուրդը։—Էջմիածնի վանքական կառավարութեան նախանդամ Սբէլ արքեպիսկոպոսի Փարպեցի ծառայն վանքի մառանից ապօրինաբար ստացել տարել էր 2—3 ֆունտ պանիր, Կաթուղիկոսը 1874 թուին տուեց Սինոդին մի կոնդակ, որով ծանուցանելով այդ մասին Սինոդին, հրամայում է արձակել Արքեպիսկոպոսին յիշեալ պաշտօնից, այլ և «պատուիրել Ս. Էջմիածնի Մելքիսեդեկին, որ ելնէ այսուհետև նկատէն վանական կառավարութեան անդամոց և ապահովարկ գործավարաց անհաւատարմութիւնքն զեղի Ս. Սիոնը՝ գրուոր յայտնէն Իրեն և Սինոդին»։ Ահա հենց այսպիսի գաղտնութեան ժամանակներում, Պետրոս Սիմէօնեանցի „Մեղու Հայաստանի“ լրագիրը ինչ շանթեր էր թափում Վեհափառի և Վեհարանի գլխին.—Վեհարանը անուանեց «Բաղաղխանայ». Ճեմարանը (շինուում էր)՝ «Ջէբարան». Կաթուղիկոսին դուրս բերեց մարդասպան (ճարտարապետի սպանման գործը)։— Հրատարակեց «Սգոմ, Գոմոր» բանասիրականը (1876 թ. №)։— Գալ.

Շիրմազանեանցի (կարծեմ) անստորագիր յօդուածներով և այլ խմբագրականներով հրաւիրում էր Կառավարութեան ուշադրութիւնը և Կաթուղիկոսից 10 տարուայ հաշիւներն էր պահանջում։— 1876—1877 թուերում Պարզեանց Սուքիաս եպիսկոպոսի և Աղեքսանդրապոլի Կոստանեանց Յովսէփ քահանայի վէճերը (հոգ. Կառավարութեան և Հաւիճի վանքի հաշիւները) ինչպէս քաջալերեց, տես Ղալայչի Մարգարի և Պետրոս Հայկազունու յօդուածները. հասցրեց այն աստիճանի՝ որ Հայրապետի դէմ ըմբոստացրեց Սուքիաս եպիսկոպոսին, այլ և հրատարակեց (1877 թ.) «Փոքու ըմբոստի» նամակը. մինչև Երևանի Նահանգապետը հրաւիրեց եպիսկոպոսին՝ հնազանդել Հայրապետին և Սինոդի հրամանին՝ դնալ Գեղարդայ վանքը ապաշխարութեան. և այլն, և այլն։

Բայց այժմ, 1878—1882 թուականներին, երբ արդէն Կաթուղիկոսը ընկճուած՝ յետ է քաշուել գործերից, վեհարանականները և Պետրոս Սիմէօնեանցի մտերիմ բարեկամ Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսները, Մանկունու և Ստեփանիկի հետ կազմելով աւազակային մի շայկայ՝ կողոպտում են Մայր Աթոռ Ս. Էջմիածինը. «աջխամբուրներով» կեղեքում և դայթակղեցնում են ժողովուրդը. ահուրգով են ծախում քահանայութիւնը. Էջմիածնի հոգևորականութեան եղած-չեղած պատիւը հողին են հաւասարեցնում.—ուրեմն Տ. Գէորգ Դ.-ի Կաթուղիկոսութեան առաջին տարիների բոլորովին հակապատկերը ներկայացնող ամօթալի տխուր մի վիճակ.—ահա այդ ժամանակ Պետրոս Սիմէօնեանցի իշ «Մեղուն“ ստանալով Էջմիածնից տարեկան, ոչ աւելի և ոչ պակաս, 1000 ռուբլի բոժոն (Մատեաններում գրուած են), ոչ միայն լռում է այժմ, այլ և որպէս վարձկան թերթ,—զոր «Մշակը» (1881 թ. № 10) և «Պսակը» քանիցս անգամ նկատեցին և թքեցին,—պաշտպան է դուրս եկել այդ կատրեժնի ուղարկուելու արժանի դող և սրբապիղծ շայկային։ Թերթեցէք

այն ժամանակի Մեղուն և տեսէք. թէպէտ ես օրինակներ կը բերեմ *)։

Իսկ Մշակը.—այդ ժամանակ փորձանքի մէջ էր Գր. Արծրունին, նա միջնորդներ էր ձգում խնդրում՝ տիկին Քօչարեանցի և իւր դրութեան մի նպաստաւոր ելք. այդ մտքով գրուած Բաֆֆու մի նամակը ես տեսել-կարդացել եմ Ներսէս և Գր. եպիսկոպոսների մօտ։ Էջմիածնում գիտեն յոյսը չկտրել, այլ խնդիրը առ կախ պահելով՝ ճկել, ծռել խնդիր ունեցողի վիզը։ Եւ Մշակը զսպում է իրեն, կուչ ու ձիգ է անում, ոչ միայն յայտնապէս խուսափում է սորանց մասին աննպաստ բան գրելուց, այլ և այդ գողերին և կաշառակերներին ջատագովող վարձկան գրիչների նամակները հրատարակում է, տես 1881 թ. № 131, ուր մի ցած մարդ՝ ամօթու ծածկուել է «Նորայր» կեղծ անուան տակ։ Ոչ միայն այս։ Գր. Արծրունին տեղի-անտեղի վրէժխնդիր լինել հօ գիտէր. ամենավճռական կէտում թոյլ տուեց իրեն դաւաճանել և ոճիր գործել խղճի և արդարութեան դէմ։ Նուտով կը պատմեմ, կը տեսնի կ'իմանայ ընթերցողը։

Ահա այսպիսի մի ժամանակ վիճակուեց ինձ մաքառել չարիքի դէմ։ Փորձեցի նախ զեղծումների մասին լուրեր հաղորդելով «Պսակ» լրագրում՝ քար ձգել ճահիճը, թերևս զգաստանան, պատկառին կամ օրէնքից վախենան յանցագործները, բայց չօգնեց այս միջոցը։ Ասպա գրեցի մերկացնող մի յօդուած՝ «Խրան» ստորագրութեամբ, շարելով մի ստուար թիւ գողութիւնների և կաշառակերութիւնների։ «Պսակը» շարեց տպեց այդ յօդուածը, բայց Գրաքննիչը (Կոստանդին Իւզբաշեանց) արգելեց հրատարակել, այդ պատճառաւ էլ «Պսակի։

*) 1886 թ. Յունվարի 5—10-ին, Մակար Կաթուղիկոսի մի յանձնարարութեամբ՝ Ներսէսեան դպրոցի Տեսուչ պ. Արշակ Նահապետեանցի հետ հանդիպելով պ. Սիմէոնեանցին Տփխիսի իւր ընակարանում, խօսակցութիւն բացուեց Էջմիածնի մօտ անցնալի մասին. ես սորանից ոչ պակաս խստութեամբ նկատեցի նորան իւր այդ կեղտոտութիւնները։

այն համարը (1880 № 16) լոյս տեսաւ կէս թերթ։ Ես տեղեկացայ. շտապեցի Երևան և երեկոյեան նստելով ֆայտոն, խմբագրատանը ապրող—աշխատակցող Թադէոս Զաքարեանի (Շամախեցի, այժմ բժիշկ) հետ գնացի Գրաքննչի տունը, խօսեցի, խնդրեցի-աշխատեցի համոզել՝ որ ի սէր Ս. Էջմիածնի՝ թոյլ տայ հրատարակել այն յօդուածը, նոյն իսկ—եթէ պէտք է—իմ իսկական ստորագրութեամբ։ Սակայն նա չհամաձայնեց, և յայտնեց որ այն յօդուածի մասին խմբագրի և իւր վէճը յայտնուած է նոյն իսկ պ. Նահանգապետին (Շալիկով)։ Նոյն յօդուածը արտագրում եմ և ստորագրութիւնը փոխելով „Զայն բարբառոյ յանապատի“, յանձնում եմ իմ ընկեր, ծխ. դպր. ուսուցիչ Կարապետ Գառնեանցին՝ որ գնում էր Տփխիս, տանել անձամբ „Մշակի“ խմբագրին. եթէ չ'տպեն՝ յետ ստանայ և բերէ ինձ։ Գր. Արծրունին կարդում է իրեն ուղղած նամակս և յօդուածը, պատասխանում է. „կը տպենք“։ Ահա նամակը.—

«Մեծ. խմբագիր պ. Գր. Արծրունի.

«Ներկայիս հետ ուղարկելով Ձեզ «Զայն բարբառոյ յանապատի» ստորագրութեամբ իմ յօդուածը, խնդրում եմ նոյնութեամբ տպել «Մշակի» առաջիկայ մի համարում։

«Ներկայ անկարգ դրութիւնը սպառնում է Ս. Էջմիածնին սև ապագայ, դրութիւն՝ որ խրախուսում է ազատ գողութիւն, զօշաքաղութիւն և Սիմոնականութիւն։ Ցոյս չկայ ինքնին առանց Ճնշման բարուրուելու, որովհետև որոց պաշտօնն է կարգ պահպանել և օրինաւորութիւն,—ինչպէս են Սինոդականները,—նոքա են յայտնապէս մեղանչում և վատ օրինակ լինում։ Ամեն զգայուն հայ որ սիրում է Էջմիածինը՝ չի կարող հանդուրժել այս. ուստի չեմ տարակուսում որ կը կատարէք խնդիրս, չեմ տարակուսում՝ մինչև անգամ եթէ նամակիս (յօդուած) մէջ Ձեզ և Ձեր Պաշտօնակցին («Մեղուի» խմբագրին) ևս ծանր նկատած լինիմ, որովհետև և՝ դորա իրաւացի պատճառներն ունիմ... Չեմ տարակուսում՝ եթէ Սրբազանները Ձեր բարեկամներ ևս լինէին, որովհետև անարժան հոգևորականներին առաջին կարգի հարուածողը, շատ անգամ թաց ու չորը միասին այրելով, մէկին-երկուքի արատը ընդհանուրին տալով, Դուք ինքնդ

էք և այն ուղղելու ցանկութեամբ։ Ուրեմն յարգեցէք գոնէ Ձեր սկզբունքը, նա և խմբագրական սուրբ պարտքը. այդպէս են անում անկեղծ մարդիկ։ Մեզուն «մի քանի հարիւր բուրլով» լռում է՝ ինչպէս նկատած էիք առաջնորդող յօդուածում (№ 10). իսկ Դուք ինչպէս կը վարուէք՝ կը տեսնենք։

«3. Գ. Եթէ ուղարկած նամակը (յօդուածը) չընդունէք տպագրելու, բարեհաճեցէք դարձնել Ձեզ ներկայացնող Պարոնին՝ ինձ վերադարձնելու համար»։

Գառնեանցը մի քանի անգամ հանդիպում է խմբագրատունը, միշտ պատասխանում են. «կը տպենք». բայց 15 օրից յետոյ յետ են տալիս յօդուածը անտիպ և բերում է ինձ։ Այս ոչինչ, կարող էին չտալ, սակայն Գառնեանցը դեռ ևս Էջմիածին չժամանած՝ Գրիգոր և Ներսէս եպիսկոպոսները Էջմիածնում տեղեկութիւն ստացան «Մշակին» ուղարկուած յօդուածիս մասին։ Արդեօք Գառնեանցը ինձ դաւաճանեց, թէ Բաֆֆին տեղեկութիւն գրեց։ — Բարեկամ էին. Բաֆֆու հրատարակած «Դաւիթ բեկը» մեծ թուով վաճառւում էր Ներսէս եպիսկոպոսի մօտ։ Արդեօք «ղ։ոոյգ պոոմ-Ռկան ֆոջ-գործ-Ռեանց Դա-Ռի» (տես. եր. 11) ձեռագրի՝ Էջմիածնի մատենադարանից Ներսէս եպիսկոպոսի մատենադարանապետութեան օրով անհետանալը չէր դորանց մտերմացրել...

«Խրատիչ» այսպէս կրկին անյաջողութիւնից յետոյ, գրեցի հետևեալ նամակը.—

«Նամակ Ս Էջմիածնից *)

Օգոստոս 4.

«Պսակի № 16 երբ կէս թերթ հրատարակուեց, զանազան կըրոյցներ տարածուեց այս ու այն տեղ. քչը-փչը ընկաւ Էջմիածնի Միաբանների մէջ, ամենքը հետաքրքրուում էին լսանալ իսկական պատճառը. պէտք է ասել որ Ն. և Գ. եպիսկոպոսներիցն էր գալիս սխտորի հոտը։ Այսպէս անցաւ մի-երկու օր և Յուլիսի 5-ին Երևանի Նահանգապետը եկաւ Էջմիածին և ներկայացաւ վեհափառ Կաթուղիկոսին. տեսակցութիւնը մօտ 2 ժամ շարունակ տևեց։ Նահանգապետի վերաղարձնալին յետոյ յայտնուեց որ Վեհափառ Կաթուղիկոսը մի հատ ընտիր և թանկագին ժամացոյց ընծայած է Նորին Գերազանցութեան, իսկ խոսակցութեան գլխաւոր առարկայն, ասացին, եղած է Սինոդի անդամ Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսների վրայով.— Նահանգապետը ասել է Վեհափառ Կաթուղիկոսին՝ թէ «զանազան անախորժ բաներ լսած եմ Ն. և Գ. եպիսկոպոսների մասին և միայն ինձ պարտաւորութիւն եմ համարում յայտնել Ձեր Վեհափառութեանը, որ զգուշացնէք նորանց. և այլն, և այլն». իսկ Վեհափառ Կաթուղիկոսը պատասխանած է.—«այդ եպիսկոպոսները հաւատարիմ մարդիկ լինելով՝ ես շատ եմ սիրում դորանց (ըստ ասութեան Գր. եպիսկոպոսի), և այս է պատճառը որ ուրիշները նախանձելով՝ գրում են սորանց համար այդպէս վատ բաներ»։

«Այն լոյս չտեսած յօդուածը գնալով աւելի մեծ նշանակութիւն ստացաւ։ Վեհափառ Կաթուղիկոսը Յուլիսի 15-ին տկար անձամբ գնաց ի Բիւրական ամարանոց, բայց մեկնելէն քանի օր առաջ ժողովեց Իւր մօտ Սինոդի անդամներին և կարևոր սպասուէրները տալով նորանց՝ իւրաքանչիւրին հարիւրական մանէթ պարգևեց և ասաց. «Զնայելով որ դուք և իւրաքանչիւր պաշտօնավար ձեր առանձին շահն ունիք, մի և նոյն ժամանակ տարին մի քանի անգամ այսպէս պարգևատրում եմ ձեզ, որպէս զի առիթ չունենաք անվայել միջոցների դիմել — կաշառք ստանալ կամ Մայր Աթոռին անհաւատարիմ լինել։ Բայց դուք ահա (խօսքը ուղղելով Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսներին), որչափ անխոհեմ էք գտնուել՝ որ տեղիք էք տուել գրեն ձեր վերայ այնպիսի մի ծանր յօդուած» (Նահանգապետը «Պսակի» № 16 ամբողջը բերել տուել էր Վեհափառին)։—«Վեհափառ Տէր, պատասխանում են Սրբազանները, այն յօդուածը խստաս գրպարտութիւն է, և որովհետև մենք գործի — պաշտօնի մէջ ենք՝ այդպէս բաներ մեր համար յօրինում են, և գրողները այս ինչն-այն ինչն են *), պէտք է մինին հեռացնել և միւսին պատժել։

—«Մինթէ դուք էք միայն պաշտօն — գործ կատարում. ձեզնից առաջ կատարողների վերայ ինչու այդպիսի ծանր ամբաստանութիւններ չեղան. և ժամանակը ազատ է, թագաւորների և նախարարների վերայ ևս գրում են։ Եթէ ստոյգ է ձեր համար գրուածը՝ օգուտ քաղեցէք նորանից և զգուշացէք. իսկ թէ սուտ է՝ դարձեալ զգուշացէք և մի տեղիք տայք։

*) Էջմիածնայ յօդուածագիրը պատասխանատուութիւնը ամբողջապէս ընդունում է իւր վերայ։

*) Ոչ այս ինչն է, ոչ այն ինչն, այլ՝ «Խթանն»։ Խմբ.։

«Ժամանակը արդարև «ազատ» է, բայց Ինքը Վեհափառ Կաթուղիկոսը՝ Մեծ։ Այդ ազատ գաղափարը այս առաջին անգամն է լսվում այն Հոգևոր Դահից, զոր եթէ նոյն իսկ լսողները չպատմէին՝ չէի կարող հաւատալ։ Պաշտելի՜, երկրպագելի՜ է Հայրապետի վեհ գաղափարը։ Բայց ես կը գայթակղուեմ, կը գայթակղեցնեմ ե՛ւ «Պսակի» ընթերցողներին՝ երբ գործով չ'արդարանայ խօսքը, երբ Սրբազանների աններելի Սիմոնականութիւնը և անհաւատարմութիւնը հրապարակ դուրս գայ, արեգակի լուսով յայտնուի՝ և դարձեալ անպատիժ մնան Սրբազանները, Սևանի Միաբանութեան պատուաւոր անդամակցութիւնը չուխտեն։ Կարող ենք ենթադրել որ մինչև ցայսօր յայտնի չէր Վեհափառ Կաթուղիկոսին Սրբազանների սնարագործութիւնները. իսկ այժմ...

«Ամենքը խօսում են և հաստատում՝ որ Սինոդի անդամ Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսները Էջմիածնի վանքի Ագարակի (Պլան) արտերի կարգում ամենապարարտ հողերում ցանել տուած են իւրաքանչիւրը 5 խալվար ցորեն իրենց անունով՝ յօգուտ իրենց գրպանի, բայց առանց իրենց քսակից $^1/_4$ կոպէկ ծախսելու. հողը, արօրը և մշակները վանքինը, սերմանած ցորենը (10 խալվար=300 պուդ)՝ վանքի սեպհական ցանքի անունով շտեմարանիցը դուրս տարուած, մշակող վարձկանները՝ վանքինը, հնձելու ծախքը վանքի Ագարակի արտերի հաշուով, սայլերը և կալսելու բոլոր պարագայներ և լծկանները և կալսողները նոյնպէս Ագարակի հաշուով, իսկ արդիւնքը, որ մօտաւորապէս իւրաքանչիւրին 50—60 խալվար կը գոյանայ՝ կը պատկանի Սրբազաններին։ Սրբազանները յաՀախ գնում են կալը վերահասութիւն գործելու։ Երբէք բաւական պատրաստ ցորեն տարան և դեռ չէ վերջացած կալը։

«Եթէ այս է Գրիգոր Սրբազանի ասած՝ Էջմիածնին հաւատարմութիւնը, հապա որն է անհաւատարմութիւնը։ ՏաՀկաստանցի Հայերը մի առած ունին՝ թէ. «կատուն իւր փորի համար է մուկն որսում»...

«Անհաւատարմութիւն ասացի՝ միտքս շատ բան ընկաւ, բայց Սրբազաններիս հետ «Աստուած օգնական» և «Աստուած պահապանը» խաբեայ չկորելու համար չեմ ուզում ամեն բան մէկէն հրապարակ հանել։ Զմոռանամ ասել որ Ագարակի վերակացու Մամբրէ վարդապետի մասնակցութեամբն և գիտութեամբն է Սրբազանների ցանքը. հայրսուրբը թէ առանձին և՛ թէ նորանց հետ միասին առատ կուտ է ուտում, և այդ է պատՀառ՝ որ այսպէս հաւատարմութեամբ է կատարում իւր պաշտօնը։ Բայց բան է եթէ հայրսուրբիցը հարցնեն՝ լաւ կ'անէ որ Ճիշտն ասէ. եթէ ոչ՝ «բանին դպրութիւնք» և յայնժամ...,

«Իսկ հայրսուրբի օգնական գիւղատնտես պ. Կոստանդին Ա.բրիկեանցը, յուսամ որ կը պարզէ շատ գաղտնիք ցորենի, խոտի և այլն, և այլն, ինչպէս ինքը երէկ ամսոյս 3-ին կիւրակէ երեկոյեան, երբ ցորենները կրում էին և Մամբրէ վարդապետը ջվալները բարձրացնում էր մշակների հետ և բարձում էին սայլերը, երկու վարդապետաց և երկու սարկաւագաց ներկայութեամբ ասաց. «Եթէ Վահրամ եպիսկոպոսը ինձ հարցնէ, պիտի ասեմ ամեն բան՝ ինչ որ այս տարի կատարվում է վանքի Ագարակում»։ Յուսանք որ պարոնը կը կատարէ իւր խօսքը։

«Մեծ. խմբագիր, բարեՀաճեցէք սոյն նամակիս մի անկիւն շնորհել «Պսակի» մէջ, և տեսնենք թէ ինչ արդար կարգադրութիւն կանեն սորա համար։ Աստուած Մարգարէն բերանով պատուիրեց. «Կալարուք զաղուէսունս ապականիչս այգեաց»։ Բարուք կը լինի եթէ անուշադիր չեղողնեն, ապա թէ ոչ՝ «Բեօթուկը» կ'ստուարանայ։

(Պսակ, 1880 թ. № 23)։ Ե՛ւ եմ։

Սորանից յետոյ գրում եմ հետևեալը.—

«Նամակ Ս. Էջմիածնից

«Պսակ № 23, որի մէջ տպուած էր «Ե՛ս եմ» ստորագրութեամբ նամակը, Էջմիածնում ստացուեց Օգոստ. 24-ին։ Սրբազանները կարդացին և տեսնելով որ ծածկելու կամ արդարանալու հնար չ'ունին՝ ակամայ արհամարհել էին ձևանում ասելով. «շատ լաւ ենք արել, ձեռքներիս միջից է եկել»։ Իսկ Մամբրէ վարդապետը ասում էր կատակով. «գրողի հայրն օրհնեմ (ուրիշ բան հասկացէք), ուրախ եմ որ ինձ էլ մեծ մարդիկների կարգն են ձգել, այժմ Հայոց ազգը կ'իմանայ որ Մամբրէ վարդապետ ևս ունի. սակայն այն է վատը՝ որ ինձ կուտ ուտող է շինել»։ Նոյն օրը երեկոյեան ժամ 9, երբ Վաղարշապատի բնակիչները, սակաւ բացառութեամբ, արդէն և քուն ընկղմուած էին, փողոցների երթևեկութիւնը դադարած էր և միայն մի քանի ալաֆրանկայ տուներից երևում էին Ճրագների լոյս, Սրբազանները Ն. և Գ. և Մ. վարդապետը աՀապարեցին Վեհափառ Կաթուղիկոսի մերձաւոր Ատ. աղայի տունը։ Ընթերցող չ'կարծես թէ Աղային ազատում պաղատում էին միայն, այլ և մի և նոյն ժամանակ մէջ ընդ մէջ սպառնում ևս։ Ատ. աղան հետևեալ առաւօտ խիստ կանուխ հանդիպեց Դր. Սրբազանի սենեակը և այնտեղից շտապեց ի Բիւրական։

Ստեփանիկի առաջին ջանքը եղաւ որ «Պսակի» այն համարը Վ.Հափառի ձեռքը չհասնէր, բայց այդ չյաջողուեց նրան։ Երկրորդ ջանքը այն է այժմ, որ առանց հետևանքի թողնուի այն. բայց այս ևս անկարելի պիտի լինի, որովհետև այսպիսի տարօրինակ անհաւատարմութիւն չէ պատահած ցարդ Էջմիածնում, և եթէ մասնաւոր անհաւատարմութիւններ պատահած են, այն ևս անպատիժ չեն մնացած. բաւական թուով օրինակներ կան Սինոդի գործերում, որ անհաւատարմութիւններ գործողները կարգընկեցութեան, աքսորանաց և կամ ապաշխարանքի ենթարկուած են. այժմ տարբերութիւնն այն է՝ որ անհաւատարմութիւն գործողները չնչին մարդիկ չեն։ Զգիտեմ այսուհետև որ անհաւատարմին պիտի համարձակուին սրբա դատելասել թէ՝ «աչքումդ շիղ կայ», որ փոխադարձը չլսեն. «հան նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեսջիր հանել զշիղ յականէ եղբօր քոյ»։

«Վ.Հափառ Կաթուղիկոսը ամսոյս 4-ին վերադարձաւ Բիւրականից, և մինչև ցայսօր Սինոդականներից ոչ ոքին չէ ընդունել ներկայանալու։ Իսկ Վահրամ Եպիսկոպոսը ամսոյս 8-ին ձի նստած անձամբ պատեց Էջմիածնի ագարակի հնձած արտերը (ծղնոտ-խոզան)։ Տանուցտանու քննութիւն են անում. և կոչուած վկայները իբրև ստորադրեալներ, Սրբազաններից խրատուած-պատրաստուած՝ աշխատում են գտնէ թեթև ցոյց տալ յանցանքը. բայց եթէ կամք ունենային արդարութեամբ քննելու՝ անհրաժեշտ է օրինաւոր երդմամբ հարցնել վկայներից. մշակ վարձկաններին երդմամբ միայն կարելի է հիշդն ասել տալ իրենց կառավարիչների դէմ, որոնցից կախուած է և՝ իրենց ապրուստը։

«Ի լոյս բերուած խաւարի գործերը ընթերցողի առաջ խստատեսակացնելու համար այն իրական փաստերը և ապացոյցները, որոնք առաջին նամակումս չգրելով՝ պահում էի քննութեան կամ դատի օրուայ համար, և որոնք ոչ թէ վերաբերում են Սրբազանների առանձին ունեցած ցանքսին, որի համար գրուածը արդէն բաւական է, այլ վերաբերում են վանքի իսկ ագարակից թագուն տարուած ցորենի դէզերին՝ ահա ներկայիս մէջ ի ստորև գրում եմ, որպէս զի սրչ խաղացնելու շնորհիւ խուսափել չկարողանան կշռուած արդար հարուածիցը։—

«Անցած աշնան Էջմիածնի շտեմարանից ագարակի սերմելու համար տարուած է 40 խալվար ցորեն, որ, համեմատութեամբ այս տարուայ բոլոր շրջակայից արտերի պտղաբերութեան, առ նուազն՝

400—450 խալվար ցորեն պիտի ստանար վանքը իւր ագարակից, բայց ստացուեց հազիւ 200 խալվար։ Մաքրազարդող պաշտօնեայները դիցուք առանց կարմրելու ասեն՝ թէ Էջմիածնի արտերի վերայ ոչ առատ անձրև, ոչ ցող և ոչ արեգակի ճառագայթ իջաւ այս տարի. բայց ինչպէս պիտի արդարանան, ում կարող պիտի լինեն խաբել և ուր պիտի թագչին, մինչդեռ վանքի սեպհական արտերումը 780 դէզ (1) ցորենի համարած եմ հնձող ժամանակ երեք անգամ անձամբ պատելով, վկաներ պատրաստ են. թող ագարակի վարձկաններից (չարեքտար) իսկ երդմամբ հարցնեն և ստուգեն այս յայտնի ճշմարտութիւնը, որով ամեն բան պարզ հասկանալի կը դառնայ։ Իրաքանչիւր մի դէզ 50—60 լտրից ոչ պակաս ցորեն է պարունակում այս տարի, բոլոր երկրագործները կը հաստատեն այս. ուրեմն դէզերի հաշուով ևս, որ ամենապարզ բանն է, 480 խալվար ցորեն պիտի ստանար Էջմիածինը իւր ագարակից։ Թերևս մաքրազարդող սուրբ հայրերը սորա դէմ կ'ասեն.—յիրաւի 870 դէզ եղած է, բայց վանքի արտերի հասկերը ազազուն—փուչ էին Փարաւօնի տեսլեան հասկերի պէս։ Իսկ ես կը պատասխանեմ և պատրաստ եմ ահա բացի վերոգրեալները, հաստատել նաև որ վանքասպատկան դէզերից գիշերները կրում էին Սրբազանների կալը և այնտեղ իւրացնելով մաքրազարդում էին։ Չեն կարող ծածկել կամ ստել որ մի գիշերուայ մէջ 15 դէզ վանքի արտերիցը տարան իրենց կալը.—«Ոչ կարէ թագչել քաղաք, որ ի վերայ լերին կայցէ»։ Այս հրէշաւոր յանցանքները ծածկելու համար (եթէ հնար լինէր), Գր. Եպիսկոպոսը կալի դեռ նոր սկսուած ժամանակ թէ ինչ էր պատուիրում և ինչպէս էր զգուշացնում իւր արբանեակներին՝ ակամայ լռում եմ ես այստեղ... բայց ընթերցող, ում է փախչում լոյսիցը, ոչ տպաքէն՝ որի գործերը խաւարային են. Քրիստոսի խօսքն է այս։ Եւ որչափ ճշմարիտ է—«գող՝ սիրտը գող»։

«Հրաշքի դարը թէպէտ անցած է, բայց Էջմիածնի ագարակում դեռ ևս շարունակվում է։ Անցած տարի 300 սայլ խոտը, որ որոշուած էր վաճառելու և Սինոդում աճուրդով արժէքը բաւական նշանաւոր գումարի (4000 ր.) հասնելուց յետոյ՝ ուժան համարելով չհամաձայնեցին վաճառել, կարճ ժամանակից յետոյ անյայտանում է ագարակից։ Վահրամ Եպիսկոպոսը անցեալ տարի Սեպտեմբերին իմանալով այս՝ հետևում է դուրս բերել գողը և պահանջել, բայց Գ. Եպիսկոպոսը միջամտելով ասում է թէ, «40 մսացու տաւար 20 օրում ուտելով սպառել են խոտը և ոչ թէ գողացուել է», և վերջանում է

(1) Ծպագրական սխալ է 780-ը. ուղիղը՝ 870 դէզ էր։

ամեն բան։ Այս ևս հրաշք չէ.—300 սայլ խոտը 40 տաւար կերել-սպառել են 20 օրում, և այն Մայիս ամսում գաշտերի խոտաւէտ ժամանակ...

«Ասում են թէ մի ուրիշ Սրբազան ևս վանքի կալեցը մի քանի խալվաթ ցորեն ուղարկել տուած է իրենց տունը։ Խեղճ Սրբազանը (Գ. Ա.) ստիպուած է կերակրել 8—9 անձինք—մայր, քոյրեր, քրոջ աղջիկներ (Տփխիսից բերած)։ Սորա տարած ցորենի քանակութիւնը ինձ յայտնի չէ. սակայն իւր տնտեսութեան ժամանակից և ծախսաբարական հաշիւներից մեծ պրոցէնտ ունի վերցրած, որ «Քեօթուկի» մէջ ընդարձակ տեղ է բռնում և որի մասին կը գրեմ ժամանակին, և դու, ընթերցող, պիտի զարմանաս՝ երբ լսես որ 5—6 տարի սորանից առաջ փետտած արաղաղի պէս էջմիածին մտնելուց յետոյ՝ ինչպէս շուտ գաւաւ յառաջ գնալու կարճ ճանապարհը, և այսօր նորա թաշխուստին նայելով՝ կարգինալից չես որոշի զինքը։

«Մեծ. խմբագիր, հաճեցէք այս նամակս տալել «Պսակի» մէջ և ինձ պատասխանեցէք առանձին կամ լրագրիս միջոցաւ՝ թէ պիտի տալէք «Խթան» ստորագրութեամբ նամակը թէ ոչ. ժամանակ կորցնել պէտք չէ» (Պսակ 1880 թ. № 28)։ Ես չեմ.

«Պսակի» խմբագրութեան պատասխանը.—

«Պատասխան «Խրատին».

«Ընայելով մեր անխոնջ աշխատութեանը հրատարակել «Պսակի» էջերում Ձեր նամակը «Խթան» ստորագրութիւնով, բայց չըյաջողուեցաւ մեզ զանազան մեզնից անկախ հանգամանքների պատճառաւ։ Իսկ ինչ որ կը վերաբերի Ձեր ցանկութեանը թէ կը տպագրուի և երբ այդ նամակը, մենք առժամանակ դրական կերպիւ ոչինչ չենք կարող ասել, որովհետև նորա տպագրութեան իրաւունքը, ինչպէս Ձեզ յայտնի է, ուղղակի մեր կամքիցը չէ կախ, այլ և... Մենք հաւատացնում ենք Ձեզ, որ սրտանց ցանկանում ենք հրատարակել այդ նամակը, որովհետև համոզուած ենք որ դորանով մեծ բարիք արած կը լինենք...» («Պսակ» 1880 թ. № 28)։

1881 թ. գրում եմ հետևեալ լուրը.—

«Էջմիածնից մեզ հաղորդում են. Էջմիածին ջուր բերող քանքանը մաքրելու համար կապալաւ տրուած է 2,700 ռուբլով, այժմ

մաքրում են. կապալառուները Պարսկաստանցի Թուրքեր են, թէպէտ մի և նոյն ժամանակ Հայեր ևս կային՝ որ Թուրքերից շատ պակասով առաջարկեցին պայմանուել։ Հայերին գաղտնիք հաւատալը վտանգաւոր է... Ուրիշ տարիներ մի և նոյն քանքանը մաքրելու և նորոգութիւնների համար ծախսել են հիները հազիւ 500—600 ռուբլ։ Այժմ լսում ենք, որ կապալառուների մէջ անբաւականութիւն է ծագել և յայտնուել է որ կապալառուները ստանում են միայն 1,200 ռուբլ, իսկ մնացեալ 1,500 ռուբլին պէտք է ծախսարար Շ-ին, որ պայմանուել է Թուրքերի հետ...» (Պսակ 1881 թ. № 23)։

Կ. ստորագրութեամբ անծանօթ մի կեղծողի դէմ, գրում եմ մի փոքրիկ նամակ, որը վերջանում է հետևեալ հատուածով.—

«Իսկ գալով X և Շ-ին՝ կասեմ, որ նորանք չեն իսկական յանցաւորները սիմոնականութեան... և այլ և այլ զեղծումների համար, այլ՝ պաշտօնական անձինք. ես կ'ապացուցանեմ ոչ միայն փաստերով և ապացոյցներով, այլ և Սինոդում կազմած օրագիրներով։ Թող պահանջէ Ս Սինոդը՝ ես պատրաստ եմ» (Պսակ 1881 թ. № 24)։

Ես եմ

«Մշակը» իւր սկզբնաւորութեան օրից բացարձակ կռիւ էր հրատարակել Հայոց Եկեղեցու և Հոգևորականութեան դէմ, ոչ մի առիթ բաց չի թողել՝ հոգևորական անհատի պակասութիւնը ընդհանրացնելով՝ ամբողջ հայ Հոգևորականութիւնը «մտրակել», հարուածել. իրեն գլխաւոր կոչումն է համարել «մրոյոց»։ Մշակի անվերջ նախատինքները չեն արդեօք ինձ գրգիռ դարձել և մղել այս քայլը անելու։ Սակայն այժմ «Պսակի» այսպիսի յանդուգն մերկացումների դէմ՝ Մշակը աշկարայ, կարծես «Պսակի» հակառակն արած լինելու համար, պաշտպանեց գլխաւոր կաշառակերներին և գողերին՝ որոնցից ակնկալում էր տիկին Քոչարեանցի և Գր. Արծրունու դրութեան մի ճար, այսքան մի ցած գնով. հրատարակեց ոմն խնամի «Նորայրի» նամակը՝ ի պաշտպանութիւն գողերի և կաշառակերների։ Պէտք է չծածկել ի հարկէ և այն հան-

գոմանքը՝ որ այդ ժամանակներում Մշակը դարձել էր բողոքական միսիոնար Աբր. Ամիրխանեանցի օրգան և տաք կռիւ էին մղում Հայոց Եկեղեցու դէմ. այդ խնդրով պոլեմիկան երկար տևեց Մշակի և Մեղուի մէջ։ Այդ խնդրի մասին, և ի հարկէ հակառակը Մշակի, ես գրել էի «Ազգի ցեցերին» վերնագրով, Բ. ստորագրութեամբ մի յօդուած. տես „Պսակ“ 1880 թ. № 21։ Մեղուն շտապեց իւր ընթերցողների ուշադրութիւնը հրաւիրել իմ այդ յօդուածի վերայ*)։ Դորանից յետոյ գրել էի և՛ «Շանթեր» ստորագրութեամբ մի յաջողուած ֆելիէտոն, տես Պսակ 1880 թ. № 40. որոնք յամառ Արծրունուն դիւր չէին գայ. նա վրէժխնդիր լինել ևս հո գիտեր։ Մանաւանդ որ Պսակի սեպհական ֆելիէտոնիստ «Զօմախը» խիստ լեզու էր բանեցնում Գր. Արծրունու դէմ. իբրև նմուշ՝ այս մի կտորը առաջ բերեմ.— «Ընթերցողները... թող միայն նեղութիւն քաշեն, կարդան Մշակի այս տարուայ համարները և քննեն... իւր բոպէական կեանքի քաղցրութեան և իւր անձնական սրտի բերկրութեան համար կամենում էր հիմնիվեր տապալել բանի դար ի վեր տառապեալ Հայ ազգի կրօնի-հաւատքի հիմքը։ Նա քարոզում է բողոքականութեան անարատութիւն, որ դիւրութեամբ սրբապղծի իւր երբեմն մտերիմ բարեկամի ընտանիքը։ Նա խղճի ու կրօնի ազատութիւն անունով՝ խլեց յափշտակեց իւր սրտաբաց բարեկամի ընկերը։ Վեց հազար խոստացաւ, որ ողջ—ողջ նորան գլորի գերեզման» (Պսակ 1880 թ. № 28)։

Մեղուն էլ Գր. Արծրունու հետ պատահած այդ անհատական գայթակղութիւնը մի քանի անգամ շեշտեց, սակայն իբրև պատասխան՝ լոյս տեսան Մշակում Պետրոս Սիմէօնեանցի զոհերից մինի նամակները, մերկացրին նորա՝ Ներսէսեան դպրոցում ուսուցիչ և Տեսուչ եղած ժամանակի աւելի խայտառակ պատկերը։—

*) «Պսակ լրագիրը իւր 21 համարում հրատարակել էր Բ. ստորագրութեամբ մի ընտիր և առողջ դատողութեամբ յօդուած Մեղուի և Մշակի մէջ ծագած վիճաբանութեան մասին՝ Հայ Եկեղեցու Նշանակութեան մասին, Հայ ազգայնութեան վերաբերութեամբ։ Հրաւիրում ենք ընթերցողաց ուշադրութիւնը նորա վերայ» (Մեղու Հայաստանի, 1880 թ. № 63)։

Մշակը այն տպեց ստորագրաշ «Նորայրի» նամակը՝ ի պաշտպանութիւն գողերի և Սիմօնականների, որի առթիւ գրեցի։

«Մի պատասխան «Նորայրին».

Էջմիածին. 23 Յուլիսի։

«Մշակի № 31-ի մէջ տպուած ձեր նամակը, պ. Նորայր, ինձ առիթ տուեց այս նամակը գրել։ Գործի Ճշմարտութեանը քաջ ծանօթ սրտի համար մեծ ցաւ է, երբ նա—Ճշմարտութիւնը ընդոտնվում է։ Մենք Էջմիածնեցիքս եթէ գիտենք մեր անհաւատարիմ, մեր տմարդի գործողներին՝ նորանց մէջ առաջնակարգերի թուում գիտենք և Ճանաչում ենք ձեր գոված Գ. և Ն. եպիսկոպոսներին։ Դուք պ. Նորայր, ձեռքներդ գրիչ առնելուց առաջ, լրագրական պատկառելի հրապարակը դուրս գալուց առաջ, մի կողմ պէտք է դնէիք ձեր անձնական համակրութիւնն ու բարեկամութիւնը. դուք գովում էք այն անհատներին, որոնք Միաբանութեան ցեցերն են, որոնք... Բայց ձեզ նման դատարկ խօսքեր ասելու տեղ՝ դիմենք ուղղակի փաստերին, իսկ ըստ գործոյն յատկութեան՝ դուք անուն տուէք։ Դուք Էջմիածնի ժամանակակից անցքերին տեղեակ լինելով, մեթէ չէք սոսկում, չէք խղճահարվում Գ. և Ն. եպիսկոպոսներին Էջմիածնայ միակ հաւատարիմներ և մտերիմներ անուանել։ — Ո՞վ էին վանքի տարեկան 5000 ռուբլ արժողութեամբ խոտատեղին 1,300 — 1,500 ռուբլով երենց վերայ պահողները՝ Սա.-կի հետ ընկերութեամբ 4 — 5 տարի ժամանակով։ — Ո՞վ էին 1879 թուին վանքի գոմանոցից (Պլան) 4,000 ռուբլոյ արժողութեամբ խոտի դէզը անհետացնողները։—Ո՞վ էին անցեալ տարի, բացի վանքի ծախսով ու նիւթով հինգ խալվար ցորեն (իւրաքանչիւրը) երենց օգտին ցանել տալուց, Էջմիածնի արտերից հարիւրաւոր դէզ ցորեն և 10 խալվար պատրաստ ցորեն և գարի կալեցը չքացնողները։—Ո՞վ էին 1879 թուի ընթացքում 25 հազար ռուբլ կաշառք քահանայացուներից գցլողները, և այս տարի՝ 200 տիրացուներից հինգհարիւրական ռուբլ ստացողներին բաժանորդ գործակիցները։—Ո՞վ են այժմ վանքի քանքանը մաքրող կապալառուներիրքերի հետ ընկերացող և Էջմիածնից 1700 ռուբլ անյայտացնողները։ Այս ամենի համար գրուեց և հրատարակուեց շատ անգամ, բայց ոչ համարձակուեց հերքել կամ դատաստանի հրաւիրել. գիտէք որ՝ «լռութիւնը համաձայնութիւն է»։—Եւ վերջապէս, ո՞վ են այս տարի Վաղարշապատ և Եղուարդ գիւղերի տորգից մօտ 100

խալվաը ցորեն պակասեցնողները, սխալ չի լինի թէ ասենք՝ գողանալ տուողները... Ահա այս վերջինի պատմութիւնը.—

«Այս տարի, Մայիսի վերջին օրերում, Սինոդը աճուրդով (տորգով) էր տալիս Էջմիածնապատկան գիւղերը. ոմն Գրիգոր Մալխասեանց կոնվերտ է տալիս Նորին Վեհափառութեանը և խնդրում է Վաղարշապատ և Նղուարդ գիւղերի այս տարուայ ցորենի բահրէն (հնգորդը) տալ իրեն կապալով, առաջին գիւղը 280 խալվաը ցորենի, իսկ երկրորդը՝ 260։ Վեհափառ Կաթուղիկոսը Մալխասեանցի խնդրագիրը յանձնում է Տաթևացի Գ. եպիսկոպոսին, և սա Նորին Վեհափառութեան պատուէրին համաձայն տանում է Սինոդ, ուր միւս Անդամներին էլ հրաւիրելով՝ յայտնում է թէ. «Վեհափառ Կաթուղիկոսը Մալխասեանցի խնդրագիրը ահա ուղարկեց Սինոդ՝ որ խորհենք, եթէ ձեռնտու է Էջմիածնին՝ գիւղերը տանք Մալխասեանցին». և Սինոդի պ. Հաշուապահը կարդում է տորգով տալու պայմանները՝ որը միմիայն ցորենի բահրէի համար էր։ Ժողովուած Անդամները—Սինոդականք ասում են. «լաւ կըլինի որ աճուրդի հրաւիրենք», իսկ մէկը Նորանցից (Ն.) վիճաբանում է. «աճուրդի եկողներ չեն լինի (sic), մանաւանդ որ միմիայն ցորենի բահրէն է տրվում Մալխասեանցին, իսկ միւս բերքերինը—բամբակի, քնճիլի, խոտի (առոյտ) և բոստաններինը մենք (վանքը) պիտի ստանանք»։ Սինոդն արձակվում է առանց մի որոշման։ Յետոյ ներկայացնում են առանձին առանձին կոնվերտ Պողոս Մուշեղեանց, Նոյեմ Տէր-Մկրտչեան և Վաղարշապատի երկսեռ դպրոցի Հոգաբարձութիւնը, և խոստանում են Վաղարշապատի համար աւելի տալ քան Մալխասեանցը՝ մինը 25 խալվաը ցորեն, միւսը՝ 30, իսկ երրորդը՝ 40 խալվաը. սա մաղթիք էր մինչև 60 խալվաը աւելի տալ, բայց սորանց պատասխանում են թէ արդէն տրուած վերջացած է։ Մեթէ՞։

«Երկու օր յետոյ օրագիրը գրվում է յիշեալ գիւղերը Մալխասեանցին տալու. բայց օրագրի մէջ դուրս չեն բերում Մալխասեանցի խնդրագիրը, որ անհրաժեշտ էր (դորա մէջ գրուած առաջարկութիւնը միայն ցորենի բահրէի մասին էր)։ Օրագրին ստորագրում են Անդամները, իսկ միայն մի Անդամը շատ զարմանում է՝ երբ տեսնում է որ Մալխասեանցին տրվում է Վաղարշապատը գարձեալ 280 խալվաի, բայց գնում ոչ ցորենի բահրէն միայն, այլ յաւելացրած է և՝ միւսներինը, զորօրինակ, բամբակի, խոտի, քնճիլի, և բոստաններինը։ Հաւատացնում են, և հաստատ է, որ Մալխասեանցի հետ ընկեր են պ. Նորայրի բարեկամները... Այս խարդախութիւնը նկատող միակ

սրտացաւ Սինոդականը դիմում է Սինոդում իւր ընկերներին՝ հարցնելով օրագրի, հակառակ պայմանին՝ ի վնաս Էջմիածնի գրուելու պատճառը։ Պատասխանները լինում են առհասարակ խուլ և անորոշ՝ ինչպէս ստորերկրեայ ձայներ, բայց բանը պարզ և հասկանալի էր...

«Ահա ձեզ, պ. Նորայր, պատկեր, որի մէջ փայլում են ձեր Գ. և Ն. բարեկամ եպիսկոպոսների բոլոր արժանաւորութիւնները, և որի մէջ դուք կը գտնէք, եթէ դատելու գլխի ուղեղի տէր լինիք, ձեր հարցման պատասխանը՝ թէ «ինչու սրանք էլ (Գ. և Ն. եպիսկոպոսները) գանգատաւոր չեն միւսների պէս»։ Այս ամենը անգիտանալով՝ կոչել այնպիսիներին միակ հաւատարիմներ եւ մտերիմներ Էջմիածնայ համար՝ շողոքորթ և հացի խնդրի առաջ ՀՀվոզներին կարելի է ներել, թերևս նաև ստաբան Հրապարակախօսին։ Խաւարը՝ լոյս, գայլը՝ դիտմամբ գառն անուանել՝ պատիւ չի բերիլ ոչ մի պատուաւոր մարդու։

«Ա՛խ մոռացայ. դուք ասում էք—«ձեմարանի ուսանողներն ու ուսուցիչները, վանքի Միաբանութիւնը, սակաւ ինչ բացառութեամբ (ի հարկէ Գ. և Ն.), դժգոհում են Վեհարանից». և իրրև բարի քրիստոնեայ, ճշմարտութիւնից ստիպեալ (sic), չէք կարողանում չխոստովանել, որ «բոլորի դժգոհութեան պատճառն էլ իրանց անձնական շահերի նուազումն է» *)։

«—Ի՞նչ է, դուք կարծում էք որ ձեմարանի ուսանողներն և ուսուցիչներն էլ ձեր նման հանքային ջրերի գործարան են հիմնել, որ հոգան ջրերը առատ գներով ծախելով՝ հարստանալու մասին. նրանք ի՞նչ կարիք ունին «անձնական շահերի» վերայ մտածելու, քանի որ ուսանողք՝ իրենց դասերն ունին, իսկ ուսուցանողք - առատ ռոճիկները։ Իսկ գալով մեր անմիաբան Միաբանութեանը, պէտք է ասել որ՝ «իրրև որոճ՝ առաջի կտրչի անմունչ կայ»։ Ո՞ւմ մօտ տրտնջայ. ո՞ւմ պատմէ իւր վիշտը... փոքր ինչ կասկած՝ թէ այն ինչ ոք Միաբան գրում է կամ համարձակ խօսում, այնուհետև նորա համար պատրաստ է որոգայթ, զրկանք, հալածանք... կարդացիք որ Միաբանութեան այժմեան դրութիւնը շատ ցաւալի է, դուք չգիտէք. և այդ իսկապէս հետևանք է, յերաւի, իւր անմիաբանութեան, որից և օգուտ են քաղում սինլքոր բարեկամներդ... Եւ այսպէս, ես չեմ կարող արդարացնել մեր այս բթացած Միաբանութեան անդամներին։

---

*) Իսկ ձեր բարեկամ Գ. և Ն.-ի de facto մտերիմ լինելու պատճառն էլ անձնական շահերի կուտակումն է անշուշտ։ Ս. Խ.

«Մշակի մեծ. պ. խմբագրից խնդրվում է արտատպել այս նամակը, որպէս զի իւր ընթերցողները հայած իւղի տեղ չընդունեն «Նորայրի» բարեկամական գովաբան նամակը» (Պսակ, 1881 թ. № 27).

Միաբան.

Շատ չանցած բացւում է անբաւականութիւն կապալառու թուրքերի և վանքական Կառավարութեան անդամոց մէջ։ Թուրքերը բողոքագրով դիմում են Վաղարշապատի Հաշտարար Դատաւորին (Միրավոյ սուդիա), Դատաւորը իւր ատենադպրի և թարգմանի ուղեկցութեամբ մտնում է Վեհարան և թուրքերի 500 ռուբլ պահանջի և կանտրակտի պատճէնը տալու առաջարկութիւն է անում և բացատրութիւն պահանջում Վահրամ և Գրիգոր եպիսկոպոսներից, իսկ սոքա ասում են թուրքերի հետ կանտրակտ—կնքեալ պայմանագիր ունենալը։ Դատաւորը կազմում է հետևեալ արձանագրութիւնը, որի մէջ սեպհական ձեռքով հայերէն գրել են իրենց ցուցումը և ստորագրել Վահրամ եպիսկոպոս Մանկունին և Գրիգոր եպիսկոպոս Տէր-Մատթէոսեանը. ապա ինքը Հաշ. Դատաւորը ստորագրում և կնքում է և նոյնը տալիս թուրքերին։ Իսկականը այժմ ինձ մօտ է։—

պատճեն.

М. М.

УДОСТОВѢРЕНІЕ

Я, нижеподписавшійся, симъ удостовѣряю: во 1-хъ что тысяча восемьсотъ восемьдесятъ перваго года Сентября восемьнадцатаго въ пять часовъ и двадцать минутъ по полудни, по порученію явившихся ко мнѣ Николаю Филимоновичу Романову Мировому Судьѣ Эчміадзинскаго Мироваго Отдѣла, въ камеру мою въ сел. Вагаршапатѣ, Эчміадзинскаго Уѣзда, Эриванской губерніи, въ безънумерномъ домѣ сироты покойнаго

Кеворка Асланова Амаспюры Аслановой, персидско-подданныхъ: Сулеймана Абдулла оглы, Тагія Фатулла и Садыха Мамарза оглы проживающихъ въ сел. Вагаршапатѣ, я заявилъ Епископамъ Манкуни и Крикору Теръ-Матевосову проживающимъ въ зданіяхъ Эчміадзинскаго Армяно-Григоріанскаго монастыря вмѣстахъ ихъ жительства о томъ когда именно они выдадутъ имъ, Сулейману Абдулла оглы, Тагію Фатулла оглы и Садыху Мамарза оглы, причитающіеся, по настоящее время въ силу контракта о подрядѣ по очисткѣ водопроводной канавы, пятьсотъ рублей, для продолженія работы по означенному подряду и снабдятъ ихъ копіею сего контракта о сказанномъ подрядѣ, и во 2-хъ что вышеупомянутые Епископы Манкуни и Теръ-Матевосовъ заявили мнѣ, что если Сулеймань Абдулла оглы, Таги Фатулла оглы и Садыхъ Мамарза оглы имѣютъ съ кѣмъ либо и какой либо контрактъ, то пусть съ выше приведенными вопросами къ тому и обращаются. Մեք ստորագրեալքս պատասխանեմք «Եթէ նոքա ունին զպայման ինչ ընդ ում և իցէ, դիմեսցեն նմին։ Վ. Ե. Մանկունի. Գրիգոր եպիսկոպոս Տէր-Մատթէոսեան։ 1881 года Сентября 18 дня. По реестру № 92.

Мировой Судья Эчміадзинскаго Мироваго Отдѣла Н. Романовъ.—

(М. П.)

Սորանից յետոյ նոյն թուրքերը դիմում են Էջմիածնի Սինոդի Պրոկուրորին՝ նոր բողոքագրով։ Այս բողոքագրի պատճէնը ես ուղարկում եմ «Պսակին» հետևեալ նամակով, որք և հրատարակւում են.—

Էջմիածին. 12 Հոկտ. 1881 թ.

«Մեծապատիւ խմբագիր.

«Հաճեցէք քանքանը մարդելու կապալառու Պարսկաստանցի

թուրքերի՝ Սինոդի պ. Պրոկուրորին տուած գանգատագրի սոյն պատճէնը հրատարակել «Պսակի» մէջ. թող ընթերցողը, մանաւանդ Մշակի պ. «Նորայրը» Ճանաչէ իւր գոված «Վեհափառին միակ հաւատարիմ» կոչած չարագործներին։ Իսկ ես շուտով իբրև դատախազ՝ կը բանամ ընթերցողի և աշխարհի առաջ Ս. Էջմիածնում կատարուող մի շարք աւազակութիւններ և կաշառակերութիւններ» (Պսակ 1881, թ. № 33)։

Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեան.

պատճէն.

«Պարոն Պրոկուրոր Սինոդի սրբոյ Էջմիածնի.

«Մենք Սուլէյման Արդուլլայ օղլի, Թաղի Ֆաթուլլայ օղլի և Սաղդ Մամադ Բիգայ օղլի, Էջմիածնի վանքական Կառավարութեան նախանդամ Գրիգոր եպիսկոպոս Տէր-Մատթէոսեանի հետ կանտրակտ կապեցինք յիշեալ Կառավարութեան անունով՝ Էջմիածնի քանքանը մաքրելու և նորոգութիւնները անելու 1,700 ռուբլով, բայց կանտրակտի մէջ իւրեանք գրեցի 2,700 ռուբլով. յաւելացրած 1000 ռուբլին իւրեանց պիտի վերցնէին։ Կանտրակտը, որ պահվում էր վանքական Կառավարութեան մէջ, գրած է Գէորգ Զանիբէկեանցը և զաւերիթ է արած տեղոյս Գաւառապետ պ. Խանազեանցը։

«Կանտրակտի գումարից մենք ստացել ենք միայն 900 ռուբլի. իսկ գործի մեծ մասն արդէն շինել ենք, բայց որովհետև, ինչպէս կանտրակտի մէջ գրուած է՝ պիտի մեզ տային շաբաթական 100 ռուբլ, երբ կարճեցին չ'տուին՝ ուստի մենք էլ դադարեցրինք գործը։ Կարճելու պատճառը այն եղաւ որ, երբ կանտրակտի մէջ յաւելացրած 1000 ռուբլոյ գողանալը յայտնուեց և կազէթի մէջ գրուեց՝ գործը խանգարեցին որ ծածկեն։ Մենք 1400 ռուբլոյ գործ ենք շինել։

«Խնդրագիր տուինք Վաղարշապատի Հաշտարար Դատաւորին, որ իբրև Նատարիուս՝ պահանջէ մեր կանտրակտի պատճէնը. Դատաւորին պատասխանեցին թէ՝ «ով է գանգատաւորը՝ թող հանէ իւր կանտրակտը». ուրեմն ուրանում են մեզ հետ կանտրակտ ունենալը։ Բայց մեր կանտրակտը զաւերիթ է արած Դաւառապետ պ. Խանախեանցը, վկայ ունինք Երեմիա եպիսկոպոսը, Կիւրեղ և Բարդուղիմէոս վարդապետները, Սահակ և Դասպար սարկաւագները, և Գէորգ Զանիբէկեանցը՝ որոնք տեսել-կարդացել են կանտրակտը վանքական Կառավարութեան մօտ՝ հենց գործի շարունակութեան ժամանակ։

«Մեր այս հանգամանքը յայտնելով Ձերդ Գերազանցութեան խնդրում ենք միջամտէք, որ մենք չզրկուինք մեր իրաւունքից։ 1 Հոկտ. 1881 ամի» (տես «Պսակ», 17 Հոկտ. 1881 թ. № 33)։

Սուլէյման Արդուլլայ օղլի.
Թաղի Ֆաթուլլայ օղլի.
Սաղդ Մամադ Բիգայ օղլի։

Նոյն Հոկտեմբերի 13.ին Վաղարշապատում քաղաքային փոշտով (ապահովեալ) ուղարկեցի Տ. Գէորգ Դ. Կաթուղիկոսին, Սինոդին և Սինոդի Պրոկուրորին՝ իմ ստորագրութեամբ յայտարարութիւններ, որոնց մէջ ծրարելով մի-մի օրինակ պատճէն թուրքերի՝ Պրոկուրորին մատուցած վերոյիշեալ (եր. 76—77) բողոքագրի։ Նոյն ամսի 15-ին այդ բոլորի պատրաստ հարազատ պատճէնները ուղարկեցի, մի առաջնորդող նամակի հետ՝ Պսակին, Մշակին և Մեղուին. գիտելով Հանդերձ որ Մշակը և Մեղուն, իբրև կաշառուած և վարձկան թերթ՝ չեն տպի։ Իսկ Կ. Պոլիս «Մասիսին» ուղակեցի նոյն Հոկտեմբերի 16.ին։ Հրատարակեցին միայն Պսակը (№ 33 և 34) և Մասիսը։ Ես այստեղ գորանք առաջ կը բերեմ Մասիսից արտատպելով։ Լրացուցիչ նոր ծանօթութիւնները դնում եմ 1, 2 թուանշանով։

ԷՋՄԻԱԾՆԱՅ ՎԻՃԱԿԸ

Սարսափելի յայտնութիւնք (1):

«Էջմիածին. 16 Հոկտ. 1881 ամի.

«Տէր խմբագիր Մասիս լրագրի.

«Շատ գրեցին աղաղակեցին Էջմիածնի Հոգևոր իշխանութեան խայտառակութեան հասած գեղծումների — կաշառակերութեանց (չհաս պսակներից և քահանայացուներից), Էջմիածնում կատարուող ոչաբաղութեանց եւ աւազակարար գողութեանց և ուրիշ շատ բաների համար, բայց բոլորն անցան իբրև «ձայն բարբառոյ յանապատի», բնաւ չ'ազ-

Ծան. 1) Խմբագրութեանն է։

դեցին անամօթներից ոչ օգին։ Ես այժմ համոզուած եմ՝ որ լրագրական խօսքը այս մասին ազդեցութիւն չունի և պիտի չունենայ, «մանուկներին կարող է վախեցնել» (1). ապացոյց՝ որ տասնով, հարիւրով գողացողներն այժմ հազարներով են գողանում անարգիւ։ Էջմիածնի կորուստներն խիստ անիծելի են. նա իւր ամենաթանկ հարստութիւնը—ազգի համակրութիւնը ևս կորցրած է այսօր։ Մեր Հոգևորականութիւնը իբրև հոտած նեխած գէշ՝ զզուելի է դարձած, ժողովուրդն երեսը դարձնում է և խորշում, ինչ մենք ցանկութիւն չունինք ուղղուելու, և դեռ յանդգնում էլ ենք մեր այս դրութիւնը պաշտպանել...

«Թող ներուի ինձ ասել, որ ժողովուրդն ինքն է յանցաւոր. երբ թողեց պառաւական բամբասանքը և դրական վորձ վորձեց բառնալ զեղծումները. ժողովուրդը մոռացել է իւր դարաւոր ժառանգական իրաւունքը, նա չէ յիշում՝ որ Հոգևորականութիւնը եւ Էջմիածինը իւր օրինաւոր անվիճելի սեպհականութիւնն է։ Այս անտարբերութիւնը մեռելութիւն է. չկայ ժողովրդականութիւն, մեռած է ժողովրդական զգացումն, մեռած է և ամբողջ հոգևորական դասը։ Պատիւը թանկ է քան կեանքը. այժմեան հոգևորականութիւնը անպատիւ է, ուրեմն և մեռած։

«Բայց եղբարք—վարդապետները, եպիսկոպոսները, «լաւ է անագան քան երբէք». մենք դեռ ևս ժամանակ ունինք, կարող ենք ուղղուել, եթէ մեզ չպակասի կամք, եթէ մենք ինքներս կը լինինք մեր դատախազը և բժիշկը, կը բանամք մեր վէրքերը և ճարակուող վտութիւններն անխնայ կտրատելով կը ձգեմք ի բաց։ Այսպէս թելադրում է նախ առողջ բանականութիւնը, և ասա մեր Յիսուս Փրկիչը. «Եթէ ակն քոյ աջ գայթակղեցուցանէ զքեզ, խլեա զնա և ընկէա ի բաց, զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, քան ամենայն մարմինդ»։ Մեր վէրքերը թագցնողները մեր թշնամիք են։

«Ահա ես անում եմ առաջին քայլը, ես դուրս եմ գալիս մեր դատախազ, արհամարհում եմ ինձ սպասող ամեն վտանգ, հալածանք և տանջանք. ես խոնարհաբար բողոքում եմ Վեհափառ Կաթուղիկոսին, Սինոդին և Սինոդի պ. Պրոկուրորին՝ մի-երկու Սինոդա-

Ծան. 1) Ան ժամանակ երբ Սիմէոնեանցի Մեղուն տմարդաբար հարուածում էր Ս. Գէորգ Դ. Կաթուղիկոսին, տասն տարուայ հաշիւ էր պահանջում, Կառավարութեան միջամտութիւնն էր հրաւիրում, Մանկունին ասել էր, ըստ ասութեան Մեղուի. «մանուկներին կարող է վախեցնել Սիմէոնեանցի Մեղուն»։

կանների դէմ. իմ բողոքը այն Ծաղնուած մնբենայի երկայն շղթայի ծայրն է, որոյ իւրաքանչիւր օղակներից քարշ ընկած ի լոյս պիտի գան անթիւ զեղծումներ և դատապարտուեն։ Այսպիսի մի դժուար և կարևոր օպերացիայի համար թէպէտ անհրաժեշտ էր Միաբանութեան բուռն հաւաքական մի նախանձախնդրութիւն-դատախազութիւն, բայց դուք հրաժարուեցիք, ցոյց չտուիք մի այդպիսի տրամադրութիւն. այժմ ես ինձ բանտաւոր պիտի համարիմ՝ եթէ գտնուին ձեզնից գոնէ մի քանիսը ինձ այս դէպքում համակրող և օգնող» (1)։

Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեան.

պատեան.

«Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգայ Դ.-ի Սրբազնագոյն Կաթուղիկոսի ամենայն Հայոց

Ի Միաբանէ սրբոյ Աթոռոյ Էջմիածնի

Բարդուղիմէոս վարդապետէ Գէորգեան

Յայտարարութիւն.

«Քաջ իսկ հաւատացեալ թէ բնաւ երբէք նեղելոյ արժանասցին գողքն և անհաւատարիմք սրբոյ Աթոռոյ Էջմիածնի և Սիմօնական կաշառակերք, յանցանք և յանցաւորք՝ որ ոչ միայն խստագոյն դատապարտելիք են ի քաղաքական օրինաց, այլ և խպառ ընդդէմ կանոնաց եկեղեցականաց, որ և օրինապղծութիւն համարին, վստահութիւն յանձին կալեալ՝ յայտ առնեմ Վեհափառութեան Ձերում, զի Միաբանակիցք մեր անդամ Սինոդի Ներսէս և Գրիգոր Տաթևացի) եպիսկոպոսունքն յանցելումն ամի թող զի ցանեալ են յանուն իւրեանց, Ծախուք սրբոյ Էջմիածնի, զհինգ խալվար ցորեան և զտորդիւնս 50-60 խալվար սեպհականեալ ինքեանց. այլ և գողացեալ են ի վանքապատկան արտոբէից զհարիւրաւոր դէզս ցորենոյ և տարեալ ի գիշերի խառնեալ յիւրեանցն. համարեալ կալն, և ի շեղջէ ազարակի Աթո-

Ծան. 1) Մանկունու քաղաքականութիւնն էր՝ միջոցները հայթայթել արատաւորելու բոլոր Միաբանները, որպէս զի սանձած պահի և զրկի համարձակութիւնից։ Միաբանութեան ամենամեծ մասին արատաւորել էին տալիս. ոմանց շինել էին իրենց գործիք և ըստ չափու՝ մանակից յանցանքներ։ Ոմանք իրենց երջանիկ էին համարում հաճոյանալ և գլուխ պահելով մոռանել միայն իրենց շահը. ոմանք արանջում և միայն տրանջում էին նախանձով, անկեղծ ցաւ զգացող եթէ կար՝ այն էլ վատասիրտ, երկչոտ։ Ինձ անհայրենի եղաւ գոնէ մի զուրծակից գտնել։

ռոյ՝ զտասն խալվար ցորեան և գարի։ Նա և յընթացս 1879 ամի առեալ են նոյն եպիսկոպոսանքն կաշառս ի քահանայացու տիրացուց աւելի քան զքսան եւ հինգ հազար րուբլ։ Ի կանտրակտի մաքրելոյ զքանքանն՝ գողացեալ է Գրիգոր եպիսկոպոսն զմի հազար րուբլ, որոյ վասն կապալառու Պաբսիկքն բողոքեցին գրաւոր ալ. Պրօկուրօրին Սինոդի—Նիկողայոսի Տ. Ցովսէփեանց, զորոյ զպատճէնն ընդ սմին առաջի առնեմ։ Ունիմ յայտնել, ի պահանջել հարկին, և զայլ բազում գողութիւնս և զօշաքաղութիւնս գոցա։ Ի տոն օրինակ տուաւ եւ ի Սինոդն։

«Արդ, զայսոսիկ յայտնելով Վեհափառութեան Ձերում, որպէս հարազատ Միաբան՝ նախանձաւոր շահուց և պատուոյ սրբոյ Աթոռոյ Էջմիածնի ևս և օրինաց սրբոյ Եկեղեցւոյ, մանաւանդ զի ի նոցա սակս կեղտ անուամբ չարաչար ամբաստանի և համայն Միաբանութիւնս մեր, որք և նախատինս մեզ բերեն, յայտնեմ միանգամայն և զպատրաստականութիւն իմ՝ զասացեալս ապացուցանել ի դատաստանի վկայիւք և յայտնի ապացուցութեամբ։ Ի 13-ն Հոկտ. 1881 ամի, ի Ս. Էջմիածին»։

Վեհափառութեան Ձերում խոնարհ ծառայ
Բարդուղիմէոս վարդապետ Դէորգեան.

Մի և նոյն է և Սինոդին մատուցած յայտարարութիւնս. այն միայն տարբերութեամբ՝ որ նորանում գրած եմ «Ի տոն օրինակ տուաւ» Նորին Վեհափառութեանն։

պատճէն.

«Ձեր Գերազնութիւն ալ. Պրօկուրօր Սինոդի սրբոյ Էջմիածնի.

«Պարտականս շնորհեալ «Պալատենու» զօրութեամբ՝ Ձեր պարտաւորութիւնն է, իբրև Պրօկուրօր՝ պաշտպանել Ս. Էջմիածնի զանմարանի ինտերէսը եւ հսկել օրէնքները սրբութեամբ կատարել տալ։ Ես Ձեր այդ իրաւունքը իմանալով, անցեալ Թուականի Դեկտեմբերի 19-ին դիմեցի Ձեր Գերազնութեան առանձինն և յայտնեցի այն զեղծումները — Ս. Էջմիածնին անհաւատարմութիւն—զօշաքաղութիւն, գողութիւն և Սիմոնական կաշառակերութիւն, զորս արած են Սինոդի անդամ Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսները։ Դուք մի և նոյնը Վեհափառ Կաթուղիկոսին (ըստ իմ խնդրանաց) յայտնելուց յետոյ, նոյն Դեկտեմբերի 29-ին հաղորդեցիք ինձ իմ սենեկում Նորին Օծութեան պատուէրը՝ թէ. «Վեհափառ Կաթուղիկոսը հաճութեամբ ընդունեց

ձեր յայտարարութիւնը, և ասաց գալ ասել ձեզ Իւր կողմից՝ թէ «Ես ևս հաւաստի տեղեկացել եմ այդ եպիսկոպոսների գող և կաշառակեր լինելը, բայց առ այժմ ասացէք Բարդուղիմէոս վարդապետին՝ լռել և սպասել մինչև ցգարուն *). Ես ի նկատի ունիմ դորանք և պիտի անեմ պէտք եղածը. և այլն, և այլն»։

«Այս պատուէրին համաձայն ես լռեցի և սպասեցի մինչև ցգարուն, ահա և մինչև ցայսօր, բայց ցաւում եմ ասել՝ որ յանցաւորները ոչ միայն անպատիժ են մնում ցարդ, այլ և նոյն գայթակղելի ընթացքը շարունակում են։ Թողնենք լրագրերների մէջ բարձրացած աղաղակները, քանի՞ քանի բողոքներ տրուած են Ձեր Գերազնութեան կեղեքուած քահանայացու տիրացուներից և ժողովրդականներից։ Ուստի այժմ ինձ պարտք համարելով, իբրև Միաբան Ս. Էջմիածնի, ահա գրաւոր յայտնում եմ և բողոքում՝ որ յիշեալ Անդամք Սինոդի Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսները, չնայելով որ Միաբաններիս և իրենց Անդամակիցներին հաւասար ստացել են պահմանեալ սնունդը և ռոճիկները, արտաքոյ իրաւանց ցանել են վանքապատկան հողերում հինգ խալվար (150 պուդ) ցորեան, որոյ թէ սերմն և՝ թէ բոլոր մշակագործութիւնը և ամենատեսակ ծախսերը Էջմիածնի հաշուով են արած՝ գողունի, իսկ արդիւնքը 50—60 խալվար ցորեան սեպհականած են իրենց գրպանին՝ ծախելով խալվարը 60 րուբլով։ Բացի այս, Էջմիածնի արտերից հարիւրաւոր դէզ ցորենոյ գիշեր ժամանակ գողացել և տարել խառնել են իրենցը համարուած կալի մէջ։ Էջմիածնի կալի շեղջերը ևս գողացել են տասն խալվար ցորեան և գարի։ Այս տարի ևս քանքանի մաքրելու կանտրակտով, ինչպէս Ձեզ յայտնի է, Գրիգոր եպիսկոպոսը գողացել է 1,000 րուբլ։

«Յայտնում եմ նոյնպէս, որ յիշեալ Անդամք Սինոդի Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսները կաշառք են առած, 1879 թուականի ընթացքում, քահանայացու տիրացուներից աւելի քան քսան եւ հինգ հազար րուբլ, որոյ համար նոյնպէս ունիմ փաստեր, ապացոյցներ և վկայներ։ «Պսակ» լրագրին տալել արգելուած «Խթան» ստորագրութեամբ յօդուածը ևս հաստատում է վերոյգրեալներն, որը յայտնի է արդէն Վեհափառ Կաթուղիկոսին, Երևանի ալ. Նահանգապետին և Ձեզ (1)։ Ունիմ յայտնել գատի ժամանակ և այլ շատ գողութիւններ։

*) Հէնց այդ գարնան էր, որ Գրիգոր եպիսկոպոսին Թանկագին մատանի պարգևեց Վեհափառը... Ծ. Խ. («Պսակի»)։

Ծան. 1) Նահանգապետ Շալիկովի՝ Վեհափառ Կաթուղիկոսին ներկայացած ժամանակ թարգման լինելը Պրօկուրօրն էր։

«Այս այսպէս գրելով Ձեր Գերազնու�թեանը, խնդրում եմ առնել պարտուպատշաճն, այլ և մինչև դատի վերջանալը պաշտպանել զիս յանիրաւի հալածման եւ վրէժխնդրութեան դէմ։ Թէպէտ ես յանցաւորներին մատնելով օրէնքի-դատի՝ չեմ դաւաճանում Ս. Էջմիածնին կամ Հոգևոր Իշխանութեանը, այլ մինչև իսկ համոզուած եմ թէ սորանով մի ազնիւ և արժանաւոր ծառայութիւն եմ անում։ Դուք քաջ իսկ գիտէք թէ այս վերջին տարիներում մեր ժողովրդականք որչափ գայթակղուած և ցրտացած են Ս. Էջմիածնից և առհասարակ Հոգևորականներից՝ այս և այսօրինակ գեղծումների պատճառաւ։

«Պէտք է ազատել ժողովուրդը, Էջմիածնի լնտերէսը և Հոգեւորականներիս պատիւը»։ Ի 13-ն Հոկտ. 1881 ամի, ի Ս. Էջմիածին։

Միաբան սրբոյ Աթոռոյ Էջմիածնի

Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեան.

«Յ. Դ. Հարկաւոր եմ համարում Ձեր Գերազնուութեանը ծանուցանել որ, այս ամենի համար յայտնեցի Նորին Վեհափառութեանը և Սինոդին՝ առանձին առանձին յայտարարութեամբք, հանդերձ քանքանի մաքրելու կապալառուների՝ Ձեզ տուած գանգատագրի պատճէնով»։

Նոյնը.

պատճէն.

«Պարոն Պրոկուրոր Սինոդի Ս. Էջմիածնի.

«Մենք Սուլէյման Արդուլլա օղլի, Թաղի Ֆաթուլլա օղլի և Սաղդ Մամադ Ըկա օղլի, Էջմիածնի վանքական Կառավարութեան նախանգամ Գրիգոր եպիսկոպոս Տէր Մատթէոսեանի հետ կանտրակտ կապեցինք... (ցվերջ) որ մենք չ'գրկուինք մեր իրաւունքից» (տես. եր. 76—77)։

«Տէր Խմբագիր «Մասիս» լրագրի.

«Վերոյգրեալներին—առաջնորդող նամակիս և միւս երեք գրութեանց պատճէններին տեղի շնորհեցէք, խնդրեմ, Ձեր պատուական թերթի մէջ։ Կը յուսամ, որ խնդրի մեծ կարևորութիւնը աչքի առաջ ունելով՝ չէք յապաղի հրաւիրել միանգամայն Տաճկահայոց և ի մասնաւորի՝ Կ. Պոլսոյ Հայ Խմբագրաց ուշադրութիւնն առ այս. Էջմիածինը սեպհականութիւն է ամենայն Հայոց...

«Կովկասի հայ լրագրաց ևս՝ ուղարկուած է» (Մասիս, թիւ 3036, 6 Նոյեմբ. 1881)։

Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեան.

Էջմիածնում իմ յայտարարութիւնները փոշուից ստացուում են Հոկտ. 14-ին։ Ներսէս եպիսկոպոսը ձեռքին բռնած Սինոդի անուան յայտարարութիւնս՝ մտնում է Վեհարան և Մանկունի Վահրամ եպիսկոպոսին ասում. «Այս ինչեր է գրել Բարդուղիմէոս վարդապետը մեր համար. վրէժխնդիր եղէք նորանից, եթէ ոչ՝ ես նորան բեվոլվերով կը տամ»։

«Վաղարշապատից մեզ գրում են. «Երբ Սինոդում ստացուեց Բարդուղիմէոս վարդապետի յայտարարութիւնը, X եպիսկոպոսը, ասում են, գնացել է Վեհարան և ասել Z եպիսկոպոսին. «Սրբազան, պատժեցէք Բարդուղիմէոս վարդապետին կամ թոյլ տուէք գնամ նորան բեվոլվերով խփեմ»։ Միամիտ Սրբազանը կարծում է թէ Բարդուղիմէոս վարդապետի կեանքը զառուղի խոտերը կամ միւսները է՝ որ Z-ի նախահաճութեամբ անհետացնեն... Սորա համար պաշտօնապէս, ասում են, տեղեկութիւն է տրուած տեղական Պոլիցիային» (Պսակ, 1881 թ. № 34)։

Այդ սպառնալիքը լսում եմ հաւաստի աղբիւրից։ Վեհարանում և վանքում ամենքը լսել են և գիտեն։ Ես իսկապէս վախենում եմ՝ ի նկատի ունելով նոցա տագնապը և թէ, երբև բարձրագոյն հաստատեալ պաշտօնեայ անձինք՝ ինչ էր սպասում նոցա քննութիւնից յետոյ։ Փիշերները դուռս խիստ ամրացնում եմ ներսից՝ Բառնաբաս վարդապետի հայթհայթած հաստ փայտով, և այդպիսի մի հաւանական վրէժխնդրութեան դէմ պաշտպանուելու մտօք՝ նոյն ամսի 17-ին գրում եմ Գաւառապետին հետևեալը.—

«Ձեր Գերազնուութիւն Գաւառապետ Էջմիածնի գաւառի պ. Դ. Խանաղեանց,

«Ես ներկայ ամսոյս 13-ին յայտնեցի և բողոքեցի գրաւոր Վեհափառ Կաթուղիկոսին, Էջմիածնի Սինոդին և պ. Պրոկուրորին Սինոդի Նիկողայոսի Տէր Յովսէփեանց՝ Սինոդի անդամ Ներսէս և Գրի-

գոր (Տաթևացի) եպիսկոպոսների տրած Դողութենանց և մեծ գումարների կաշառակերութեանց համար։ Այս բողոքները ստացուելու ժամանակ Ներսէս եպիսկոպոսը գնացել է Վեհարան 14-ին ամսոյս, առաւօտեան ժամ 9—10, և ՎաՀրամ եպիսկոպոսին ասել է. «Ես Բարդուղիմէոս վարդապետին բեվօլվերով կը խփեմ». այնտեղ այս բանին (խօսք) ներկայ գտնուած են Վահան վարդապետ Բաստամեանց, Շաթիր Յարութիւն և Գրիգոր, Վեհարանում ծառայող Պողոս և Յակոբ և խառատ Պողոսն. դոքա վկայ են։ Ուստի յայտնելով Ձեզ՝ խնդրում եմ ապահովել իմ կեանքը և հետևապէս վարուել սպառնացողի հետ օրինաց համաձայն»։ 17-ն Հոկտեմբերի 1881 ամի. է Ս. Էջմիածին։

Միաբան սրբոյ Էջմիածնի
Բարդուղիմէոս վարդապետ Դէորգեան.

Երկու օրից յետոյ Գաւառապետը ինձ հրաւիրում է և ասում. «ապահովել ձեր կեանքը սպառնացողի դէմ՝ մեր Պոլիցիայի գործն է, իսկ այն որ գրել էք,—«հետևապէս վարուել նորա հետ օրինաց համաձայն»,—Քննիչին է վերաբերում. որը քննելով՝ սպառնացողին կ'ենթարկեն տուգանքի կամ բանտարկութեան։ Այժմ դուք ինչպէս էք ցանկանում»։ Պարոն Գաւառապետին, որը տրամադիր երևաց գործը Քննչին հասցնել, իմ մէջ ցանկութիւնը պարզելուց յետոյ, առանց թուղթը փոխելու՝ հէնց նոյն գրութեան ստորագրութեանս տակ գրեցի—յաւելացրի հետևեալը.—

«Իմ այս գրութեան նպատակն է. միայն իմ կեանքը սպառնողից, և ոչ դատի-բանտի կամ տուգանքի ենթարկել սպառնացողին»։ Ի 19-ն Հոկտ. 1881 ամի։

Բարդուղիմէոս վարդապետ Դէորգեան.

«Վաղարշապատից մեզ գրում են. «Այն օրից երբ Բարդուղիմէոս վարդապետը քաղաքային փոշտով ուղարկեց իւր յայտարարութիւնները Վեհարանին, Սինոդին և Պրոկուրորին, Երևանում յայտնի երեք հոգի Վարդան և Վասիլ Եղնազարեանք և Ռուբէն Չալալեանց փաստաբանները, որոնք բարեկամներ են Գրիգոր և Ներսէս եպիսկոպոսների, հրաւիրուած են Էջմիածին, խորհուրդ են կազմում Գրիգոր եպիսկոպոսի սենեկում և Վեհարանում՝ թէ ինչ կերպ կարելի կը

լինի անել, որ յանցաւորները ազատուին և Բարդուղիմէոս վարդապետը յայտնուի զրպարտիչ և պատժուի. այդ է այժմ Վեհարանի և միւսների զբաղմունքը, և դորա համար է որ ահա 8 օր է դեռ ոչինչ չարին. չգիտենք ինչ է անում Պրոկուրորը» (Պսակ, 1881 թ. № 34)։

Այդ պարոնները «մտերիմ բարեկամներ» էին, գիտէք ինչու.—Գրիգոր և Ներսէս եպիսկոպոսների շնորհիւ էր՝ որ ահագին անբաւականութեամբ և վնասով արձակել տուին Էջմիածնի բարեխիղճ և արդիւնաւոր փաստաբան Խաչատուր Քալանթարեանցին, և նորանից յետոյ սոքա հէրՔով լինում էին Էջմիածնի փաստաբան՝ տարեկան չաղ ռոճիկով։ Իսկ դոցա փեսայ Ս. Բէկնազարեանցին էլ, որ Երևանում պիվոյի, լիմոնաթի և զելտերի ջրերի գործարանով էր զբաղուած, քաջալերել էին Երևանցոց թեմական դպրոցի գլխին Տեսուչ անունով. տես ժամանակի լրագիրները և բողոքները։ Մտերմանալու ուրիշ ոչինչ չկար և չէր էլ կարող լինել դորանց մէջ...

Այդ տենդային «խորհուրդ»ներում Վասիլ Եղիազարեանցի յայտնած կարծիքը,—պատմել է ինձ, շատ յետոյ, բժ. Եփր. Տ. Գասպարեանցը,—«Ինչ որ Բարդուղիմէոս վարդապետը գրել է՝ ամենքս էլ գիտենք որ ճշմարիտ են։ Որչափ և դժուար լինի հաստատել գողութիւնները և կաշառակերութիւնը, այնու ամենայնիւ որ եթէ նա իւր գրածների $^1/_4$ էլ ապացուցանի՝ դարձեալ շատ խիստ կը պատժեն ձեզ, պաշտօնանկ կանեն և բոլոր իրաւունքներից զրկելով կ'աքսորեն։ Ուստի միակ ելքն այն է՝ որ այդ գործը մի կերպ քնացնուի»... Եւ քնացրին ղ՝ չ՝ ղ՝ ն՝ ը։

Ես անպայման հաւատ ունէի օրէնքի և արդարութեան մասին։ Այն ինչ ես սպասում եմ որ քննութիւն պիտի կատարուի Հոգևոր բարձր Իշխանութեանը իմ մատուցած յայտարարութեանց համար, ահա նոյն Հոկտեմբեր 21-ի երեկոյեան $7^3/_4$ ժամին մի խումբ թուանքչիներով,—որոց մէջ կային և գիւղից յատուկ բերել տուած իրենց սրիկայ մար-

դիկ.—ինձ տանջելուց յետոյ՝ կապանք ուղարկում են Խորվիրապ՝ աքսոր։—

«Հեռագիր Պսակի. Երէկ Երեկոյեան ժամու եօթին եղբօր՝ Բարդուղիմէոս վարդապետի վերայ՝ տասը թուանքչի յարձակուելով, ձեռքերը կապել են և բարբարոս կերպով թակելով՝ տարան, ասում են, Խորվիրապ» (Պսակ, 1881 թ. № 34)։

Ստեփան Գէորգեան։

Այսուհետև ես առաջ կը բերեմ Սինոդի և իմ գրածները և լրագրական յօդուածները՝ որոնք Խորվիրապում կարդացել և որոց պատասխանել եմ իսկոյն։ Որովհետև Խորվիրապում ես չունէի մօտս բոլոր կարևոր թղթերս և գրում էի մեծ մասամբ յիշողութեամբ, այլ և այնքան վրդովմանն ժամանակ և շտապ. այժմ ես կ'օգտուիմ և՝ իմ թղթերի կապոցից։ Ինչ որ նոր կը յաւելացնեմ բնագրի մէջ՝ շղատառով կը լինի, իսկ նոր ծանօթութիւնը՝ ոչ սովորական աստղանիշով, այլ՝ ծան. 1, 2- ինչպէս ասել եմ։

Ը.

Հոկտեմբերի 22-ին, կէս օրից զկնի 3 ժամին, ինձ հասցրին Խորվիրապ։ Վեց ամսով առաջ աքսորուած էր այնտեղ Արիստակէս վարդապետ Դաւթեանը (այժմ արքեպիսկոպոս, անդամ Սինոդի)։ Սա գիտէք ինչու.—Մոզդոկեցի ոմն Գէորգ Մարգարեան Ուլուխանեանց չհա՜ պսակ ունի, հարսնացուն շատ հարուստ է. Վահրամ եպիսկոպոսը պահանջում է 20 հազար բուբլ, իսկ Ուլուխանեանցը անձամբ եկած՝ առաջարկում է 12 հազար բուբլ՝ Վաղարշապատի Փոշտի Նաչալնիկ Նիկոլայ Գէորգեանի (Նախիջևանցի) և ուրիշների ներկայութեամբ։ Առ ուտուրը գլուխ չի գալիս։ Ուլուխանեանցը գընում է Ռաստով, գտնում է Նոր-Նախիջևանցի Մովսէս Զարիֆեան անունով մի քահանայ, որը կաշառուելով՝ իւր յայ-

տարարութեամբ սխալեցնում է Նոր-Նախիջևանի Հոգևոր Կառավարութեանը, ստանում է հրաման և պսակում յիշեալ Ուլուխանեանցին *)։ Լսում է շուտով. Վահրամ եպիսկոպոսը որսը փախցրած վագրի նման սրամտած, հեռագրով կոչում են Նոր-Նախիջևանի Հոգևոր Կառավարութեան նախանդամ Արիստակէս վարդապետին Էջմիածին և վեղարն առնելով՝ աքսորում են Խորվիրապ՝ անորոշ ժամանակաւ. իսկ Զարիֆեան քահանային՝ աքսորում Սևան (տես «Արարատ» 1881 թ. Յունվար, եր. 48)։ Զարիֆեան քահանայն Սևանում մեռաւ, և նորա թշուառ կինը ճանապարհներին՝ գնալ-գալով։ Իսկ Արիստակէս վարդապետ Դաւթեանը՝ մահամերձ հիւանդ էր և անխնամ ընկած, երբ ես հասայ Խորվիրապ։ Աստուած ինձ ուղարկեց այնտեղ՝ նորան փրկելու համար... Նա էլ իւր հերթում՝ ինձ վշտակից և մխիթարակից էր, որպէս և վիճակակից։ Սորա դատապարտութեան մասին կարդում ենք Սինոդի օրագրի մէջ. «Իսկ զգ նախանդամն Հոգևոր Կառավարութեան զԱրիստակէս վարդապետն, որ ի կատարման վերոգրեալ ապօրէն պսակին Ուլուխանեանցի նոյնչափ յանցաւոր է, որչափ Զարիֆեանցն, որպէս և քաջ յայտնի է Վեհափառ Կաթուղիկոսին և անդամոց Սինոդիս, առաքել ի վանս Խորվիրապի յապաշխարութիւն անորոշ ժամանակաւ, առնլով ի նմանէ զվեղարն»։

Վահրամ եպիսկոպոսը ուզածի պէս շարադրել է տուել. «Նոյնչափ յանցաւոր է... որպէս և քաջ յայտնի է... և անդամոց Սինոդիս», անդամք էլ ստրկաբար ստորագրել են այդ վճռին, մի և նոյն ժամանակ ամենքիս ասում էին թէ՝ «մեզ յայտնի չէ Արիստակէս վարդապետի յանցանք ունենալը այդ գործում». այսօր ևս կը վկայեն նոյնը՝ ողջ մնացած անդամք Մեսրովբ և Ներսէս արքեպիսկոպոսները։ Ահա այսպէս գիտէր անել տալ Մանկունին և յետոյ իրաւամբ ասել. «Հինգ ջրի 'ի Պլան, և հինգ անդամ ի Սին...»։

---

*) Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանը «Ամուսնական խնդիրներ» գրքի մէջ յիշում է այդ վճռի չհասի մասին. և թէ ինչպէս իրեն հանում են իւր բնակարանից որպէս զի Ուլուխանեանցին հիւրասիրէն։

Հասնելով Խորվիրապ, Թուանքչիները յանձնեցին վանահայր Պողոս վարդապետ Մալխասեանցին զիս և Սինոդի կընքեալ փակէթը. ահա այդ հրամանը.—

«Հրաման Նորին Կայսերական Մեծութեան ինքնակալին ամենայն Ռուսաց ի Լուսաւորչական Հայոց Սինոդէ սրբոյ Էջմիածնի, վանահօրն Խորվիրապայ վանից, ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան ի Սինոդիս լուան զեկուցումն՝ Մխաբան Աթոռոյս Բարդուղիմէոս վարդապետն Գէորգեան կեղծելով զանցս ինչ ի Վեհարանի դիմեալ է ոստիկանութեան Վաղարշապատու ամբաստանելով զումեմնէ Մխաբանակցէ եւրմէ, մինչ նա պարտաւոր էր զիմել առ սեպհական Գլուխ Եկեղեցւոյս իմն առ Վեհափառ Կաթուղիկոսն ամենայն Հայոց և խնդրել զկարեւոր անօրէնութիւն եթէ արդարև ունէր զինդիր ինչ, այլ զի առ ոչինչ համարեալ նորա զվանական կարգ և զկանոն եկեղեցական պարտաւորութեանս ըստ եկեղեցական դասակարգութեան և սահմանադրութեան (?!), մանաւանդ զնշխանութիւն և զկրաւաստութիւն ընդհանուր Գլխոյ Եկեղեցւոյ Վեհափառ Հայրապետի ազգիս՝ չարաչար մեղանչեալ է, ուստի Վեհափառ Հայրապետն կամելով ածել զնա յուղղութիւն, ի զգաստութիւն և ի հնազանդութիւն նրուումն անընդմիջական Իշխանութեան, հաճեցաւ հրամայել Սինոդիս անսահման ժամանակաւ առաքել զնա ի վանս Խորվիրապայ յապաշխարութիւն անսահման ժամանակաւ մինչև զգաստացցի, և առաջս վանՃան հրամանագրել ձեզ ունել զնա ի վանս ձեր, և հսկել ի վերայ վարուց և բարուց նորին, նախազգուշացուցանելով զձեզ միանգամայն, զի եթէ որ և ցցէ եղանակաւ մեկնեսցի վարդապետն այն ի վանուդ, Սինոդս ունի ենթարկել զձեզ խստագոյն պատժոյ ըստ օրինաց»։ № 2621. ի 21 Հոկտ. 1881 ամի, ի Ս. Էջմիածնին։

Անդամ Սինոդի Մեսրոպ Եպիսկոպոս։

Ահա այնտեղ, այս հրամանի ընթերցումից տեսան իմացայ, որ իբր թէ Ներսէս Եպիսկոպոսի բեվոլվերով սպառնալը՝ Գաւառապետին յայտնելս է իմ աքսորման պատճառը։—Թողնենք որ յիշեալ սպառնալիքի մասին Գաւառապետին դիմելս՝ միանգամայն օրինաւոր է (տես Պոլոժէնիայ յոդ. 5 և 37), և մեկ հնարաւոր միջոցը՝ սպառնացող վտանգից ազատվելու համար. սպառնալիքը արուել էր Վեհարանում հրապարակաւ, սպառնացողը ամենազօր Սինոդականն է, գիտէ Վեհափառը և Սինոդականք և ամբողջ Միաբանութիւնը և Վաղարշապատ գիւղը, գիտեն և՝ իմ երկիւղի մէջ լինելը. սակայն սպառնալիքի օրից—14 Հոկտեմբեր ց 17—19—«Եկեղեցւոյ ընդհանուր Գլուխ Հայրապետը», փաստաբաններին իւր շուրջն առած՝ իմ ապահովութեան մասին էր հոգում, թէ՝ Իւր ձեռնասունների մեղսակից գողերին և կաշառակերներին փրկելու...։ Սինոդի Հոկտ. 21-ի այդ անարդար և ապօրէն վճռի օրագիրը գործադրել են առանց Սինոդի Պրոկուրորի գիտութեան և արձակման. իմ աքսորուելուց երեք օր յետոյ Պրոկուրորը իւր տանը գրասեղանի վերայ ցոյց է տուել Սինոդի այդ օրագիրը Ստեփան եղբօրս և պ. Վաղթանգին և ասել. «վճիռը գործադրելուց յետոյ են ինձ ուղարկել օրագիրը. ահա չեմ ստորագրել և պիտի չ'ստորագրեմ»։ Մի բոպէ ընդունենք թէ Սինոդի այդ վճիռը արդար լիներ և օրինաւոր, բայց գոնէ ինչու այնպիսի անօրէն բարբարոսութիւններ Էջմիածնի պարսպում—«Եկեղեցւոյ Գլխոյ» Լուսամուտների տակ՝ մի վարդապետի հետ. մինչ ես բացի 10 բոպէ ժամանակ խնդրելուց, որ և զլացան, ոչ մի ընդդիմութիւն էլ չեմ ցոյց տուել—ոչ քանի՞ ոչ գործով։

Տեղեկացայ որ Գրիգոր եպիսկոպոսը գնալով Երևան, ամեն միջոց գործ է դնում, նոյն իսկ 500 բուբլ փող է առաջարկում Թուրքերին, որ նոքա մի ստորագրութիւն տան թէ՝ Բարդուղիմէոս վարդապետը սովորեցրեց մեզ այդպէս գանգատ տալ Միրավոյ Սուդիային կամ Սինոդի Պրոկուրորին՝ քանքանի մաքրելու գործի մասին. մինչ Թուրքերը իմ երեսը չէին պատել, ուստի և չեն համաձայնում։ Ապա իւր փաստաբանների քանքաղանի վերայ վստահացած՝ ուզում է Իրանցի Թուրքերի վերայ բողոքել Նահանգական Դատարանին և այնտեղ մի կերպ փոխել տալ Թուրքերին իրենց խօսքը և ստել քանքանի գործի կանտրակտի հազար բուբլոյ յայտնուած գո-

զութիւնը։ Այդ ժամանակ գրում եմ Նահանգական Դատարանի նախագահ Մէլիք-Աղամալեանցին հետևեալը.—

«Ձեր Գերազանցութիւն Ղահրաման Իսակիչ,

«Ես ի մօտոյ երբև ականատես նկատելով Էջմիածնում Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսների զանազան գողութիւնները և քահանայացուներից յայտնապէս կաշառքներ առնուլը, գրաւոր դիմեցի և յայտնեցի Վեհափառ Կաթուղիկոսին, Սինոդին և Սինոդի պ. Պրոկուրորին ի 13-ն Ներկայ Հոկտեմբերի։ Իմ յայտարարութիւնը երբ ստացվում է Սինոդում, Ներսէս եպիսկոպոսը գնում է Վեհարան և Վահրամ եպիսկոպոսին ասում. «ես Բարդուղիմէոս վարդապետին բեմոլվերով կը խփեմ»։ Այնտեղ Ներկայ են լինում 6 մարդ, որոնցից երեքը պատմեցին ինձ և ուրիշներին պատմել են։ Ես լսելով այն սպառնալիքը՝ երկիւղ մէջ էի, ուստի երբև զուտ մարմնաւոր գործ՝ յայտնեցի Վաղարշապատի Գաւառապետ պ. Խանդաղեանցին ի 17-ն Ներկայիս, խնդրելով ապահովել իմ կեանքը՝ համաձայն օրինաց։ Սինոդը և Վեհափառ Կաթուղիկոսը փոխանակ իմ յայտարարութեանց համար քննութիւն նշանակելու, որով պիտի յայտնուէր յշեալ երկու եպիսկոպոսների և Մանկունու և Ստեփանիկ Դէմիրճեանի անթիւ գողութիւններ և կաշառակերութիւններ, Սինոդի անունով օրագիր են շինում՝ գաղտնի և առանց Պրոկուրորի և ինձ դատապարտում նորանում՝ որ ես իմ կեանքի ապահովութեան համար դիմել իմ մարմնաւոր իշխանութեանը և ոչ Հոգևոր իշխանութեանը. գիտութեամբ անգիտանում են որ Հոգևոր իշխանութեան գործ չէր այդ, Հոգևոր իշխանութիւնը ունէր արդեօք միջոց մանաւանդ թէ իրաւունք ապահովելու։ Այս իմ օրինաւոր վարմունքը յանցանք համարելով՝ ուղարկում են ինձ աքսոր ի Խորվիրապ՝ ձեռքերս կապելով, թուանքչիների ոտքի տակ տրորելով և գետնի վերայ ձգելով և մի ոք կոկորդս խեղդելով և ՀԿոյԹ մատս կոտրելով, մինչդեռ աւազակի հետ այդպէս չեն վարվում։ Ես ունիմ Ներկայ գտնուող բազմաթիւ վկայներ՝ որ ես չէի հակառակում գնալու։ Գիշերի 8-րդ ժամին ինձ նստեցրին ձի՝ յանձնելով չորս թուանքչիների, որոնք ինձ տարան Խորվիրապ։

Իմ տուած յայտարարութեանց մէջ, ի թիւս միւս գողութեանց յայտնել իմ և այս տարի քանքանի մարդրելու կանտրակտով Գրիգոր եպիսկոպոսի գողանալը Էջմիածնից 1,000 ռուբլ. որի համար կապալառու թուրքերը Գաւառապետ պ. Խանդաղեանցին և Վաղարշապատի Հաշտարար Դատաւորին զանգատուելուց յետոյ, գրաւոր դիմել

են Սինոդի պ. Պրոկուրորին՝ յայտնելով յշեալ 1,000 ռուբլոյ գողութեան մանրամասները։ Այժմ լսում եմ որ Գրիգոր եպիսկոպոսը (Տաթևացի) այդ գործը այլայլելով պիտի դանգատուի Երևանի Նահանգական Դատարանին՝ բողոքաւոր թուրքերից. բայց որովհետև այդ գործը շատ մօտ կապ ունի իմ տուած յայտարարութեանց հետ, ուստի խնդրում եմ, եթէ հնարաւոր է՝ այդ քանքանի գործը յետաձգել մինչև իմ տուած յայտարարութեանց համար քննութիւն նշանակուելը։ Ես պիտի ապացուցանեմ այդ գողութիւնը ամենաօրինաւոր փաստերով և ապացոյցներով»։ 27 Հոկտեմբերի 1881 ամի, ի Խորվիրապ։

Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեան.

Գրում եմ և հետևեալ յօդուածը Մասիսին, Պսակին և Մշակին։ Հրատարակում է միայն Մասիսը, խմբագրական մի փոքրիկ նախաբանով.—

ԱՆԿԱՐՈՒԹԻՒՆ

ՅԷՋՄԻԱԾԻՆ.

«Էջմիածնայ Միաբան Բարդուղիմէոս վարդապետը, որ Միաբաններէն մի քանի վարդապետաց (1) և եպիսկոպոսաց գողութիւններն ու կաշառակերութիւնն երեւան հանած էր լրագրաց և մասնաւորապէս Մասիսի միջոցաւ և դատ պահանջած էր, այս անգամ Էջմիածնայ Հոգևոր կառավարութեան կողմանէ ի Խորվիրապ աքսորուած լինելով, հետագայ նամակը ղրկած է մեզ»։

Ծան. 1) Ներսէս և Գրիգոր Եպիսկոպոսների գողութեանց և կաշառակերութեանցը մասնակից վարդապետները, ինչպէս օրինակ՝ Գ. վարդապետ Սաթունեանցի մասին,—որը Նոցա ձեռքի տակ անդամ էր վանքական կառավարութեան և արքունիկումէր,—ես աւելորդ եմ համարած ոչինչ գրել։ Իսկ «Մասիսի» այդ խմբագրականի մէջ «վարդապետաց» խառնելը՝ աղբիւր պիտի ունեցած լինէր Փիլիպպոս Եպիսկոպոս Նաճատեանցի ընդարձակ յօդուածը։ տես, Մասիս 1881 թ. № № 3074, 3075, 3076, 3078, 3080 և 3081։ Արժէ կարդալ Նաճատեանցի այդ յօդուածը։

Խորհրդարան, 27 Հոկտ. 1881 թիվ.

«Յարգոյ Խմբագիր Մասիս լրագրի.

«Մեր Էջմիածնի այժմեան Հոգևոր Իշխանութեան մասին լրագիրներում հրատարակուածները թերևս շատերին անհաւատալի էին թւում, շատերը չէին հաւատում թէ մի քանի եպիսկոպոսների անշունչ դիակներից ևս վրէժխնդիր էին լինում, շատերը չեն հաւատում թէ այժմ մի քանի վարդապետներ և եպիսկոպոսներ Էջմիածնի կամայականութեան և վրէժխնդրութեան անպատիւ զոհ են դարձած. և ի հարկէ կը զտնուին այժմ՝ որ չեն հաւատայ ինձ, որ ահա պիտի պատմեմ ինչ անցք որ անցան իմ հետ Էջմիածնում մեր Հոգևոր Իշխանութեան աչքի առաջ՝ Վահրամ եպիսկոպոսի և նորա դաշնակից Գրիգոր և Ներսէս եպիսկոպոսների յանդուգն վրէժխնդրութեամբ։

«Ես իմ գլխի անցքը պատմում եմ հաւատ ունեցողներին. իսկ անհաւատների, մանաւանդ պատիւ և գրիչ վաճառողների հետ՝ չեմ խօսում...

«Ահա համառօտ եղելութիւնը.—

«Անցեալ տարի Դեկտ. 19-ին ես գնում եմ Սինոդի Պրոկուրոր պ. Նիկողայոս Տէր Յովսէփեանցին՝ առանձինն, նորան ասում եմ.— պարոն Պրոկուրոր, դուք կարծեմ իմանում էք և լրագիրներում շարունակ կարդում՝ որ Էջմիածնում համարձակ գողութիւնը և կաշառակերութիւնը սովորական բան են դարձած. դուք կարծեմ մի քանի բողոք ևս ստացել էք քահանայացուներից։ Դուք գիտէք՝ որ եթէ գողանում են Էջմիածնից՝ այդ նիւթական զրկանքը գլխաւորապէս Միաբաններինս է. եթէ չհաս պսակներից և քահանայացուներից կաշառք առնելով գայթակղեցնում են ժողովուրդը՝ որ այսօր զզուած է Հոգևորականներից—այդ բարոյական զրկանքն ևս մերն է։ Այս ամենի պատճառը Սինոդի անդամ Գրիգոր և Ներսէս եպիսկոպոսներն են, նորանց ձեռքովն է կատարվում. ուստի ես մտադիր եմ նորանցից բողոքել Նորին Վեհափառութեանը, Սինոդին և Ձեզ. բայց նախ ձեր ուշադրութիւնը եմ հրաւիրում իրրև Պրոկուրորի, մանաւանդ թէ հայ մարդու։

—«Ես ինքս էլ ցաւում եմ, բայց ի՞նչ անեմ, շատ անգամ խօսել եմ Վեհափառին. մի քանի ամիս առաջ պ. Նահանգապետան ևս «Խթանի» (արգելուած յօդուածը) պատճառաւ անձամբ եկաւ և Վեհափառի ուշադրութիւնը խնդրից Գրիգոր և Ներսէսի արարմանց համար,

բայց...։ Ես ինքս վախենում եմ, որովհետև օրէնքով՝ պատասխանատու եմ. Պրոկուրորի պաշտօնէութիւնը կայանում է գլխաւորապէս երկու բանի մէջ — սրաշտպանել Էջմիածնի ինտերէսը և հսկել օրէնքները ճշտութեամբ կատարել տալ։

—«Ես ձեր այդ իրաւունքը իմանալով՝ դիմեցի այժմ ձեզ, ձեր միջոցաւ Նորին Վեհափառութեան ուշադրութիւնը խնդրելու։

—«Ես շատ անգամ խօսել եմ Վեհափառ Կաթուղիկոսի հետ և ուշադրութիւն խնդրել, բայց...։ Այսօր ևս կոչուած եմ Վեհափառի մօտ և դարձեալ կը խօսեմ. տեսնենք ինչ... (1)

—«Յայտնեցէք Նորին Վեհափառութեանը թէ մի վարդապետ, առանց անուանս յայտնելու, խնդրում է Ձեր ուշադրութիւնը՝ որ կարձուին այս գեղծումները. անհնարաւորութեան դէպքում՝ մատիր է գրաւոր դիմել Ձեզ եւ. բնութիւն եւ դաս բանալ։

«Սորանից յետոյ անցնում է 10 օր, և ահա պ. Պրոկուրորը յանկարծ գալիս է իմ սենեակը և ասում. «Ես յայտնեցի Վեհափառին ձեր ասածները, սակայն չկարողացայ թաքցնել ձեր անունը՝ որովհետև պահանջեց։ Նա շատ հաճութեամբ ընդունեց ձեր հարազատ զգացման արտայայտութիւնը և գովեց ձեզ իբրև արժանաւոր մինը և ասաց թէ. «Ե՛ս ևս հաւատի տեղեկացել եմ այդ եպիսկոպոսների գող և կաշառակեր լինելը, բայց առ այժմ իմ կողմից ասացէք Բարդուղիմէոս վարդապետին՝ լռել և սպասել մինչև ցգարուն. Ես ի նկատի ունիմ այդ ամենը և պիտի անեմ պէտք եղածը։ Պատուիրում եմ որ այս գաղտնիք պահուի Իմ, Քո և Բարդուղիմէոս վարդապետի մօտ. և այլն և այլն»։

—«Պ. Պրոկուրոր, ես կը լռեմ և կը սպասեմ մինչև գարուն՝ միայն հնազանդուելով Մեծի պատուէրին և ոչ համոզուելով. դորան կարող բարձ կ'ասեն, այժմ ես հասկանում եմ՝ որ մինչև գարուն նոքա կը մտածեն ինձ հեռացնել Էջմիածնից եւ ո՛վ գիտէ ինչ փորձանք բերել իմ գլխին, բանի որ անուանս յայտնել էք. ուրիշ ոչինչ։ Այս ևս ձեզ մօտ թող մնայ գաղտնի։

«Անցնում է Դեկտեմբերը, և Յունուարի 10—15, Գրիգոր եպիսկոպոսը Նորէն հաստատվում է վանքական կառավարութեան նախանդամ. ես գրում եմ պ. Պրոկուրորին հեռաւեալ տոմսակը.—

մասնաւոր

«Ձեր Գերազնուութիւն պ. Պրոկուրոր.

«Ձեր և իմ ունեցած առանձինն խօսակցութիւնից յետոյ ահա թէ ընդ հակառակն ինչե՞ր եղան և լինում են՝ ի նկատի ունեցէք խնդ-

---

Ծան. 1) «Տեսնենք դարձեալ ի՞նչ դուդուկ կը տայ և ձամբայ կը դնէ»։

բեմ, բայց և այնպէս սպասելով կը լռեմ ես՝ Մեծի պատուէրին հնազանդուելով, մինչև կը հասնի խոստացուած օրը և այն չէ հեռի, — Մարտի 10-ին արդէն գաղուն կը լինի»։ 26 Յունուարի 1881 ամի, ի Ս. Էջմիածին։

«Փետրվարի սկզբի օրերն էր, երբ լսեցի որ Գրիգոր եպիսկոպոսը տեղեկացել է իմ՝ իրենց դէմ բողոքելու դիտաւորութիւնը, այն՝ որ «գաղանի» պիտի պահուէր։ Անցնում է մի-երկու շաբաթ՝ Մամբրէ վարդապետը իւր քարոզի մէջ (Մեծ պասին Էջմիածնում) ասում է. «Բաւական չէ որ օտարները մեզ վնասում են, եղբայր եղբոր դէմ ուզում է դատ բանալ»։ Այս խօսքը նա կրկնեց մի և նոյն քարոզի մէջ երեք անգամ, թէպէտ ոչ առաջին և ոչ հետևեալ խօսքերի հետ կապ չունէր. նա կամենում էր միայն ինձ հասկացնել, թերևս իւր և իրեն այդպէս պատուիրողների խելքով՝ յանդիմանել, որ մօտ կանգնած էի։ Զմոռանամ ասել՝ որ այդ պարդերես վարդապետը ագարակի—Պլանի կառավարիչն էր, մի և նոյն ժամանակ վանքի կալվածը ցորենն և արտերինը ցորենի դէգերը գիշերով գողանալու կարգադրողն էր, նոյնպէս 4,000 ռուբլ արժողութեամբ խոտի անհետացնելու։

«Ես հանդիպում եմ պ. Պրոկուրորին և ասում. «Դուք Վեհափառ Կաթուղիկոսի կողմից ինձ ասացիք՝ որ գաղտնի պիտի պահուէր, այժմ յայտնուած է. դուք էք յայտնել արդեօք։

—«Ես ազնիւ խօսքով հաւատացնում եմ ձեզ և երդվում գաւակներիս գլխով՝ որ ես ոչ ոքի չեմ յայտնել։

«Անցնում է ժամանակ և կատարվում է պ. Պրոկուրորին իմ ասածը թէ՝ «նոքա կը մտածեն ինձ հեռացնել Էջմիածնից, և այլն»։— Դալիս է ինձ մօտ Ագուլեաց գաղթականների Հոգաբարձու պ. Ս. Հախնազարեանցը, խնդրում է որ ես յանձն առնեմ գնալ Ագուլիս վանահայր և ուսուցիչ։ Նորան պատասխանում եմ թէ՝ չեմ կարող յանձնառնել, տկար եմ։ Քիչ ժամանակից յետոյ գալիս է այնտեղի դպրոցի տեսուչ Լ. Թուսիկեանը. նորան ուղարկում է ինձ մօտ Վահրամ եպիսկոպոսը՝ որ ինձ համոզէ գնամ Ագուլիս, պատուիրելով նորան՝ որ իրեն կողմից ուղարկուած լինելը չյայտնէ ինձ, թէպէտ նա յայտնեց Գրիգորիս վարդապետի ներկայութեամբ։ Ես նորան պատասխանում եմ. «Քանի որ այժմ մեր Հոգևոր իշխանութեան մէջ գործողները իրենց մի կոպէկ շահուց համար ընդունակ են շատ վեղարաւորներ անպատիւ անել՝ ես իմ ոտքը Էջմիածնից դուրս չեմ դնի»։ Վերջապէս 1881 թ. Սեպտեմբերի երկրորդ կիսում, ուրեմն ինձ աքսորելուց հաշիւ մի ամիս առաջ, Վահրամ եպիսկոպոսը ասում է Անդրէաս արք-

եպիսկոպոսին՝ որ իմ համաձայնութիւնը առնէ՝ Նուխի իրեն Յաջորդ տանելու (Սա հաստատուել էր Ղարաբաղի թեմի Առաջնորդ). իմ պատասխանը լինում է այն՝ ինչ որ առաջիններին։

«Ես դարձեալ հանդիպում եմ պ. Պրոկուրորին և խնդրում՝ որ գնայ Վեհափառ Կաթուղիկոսին յիշեցնէ Իւր խոստումը. նա հրաժարվում է գնալ, և մի և նոյն ժամանակ ցաւելով ասում. «Ի՞նչ գնամ, փոխանակ գաղտնիքը պահելու՝ Ներսէսին և Գրիգորին ասում է. «Ան. Պրոկուրորն ալ Բարդուղիմէոս վարդապետի խելքով ձեր ետևն էր ընկեր, Ես անոր բերանն ալ կոտրեցի»։ Այնտեղից վերադառնում եմ բոլորովին գայթակղուած, երբ իմանում եմ թէ ո՞վ է յայտնել գաղտնիքը. և յետոյ լսում եմ՝ որ Վեհափառը պարգևել է նոյն Գրիգոր եպիսկոպոսին 150 ռուբլ արժողութեամբ մի մատանի։ Այդ պարգևից յետոյ նա աւելի վստահութիւն առնելով՝ գողանում է Էջմիածնից 1,000 ռուբլ՝ քանքանը մաքրելու կանտրակտի միջոցաւ։ Երբ քննութիւնը կը բացուի՝ այդ գողութեանը մասնակից կը յայտնուին Վահրամ եպիսկոպոս Մանկունին և Վեհափառի սպասաւոր Ստեփանիկ Դէմիրճեանը։ Երբ այդ գողութիւնը «Պսակի» միջոցաւ քանիցս անգամ հրատարակուեց, կամեցան մի կերպով ծածկել, թէպէտ շատ ուշ էր, ուստի դադարեցրին քանքանի մաքրելու աշխատանքը։ Կապալառու թուրքերը Սեպտ. 17-ին բերանացի գանգատվում են Գաւառապետ պ. Խանաղեանցին՝ որ կանտրակտի գաւերիթ անողն էր, և հրապարակաւ պատմում են 1,000 ռուբլոյ գողութեան մանրամասները։ Խանաղեանցը իրրև հայ ցաւելով՝ որ բազմութեան առաջ թուրքերը յայտնում էին խալիֆաների գողութիւնը, պատասխանում է. «Այդ իմ գործը չէ, գնացէք Սուդը»։ Ինքը պ. Խանաղեանցը ևս պատմեց ինձ այս, Հոկտեմբերի 19-ին, իւր սեկրետար Մ. Տէր Պետրոսեանի ներկայութեամբ։ Թուրքերը դիմում են Հաշտարար Դատաւորին և խնդրում՝ որ իրրև Նոտարիուս՝ պահանջէ Վահրամ և Գրիգոր եպիսկոպոսներից իրենց կանտրակտի պատճէնը։ Վահրամ եպիսկոպոսի անունը չկայ կանտրակտի մէջ, բայց նախքան կանտրակտը՝ պայմանները թուրքերի հետ խոսուել է վեհարանում Վահրամ, Գրիգոր և Ներսէս եպիսկոպոսների և Ստեփանիկ Դէմիրճեանի հետ։ Հաշտարար Դատաւորը իւր սեկրետարի և թարգմանի հետ գնաց Վեհարան՝ պատուելով, փոխանակ պատասխանատուներին հրաւիրելու իւր մօտ, բացատրութիւն պահանջից. պարդերես Սրբազանները ուրանալով կանտրակտ ունենալը՝ պատասխանում են Հաշտարար Դատաւորին. «Մեք ստորագրեալքս պատասխանեմք. Եթէ ունին նոքա պայ-

ման ինչ ընդ ում և ինչ, դիմեցին նմին, Վ. Ե. Մանկունի. Գրիգոր եպիսկոպոս Տէր Մատթէոսեան» (տես եր. 74—75)։ Թուրքերը կանտրակտը կռպած էին նոյն այդ Գրիգոր եպիսկոպոսի հետ՝ վանքական կառավարութեան անունով, որի նախագահն էր Գրիգոր եպիսկոպոսը և կանտրակտին ստորագրողը՝ որին և ուղղակի դիմել և պահանջում էին Թուրքերը։ Վերջապէս ուրանում են կանտրակտը։ Բայց Թուրքերը գտնելով վկայներ նոյն իսկ Էջմիածնի Միաբաններից՝ որոնք տեսել էին կանտրակտը վանքական կառավարութեան մօտ գործի հէնց շարունակութեան ժամանակ, դիմեցին խնդրագրով Սինոդի Պրոկուրորին և մի և նոյն ժամանակ պարզեցին 1,000 ռուբլոյ գողութիւնը (տես. եր. 76—77)։

«Պրոկուրորը պաշտօնապէս բացատրութիւն է պահանջում Գրիգոր եպիսկոպոսից։ Այդ ժամանակ կոչում են Թուրքերին և խոստանում 500 ռուբլ՝ որ նոքա յետ առնեն իրենց խօսքը. ես այդ իմանում եմ, կոչում եմ Վեհափառի Շաթիրը (Գրիգոր) իմ սենեակը և ասում. «Գնա իմ կողմից Վեհափառին կամ Մանկունուն յայտնիր՝ որ Էջմիածնից ի զուր մի կոպէկ էլ չ'տան Թուրքերին. ինչու են ուզում ծածկել յայտնուած գողութիւնը, փոխանակ պատժելու։ Ես մինչև այժմ լռել եմ Վեհափառ Կաթուղիկոսի պատուէրի համաձայն, այժմ գողն ինքնին ահա բռնուել է, խնդրում եմ որ իրենք չ'պաշտպանեն, թէ ոչ...»։ Սորանից յետոյ Թուրքերին բացատրում են փող տալ, և ես հէնց այդ ժամանակ նորանց՝ պ. Պրոկուրորին տուած գանգատագրի պատճէնը թէ ուղարկում եմ «Պսակին» և՝ թէ դնում իմ յայտարարութեանց մէջ և քաղաքային փոստով ուղարկում Վեհափառ Կաթուղիկոսին, Սինոդին և պ. Պրոկուրորին Սինոդի՝ ի 13-ն ներկայ Հոկտեմբերի, յայտնելով մի և նոյն ժամանակ և ուրիշ շատ գողութիւններ և 25,000 ռուբլոյ կաշառակերութիւն քահանայացուներից։

«Իմ յայտարարութիւնը երբ ստացվում է (14 Հոկտ.) Սինոդում, Ներսէս Եպիսկոպոսը գնում է Վեհարան և Վահրամ եպիսկոպոսին ասում. «Ես Բարդուղիմէոս վարդապետին կը խլեմ բեվօլվերով». այս խօսքին ներկայ են գտնուած 6 մարդ, որոնցից երեքը պատմեցին ինձ և ուրիշներին պատմել են։ Սորանից յետոյ ես իսկապէս երկիւղի մէջ էի, ուստի ներկայիս 17-ին յայտնեցի տեղական Պոլիցիային—իրբև մարմնաւոր գործ՝ մարմնաւորին — «Ապահովել միայն իմ կեանքը սպառնացողից՝ համաձայն Պոլիցիական օրէնքս, և ոչ ենթարկել նորան դատաստանի—տուգանքի կամ բանտարկութեան»։

«Վեհափառ Կաթուղիկոսը և Սինոդը, փոխանակ քննութիւն նշանակելու իմ տուած յայտարարութեանց վերայ և Ճշմարտութիւնը ի լոյս բերելուց զկնի՝ կամ պատժել ինձ իբրև զրպարտիչ, եթէ եմ, և՛ կամ յանցաւորներին, ժողովվում են Վեհարանում, օրագիր են շինում—շարադրում Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսների մասնակցութեամբ եւ ուղածների պէս, որոց կեղտոտ արարմանց համար ես բողոքել էի մեր Հոգևոր Ծայրագոյն Իշխանութեանը 8—9 օր առաջ և քննութիւն ու դատաստան պահանջում *)։ Ամսոյս 21-ին երեկոյեան 7-րդ ժամին, երբ ես ոչինչ տեղեկութիւն չունէի ինձ դատապարտող օրագրի մասին, և Երեմիա եպիսկոպոսի (հիւանդ պարկած էր անկողնում) սենեկումն էի գտնվում, ուր կային և ուրիշներ, եկաւ այնտեղ Գարեգին վարդապետը և ինձ ասաց. «Դուրս եկ, պիտի գնաս Խորվիրապ՝ համաձայն Սինոդի վճռի, այսպէս ինձ հրամայեց Վահրամ եպիսկոպոսը»։

—«Այժմ ես տկար եմ, կողքս ցաւում է, այսօր բժշկի խորհրդով գնացած եմ բաղանիք. այժմ գիշեր է և ցուրտ, իսկ վաղիւ առաւօտից կը գնամ, յոյժ բարի։

«Նա դուրս գնաց, բայց հէնց դրսից իսկոյն վերադարձաւ մի խումբ պատրաստի զինուած թուանքչիներով և ասաց. «դուրս եկ»։ Ես խնդրեցի 10 րոպէ միայն ժամանակ տալ ինձ, բայց հրամանակատար վարդապետը նշան տուեց այն թուանքչիներին՝ բռնութիւն գործ դնել. նոքա առաջ եկան սենեկի մէջ, Խորէն վարդապետ Ստեփանէն կտրեց նոցա առաջը. «Լինչ կոպտութիւն է, մարդը իւր կամքով գալիս է, իսկ դուք բռնանում էք» (1)։ Այդ իսկ րոպէին ես կանգնեցի, Երեմիա եպիսկոպոսի ձեռքը բռնեցի. «մնաք բարին, Աստուած առողջութիւն տայ»։ Ասա միւսին. «Հայր Խորէն, շնորհակալ եմ, մնաք բարին. աղօթեցէք»։ Դուրս ելանք, սանդուղքների գլխին հագայ կրկնակոշիկներս, դարձայ նայնում էի սանդուղքները՝ այդ ժամանակ յանկարծ խփեցին մէջքիս ատրցով և ես ընկայ սանդուղքների վերայ (2)։ Ապա կանգնեցրին. նայանք դուրսը, հէնց ոտքս դրի սա-

---

*) Օրագրի կազմելուց քանի օր առաջ Գրիգոր եպիսկոպոսը Սինոդի Ատենում վրդովուած սպառնում է Մկրտիչ եպիսկոպոսին և միւս Անդամներին. «քահանայացու տիրայուց Սինոդի օրագիրներին դուք ես ստորագրած լինելով՝ մասնակից էք 25,000 ռ. ստացուած կաշառքներին և պատասխանատու»....

Ծան. 1) Դորա համար՝ Խորէն Սահփանէին 3—4 օր յետոյ՝ քշել էին Նոր Նախիջևանի ս. Խաչ վանքը։

Ծան. 2) Խորվիրապից 1½ տարի յետոյ վերադառնալով ս. Էջմիածին, Երեմիա եպիսկոպոսի լուսաբար սարկաւագ Եփրեմը (այժմ վարդապետ) պատմեց՝ որ իմ մէջքին ատրցով այդ խփողը Դար. վ. Սաթունեանցն է եղել. վկա-

լայատակի վերայ՝ մթնում աչքիս ընկան մեր սինլքոր վեղարաւորներ՝ Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսներն հետ խմբուած, և խսկոյն Թուանքչիք հաստ պարանը ձգեցին բազուկներս, ձգեցին ինձ գետին՝ տրորեցին սալայատակի վերայ, մինը կոկորդս խեղդում էր ձեռքով։ Այդ սկանդալի ժամանակ անտեղեակ Միաբաններ—եպիսկոպոս, վարդապետ և սարկաւագ՝ սենեակներից դուրս վազեցին և մօտ եկան ոմանք կարեկցութեամբ, բայց նորանց էս սպառնացին, իսկ Գասպար սարկաւագին՝ քիչ մնաց որ ինձ վիճակից անէին. նա էր՝ որ ինձ մարդակերպ գազանների ոտքերի տակ մարտերոսուելուց ազատեց իւր ճիտվ-ադաղակով (1)։ Այդ սարկաւագի օրինակից Թող ամաչեն, եթէ պատիւ և մարդկային զգացմունք ունին, այն վեղարաւորները՝ որոց հրամանով այդպիսի անարգութեամբ անպատուում էր Էջմիածնի պարսպի մէջ և երենց աչքի առաջ մի անմեղ վեղարաւոր, իսկ երենք հանդիսատես լինելով անշուշտ հաճոյք էին զգում։ Այն քահանայական պատիւը—կոչումը, կամ այն նուիրական վեղարը, որ յարգվում են քրիստոնեայ և հեթանոս Պետութիւններից՝ երբև մի սրբութիւն, Էջմիածնի պարսպի մէջ, մեր Հոգևոր Դլխոյ ներկայութեամբ՝ մեր ծառայ Թուանքչիներից ոտնակոխ էր անվում *)։ Վերջապէս ինձ ոտքի կանգնեցրին և այնպէս Թևերս պինդ կապած անպատուութեամբ տարան մինչև իմ սենեկի առաջ, այնտեղ դարձայ Մանկունու և ընկերու-

---

յեց և Եր. Եպիսկոպոսի ծառայ Գեղէոնը՝ երբև ակամտես։ Ընթերցող, բայց նորան աշակերտ ժամանակը դաս տալս և նորա համար Ճանապարհը սրբագրելս (գրել հասկացիր), որ կարդացել է Հանդէսներում, որով նորա ընկեր Եսովբի (Յուսիկ եպիսկոպոս) արտունչն եմ լսել։ Բայց նորան պաշտպանելու համար՝ երկու անգամ ինձ ծանր փոքանքի ենթարկելս Միաբանութեան սեղանատանը, և ուրիշ մանր օգնութիւններ։ Ես հասել ցրուել եմ նորան ոտքերի տակ տրորող—ջարդող վեց ընկերներին (Կարապետ, Միքայէլ(Ղևոնդ եպիսկոպոս) Ռևեսխս, Վարդան, և այլք) և ձեռքը բռնել կանգնեցրել։ ապա նորա արտասուքներից և պաղատանքից շարժուած՝ հաշտեցրել եմ նոյն ընկերների հետ և փրկել նորան խայտառակութեամբ արտաքսուելուց։ Ահա հէնց նա՝ է ինձ աքացե՞լ... Ես բոլորին շուտով ներեցի, բայց դորան չկարողացաւ ներել ներող սիրտս։

Ծան. 1) Այդ սարկաւագին հետևեալ օրը արձակել էին վանքից։ Մի քանի շաբաթ դուրսը տառապելուց յետոյ, մեղայականով վերընդունուել էր։

*) Այս բարբարոսութիւնը կատարուում էր Սինոդի անդամ Մեսրովբ եպիսկոպոսի պատուհանի և դրան առաջ և նորան փոյթ չէր։ 25,000 բուրլոյ պատասխանատուութեան սպառնալիքը նորա միտքը պաշարել էր... իսկ Երեմիա եպիսկոպոսը նիւանդ պարկած էր. արդեօք երկիւղից թէ կեղծելով... Մի բանի օր յետոյ Հայ ուղիղոսը սորան կոչել եւ 100 բուրլ փէշքէշ էր տուել։

Թեան հրամանակատար վարդապետին և խնդրեցի Թևերս արձակեն՝ որ գոնէ Ճանապարհի համար տաք հագնուիմ. ետապեցին Վ.տիրամից գնալ հրաման ստանալ դուռ համար, և հազիւ թէ Թևերս արձակեցին։ Մատնիչ սենեակս, վառեցի մոմը. այդ ժամին մտաւ Փիլ. եպիսկոպոս Նաճարեանցը, ապա ձեմ. յսարանցի աբ. Առաքել Վարդանեանը. երկուքն էլ յուզուած-վրդովուած։ Ես նոցա խնդրեցի հանդարտ լինել։ Վարդանեանին յանձնեցի Միս. Ասլիանցի հաշուին վերաբերեալ բոլոր որ տար բժ. Տէր Գրիգորեանցին։ Իսկ Փիլ. եպիսկոպոսին յանձնեցի բոլոր արկղը, Միս. Ասլիանցի՝ 8—9 հարիւր բուրլ աւանդ փողը եւ Սբ. եղբօրս՝ մի կոտ կտաւի մէջ ծռարած աւանդները։ Փակեցինք սենեակիս դուռը եւ կնքելուց յետոյ՝ բանալին եւ կնիքը նոյնպէս յանձնեցի նորան, խնդրելով որ առաւօտ տար եղբօրս. մինչեւ ես կը գրէի—կը կարգադրէի։ Արտասուքով թրջուած համբոյրներ տուեց ձակատիս Այրն Աստուծոյ, եւ բաժանուեցինք (1)։ Այդ անօրինակ բարբարոսութեան ժամանակ կոտրել էին ձախ ձեռքս ճկոյթ մատը և վերարկուս պատառել։ Այն օրը արդէն առաւօտից գազանի կարգադրած էին եղել և պատրաստել երենց հրամանակատարը վատ-անարգ մարդիկ՝ ինձ այդպէս չարաչար տանջելու և անպատուելու համար, և այդ նպատակաւ՝ գործողութեան ժամանակ կոչված են եղել Էջմիածնի պարսպի բոլոր դռները։ Արդէն գիշերի 8-րդ ժամին պակաս էր 10 բոպէ՝ երբ ինձ նստեցրին ձի՝ յանձնելով չորս Թուանքչիների (ձիաւոր), որոնք տանում էին ինձ անյայտ Ճանապարհով։ Գիշերի ժամը 1-ին ինձ իջեցրին մի հայաբնակ գիւղում (Թազա-գիւղ) Սարգիս անուն քահանայի տանը, որը տեսնելով իմ ցաւալի դրութիւնը՝ խսկոյն բերել տուեց գիւղի ոսկրաբոյժը և կապեցին (եռխու) մատս, և 4-րդ ժամին Ճանապարհ ընկնելով՝ ինձ հասցրին Խորվիրապ—իմ աքսորատեղին՝ ուր գտանվում եմ այժմ։

«Մեր Հոգևոր Իշխանութիւնը ինձ այսպէս յանիրաւի տանջելով և Էջմիածնից աքսորելով՝ խսկապէս մտածում է խեղդել — անհետանք թողնել իմ տուած յայտարարութիւնները, որով շատ բաներ պիտի յայտնուին։ Ինչպէս շատերը համոզուած են, երդողութիւններից գաղափար կազմելով, և ես ունիմ օրինաւոր ապացոյցներ՝ որ Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսները գողանում են և կաշառքներ ստանում Վահրամ եպիսկոպոս Մանկունու և Ստեփանիկ Դէմիրճեանի հետ ընկերութեամբ։ Այո, ես պաշտօնապէս բողոքեցի միայն Ներսէս և

Ծան. 1) Միայն այսքանի համար՝ Փիլ. եպիսկոպոսին երեք օրից յետոյ աքսորում են Զարեհաշատ անապատը։ Սակայն նա Ճանապարհը ուղղում է դէպի Բաթում, այնտեղից ուղիղ Կ. Պոլիս, որով ազատում բռնաւորների ձեռքից։ Իսկ Աբ. Վարդանեանի համար՝ հրամայում են արձակել ձեմարանից. նորան փրկում է նոր Տեսուչ եկած Աբշ. Նահապետեանը։

Գրիգոր եպիսկոպոսներից, որովհետև թէ Սինոդում և արտաքոյ Սինոդի և՛ թէ վանքական Կառավարութեան միջոցաւ՝ այդ ամեն զեղծումները լինում են դոցա ձեռքով, և դոքա են Սինոդական երդուեալ պաշտօնեաներ՝ Բարձրագոյն հաստատութեամբ։

«Ես ինձ պարտք և իրաւունք համարեցի իբրև Միաբան՝ բողոքել Հոգևոր Իշխանութեանը՝ Էջմիածնում տեղի ունեցած մի քանիսների գողութեանց և կաշառակերութեանց համար, մանաւանդ հիմնուելով Վեհափառ Կաթուղիկոսի 1874 թուին Սինոդին տուած կոնդակի վերայ, որով հրամայում և պարտաւորեցնում է Էջմիածնի Միաբաններին՝ գրով յայտնել վանքական Կառավարութեան անդամոց (ծաղսարարք) վերայ նկատուած որ և է անհաւատարմութիւն դէպի Ս. Աթոռը։ Յիշեալ կոնդակի մէջ Վեհափառ Կաթուղիկոսը ցաւ յայտնելով՝ վրէժխնդիր է լինում վանքական Կառավարութեան յայնժամեան նախանդամ Աբել արքեպիսկոպոսից (հանգ.) և անպատուութեամբ պաշտօնանկ անում, նորա վարձկան ծառայի՝ Էջմիածնի մառանից տարած մի քանի կտոր պանրի համար, որը ինչ նշանակութիւն ունի այժմեան իմ բացած գողութեանց և կաշառակերութեանց մօտ, զոր պաշտպանում—ծածկում են այժմ...

«Այս իմ երկայն, բայց համառօտ պատմուած անցքի եղելութիւնը ուշի ուշով ընթերցողը՝ կարող է հասկանալ թէ բոլոր անկարգութիւնները ինչ աղբիւրից են բղխում։ Որի համար օրդինական խոնարհութեամբ խնդրում եմ իմ Վեհափառ Տիրոջ խորին ուշադրութիւնը։

«Ս. Էջմիածնին բարեկարգ յարատևութիւն փափագող անկեղծ խմբագիրներից խնդրվում է արտատպել այս» (Մասիս թիւ 3049 և 3050. Նոյեմբ. 23 և 24. 1881 ամի)։

Միաբան սրբոյ Աթոռոյ Էջմիածնի
Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեան։

Ես անպայման հաւատ ունէի օրէնքի և արդարութեան վերայ,—դժբաղդաբար այսօր ևս նոյն խաբուած մարդն եմ,—և որին սպասում էի։ Բայց Էջմիածնի յայնժամեան Սինոդականք և Հայոց Կաթուղիկոսարանը փոխանակ սկսուած դատին ձեռնարկելու, նահատակելով ինձ և արատաւորելով իմ անմեղութիւնը՝ կարծում էին ծածկել կամ սրբել իրենց դիզացեալ կեղտերը, և յաջորդաբար կազմում են մի նոր ապ-

ցինի, անարդար և կամայական վճիռ՝ ի 29 Հոկտ. նոյն 1881 ամի։ Սինոդի այդ երկրորդ վճռի մէջ՝ մի քառ գոնէ չէիր շշմրիր, ինչպէս տեսաւ և դեռ աւելի պիտի տեսնէ ընթերցողը։ Այդ այն վճիռն է Սինոդի, զոր Լուսայի խմբագիր Գիւտ ք. արտատպեց Արարատից, և զոր ես ևս առաջ բերի սկզբում (եր. 13—15)։ Գիւտ ք. դորանով ինձ առիթ տուեց վերադառնալ ահա իմ այն մոռացուած դատին և դնել այսօր ընթերցողի առաջ։ Ես մոռացել էի այդ այնպէս՝ ինչպէս մի նոր սուր ցաւի ժամանակ տեղի է տալիս հինը.—յայտնի է որ 1892 թուից հետէ ես մի նոր աւելի կարևոր արդար դատ ունիմ տեսնելու, որի մասին շարունակ 13—14 տարի է դիմում-բողոքում եմ ներկայ Վեհափառ Հայրապետին, սակայն... «ինքն-իմեցաւ շնորհս առնել Հրէից Փելիքսս, ելեալ զՊօղոս կապեալ» (Գործք Առաք. ԻԴ. 27)։

Ինչպէս ընթերցողը կը տեսնի Խորվիրապի վանահօր հետևեալ յայտարարութիւնից՝ կատարում է Սինոդի և՛ այդ երկրորդ անարդար և սուտ վճիռը.—

պատճէն.

«Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն սրբոյ Էջմիածնի,
Ի վանահօրէ վանից Խորվիրապայ

Յայտարարութիւն.

«Զհրաման Սահենիդ՝ որ ի 29 Հոկտ. տարւոյս, համարաւ 2662, ընթերցեալ ի լուր Բարդուղիմէոս վարդապետի՝ պահանջեցի զվեղարս, գփելոն և զվարդապետական խաչն ընդ պաշտելի կոնդակին Նորին Վեհափառութեան, որ յետ լսելոյն զայն հրաման ի ներկայութեան Գրիգոր և Արիստակէս վարդապետաց և հրամանաբեր սուրհանդակի յանձնելով զվեղարն՝ ասաց. «Թէպէտ ես յանցաւոր չեմ, բայց ամենայն խոնարհութեամբ յարգելով իմ Հոգևոր Իշխանութեան հրամանը՝ յանձնում եմ ահա վեղարս, իսկ փելոնը, խաչը և կոնդակը գտնվում են իմ կնքած սենեկում, բացուելու ժամանակը կը յանձնեմ»։

«Զվեղարս նոյն վարդապետի ընդ այսմ խոնարհաբար առաջի

առնեմ Ատենիդ՝ համաձայն հրամանի Դորին ընդ համարաւ 2662»։
 յ 3-ն Նոյեմբ. 1881 ամի։

Վանահայր Պօղոս վարդապետ Մալխասեանց։

Այն ժամանակ ես Սինոդի այդ ղրպրոչոն վճռի դէմ գրում եմ նոյն Սինոդին, Սինոդի Պրոկուրորին և Վեհափառ Տէր Գէորգ Դ. Կաթուղիկոսին հետևեալ յայտարարութիւնները. փոշտով, միշտ ապահովեալ.—

պատճէն.

«Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն սրբոյ Էջմիածնի,
Ի Միաբանէ սրբոյ Աթոռոյ Էջմիածնի՝

Յայտարարութիւն.

«Տեարք Անդամք Սինոդի ի 29-ն Հոկտեմբերի այսր ամի № 2662 հրամանագրութեամբ առ արժանապատիւ վանահայր վանուց Խորվիրապայ Պօղոս վարդապետն Մալխասեան յառաջ բերեալ զանազան բարուրանս, իբրև յանցանս դատապարտութեան, հրամայէք նմին բառնալ յինէն զվեղար, զմիլոն և զամենակուռ խաչս վարդապետական հանդերձ Հայրապետական կոնդակաւն։ Առ այս անհրաժեշտ համարիմ խոնարհաբար յայտնել.—

«Առաջին, իբրու թէ «ի 1872 ամին ի սարկաւագութեան իմում վէրս ի գլուխս հասուցեալ եցեմ յայնժամեան անտառապահի, և այլն»։ —Զէ իմ բնաւ «հասուցեալ վէրս ի գլուխս անտառապահի» և ոչ անգամ բան ինչ անարգ խօսեալ ումեք, զոր և ունիմ ապացուցանել, կենդանի է անտառապահն և վկայէ. այլ միայն զՀնմարութիւնն խօսելով՝ յառաջ եկն կիրք ի կողմանէ յայնժամեան Անդամոց ոմանց Սինոդի, որով և ի բացակայութեան Նորին Վեհափառութեան ի Հառնիճոյ վանս՝ հրաժարեցուցին զիս ի դպրանոցէ Մայր Աթոռոյդ։ Զորալիսի եղելութիւնս յետ քննելոյ Նորին Վեհափառութեան ի վերադարձին Իւրում յամարանոցէն և արդարութեանն հասու եղեալ՝ վերընկալաւ զիս յաշակերտութիւն նոյն դպրանոցի Աթոռոյդ։ Ի վերջոյ, եթէ «վէրս ի գլուխս» ումեք հասուցեալ լինէր իմ, ոչ ապաքէն յայտնեալ լինէր և՛ մարմնաւոր Իշխանութեանն՝ յորում և գտանելոց էր այժմ գործ։

«Երկրորդ, իբրու թէ «ամբաստանութիւն ինչ եցէ լեալ զինէն ի նշանաւոր Մերազնէից ոմանց Դավրիժոյ առ Վեհափառ Հայրապետն և ոյր աղագաւ յետս կոչեալ եցեն զիս յԱռաջնորդական Փոխանորդութենէ անտի իմոյ»։—Եթէ յիրաւի լինէր զինէն ամբաստանութիւն ինչ, արժան էր յայնժամ յետ օրինաւոր քննութեան՝ ենթարկել զիս պատժոյ կամ յանդիմանութեան գոնէ, և ոչ պսակիլ ի Նորին Վեհափառութենէ լանջական ականակուռ խաչիւ հանդերձ գոհունակութեան կոնդակաւն, մանաւանդ զի ըստ գրութեանց և կարի խստագոյն խնդրանաց իմոց առ նախորդ Թեմական Առաջնորդն Ատրպատականի Անդրէաս արքեպիսկոպոսն, որ բացակայութեամբ ի վիճակէն՝ գտանէր յայնժամ 'ի Մայր Աթոռդ, որ և յայտնելով զանձնական տկարութիւն իմ Նորին Վեհափառութեան և խնդրեալ զՆորայն բարեհաճութիւն՝ վերակոչեաց զիս ի Ս. Էջմիածին. ուր և կացեալ զամս երբև երիս՝ ոչ լուայ զայդպիսի ինչ ի Նորին Վեհափառութենէ կամ գէթ յայլմէ ումեքէ։

«Երրորդ, իբրու թէ «վեղծելով իմ զանցս ինչ ի Վեհարանի՝ յայտնեալ եմ մարմնաւոր Իշխանութեան և ոչ Հոգևոր»։—Զլուեալս ի ներկայ գտեալ վկայիցն թէ՝ «Ներսէս եպիսկոպոսը Վեհարանում Վահրամ եպիսկոպոսին ասեց. Ես ընկնիմ Բարդուղիմէոս վարդապետին», առանց կեղծելոյ նոյնութեամբ յայտնեալ եմ Պօլիցիային տեղւոյդ, առ ի «ապահովել միայն զկեանս իմ ի սպառնացողէն», որում և անկ էր օրինօք։ Իսկ որ ինչ անկանէր Հոգևոր Իշխանութեանն—այն է զգողութեանց և զկաշառակերութեանց Ներսէս Խուդավերդեան և Գրիգոր Տէր Մատթէոսեան եպիսկոպոսացդ՝ յայտնեալ էի աւուրբք յառաջ Նորին Վեհափառութեան, Սինոդիդ և պ. Պրոկուրօրի Նորին։ Ցայսմ ամենայնի տեսանի մինչայն օրինապահութիւն իմ—«զԿայսերն Կայսերի և զԱստուծոյն՝ Աստուծոյ»։

«Չորրորդ, իբրև թէ «ի կոչելն զիս յԱտեան Սինոդի՝ խոյս տուեալ եցեմ և զթուանքչիսն (ծառայք վարձկանք Աթոռոյդ) ապտակեալ»։ —Յերեկոյեան 6½-րդ ժամու գումարիլն Անդամոցդ ի Միաբանից ոմանց, և դրանց պարսպաց վանուցդ փակումն և յետ այնորիկ կոչելն զիս յԱտեան՝ տեղի ետ ինձ տարակուսանաց և երկիւղի վտանգի, մանաւանդ զի տեղեկացեալ ի Գարեգին վարդապետէն զի չէր անգանօր ներկայ պ. Պրոկուրօրն Սինոդի, այլ Գրիգոր և Ներսէս եպիսկոպոսունքն՝ զորոց ամբաստանեալ էի, պատասխանեցի յիշեալ վարդապետին և Շաթիր Մարգարեանին ի ներկայութեան Բառնաբաս վարդապետի՝ թէ. «Այսպէս անժամանակ և արտաքոյ կարգի Սինոդ ժողովուիլը և ինձ կոչելը՝ երևում է որ Ներսէս և Գրիգոր

եպիսկոպոսների վերայ Հոգևոր Իշխանութեանը իմ տուած յայտարարութեանց համար կլինի. և որովհետև մի և նոյն ժամանակ այդպիսի յայտարարութիւն տուած եմ և՝ պ. Պրոկուրորին Սինոդի, ուստի քանի որ Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսները այնտեղ լինած դատող են հանդիսանում՝ ես չեմ կարող առանց գոնէ Պրոկուրորի ներկայ գտնվելու գալ այժմ Ատեան Սինոդի»։ Եւ զայս պատասխան իմ տոմսակաւ նոյն ժամայն յայտնելով Նորին Գերազնուութեան՝ խնդրեցի գէթ բարեհաճեսցի նա վուԹալ ի Սինոդ, զի և ես ի ներկայութեան նորա գայցեմ, զի մի ապօրինի ինչ կատարեսցի։ Մինչ այս մինչ այն՝ արձակեցաւ Սինոդն, գնացի ես ի սենեակ Երեմիա եպիսկոպոսի ի տես հիւանդութեան նորա, ուր եկեալ անդամ վանքական Կառավարութեան Գարեգին վարդապետն հանդերձ խումբ մի Թուանքչօք՝ ասաց. «Սինոդը վճռել է որ պիտի գնաս Խորվիրապ, և Վահրամ Սրբազանը հրամայում է որ այժմ պէտք է գնաս». յորմէ ի յայտ գայ զի տակաւին չէր լինած յայտ վճիռ Սինոդի, ուրեմն՝ և ոչ «խոյս տուեալ» էր իմ։ Խնդրեցի յայնժամ զի եԹէ հնար ինչ լցէ սակաւիկ մի սպասել. բայց յետ խսպառ մերժելոյն զխնդիր իմ, ի բաց եդեալ զտկարութիւն անձինս, զերկիւղ Ճանապարհի և յ 8-րդ ժամու գիշերի զոգոյն ցրտութիւն, յանձնառի կամաւ երԹալ ի Խորվիրապ՝ հնազանդելով հրամանի սրբազան Սինոդի. յորմէ տեսանի և՝ այն՝ զի չէ իմ ընդդիմացեալ և ոչ ումեք ապտակ հարեալ։ Սակայն որչափ իրաւացի եղեն կասկածք երկիւղի իմոյ և տարակուսանաց, զի յելանելն իմ ի սենեկէ անտի՝ նախ ի վերայ սանդղոցն և ապա ի դուրս այսպէս երկիցս առսԹուր հարեալ եղէ ընդ ոտիւք արդէն հրահանգեալ բազմաԹիւ ծառայից և Թուանքչոց Ա.Թոռոյդ, ուր և բեկին զձկոյԹ մատն ձախոյ ձեռին իմոյ, խեղդեցին զիկորդս, պատառեցին զվերարկուս և իբրև աւազակի Թշնամանեալ և անարգեալ կապել ետուն զձեռս իմ յետս՝ յագումն վրէժխնդրութեան ոմանց։

«Ի վերջոյ, ի նոյն հրամանագրութեան Սինոդի անուանեն զիս «ըմբոստ, գրգռիչ, և յոխորտացեալ ի վերայ Անդամոց Սինոդի»,— ԵԹէ էր ամբաստանութիւն ինչ զինէն յուստեքէ և եԹէ համարեալ էի ըմբոստ, գրգռիչ, և յոխորտացեալ ի վերայ Անդամոց, ընդէ՞ր ամսով յառաջ առաջարկէին ինձ ի Վեհարանէ նախ՝ մեջոցաւ Ագուլեաց երկսեռ դպրոցաց պ. պ. Հոգաբարձու Սարգսի Հախնազարեանց և տեսուչ Լևոնի Թուսիկեանց՝ գնալ յԱգուլիս վանահայր և ուսուցիչ ի Հոգևոր դպրոցս տեղւոյն. և երկրորդ՝ պատուիրէին գերապատիւ Անդրէաս արքեպիսկոպոսի առնուլ զհամաձայնութիւն իմ՝ գնալ

ի Նուխի Փոխանորդական պաշտօնիս։ Թերևս պաշտպանելն իմ զօրգուտն սրբոյ Ա.Թոռոյդ և զպատիւ ընդհանուր մերս Հոգևորականութեան և յայտնելս Հոգևոր Ծայրագոյն Իշխանութեան զգողութիւնս և զկաշառակերութիւնս Անդամոցդ Սինոդի Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսաց՝ անուանել ետ զիս «ըմբոստ, և այլն», և զքահանայական կոչումն ընդ նմին և զնուիրական վեղարն, որ և ի հեԹանոսաց գերյարգի՝ ընդ այսպիսի անարգանօք էարկ, և այն ի պարսպի Մայր Ա.Թոռոյդ ի ներկայութեան ընդհանուր Գլխոյ Հայաստանեայցս Եկեղեցւոյ։ Ապաքէն արդարութիւն և իրաւունք համարէր՝ յորժամ յետ քննելոյն զտուեալ յայտարարութիւնս իմ ի 13-ն Հոկտեմբերի՝ անուանէլոյն զտուեալ յայտարարութիւնս իմ ի 13-ն Հոկտեմբերի՝ անանէի զրպարտիչ և ապա ենԹարկեալ լինէի ընդ օրինաստհման պատժովք։

«Եւ արդ, յետ այսպէս բացէ ի բաց պարզելոյ և հերքելոյ զամենայն զբարուբանս բարգեալս ի վերայ իմ իբր յանցանս կրկնակի դատապարտութեանց, պատիւ ունիմ խոնարհաբար յայտնել, զի ես ըստ ամենայնի յարգելով միայն զհրաման Հոգևոր Իշխանութեան՝ յանձնեցի զվեղարս իմ Պօղոս վարդապետի Մալխասեան, խակ փիլոն, խաչ և կոնդակն գտանին այդր ի կնքեալ սենեկի իմում, յորժամ բացցի ի ներկայութեան իմում՝ յանձնեցից»։ Ի 4-ն Նոյեմբ. 1881 ամի, ի Խորվիրապ։

Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեան։

պատճէն.

«Ձեր Գերազնուութիւն պ. Պրոկուրոր Սինոդի սրբոյ Էջմիածնի Նիկողայոս Տէր Յովսէփեանց.

«Սինոդի գերապատիւ Անդամները չ՚բաւականանալով՝ որ իմ կեանքը բեվօլվերով սպառնացողից ապահովելու համար մարմնաւոր իշխանութեանը օրինաց համաձայն դիմելս ինձ յանցանք համարեցին և ի 21-ն Հոկտեմբերի տարւոյս ինչպիսի՞ անարգ վարմունքով գիշերի 8-րդ ժամին ուղարկեցին ինձ աքսոր ի Խորվիրապ, այժմ ևս առանձին օրագրութեամբ բարդելով իմ վերայ նոյնը և ուրիշ զանազան սուտ և սնոտի բարուբաքներ՝ հրամանագրել են ի 29 նոյն Հոկտեմբերի № 2662 Խորվիրապի վանահայր աբժանապատիւ Պօղոս վարդապետ Մալխասեանին՝ առնուլ իմ վեղարը, փիլոնը և վարդապետական խաչս Վ.եհափառ ԿաԹուղիկոսի տուած կոնդակի հետ։ Սինոդի այդ անարգար հրամանը ևս կատարելով խոնարհութեամբ յանձնեցի վեղարս,

բայց գրեցի սոյն թուով յայտարարութիւն ի Սինոդն իմ վերայ բարդած բարուրանքների դէմ, որոյ մասին պարտ համարեցի յայտնել ձեզ ի գիտութիւն։ Ապաքէն եթէ Ս. Սինոդը իմ վերայ բարդած բարուրանքները և իմ տուած յայտարարութիւնը Հոկտեմբեր 13-ի քննած լինէր օրինաց համաձայն և ապա ինձ այսպէս խստագոյն պատժոյ ենթարկած՝ ես ստիպուած կը լինէի լռել»։ Ի 4-ն Նոյեմբ. 1881 ամի, ի Խորվիրապ։

Միաբան սրբոյ Աթոռոյ Էջմիածնի
Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեան։

պատճէն.

«Ձեր Գերազնութիւն պ. Պրոկուրոր Սինոդի սրբոյ Էջմիածնի Նիկողայոս Տէր Յովսէփեանց,

«Անցեալ Հոկտեմբերի 29-ի № 2662 Էջմիածնի Սինոդի հրամանագրութեան մէջ առ վանահայրն Խորվիրապայ վանուց արժանապատիւ Պօղոս վարդապետն Մալխասեան՝ զանազան բարուրանքներ բարդելով իմ վերայ՝ հրամայուած էր առնուլ իմ վեղարը. այդ բարուրանքների կարգում յիշուած էր «ի նշանաւոր Մերազնէից ոմանց Դավրիժոյ գտանի ամբաստանութիւն ինչ» ինձ համար։

«Բայց Դավրիժէն իմ խնդրանաց համաձայն մեկնելէս հետէ մօտ երեք տարի մնալով Էջմիածնում՝ իմ վերաբերութեամբ որև է ամբաստանութեան լինելը չլսեցի ոչ ոքից։ Այս մասին Ձեր Գերազնութիւնը յայտնելով՝ խոնարհաբար խնդրեմ համաձայն օրինաց պահանջել Ումից որ հարկն է այդ ամբաստանութեան պատճէնը և ուղակել ինձ։ Ընդ սմին ուղարկում եմ 60 կոպէկ ի գին մոյ մարկայի՝ ամբաստանութեան պատճէնի ստացման համար»։ յ 7 Նոյեմբ. 1881 ամի, ի Խորվիրապ։

Միաբան սրբոյ Աթոռոյ Էջմիածնի
Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեան։

Պրոկուրորը ինձ չի պատասխանում, եղբայրս իմ յանձնարարութեամբ գնում է նորան խօսում պատճէն տալու համար, նա պատասխանում է. «Սինոդի գործի մէջ բողոք-ամբաստանութիւն կայ՝ որ պատճէնը տրուի, դորա մասին պատասխանատուն ինքը Կաթուղիկոսն է. իսկ ես նորան ինչ կարող եմ անել»...

պատճէն.

«Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգայ Դ.-ի Սրբազնագոյն Կաթուղիկոսի ամենայն Հայոց

Ի Միաբանէ սրբոյ Աթոռոյ Էջմիածնի

Յայտարարութիւն.

«Քահանայապետ մեծ, ոչ սակաւ անգամ լուեալ է իմ և ընկերաց իմոց ի բերանոյ Վեհափառութեան Ձերում. «Դուք էք իմ յոյսը, դուք պիտի չլինիք այս Միաբաններիս պէս, սոքա — հինները՝ գոռ են, աւազակ են»։

«Վեհափառ Տէր, նախ՝ հաւատարիմ կացեալ կոչման իմում և պարտաւորութեան առ Մայր Աթոռն, և երկրորդ՝ ի խրատուց Վեհափառութեանդ վստահութիւն առեալ Որում և հաւատացեալ՝ յայտնեցի գրաւոր Ծայրագոյն Հոգևոր Իշխանութեանդ զգողութիւնս և զկաշառակերութիւնս անդամոց Սինոդի և վանքական Կառավարութեան Ներսէս և Դրիգոր եպիսկոպոսաց. բայց աւաղ խաբեցայ ի վստահութեանն, զի փոխանակ զգողն և զկաշառակերսն պատժելոյ՝ պատժեցին զիս սնոտի պատճառանօք։ Պատժեցին և առաքեցին զիս աքսոր ի Խորվիրապ անօրինակ չարաչար տանջանօք, բարբարոս Քրդացն Առաջնորդ Շէյխ Իբադուլլահին թերևս շարժէր գութ յոծեալն Տեառն, բայց կարգակիցք և վեղարակիցք իմ յիս ինչ ոչ խնայեցին, ի խոնարհութեան իմում և ի հնազանդութեան՝ կապել ետուն զձեռս իմ յետս որպէս աւազակի, ընդ ոտիւք ծառայից Աթոռոյդ հարին զիս զգեանի, խեղդեցին զկոկորդս, զՀկոյթ մատն ձախոյ ձեռին իմոյ բեկին, զվերարկուս պատառեցին, և զոր ասեմ։ Յայսմ տագնապի հազիւ թէ միջոց ետուն ինձ Գարեգին վարդապետն և ընդ նմին հրամանակատար թուանքչիքն կնքել զդուռն սենեկի իմոյ, և յ 8-րդ ժամու գիշերի յանձնեցին զիս չորից ձիաւոր թուանքչոց Աթոռոյդ և առաքեցին ի Խորվիրապ։ Թողում ասել զի և յետ եօթնեկի միոյ զանազան սնոտի պատճառանս և բարուրանս բարդելով ի վերայ իմ՝ հրամայեցին առնուլ զվեղարս իմ, զմիլոն և զվարդապետական խաչս, զոր ի նշան գոհունակութեան Ձերում Վեհափառութեան ստացեալ էի յԱռաջնորդական Փոխանորդութեան իմում Ատրպատականի. բայց Անդամք Սինոդի ի հրամանագրութեանն ի 29-ն Հոկտեմբերի № 2662 առ. վանահայրն Խորվիրապայ՝ կոչեն զիս «ըմբոստ, չարագրգիռ, յոխորտացեալ ի վերայ Անդամոց, վէրս

ի գլուխ անտառապահի հասուցեալ», որովք և դատապարտեցին. ոչ ի միտ առեալ բնաւ, զի եթէ իրաւացի էին մեղադրանացդ բանք՝ Վ. Հափառութիւն Ձեր ոչ պակէր զիս լանջախաչիւ ամօք յառաջ նախապատուեալ քան զամենայն օծակից վարդապետ եղբարս իմ և զայլս բազումս ձեռնադրեալս նախ քան զիս։

«Այժմ լսեմ զի բացեալ են զկնքեալ սենեակ իմ առանց Ներկայութեան իմոյ, մինչդեռ յ 31-ն անցելոյ Հոկտեմբերի ի յանձնելն իմ Պօղոս վարդապետի զվեղարս՝ ասացի. «Թէպէտ ես յանցաւոր չեմ, բայց ամենայն խոնարհութեամբ յարգելով իմ Հոգևոր Իշխանութեան հրամանը՝ յանձնում եմ ահա վեղարս, իսկ փիլոնը, խաչը և կոնդակը՝ գտանվում են իմ կնքած սենեկումս, բացուելու ժամանակը կը յանձնեմ»։ Եւ զնոյն ի 4-ն ամսոյս ի յայտարարութեանս ի Սինոդն գրեցի. «Իսկ փիլոն, խաչ և կոնդակն գտանին այդր ի կնքեալ սենեկի իմում, յորժամ բացցի ի Ներկայութեան իմում՝ յանձնեցից»։

«Ուստի զայսմ ամենայնէ, այլ և հակառակ օրինաց զբացումն կնքեալ դրան սենեկի իմոյ անհրաժեշտ համարիմ յայտնել Վեհափառութեան Ձերում. Որում և մնամ խ. ծ.

Բարդուղիմէոս վարդապետ Դէորգեան,

Ի 11-ն Նոյեմբ. 1881 ամի, ի Խորվիրապ։

Իսկ Նոյեմբերի 30-ին գրում եմ հետևեալ յօդուածը, ուղարկում եմ Պակին, Մշակին և Մասիսին. հրատարակել է միայն Մասիսը.—

Նամակ Խորվիրապից.

30 Նոյեմբերի 1881 ամի.

«Տէր Խմբագիր Մասիս լրագրի,

«Իմ աքսորման դէպքի համառօտ նկարագրութեան մէջ (եր. 92—100) դեռ սկզբից ասել եմ. «պատիւ և գրիչ վաճառողների հետ չեմ խօսում...», և՝ այժմ չեմ խօսում. այդպիսիները՝ խմբագիր թէ թղթակից՝ ճանաչուած են, նոքա արդէն գրաւ են դրել և՝ իրենց խիղճը և՝ սկզբունքը, եթէ կարելի է կարծել թէ ունէին առաջ՝ երբ Էջմիածնի 10—12 տարիների հաշիւ էին պահանջում, երբ Ներս—ես, Պաղտրոս և միւս «ասպետներին» ամբողջ խմբի քաջագործութիւնները նկարագրելով՝ Սողոմ և Գոմորի ուրուականն էին պատկերացնում, երբ ձեմարանը Ջէրարան էին անուանում և Վեհարանը՝ Բաղդիսանայ. և այլն։ Այդպիսիներն են այժմ լպիրշ երեսներով հանդէս դուրս եկողները Էջմիածնի խոյտառակութեան հասած այժմեան զեղծումները կարկատելու՝ տարեկան 1,000 ռուբլ համեստ վարձով։ Նորանց արհեստի հմտութիւնը կայանում է անձնաւորութիւններ արատաւորելում, նոքա տասնեակ տարիներով պառաւել են այդ պատիւ չբերող վերնքա տասնեակ տարիներով պառաւել են այդ պատիւ չբերող վերշակի մէջ, և ինչ որ նորանց դէմքին է՝ նոյնը կը լինի և նորանց տապանի արձանագիրը։ Այդպիսիները և իրենց կեղտոտ զէնքերը արժանի չեն որ և է պատասխանի, դորանց բաժինն է միմիայն զզուանք և արհամարանք (1)։

«Իսկ Արարատի խմբագրութեանը չեմ մեղադրում, նա գրում է՝ ինչ որ թելադրում են, պարզ՝ արտագրում է։ Այդպէս արտագրում է և տպում իմ համար կազմուած Սինոդի օրագիրը (տես Արարատ 1881 թ. Հոկտեմբ. եր. 586 — 588)։ Արարատի խմբագրութիւնը թող կարդայ իմ՝ առ ի Սինոդն գրած յայտարարութիւնը ի 4-ն սոյն Նոյեմբերի, թող յիշէ՝ որ ես «պղտորել եմ ջուրը» իմ այդ դատաւորների. թող նոյնպէս ի միտ առնու հետևեալ առակը.—Մի մարդ առաւօտեան գնում է իւր այգին, այնտեղ գտնում է մի օտար անծանօթ մարդ՝ որ մրգեղէն էր գողանում։ Տէրը բարկութեամբ ասում է. «Ինչ գործ ունիս դու այստեղ, այս ինչ է քո արածը, անամօթ դու գող». իսկ գողը պատասխանում է սերէօղնի. «Ինչո՞ւ կնոջդ համար մաշկի չես առնում»...։ Արարատը թող բաւականանայ սորանով. իսկ ես դառնում եմ փաստերին՝ պ. պ. ընթերցողների հետ խօսելով որ ինչ ճշմարիտն է և որքան ներելի։—

«Արարատի մէջ հրատարակուած Սինոդի օրագրութեան ընթերցողը տեսնում է՝ որ 8 աւուր մէջ չարաչար դատապարտում են ինձ երկու անգամ, բարդելով իմ վերայ զանազան սնոտի բարուրանքներ։ Որոց առթիւ ես պատասխանում եմ.—

«Առաջին, որպէս թէ ես «Վեհարանում տեղի ունեցած մի անցք անմիջապէս յայտնել եմ Վաղարշապատի Ոստիկանութեանը և ոչ Նորին Վեհափառութեանը, արհամարհելով վանական կարգ, եկեղեցական սահմանադրութիւն (որ), և Վեհափառ Հայրապետի իրաւասութիւնը (քա՜ւ լիցի), որոց համար դատապարտում են (ինձ) և աքսորում ի Խորվիրապ»։—Ես Ներկայ գտանուող վկայներից լսածս՝ թէ «Ներ

Նորին Օծութեան Տ. Տեղապահ և Սինոդի նախանդամ Մկրտիչ արքեպիսկոպոսին և ուրիշներին, իսկ Վեհարանականաց արդէն յայտնի էր. բայց ոչինչ կարգադրութիւն չ՝արուելուց յետոյ, ես վտանգի երկիւղից (գիտեն) հարկադրուած, 5 օրից յետոյ և ոչ «անմիջապէս» նոյնութեամբ յայտնել եմ տեղւոյն Գասառապետ պ. Խանազեանցին՝ իմ կեանքը սպառնացողից ապահովելու համար միայն, որովհետև մի և նոյն գրութեանս մէջ գրած եմ. «իմ ցանկութիւնն է միայն ապահովել իմ կեանքը սպառնացողից, և ոչ դատի—բանտարկութեան կամ տուգանաց ենթարկել նորան»։ Այս այսպէս եղբև մարմնաւոր գործ՝ յայտնել եմ մարմնաւոր իշխանութեանը՝ օրին և պատկանում էր տիրող Պետական օրէնքով *), իսկ որ ինչ պատկանում էր Հոգևոր Իշխանութեանը,—այն է՝ Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսների գողութիւնները և Սիմոնական կաշառակերութիւնները՝ արդէն քանի օր առաջ գրաւոր յայտնել էի Նորին Վեհափառութեանը, Սինոդին և պ. Պրոկուրորին Սինոդի։ Սորանում տեսնվում է միմիայն իմ կողմից ճիշդ օրինապահութիւն — «Զկայսերն Կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյ»։ Բայց Հոգևոր Իշխանութիւնը այս իմ օրինաւոր վարմունքը պատրուակ բռնելով՝ տանջանք աքսորեց ինձ 'ի Խորվիրապ ի 21-ն անցեալ Հոկտեմբերի, փոխանակ, եթէ Հոգևոր Իշխանութեան գործն էր, նախքան Պոլիցիային իմ դիմելը՝ յանդիմանելու և զգուշացնելու բերելով սպառնացող եպիսկոպոսին, որ իրենց գողութեանց և կաշառակերութեանց համար իմ տուած օրինաւոր յայտարարութեանց դէմ օրէնքով պաշտպանուելու տեղ՝ բերելով էր դիմում։ Եթէ իմ կեանքը վտանգից ազատելու համար Պոլիցիային յայտնելս գիտութեամբ անգիտանում են օրէնքը և այնքան խիստ պատժոյ արժանի յանցանք համարում, հապա ինչ ասենք որ Գրիգոր և Ներսէս եպիսկոպոսները և իրենց դաշնակիցները երեք ամիս առաջ Վեհարանում խօսում խորհրդակցում էին Պոլիցիայ հրաւիրել Էջմիածին—վանքը՝ Միաբաններիս սենեակները խուզարկելու՝ իրենց գողութիւնները լրագիրներին գրողները գտնելու համար (տես «Պսակ» 1881 թ. № 23) 1)։

*) Սինոդականը չգիտեմ՝ օրինաց համաձայն այս մասին ինձ դատապարտող տուաջին օրագրի մէջ համարձակ գրում են. «կամելով ածել զնա ի հեռանդութիւն իւրում անընդ միջական իշխանութեան»։ Ուրարատի խմբագրութիւնը աւելի հասկացող դտնուելով՝ բայց է թողել «անընդմիջական» բառը...

Ծան. 1) Ի դէպ՝ կարող ենք յաւելցնել.—1891 թ. Փետրուարին, Էջմիածնի ճեմարանում աշակերտաց խռովութիւն ծագեց տեսչի դէմ (Նահապետ վարդապետ). դրեցին հրաւիրեցին ոստիկանութեանը ի ճեմարան և պրիստաւ

«Երկրորդ, որպէս թէ «1872 թուին Սթոռոյ անտառապահի գլխին վէրք հասցնելով՝ ջուրը յափշտակել եմ և. տուել եղբայրներիս՝ իրենց անդաստանը ջրելու համար»։ — Այդ թուականին ջրի պակասութեան պատճառաւ Էջմիածնի Սինոդը և Վաղարշապատի հասարակութիւնը համաձայնութեամբ վճռել էին՝ որ ջրուին միայն այգիները, Էջմիածնի անտառը եւ միայն նորա'նց ամառնային ցանքսերը՝ որոնք այգի չունէին. այդ կարգադրութեան հսկողութեան համար Տեղապահ և Սինոդի նախանդամ Գրիգոր արքեպիսկոպոս Սագինեանցը նշանակել էր մի վարդապետ վանքի կողմից։ Այդ ժամանակ (Օգոստոս) Վաղարշապատի հասարակութեան յիշեալ վճռի համաձայն Շենական Դատարանը (Սուդ) վճռում է՝ որ իմ հօր (այգի չունէր) բամբակի արտը պէտք է ջրուէր և պաշտօնապէս գրվում է գիւղի Տանուտէրին՝ որ ջուր տայ, Տեղապահ Սրբազանը էս նոյնը հրամայում է նշանակուած վարդապետին և Տանուտէրին, ապա եղբայրս կապում է ջուրը. բայց վարդապետը գնում արգելում է։ Եղբայրս ինձ պատմում է և մի և նոյն ժամանակ յայտնում՝ որ էջնց մեր արտի մօտ ուրիշները, որոնք այգի էս ունին, անարգել ջրում են իրենց բամբակի և կունճիթի արտերը, չնայելով որ իրաւունք էլ չեն ստացած ոչ գիւղական դատարանից և ոչ Տեղապահից (տես. եր. 15—19)։ Եղբօրս պատմածին

Ֆօրսայինը մի խումբ զինեալ կօզակներով 'խսկոյն հասաւ ճեմարանի դուռը։ Թուղթը գրեցին Ներսէս եպիսկոպոսի սենեակում և սա ինքն էլ ստորագրեց այն թղթին։ Աւելի լաւերն ասեմ.—Տէր Գէորգ Դ.-ի մահից յետոյ Էջմիածնի Սինոդը քննութեան և պատասխանատուութեան ենթարկից Վահրամ Եպիսկոպոս Մանկուէնին՝ դրամական յայտնի կորուստների համար. այս Մանկուէնին իւր Հոգևոր Իշխանութեան դէմ բողոքով դիմից Տփխիսի Օսմանեան հիւպատոսին և վերջինը միջամտեց, որով քննութիւնը կանգ առաւ,—Նոյն 1883 թուին, այդ նոյն Վահրամ Եպիսկոպոսը Վաղարշապատի Մերավոր Սուդին դիմից դրաւոր բողոքով՝ Կիւրեղ վարդապետ Սրապեանի վերայ այն քանի համար, որ սա Վեհարանի կողոպուտների և Մանկուէնու ընկերութեան գողութեանց և քահանայացուներից կաշառակերութեանց մասին ըստ կարելւոյն ճիշդ տեղեկութիւններ էր գրել Կ. Պոլիս՝ Ներսէս Պասրիարքին և Մասիսին (տես Մասիս 1883 թ. № 3467)։ Ամենքի լեզուն բացուել էր։ Տես և Մարկոս Աղաբէգեանի յօդուածը՝ Մասիս №№ 3390, 3391 և 3392։ Սուդը Սրապեան Կիւրեղ վարդապետին մեղադրելու օրինական պատճառ չգտնելով՝ յետ է դարձնում Վահրամ Եպիսկոպոս Մանկուէնու խնդրագիրը. տես «Պսակ» 1883 թ. № 6։ Հէնց այստեղ լրատուն համեմատում և յիշեցնում է Բաղդասարիանոս վարդապետի՝ ոստիկանութեան դիմելը և Վահրամ Եպիսկոպոսի՝ Տաճատեսանին և Սուդին դիմելու շարժառիթների անգամին։ Փարիսեցիների չափերը և կշիռները երկու են. և սոքա են՝ որ «զմիմ զուկս բամեն և զուղտս կլանեն»...

տականատես լինելու և նոյնը Տեղապահին յայտնելու նպատակաւ՝ հետեւեալ օրն (կիւրակէ) ես պատելով գնում եմ (ի հարկէ Հօրեցս և եղբայրներեցս ծածուկ) և արդարև գտնում եմ մեր բամբակի արտի մօտ հէնց նոր ջրուած կունՀիթի մի արտ՝ Նիկողայոս Էրամեանցի. փոքր ինչ վեր՝ տեսնում եմ Միտօյենց Սեվանին՝ որ բահը ձեռքին ջրում էր իրենց բամբակը, և այնտեղ ներկայ էին Աթոռոյ երկու անտառապահները՝ որոց կարգել էր վարդապետը երբ թէ անտառի այդ ջրի պահպանութեան համար։ Ես տեսնելով այս, անտառապահներից մէկին ուղարկեցի որ գնայ վարդապետին իմացնէ և կոչէ գալ տեսնել իւր աչքով անտառի ջրի վատնելը. սպասեցի մի ժամ, երկու ժամ՝ բայց ոչ անտառապահն վերադարձաւ և ոչ վարդապետն եկաւ. վերադարձայ գնացի Տեղապահ Սրբազանին յայտնելու իմ տեսած գողութիւնը ջրի՝ շահամոլ վարդապետի ձեռքով, և՝ Աթոռոյ և՝ ժողովրդի զրկանքները։ Իմ պատմելու ժամանակ՝ յանկարծ եկան և ուրիշ երկու-երեք Սրբազաններ, որոնց Արաբօն պատրաստել ուղարկել էր (1)։ Բայց ինչ, երբ ես Տեղապահ Սրբազանին պարզմտութեամբ պատմում եմ եղելութիւնը, նոքա անտեղի կերպով միջամտում և զայրանում են իմ վերայ, ապա թէ հասկանում եմ ինչ լինելը... և խսկոյն գրում են ՀաւիՀոյ վանքը Վեհափառ Կաթուղիկոսին՝ զրպարտելով որպէս թէ կոտրել եմ անտառապահի գլուխը և ջուրը յափշտակել։ Վեհափառ Կաթուղիկոսը գրում հրամայում է քննել ստուգել, եթէ իրաւ է՝ արձակել ինձ. սակայն սոքա առանց քննելու՝ օրագիր են կազմում Սինօդում և վՀռում. «Թէպէտ Վեհափառ Կաթուղիկոսը հրամայած է քննել, բայց որովհետև Սինօդիս արդէն յայտնի է (sic) որ նա (ես) անտառապահի գլուխը կոտրել է, ուստի արձակում ենք նորան հոգևորականութիւնից»։ Վեհափառ Կաթուղիկոսը վերադառնում է ամարանոցից, ես չորս խնդիր եմ ուղարկում Նորին Օծութեանը և խնդրում ոչ թէ ընդունել ինձ դարձեալ, այլ միայն քննութիւն նշանակել՝ Սինօդի զրպարտութիւնը և իմ անմեղութիւնը յայտնի կացուցանելու համար (1). և սպասում եմ մեր տանը չորս ամիս։ Կաթուղիկոսը սաստիկ զայրանում է՝ երբ ստուգում է որ փոխանակ քննելու՝ զրպարտել են ինձ և արձակել և այն էլ այնքան ստոր հաշիւներով։ Ցանդիմանում է Անդամոց՝ որ իրեն խաբել են։ Այդ ժամանակամիջոցում Սինօդի անդամ Մեսրովբ եպիսկոպոս Սմբատեանցը երկու անգամ գալով մեր տան դիմաց գտնուող վանքապատկան տունը՝ ուր Շինական Դատարանն էր (Յովհաննէս Ստեփաննոսեանցի և Կարապետ Դաւնեանցի հետ), հրաւիրում է ինձ այնտեղ և ասում. «չնայելով որ ես ես ստորագրած եմ ձեզ արձակելու օրագրին, բայց յայտնուեց որ դուք յանցանք չունիք, այլ կիրք էր, դուք գիտէք ով են ձեր թշնամիները։ Այժմ լաւ կլինի որ քննութիւն չպահանջէք, որովհետև ամբողջ Սինօդն է ստվում. խնդիրք տուէք Վեհափառին՝ թէ ինձ ընդունեցէք և դորանով վերջանայ գնայ»։ Ես պատասխանում եմ.—«Սրբազան, ինձ քննութիւն է հարկաւոր և արդարանալ, և ոչ թէ կրկին ընդունուել» *)։ Նոյնպէս Սինօդի ատենադպիր Սուքիաս Թաղիանոսեանցը, Սինօդում գործավար Ղազար Տէր Ղազարեանցի միջոցաւ հրաւիրում է ինձ իւր տունը և նոյնպիսի խօսքերով համոզում՝ որ քննութիւն չպահանջեմ. բայց իմ պատասխանը լինում է նոյնը՝ ինչ գերապատիւ Սմբատեանցին։

«Վերջապէս նոյն թուականի Դեկտ. 25-ին Շաթիր Մարգարեանը գալիս է ինձ կոչում և ես ներկայանում եմ Նորին Վեհափառութեանը. Որը հայրաբար ընդունելով՝ ասաց. «Ծո, վարդապետի ջուր գողնալ ծախելը ծածկելու համար՝ քեզ են պատժել, ես ստուգեցի և տեսի՝ որ դուն անմեղ ես. ուստի կրկին ընդունում եմ քեզ վանքը, եկ աջս ետ և գնա քո նախկին տեղը»։

—«Վեհափառ Տէր, ես քանիցս անգամ գրաւոր խնդրեցի քննել միայն, բայց որովհետև հաւաստելով իմ անմեղութիւնը՝ այժմ հրա-

---

Ծան. 1) Գրիգոր եպիսկոպոս Մուշեղեանց և Յովակիմ եպիսկոպոս Տէր Գրիգորեանց Սինոդականք։ Առաջինը սխալ համոզուած է եղել՝ որ երբ թէ ես եղած լինիմ պատճառ իւր ազգական «դիժ» Մուշեղին ծառանդաւորաց դպրոցից արտաքսման։ Իսկ երկրորդը՝ երբ թէ իւր քեռու մարդի պատը դուրս դնելու արդելք ես և մերոնք եղած լինենք։ Այս վերջինը ոչ շատ յետոյ հասկացաւ իւր սխալը, զղջաց և ներողութիւն խնդրեց (գիտէ Անանիա եպիսկոպոսը) և դարձաւ իմ մի լաւ բարեկամը։

Ծան. 1) Հէնց նոյն 1872 թ. Մայիսի 28-ին Մեռոնօրհնութեան օրերում, խնդրագրով դիմել էի Տ. Գէորգ Դ. Կաթուղիկոսին և խնդրել՝ արձակել Ծառանդաւորաց դպրոցի և Զորբորդ աստիճանաւորութեանս վկայականով։ Այդ խնդրագրիս մէջ խոստանում էի հետզհետէ հատուցանել Ս. Էջմիածնի։ Այդ ամենը մեր Էջմիածնում (1866—1872 թ.) իմ համար ծախսուած կը լինէր։ Սակայն Նորին Սրբութիւնը ոչ միայն մերժեց իմ այդ խնդիրը, այլ և կոչեց իւր մօտ Ղազարցի Ծերունի Իզմիրեանցին և երեսփոխանին (Ամենայն Հայոց անունը) և ծանր յանդիմանեց—«եկել էք մեր դպրեցիներին գլխէ հանելու»։ Այսպէս արդելեց և իմ երկու դասընկերներին։

*) Մեսրովբ Սրբազանի խօսքը և իմ պատասխանը՝ գրած յայտնած եմ Վեհափառ Կաթուղիկոսին այն ժամանակ ուղարկած խնդրագրերս մէջ։

մայում էք գալ կրկին իմ տեղը, խնդրում եմ որ օրագրութեամբ լինի, կամ առաջին օրագիրը գոնէ ոչնչացնել»...

—«Ծ՝ տան տէրը ես չէմ. քանի որ ինձ յայտնուեց քո անմեղութիւնը՝ այն օրագիրն ինձ մօտ է և կոչնչացնեմ, գնա միամիտ եղիր»։

«Կարճ ժամանակից յետոյ հաւատի տեղեկացայ—ստուգեցի՝ որ այն ստութեամբ կազմուած օրագիրը չկար Սինոդում։

«Ահա պարզ եղելութիւնը, և թէ որչափ ստոյգ է Սինոդի մեղադրանքը, որով ամբողջ տասն տարուց յետոյ կրկին դատապարտում են ինձ՝ չգործած յանցանքիս համար։ Վերջապէս եթէ այդ զրպարտութիւն չլինէր՝ մարմնաւոր իշխանութեան ևս ժամանակին անշուշտ յայտնուած կը լինէր անտառապահի գլուխ կոտրած լինելս, ուր և կը գտնուէր գործ այդ մասին, մանաւանդ թէ կենդանի են վկայներն և անտառապահները. որոց բացի գլուխ չկոտրած լինելս՝ որ և է մի տգեղ խօսք անգամ չեմ ասած, բացի այս.—«վարդապետը ձեզ այստեղ անտառի ջրի պահապան անուանով կարգել է իսկապէս, ինչպէս ահա տեսնում եմ, ջուրը ծախելու համար»..

«Երրորդ՝ որպէս թէ «Դաւրիժեցի մերաւնեայ նշանաւոր անձինք բողոք տուած լինին Վեհափառ Հայրապետին և ամբաստանած ինձնից յաղագս անբարոյական գնացից, և որոց խաղաղեցնելու համար յետոյ են կոչել զիս Ատրպատականի Առաջնորդութեան Փոխանորդութիւնից»—Եթէ յիրաւի կար իմ մասին որ և է ամբաստանութիւն՝ արժան էր օրինական քննութիւնից յետոյ պատժել ինձ կամ յանդիմանել, կամ գոնէ խրատել, և ոչ թէ ի նշան գոհունակութեան Նորին Վեհափառութեան՝ պարգևել ինձ լանջական ականակուռ խաչ հանդերձ Հայրապետական կոնդակաւ, և այն՝ Փոխանորդութեանս վերջին օրերում։ Ես Դավրիժէն մեկնելէս հետէ ևս երկու տարուց աւելի մնալով Էջմիածնում՝ իմ համար որ և է ամբաստանութեան լինելը չեմ լսած ոչ Նորին Վեհափառութիւնից և ոչ կողմնակի մէկ ուրիշից գոնէ։ Եթէ Դավրիժեցի նշանաւոր (sic) անձինք ինձնից ամբաստանած էին, նոյն քաղաքի հէնց «նշանաւոր» անձինք—մնծապատիւ Հոգաբարձուք չէին՝ որ այս ամառն գրել էին Երևան Դավրիժեցի պ. Ներսէս Տէր Զաքարեանցին, որը նոցա խնդրանաց համաձայն քանիցս անգամ գալով Էջմիածին՝ աշխատեց առնուլ իմ հանձայնութիւնը, որ ապա պ. պ. Հոգաբարձուք դիմէին Վեհափառ Կաթուղիկոսին և խնդրէին ուղարկել ինձ Դավրէժ՝ ուսուցիչ և Տեսուչ իրենց ազգային դպրոցի. յայտնի է Անդրէաս արքեպիսկոպոսին և Միաբաններից շատերին։ Բայց Դավրէժի Փոխանորդութիւնից իմ արձակուելն

եղած է այսպէս.—Ես հիւանդութիւն պատճառելով քանիցս անգամ գրաւոր խնդրել եմ իմ արձակումը Ատրպատականի Նախորդ Առաջնորդ գեր. Անդրէաս արքեպիսկոպոսին՝ որ բացակայութեամբ գտանվում էր այն ժամանակ Էջմիածնում, և նա երեք անգամ ներկայանալով Վեհափառ Կաթուղիկոսին՝ խնդրած է արձակել ինձ, բայց Վեհափառը վերջին անգամ պատասխանած է. «քանի որ ժողովուրդը նորանից գոհ է և ես 2 ամիս է որ խաչ եմ տուած նորան՝ թող համբերէ»։ Վեհափառը գնում է Բիւրական, Անդրէաս արքեպիսկոպոսը նամակով յայտնում է իմ որոշումը Վահրամ եպիսկոպոսին և խնդրում սորա միջնորդութիւնը առ Նորին Վեհափառութիւնն, որով հաղիւ թէ բարեհաճում է թոյլատրել հրաւիրել ինձ Էջմիածին։ Այս մասին եղած գրագրութիւնները և մի հեռագիր ապացոյց են իմ ասութեանց Ճշդութեան (1)։

«Չորրորդ՝ որպէս թէ «Հոկտեմբերի 21-ին ես Սինոդ գնալ հրաժարուել եմ «զանազան պատճառաբանութեամբ». և ապա երբ վանքական կառավարութեան անդամներին հրամայուել է ուղարկել ինձ Խորվիրապ՝ ես դարձեալ չլսելով իշխանութեան հրամանին՝ խոյս եմ ուել իմ սենեկից նախ Կիւրեղ վարդապետի սենեակը և ապա Երեմիա եպիսկոպոսի, և թէ ջանացել եմ ապաստակել ձերբակալող սուրհանդակներին. որ և յայտնուելով Վեհափառ Կաթուղիկոսին, հրամայուել է ի 29-ն նոյն Հոկտեմբերի՝ բառնալ իմ վեղարը, փիլոնը և խաչը՝ Խորվիրապի վանահայր արժ. Պօղոս վարդապետի ձեռքով»։—Ամօթալի ստութիւններ, անխիղճ զրպարտութիւններ՝ որ հաւատացրել են Նորին Վեհափառութեանը։ Երեկոյեան 6½-ին ժամին Սինոդի Անդամները ժողովվում են Սինոդում (Էջմիածնում բնաւ չտեսնուած բան), հրաւիրում են Միաբաններից ոմանց միայն, վակում են պարսպի դռները, և ապա երբ ես խսպառ անտեղեակ՝ ժամօրհնող Բառնաբաս վարդապետի սենեկումն էի, եկան այնտեղ Դարեգին վարդապետն և Շաթիր Մարգարեանը և ինձ կոչում էին Սինոդ։ Փոխադպետն և Սինոդի ստորոժի կամ մի գրագրի՝ վարդապետի և Շաթիրի միջոցաւ այնպէս անժամանակ կոչելը տեղիք տուեց ինձ երկիւղի և զանազան կասկածանքի, ուստի տարակուսանօք հարցրի վարդապե-

Ծան. 1) Ընթերցողը վերը (եր. 33—52) կարդայ և տեսաւ թէ ես ի՞նչ դժուարութեամբ կարողացել եմ հրաժարուել և երաւունք ստանալ վերադառնալ Էջմիածին, իսկ Սինոդը ևս յայտնի օրագրով ի՞նչպիսի սուտ է ասել և ինձ զրպարտել։ Տեսաւ նոյնպէս՝ որ Դավրիժեցի «նշանաւոր» անձինքը հէնց ինձ յաջորդող Գր. Եպիսկոպոս Մուշեղեանցի Առաջնորդութեան օրերում ստորագրով կարօտել են ինձ... և դեռ պիտի տեսնէ նոցա շատ անգամ կարօտելը ինձ։

տին. «արդեօք այսպէս անժամանակ ինչի՞ համար են ինձ Սինոդ կոչում, Սինոդականներից ո՞վ կան, Պրոկուրօրն ներկա՞յ է»։

—«Չգիտեմ ինչու համար են կոչում. Սինոդականներից՝ Գրիգոր, Ներսէս, Մկրտիչ և Մեսրովբ եպիսկոպոսներն են, իսկ Պրոկուրօրն այնտեղ չէ»։

—«Այսպէս անժամանակ և արտաքոյ կարգի Սինոդ ժողովուելը և ինձ կոչելը՝ երևում է որ Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսների վերայ Հոգևոր Իշխանութեանը իմ մատուցած յայտարարութեանց համար կը լինի. և որովհետև մի և նոյն ժամանակ այդպիսի յայտարարութիւն տուած եմ և՛ Սինոդի պ. Պրոկուրօրին, ուստի քանի որ պ. Պրոկուրօրն այնտեղ ներկայ չէ, այլ Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսներն՝ որոց արարմանց համար 6—7 օր առաջ յայտարարած եմ և նոքա բնական է որ կարող են կրքով վարուել. օրէնքով՝ պէտք է նոքա թէպէտ բացակայ լինին, բայց և այնպէս ես առանց գոնէ Պրոկուրօրի ներկայութեան տարակուսում եմ գալ այժմ Ատեան, որովհետև արդարութիւնը և օրէնքը պահպանող չի լինի»։ Իմ այս օրինաւոր պատասխանը ծածկելով Սինոդը՝ գրում է—«զանազան պատճառաբանութեամբ բացէ ի բաց հրաժարեցաւ խսպառ Բարդուղիմէոս վարդապետն յանդիման լինել յԱտենի»։ Վարդապետն և Շաթիրը գնում են, ես նոյն պատասխանս խսկոյն գրում եմ պ. Պրոկուրօրին և խնդրում որ նա շտապէր ներկայ գտնուել Սինոդում, որ ես էս առանց վրէժխնդրութեան երկիւղի և կասկածի՝ գնայի։ Վարդապետն և Շաթիրը երկրորդ և երրորդ անգամ գալիս են, ես հարցնելով և տեղեկանալով նոցանից որ Պրոկուրօրն դարձեալ այնտեղ չէ՝ պատասխանում եմ. «առանց Պրոկուրօրի ներկայութեան չեմ կարող գալ»։ Պրոկուրօրն եկած է եղել, ինչպէս յետոյ յայտնուեց, սակայն պարսպի դուռն չեն բացել։ Մինչ այս մինչ այն՝ արձակուեց Սինոդը, սեղանի (ընթրիքի) զանգակը, որ յատուկ պատուիրել էին յետաձգել՝ խփեցին, ես գնացի իմ սենեակը և կէս ժամի չափ դրելուց յետոյ՝ գնացի հիւանդատես Երեմիա եպիսկոպոսի սենեակը՝ ուր էի և նախընթաց երեկոյեան. եկաւ այնտեղ խսկոյն և Խորէն վարդապետ Ստեփանէն, ես երբ սորանից հարցնում էի թէ ինքն էս գնացած էր Սինոդ կամ գիտէ՞ ինչի՞ համար էր ժողովը, եկաւ նոյն Գարեգին վարդապետն և առաջին անգամ ասաց. «Սինոդը վճռել է որ պիտի գնաս Խորվիրապ և Վահրամ սրբազանը հրամայում է որ այժմ պէտք է գնաս»։ Վերջին անգամ 10 բոպէ ժամանակ խնդրեցի տալ,—արդէն մերժել էին առաւօտուան թողնել գնալս,—բայց երբ այն էս խսպառ մերժեցին

և պատրաստվում էին բռնի դուրս տանել, զոր արգելեց Խորէն վարդապետ Ստեփանէն (տես եր. 97), չնայելով տկարութեանս, ճանապարհի երկիւղին և գիշերային օդի ցրտութեանը և խոնաւութեանը՝ յանձնառի և խսկոյն կանգնեցի գնալ. հաղիւ թէ սենեկից դուրս ելայ և հագայ կրկնակոշիկներս և փոխեցի սանդուղքների առաջին աստիճանը՝ խփեցին մէջքիս և ձգեցին սանդուղքների վերայ և ապա դուրսը սալայատակի վերայ. ուր և կոտրեցին մատս, խեղդեցին կոկորդս, պատառեցին վերարկուս, կապեցին թևերս, և այլն։

«Ընթերցողը պարզ տեսնում է՝ որ Սինոդի գիշերով յանկարծական գումարման պատճառն ինձ յայտնի չի եղել, և՛ թէ Նորա հրամանը Խորվիրապ գնալու՝ ինձ յայտնել են հէնց Երեմիա եպիսկոպոսի սենեկումն, Սինոդի օրագիրն էս վկայում է այս—«առանց գիտելոյ թէ՝ առ ինչ կոչեն (զիս) ի Սինոդս»։ Հապա ինչպէս հակասելով և զրպարտելով գրում է նոյն Սինոդը և նոյն օրագրում. «Ապա հրամայեցաւ անդամոց վանքական կառավարութեան առաքել զԲարդուղիմէոս վարդապետն ի տեղի ապաշխարութեան, բայց նա կրկին անսասանեալ հրամանի Իշխանութեան՝ խոյս տուեալ է ի սենեկէ իւրմէ նախ ի բնակութիւն Կիւրեղ վարդապետի և ապա առ Երեմիա եպիսկոպոսն» *)։—Այս չափով ստոյգ կը լինի և՛ «ջանացեալ է ապտակել զսուրհանդակս». երբ ես յանձնառի կամաւ երթալ՝ այլ էս ինչ հարկ կը մնար ջանալ ապտակել, և որ մէկին, երեսնի չափ պատրաստած և հրահանգած մարդիկ ունէին ինձ տանջող և կապող՝ ի յագումն վրէժխնդրութեան գող և կաշառակեր ոմանց Անդամոց Սինոդի և Վահրամ եպիսկոպոսի Մանկունեաց...

«Վերջապէս ինձ համար գրում են. «ըմբոստ, զրգռիչ, յոխորտացեալ ի վերայ Անդամոց Սինոդի (իմ տուած յայտարարութիւնները կամին ասել), որով և Նորին Վեհափառութեան ուշադրութիւնը ի վաղուց անտի դարձրած իմ վերայ»։—Եթէ այս մեղադրանաց խօսքերն իրաւացի լինէին, մոռանում են որ մեր Ծայրագոյն Հոգևոր Իշխանութիւնը—Վեհափառ Կաթուղիկոսը ինձ վարդապետ ձեռնադրել տալուց 6 ամիս յետոյ՝ ուղարկեց ի Դամբէժ ուսուցիչ 1877 թուին, մի տարի չանցած՝ հրամայեց տալ ինձ վարդապետական զաւազանի իշխանութիւն և նշանակեց Առաջնորդութեան Փոխանորդ Թեմին

*) Ես և ուրիշներ—Հոգևորականը և աշխարհականը 6—7 մարդ եղել ենք Կիւրեղ վարդապետի սենեկումն Երեկոյեան 5-րդ ժամին թէյի ժամանակ, երբ դեռ էս ոչինչ յայտնի չկար. դրանից 1—1½ ժամ յետոյ եկել կոչել են ինձ Սինոդ՝ Բառնաբաս վարդապետի սենեկից։ Այսպէս, մի սուտ ծածկելու համար՝ մի բանի սուտ են պէտք. Սինոդն այդ խայտառակ գրութեան մէջ է...

Ատրպատականի, ուր ընդ նմին վարում էի և՛ ուսումնարանի Տեսչի և ուսուցչի պաշտոններ։ Փոխանորդութեանս վերջին օրերում, ի նշան գոհունակութեան՝ Նորին Վեհափառութիւնը 1879 թուին պարգևեց ինձ լանջական ոսկեայ խաչ՝ տարիներով առաջ նախապատուելով զիս իմ հետ ձեռնադրուող բոլոր հինգ վարդապետներից այլ և առաջ ձեռնադրուող շատերից, և ապա իմ խնդրանաց համաձայն Էջմիածին վերադառնալուցս յետոյ երկու անգամ առաջարկեց ինձ գնալ Ագուլիս վանահայր և ուսուցիչ, նոյնպէս և Փոխանորդ Նուխուայ։ Վերոյգրեալ Ճշմարտութիւնները ընդհակառակն անհերքելի ապացոյցներ են՝ որ մինչև անցեալ Հոկտեմբերի 13-ն Վեհափառ Կաթուղիկոսը լաւագոյն գաղափարն ունէր իմ վերայ։ Ո՞չ ապաքէն Ս. Աթոռոյ օգուտն և մեր ընդհանուր Հոգևորականութեան ընկած պատիւը պաշտպանել ցանկանալով՝ բողոքով յայտնելս Հոգևոր Իշխանութեանը Սինոդի անդամ Ներսէս և Դրիգոր եպիսկոպոսների գողութիւնները և Սիմոնական կաշառակերութիւնները՝ անուանել առուեց ինձ «ըմբոստ, գրգռիչ, յոխորտացեալ ի վերայ Անդամոց»...։ Արդարութիւն և իրաւունք կը համարուէր՝ երբ իմ տուած յայտարարութիւնները քննելուց յետոյ եթէ զրպարտիչ յայտնուէի՝ ենթարկէին ինձ օրինաւոր պատժոյ։ Իշխանութիւնը յանձնուած է իրաւունք և Ճշմարտութիւն պաշտպանելու համար, և ոչ թէ անձնական շահուց և կրից զէնք դարձնելու, որին և անպաշտպան զոհ գնացի։

«Ընթերցող, իմ կեանքը սպառնացող վտանգից ազատելու համար պ. Դաւառապետին յայտնելս պատժոյ պատրուակ բռնելով՝ տանջանքով և անպատուութեամբ աքսորեցին ինձ ի Խորվիրապ. սորանով ևս չբաւականանալով՝ 8 օրից յետոյ վերոյգրեալ սնոտի բարուրանքները բարդելով իմ վերայ՝ հրամայեցին Խորվիրապայ վանահայր Պօղոս վարդապետին բառնալ իմ վեղարը, փիլոնը և խաչը։ Ես ամենայն հնազանդութեամբ յանձնելով վեղարս՝ ասացի. «Թէպէտ ես յանցաւոր չեմ, բայց ամենայն խոնարհութեամբ յարգելով իմ Հոգևոր Իշխանութեան հրամանը՝ յանձնում եմ ահա վեղարս. իսկ փիլոնը, խաչը և կոնդակը գտանվում են իմ կնքած սենեկումը, բացուելու ժամանակ կը յանձնեմ»։ Այսպէս և ի 4-ն ամսոյս Սինոդին գրած յայտարարութեանս մէջ գրած էի, բայց չնայելով և՛ այս յայտարարութեանց՝ բացել են իմ կնքեալ սենեակը, որոց համար յայտարարութեամբ յայտնեցի Նորին Վեհափառութեանը» (Մասիս թիւ 3070, 3071 և 3072. Դեկտ. 1881 ամի)։

Բարդուղիմէոս վարդապետ Դէորգեան։

Ապա գրում եմ Մշակին և Պստկին հետևեալ նամակը։

Նամակ Խորվիրապից.

7-ն Դեկտեմբերի 1881 ամի.

«Էջմիածնի Արարատ ամսագրի Հոկտ. տետրակի 587 — 588 երեսներում՝ Սինոդի օրագրութեանց քաղուածների մէջ ընթերցողը տեսնում է թէ ինչպիսի բարուրանքներով դատապարտում են ինձ և վեղարս, փիլոն և խաչս վերցնում։ Այդ բոլորն ամենացած զրպարտութիւններ են, որ վրէժխնդրութեամբ և առանց խղճահարուելու դնում են իմ վերայ, մանաւանդ այդ այն ժամանակ՝ երբ ես Հոգևոր Իշխանութեանը—Վեհափառ Կաթուղիկոսին, Սինոդին և Սինոդի Պրոկուրորին տուած յայտարարութիւններովս դուրս եմ գալիս դատապարտեալ նոյն իսկ Սինոդի անդամ Դրիգոր և Ներսէս եպիսկոպոսների գողութեանց և կաշառակերութեանց համար։ Ինձ դատապարտում են և աքսորում տարապարտուց, իսկ Էջմիածինը և Եկեղեցին սրբապղծող գողերի և Սիմոնականների ընկերութիւնը մնում է անպատիժ և անուշադիր՝ ինչպէս և առաջ։ Հետևութիւնը պարզ չէ...։ Այդ զրպարտութեանց մէջ գլխաւոր տեղն է բռնում—«Նշանաւոր անձինք հայկազունք 'ի Դաւրիժոյ բողոք բարձեալ առ Վեհափառ Հայրապետն ազգիս ամբաստանեցին զԲարդուղիմէոս վարդապետէ յաղագս անբարոյական գնացից նորա։ Եւ առ ի խաղաղել զյուզմունս Պարսկահայ մերազնեայց՝ բարեհաճեցաւ Նորին Վեհափառութիւնն հրամայել Անդրէաս Արքեպիսկոպոսին կոչել զնա 'ի Ս. Էջմիածին»։

«Ես 1877—1879 թուերում Դավրիժում կատարելով ուսուցչի պաշտօն, իսկ վերջին տարին Անդրէաս արքեպիսկոպոսի բացակայութեան ժամանակ վարում էի և Տեսչի և Ատրպատականի Առաջնորդի Փոխանորդութեան պաշտոններ։ Փոխանորդութիւնից հրաժարուած եմ և կոչուած Էջմիածին իմ խնդրանաց համաձայն՝ հիւանդութեան պատճառաւ, եղած գրագրութիւններն և մի հեռագիր ապացոյցներ են. իսկ Դավրիժեցոց ամբաստանութեան համար՝ այս առաջին անգամն է որ լսում եմ և այն՝ Արարատի միջոցաւ։

«Ուստի հրապարակաւ խնդրում եմ Դավրիժեցի «նշանաւոր» և առհասարակ պատուելի ժողովուրդներին՝ որ, եթէ չիրաւի ինձնից բողոք—ամբաստանութիւն ունին տուած կամ ոչ՝ բարեհաճին ստորագրութեամբ մի քանի անձանց յայտնել լրագիրների միջոցաւ. նոյնպէս՝

թէ կամ որ և է յուզմունք իմ պատճառաւ. որպէս զի յայտնուի ճշմարտութիւնը» (Պսակ 1882 թ. № 5. տես և Մասիս 1882 Մարտ 9, թիւ 3132) 1)։

Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեան։

«Մեղուն», որ այնքան վատութեամբ վարուեց առ հասարակ և մանաւանդ այս գործում, առանց ամաչելու հրատարակեց Ախալցխայի Յ. Գեղամեանցի նամակը՝ Վաղարշապատից գրած։ Այս պարոնը շտապել էր Էջմիածին. ինչու օգուտ չքաղել դէպքից։ Նա երեսը պնդացնելով փորձեց արդարացնել Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսներին,—ինչպէս ոչ շատ առաջ փորձել էր Մշակում՝ Նորայրը,—իսկ սորանք խոստանում էին Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցու կալուածք գիւղերը էժան գնով տալ.—«Պարոն հրապարակախօս Յ. Գեղամեանցի անզուգական ազնուութեամբը խրատուել — Ախալցխայի եկեղեցապատկան գիւղերն արժան կապալաւ վերցնելու գնով՝ գրիչ վաճառել—գողերին արդարացնել՝ իր գրպանը շահել...» (Պսակ 1882 թ. № 1։ Տես նոյն №-ում և՝ «Մեզ հաղորդում են Տփխիսից» լուրը)։

Յ. Գեղամեանցի յիշեալ նամակի առթիւ գրեցի հետևեալը.—

Նամակ Խորվիրապից.

30 Դեկտեմբերի 1881 ամի.

«Մեղու Հայաստանի» լրագրում № 268 այսօր կարդացի «Յ. Գեղամեանց» ստորագրութեամբ մի նամակ Վաղարշապատից գրուած։ Պարոնը գրել է այն՝ ինչ որ նորան ասել թելադրել են...

«Ես աւելորդ համարելով պատասխանել նորան՝ որ յանձն է առել ստել յայտնուած ճշմարտութիւնը—«Պսակի» № 34-ի մերկացումը քանքանի մաքրել տալու կանտրակտով 1,000 ռուբլոյ գողութեան մասին, և հաւատացնել ընթերցողներին՝ թէ Գրիգոր եպիսկոպոսը չէ «գող և խարդախ», առաջարկում եմ.—Եթէ Յ. Գեղամեանցը կամենում է ստուգել՝ որ այն լուրը հաստատ իրողութիւն է ինչպէս 2×2=4, թող ստանայ դօվերէննոստ (հաւատարմագիր) յիշեալ եպիսկոպոսներից և դատարանի առաջ պահանջէ. լուրի հաղորդողը պատրաստ է ապացուցանել բացի այն 1,000 ռուբլին, այլ և ուրիշ շատ հազարներ՝ թէ գողացած և՝ թէ կաշառք ստացած» (Պսակ 1882 թ. № 4։ Տես և №, № 1, 6, 7)։

Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեան։

Այս իմ նամակի հրատարակուելուց յետոյ՝ վարձկան Մեղուն և իւր թղթակից-աշխատակիցը, որչափ և անամօթ, սանձահարուեցին։

Երբ Դավրիժեցոց ուղղած իմ նամակը (եր. 119—120) հրատարակւում է Մասիսում և Պսակում, ես ստանում եմ Դավրիժեցի մեծ. պ. Խաչատուր Տ. Զաքարեանցից նամակ։ Որովհետև չգիտեն թէ որ ստանցիայով կարող են նամակ ուղղել ինձ ի Խորվիրապ, ուղարկում են Երևան իրենց ծանօթ մի վաճառականի հասցէով, որը մարդով ուղարկում է Խորվիրապ և ստանում եմ։ Այդ ժամանակ ես գրում եմ Մշակի խմբագիր Գ. Արծրունուն հետևեալ նամակը, որից ընթերցողը պիտի տեսնէ և կամայ ակամայ համոզուէ Գ. Արծրունու աննեղելի տմարդութեան, և ոճրագործութեան հաւասար անբարեխղճութեան մասին։

«Մեծապատիւ խմբագիր Մշակի պ. Գ. Արծրունի,

«Անցեալ 1881 Յուլի Դեկտ. 7-ից ուղարկեցի (ապահովեալ) մի կարճ նամակ խմբագրութեանդ՝ հրատարակելու, որով դիմում էի Դավրիժեցիներին՝ որ նոքա հրապարակաւ յայտնէին թէ արդեօք ճշմարիտ էր Սրարատի մէջ գրուածը՝ թէ Դավրիժեցիք բողոքած լինէին ինձնից Վեհափառ Կաթուղիկոսին։ Երկար սպասեցի, երբ չբերեցին՝ նոյնը ուղարկեցի Մասիսին և Պսակին, որ և հրատարակեց. տես Պսակ 1882, № 5 (և Մասիս № 3132)։

«Բայց նախքան յիշեալ նամակիս հրատարակուելը՝ Դավրիժեցիք, առհասարակ գտնուած Եւրոպայի անձինք, հէնց Սրարատի առթիւ գրել են անցած տարի Դեկտ. 22-ին մի հերքումն Սինոդի զրպարտութեան դէմ, և ուղարկել են Մշակին՝ հրատարակելու, ինչ-

Ծան. 1) Այս նամակը ևս «Մշակը» չի տպում, իսկ «Պսակը» ընդհատում է մինչև յաջորդ 1882 թ. Մարտ ամիսը։ «Մշակին» շատ սպասելուց յետոյ՝ 1882 թ. Փետրվարի վերջին օրերում ուղարկում եմ նոյնը և՝ Մասիսին։ Բայց Մասիս իմ ձեռքը չէր հասնում, և միայն ա'յժմ է (1903 թ.), որ թերթելով էջմիածնի մատենադարանի ունեցած տարեկան կազմածները, ուրախութեամբ գտայ հրատարակուած իմ բոլոր նամակները։

պէս ահա «Նշանաւոր» Դաւրիժեցիներից մին նամակով ինձ գրում է—«Նախ քան «Մասիսի» մէջ Ձեր նամակի հրատարակուելը, արդէն Դաւրիժու երևելի անձինք Դեկտեմբեր 22-էն մէկ օրինաւոր և կարգին յօդուած գրած են Մշակին հերքելով սուրբ Էջմիածնի Արարատ ամսագրի, Հոկտ. ամսոյ, մէջ հրատարակուած Սինոդի արձանագրութեան դէմ. յօդուածը շատ յարմարաւոր և ուղիղ և ճշմարիտ գրուած է։ Մեր յօդուածներն Մշակի խմբագրութիւնն ստացած է, բայց անուղղակի կերպով պատասխան ստացայ՝ որ Մշակի խմբագրութիւնը առ ժամանակ այնպիսի յօդուածներ չպիտի հրատարակէ*), վասնորոյ կրկին գրեցինք խմբագրութեան, որ եթէ իւրեանք չպիտի հրատարակեն, ուղարկեն Պօլիս Մասիս լրագրին՝ որ անդ հրատարակվի՝ մինչև ցարդ դեռ պատասխան չունինք Մշակի խմբագրութեան կողմից արդեօք իւրեանք կը հրատարակեն՝ թէ Պօլիս կ'ուղարկեն։ Մեք—Դաւրիժեցիք մեր պարտաւորութիւնը կատարած եմք, պահպանելով ճշմարտութիւնը ընդդէմ զրպարտութեանց։ Ցաւալի երևոյթիւն է մեր ամենի համար որ մեր սուրբ Աթոռը և Էջմիածնական վարչութիւնը՝ գործերից օրինաւոր տեղեկութիւն չգրած մեկողմանի դատում է և զրպարտում է արդարութիւնը։ Այդպիսի գործողութիւնն միայն բռնութիւն կարելի է համարել, և բռնութեան առաջ մեք անզօր եմք. ողջ լերուք։ Թաւրիզ, 13 Ապրիլի 1882 ամի։

Խ. Ծառայ Խաչատուր Տէր Զաքարեանց»։

«Արդ, պարոն Գր. Արծրունի, գիտէք թէ Դաւրիժեցոց այդ հերքումը (Ձեզ ուղարկուած), երբև հաստատ մի գոկումէնտ, ինչ ահագին նշանակութիւն պիտի ունենար և ունի իմ անմեղութեան համար. իսկ Դուք այսքան ամիսներ պահելով և չհրատարակելով՝ ճշմարտութեան առաջ ստութիւններով և անվայել զրպարտութիւններով զինուող բռնաւորներին օգնում էք, փոխանակ հարուածելու և անինանց հարուածելու։ Այդ չէր և պիտի չլինի ազատ լրագրի կոչումը, Դուք ոչ Սիմէոնեանց էք և ոչ վարձուած է Ձեր լրագիրը։

«Ցուսամ թէ կը զիջանիք և կը լսէք այժմ իմ աղաչանքը, այն է՝ կամ շուտով կը հրատարակէք Մշակի մէջ, կամ կ'ուղակէք Կ. Պոլիս Մասիսին՝ Դաւրիժեցոց խնդրանաց համաձայն»։ Ապրիլ. 1882 ամի, Խորվիրապ։

Բարդուղիմէոս վարդապետ Դէորգեան։

*) Եթադրում եմ՝ որ Խ. Տէր Զաքարեանցին «անուղղակի» պատասխանողը եթէ Բաֆֆին չէր, նորա ազգական և բարեկամ պ. Ազէք. Մէլիք-Ազարեանցը պիտի լինէր, ուրեմն և՝ նորան յայտնի։

Ահա և Դաւրիժեցոց գրած վառաւոր հերքման՝ ինձ ուղարկած հարազատ պատճէնը, որոյ իսկականը Գր. Արծրունին ոչ միայն չը հրատարակեց, ոչ միայն չ'ուղարկեց գոնէ Մասիսին, այլ և Դաւրիժեցոց (և ինձ) երկար սպասեցնելուց յետոյ գոնէ չվերադարձրեց նոցա. տմարդութեամբ ծածկեց։

«Պատճէն Մշակ լրագրին ուղարկուած յօդուածի.—

Դաւրէժ, 22 Դեկտ. 1881 ամի.

«Յարգոյ խմբագիր «Մշակ» պատուական լրագրի.

«Արարատ ամսագրի Հոկտ. 31-ի տետրակի մէջ Սինոդի օրագրութեանց շարքում զարմանքով կարդացինք Բարդուղիմէոս վարդապետի ամբաստանութեան մէջ հետևեալը. «Նշանաւոր անձինք Հայկազունք 'ի Դաւրիժոյ բողոք բարձեալ առ Վեհափառ Հայրապետն Ազգիս ամբաստանեցին զԲարդուղիմէոս վարդապետէ յաղագս անբարոյական գնացից նորա, և այլն... և առ ի խաղաղել զյուզմունս Պարսկահայ մերազնեայց՝ բարեհաճեցաւ Նորին Վեհափառութիւնն հրամայել Անդրէաս Արքեպիսկոպոսի կոչել զնա այսր 'ի սուրբ Աթոռս»։

«Բարդուղիմէոս վարդապետի ամբաստանութեան այդ զօրաւոր կէտը, որ վերաբերում է մեզ—Դաւրիժու հասարակութեանս՝ ստիպուած եմք հերքել ամեն ճշմարտութեամբ։ Արժանապատիւ Բարդուղիմէոս վարդապետը, սկսած 1877 մինչև 1879 ամն՝ օրինաւորապէս կատարել է մեզ մօտ Դաւրիժում թէ մեր ազգային դպրոցի ուսուցչութեան թէ Տեսչութեան և թէ Առաջնորդի Փոխանորդութեան պաշտօնը։ Մեք Դաւրիժու Հայերս՝ 'ի նկատի առնելով Բարդուղիմէոս վարդապետի մեր հասարակութեան ցուցած ամեն զգալի ծառայութիւնները՝ պատրաստ եմք հրապարակօրէն յայտնել, որ մեր սրտերից բնաւ չի մոռացուել Նորա յիշատակը, որը թէ իւր տոկուն գործունէութեամբ, և թէ անբիծ և բարոյական վարքով նուիրուած էր իւր սուրբ պաշտօնին։ Դաւրիժու հայ հասարակութիւնը երախտագէտ դէպի ամեն հայազնի, որ ծառայում է Ազգի ընդհանուր շահերին՝ միշտ գոհ է եղել Արժանապատիւ Բարդուղիմէոս վարդապետից։ Մեք Հայերս կիսիսիագէինք որ այնպիսի ազգօգուտ գործողների թիւը օր աւուր վերայ աւելանար Ազգիս մէջ։ Մեք Դաւրիժեցիքս Բարդուղիմէոս վարդապետի վերաբերութեամբ այսքանս միայն կասեմք և ասում եմք հրապարակաւ այն, ինչ որ ճշմարիտն է։ Այլ թէ «Դաւրիժու նշանաւոր անձինք հայկազունք բողոք են բարձել առ Վեհափառը՝

Բարդուղիմէոս վարդապետի դէմ և այլն...», այդպիսի բան բնաւ չէ պատահած մեր քաղաքի մէջ, դորա ապացոյց եթէ մի այնպիսի բողոք եղած լինէր՝ ապա ինչո՞ւ նորա վերջին օրերի միջոցումն, երբ նա պէտք է հեռանար քաղաքից իւր հիւանդութեան պատճառաւ, Վեհափառը բարեհաճեցաւ շնորհել նորան մի լանջական ականակուռ խաչ, հանդերձ Հայրապետական կոնդակաւ 'ի նշան շնորհակալութեան։ Դուցէ ինչպէս ամեն տեղ, ամեն երկրում արժանաւորութիւնը հալածուած է, և ամեն տեղ կան գաղտնի խռովարարներ, դուցէ այդպիսիներից գաղտագողի մի բողոք կամ մի բան մեքենայած լինի առ Վեհափառն՝ իւրեանց ինչ ինչ կրքերը յագեցնելու համար, բայց մեք Դաւրիժու հասարակութիւն միաբերան դիմում եմք մեր Վեհափառ Հայրապետին որ բարեհաճի այդ բողոքը հրատարակել տալ որ և իցէ մի թերթի միջոցաւ, որպէս զի մեր երախտագիտութեան և պատուոյ զգացմունքը վիրաւորուած չմնայ մի այնպիսի անձնաւորութեան առաջ՝ որ շատ հանգամանքներում մեզ համար գտնուած է անձնուէր և վշտակից։ Ըստ որում ստորագրեմք. Ստորագրութիւնն եղած է իւրաքանչիւրի սեպհական ձեռագրով։

Արզուման Նազարբէկեանց	Հարօն Զարգարեանց
Աբրահամ Ց. Վարդանեանց	Միրզայ Անտոն Խան Երուանդեանց
Մահտեսի Սիմոն Թումանեանց	Եսկեար Ա. Մելիք Մինասեանց
Դանիէլ Շահպազեանց	Խաչատուր Տէր Զաքարեանց
Յովսէփ Տէր Յովհաննիսեանց	Աղաջան Ա. Ղարաբէկեանց
Սարգիս Բ. Ցունանեանց	Մկրտում Ա. Պատմագրեանց
Օհան Տէր Զաքարեանց	Ղազար Մելիք Բաբաջանեանց
Մարգար Հ. Նազարբէկեանց	Ասրի Միքայէլեանց
Ալէքսան Թայիրեանց	Դասպար Շահնազարեանց
Գրիգոր Բէջանեանց	

Տասն և ինն (19) ստորագրութիւնք։

ձեմարտութիւնը չի մեռնում։ Ահա առաջնակարգ «ընշանաւոր» Դավրիժեցոց տղամարդավարի հերքումը։ Եւ գիտէք ո՞ւմ են ապտակել և սևել. ընթերցողը տեսաւ՝ որ Մանկունու վեհարանն էր ինձ զրպարտողը Դավրիժեցոց անուամբ։

Ես մարդ եմ, և ինչ որ եմ՝ Աստուծոյ շնորհիւն եմ. սակայն առանց փարիսեցի լինելու՝ կը վստահանամ ասել Աւետարանի (Ղուկ. ԺԸ. 11) փարիսեցու խօսքը՝ Մանկունիների,

Դէմիրճեանների, Խուդավերդեանների, Տէր Մատթէոսեաններին, Բաբամեանցների, Սմբատեանցների, ապա Տեղապահ Մակարների, Սիմէոնեանցների, Տէր Գիւտերի և որա մեծ և փոքր «բարեկամ» Մաթուսեանցների, Կորիւնների և Տիրոյեանների. որոնք այնքան եռանդ են ցոյց տուել ինձ զրպարտելու կամ վաղուց հերքուած զրպարտութիւնը հրէնէլու։ Ես Դավրիժեցոց համար հայրուրբ էի և իմ երեխայրիք ոյժերը բոլորանուէր թափել եմ լաւագոյն գործի և նորանց օգտին։

Ընթերցողը տեսաւ բայարձակ գրաւոր փաստերը՝ թէ ես ինչպիսի՞ դժուարութեամբ կարողացել եմ հրաժարուել Ատրպատականի Առաջնորդութեան Փոխանորդութիւնից՝ և վերադառնալ ի ս. Էջմիածին (եր. 31—48)։ Տեսաւ՝ թէ Մանկունին և Էջմիածնի Սինոդականք ինչպէս լրբութեամբ զրպարտել են ինձ. այլ և հասկացաւ՝ որ Սինոդականների և Կաթուղիկոսի մերձաւորների գողութիւն և կաշառակերութիւնները մերկացնել և դատի հրաւիրելս էր իմ մի՞ յանցանքը։ Տեսաւ ահա, վերջապէս, թէ Դավրիժեցիք իրենց հերքումով ինչպէս ապտակեցին և սևեցին զրպարտիչ դատողներիս երեսները։

Թերևս դ-ոյն Ստ. եպիսկոպոս Մխիթարեանի Առաջնորդութեան օրով ինձ կարօտացած չլինին Դավրիժեցիք՝ 9—10 Առաջնորդ և Տեղապահներ փոխելով։ — 1893 թ. Մայիսին Ատրպատականի բոլոր հայաբնակ գաւառներից պատգամաւորներ ժողովուելով Դավրիժում՝ ընտրեցին իրենց վիճակի Առաջնորդ գեր. Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանցին, Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանին և Բարդուղիմէոս վարդապետին։ Ապա լսուելով ներկայ Վեհափառ Կաթուղիկոսի հաստատուիլը՝ Օծման ժամանակ Սեպտեմբերին Դավրէժից երկու պատգամաւորներ—Նազար Էֆենդի Փօրոյեանց և Յովակիմ Ֆէնէրճեան (սոցա հետ էր և տեղւոյն երկսեռ դպրոցաց Տեսուչ Աբեղնագով Ալէքսանեան) բերին ներկայացրին յիշեալ ընտ-

րութեան թուղթը։ Վեհափառ Կաթուղիկոսը և յիշեալ պատգամաւորները խօսեցին ինձ և իմացան՝ որ ես դատ ունիմ և չեմ հեռանայ Էջմիածնից, մինչև որ իմ պատուոյ դատը չտեսնուի։ Աղուանեանցը հաստատուեց Առաջնորդ և ճանապարհին մեռաւ։ Նշանակուեց Սուք. եպիսկոպոս Պարզեանցը՝ սա մի տարուց յետոյ հեռացաւ։ Դավրիժեցիք և Վեհափառ Կաթուղիկոսը դարձեալ ինձ ցանկացան լինել Ատրպատականի Առաջնորդ, Թումանեանց Մեծապատիւ Վարդանը իւր վերայ էր առնում իմ տարեկան ծախսերը, բայց ես չհամաձայնեցի. Տեղապահ նշանակուեց Սարաճեան Յ. վարդապետը։ Սորա հեռանալուց առաջ և յետոյ Դավրիժեցիք դարձեալ խնդրեցին ինձ Առաջնորդ, Վեհափառը քանի՛ քանի անգամ ինձ կոչեց առաջարկեց, բայց ես միշտ հրաժարուեցի՝ ի հարկէ իմ խնդրած դատից չհրաժարուելով։ 1901 թ. Դավրիժում Առաջնորդական ընտրութիւն կատարել տուին յայտնի ղաչաղներով և նպատակներով. Սեդրակեանը ընտրուեց և հրաժարուեց։ Երկրորդ ընտրութեան արդիւնքը եղաւ միայն խռովութիւններ և բողոքներ. Առաջնորդ կարգուեց Եղիշէ վարդապետ Մուրադեանը։ Սակայն այն էլ յայտնի է՝ որ եթէ Դավրիժեցիք իմանային թէ ես գոնէ այդ անգամ կը համամաձայնէի, և՝ թէ ինձ չտեսնող ոչ-ընիկները սպառնալիքներով չբռնանային նոցա, ոչ Սեդրակեանին կընտրէին միաձայն, և ոչ Մուրադեան կը նշանակուէր։ Ես ինձ մօտ յատուկ եկած խնդրողների յոյսը կտրեցի. այլ և այդ ժանանակ Վեհարանից եղած առաջարկութեանը չհամաձայնեցի։ Այս կէտի վերայ այսքան երկարելուց յետոյ, բերեմ քաղուած ինձ գրած երկու նամակներից.—

«Մի քանի օր առաջ սրբազան Սարաճեանի հետ Ատրպատականի Առաջնորդութեան մասին խօսակցած ատեննիս, այդ թեմին համար ամենաարժանաւոր Առաջնորդացուն գտանք զՁեր Դերասպատուութիւնը։ Սրբազան Սարաճեանը ըսաւ թէ՝ արդէն Թաւրիզեցիները զինքը շատ կը սիրեն... ի՞նչ սար ու ձոր ինկած Ատրպատականի Առաջնորդացու կը փնտռեն։ Այդ խօսակցութիւնից օր մը յետոյ Մշակը ձեռքս

անցաւ, որի մէջ կարդացի Ձեր և ուրիշների եպիսկոպոս ձեռնադրուելը...»։ 21 Յունիս 1901. յառաջնորդարան Հայոց Ամերիկայի, Յուստր։ Արսէն Վ. Ե. Վեհունի։

«Անշուշտ լսած կը լինիք, որ վերջերս կոնդակ էր տրուած իմ և Թաւրիզում գոյութիւն չունեցող առաջնորդական Խորհրդի անունով, որպէս զի ձեռնարկուէր առաջնորդական ընտրութեան։ Թերևս լսած լինիք և այն, որ ես յայտնել եմ նախ առաջնորդական Խորհուրդ կոչուած մարմնի գոյութիւն չունենալն այստեղ և երկրորդ՝ ընտրութիւն կատարելու անկարելիութիւնը։

«Համաձայն իմ խոնարհ համոզման, որ վաղուց ի վեր ունիմ այստեղի առաջնորդութեան և Ձեր անձնասրութեան նկատմամբ, կոչմնակի կերպով տեղեկացրել եմ Նորին Վեհափառութեան, որ թեմիս համար յարմարագոյն Առաջնորդը Բարդուղիմէոս Սրբազանն է...։ Չգիտեմ արդեօք Ձերդ Սրբազնութեան հաճելի՞ է իմ այս վարմունքը թէ ոչ...։ Ըստ երևութին այնպէս է թուում, որ ընտրութիւնը պատուաբեր է ընտրելու համար, բայց այստեղ ընտրութիւնը ծառայում է ՚յանուն ժողովրդի՝ ժողովրդի ձայնը խեղդելու։ Ես շատ շատերի հետ խօսել եմ և տեսնում եմ, որ շատերին ցանկալի է Ձեր Առաջնորդութիւնը. բայց... ոչ ոք չի ցանկանում ընտրութեան, բացի մէկ կամ երկու օտարերկրացի ինտելիգենտներից, որոնք...։ Թէ հիմայ ինչ կը պատասխանէք, եթէ Ձեզ առաջարկելու լինին, չգիտեմ։ Ես տեղեկացրի Ձեզ այստեղի վերաբերմունքը...»։ 1904 Ապրիլի 5. Թաւրիզ։ Մնամ... Մեսրոպ վարդապետ Մաքսուդեան։

Վերջապէս, 1905 թ. Փետրվար 27-ին Ատրպատականի պատգամաւորական ժողովը Դավրիժում, նախագահութեամբ Վեհափառ Կաթուղիկոսից յատուկ ուղարկուած՝ իմ ՝ոոոծ Մատթէոս վարդապետի, միաձայն ընտրեց զիս Առաջնորդ Ատրպատականի. խորտակելով դրսից լարուած մեքենայութիւնները և թելադրութիւնները Հ. Ա. և ընկերների. սառը ջուր թափելով գլուխներին։ Հաստատուեցի Առաջնորդ Ատրպատականի, բոլոր պատշաճաւոր թղթերը և կոնդակները ստացայ. ապա շատ իրաւացի և արդարութեամբ պատճառաբանուած Էջիրոդ խնդրագրով ի 29 Ապրիլի 1905 ամի խնդրեցի՝ որ Վեհափառը ինչ գոնէ Լոյլոդրէ բանալ իմ ուրբաղն դոդը։ Պատասխանեց. «Ոչ Մեք սկսանիմք զդատն ձեր, և՝ ոչ յեղ դամ իրա-

—ոնս «կոանել չէջէն» (կոնդակ № 388, լ 2 Մայիսի 1905 ամի)։ Այդքան թեթև և օրինական խնդիրս էլ զլացուելուց յետոյ, չ'գնացի Դավրէժ։ Կոնդակով, № 406, նշանակուեց նոր ընտրութիւն *)։ Գնացին կեղծ հեռագիրներ, մին՝ «ընկերներ» ստորագրութեամբ, երկրորդը՝ «Առաջնորդ» ստորագրութեամբ։ Ապա Մատթէոս վարդապետը նամակ գրեց Թեմ. Խորհրդի Ատենապետին. որոնցով խորհուրդ էին տալիս՝ ընտրել Կորիւն վարդապետին։ «Ընտրութիւնից յետոյ՝ եպիսկոպոսոյնելը ապահովուած է» գրում էին։ Ատրպատականի ժողովուրդը՝ արհամարեց և անպատասխան թողեց այդ ամենը. միայն նկատեց. «Այստեղ— Ատրպատականում մտածում են օր առաջ Առաջնորդ ունենալ թեմի հազար ու մի ցաւերին դարման անելու, այնտեղ մտածում են օգտուել Ատրպատականի ներկայ դրութիւնից՝ եպիսկոպոսական աստիճան ձեռք բերելու համար»։ Տես այն ժամանակ Դավրիժում հրատարակուող «Ազդարար» շաբաթաթերթ, 1905 թ. № 31. էջ 1 և 4։

Ահա ես և Դավրիժեցիք՝ մի կողմում, իսկ ինձ զրպարտող Մանկունու Վեհարանը և գող ու կաշառակեր Սինոդականք և սոցա փսխածը ծամող-ուրոճացողը Պ. Սիմէոնեանցը **), տ. Գիւտերը և Տիրոյեանները—միւս կողմում. երկու կողմն էլ այսօր հասարակութեան դատաստանի առաջ։

*) Թէ՝ այս էլ թէ մանաւանդ ինձ գրած (№ 388) կոնդակներում չկայ մի խօսք՝ որ սուտ, սխալ և կամայական չ'լինի. մի քանիներին բացատրել եմ։ Հեռաբերբերուներին դարձեալ կը բացատրեմ։ Երբ Մատ. վարդապետին արձակեցին Սինոդի անդամութիւնից, նա մեզը դնելով «կամարելլայի» վերայ, յայտարարեց (Մշակում) թէ Կաթուղիկոսական դրութիւններում՝ usnrագրութիւնն է միայն սեպհական։ Ո՞վ հերքեց։ Մատ. վարդապետն էլ «կամարելլայի» շարքումն էր ոչ շատ առաջ, ինքն էլ անում էր նոյնը. մտիկից դիտէ ինչ է կատարւում այնտեղ։ Պէտք է «զատասխանատու» Դիւան կազմ՝ լ...

**) Տես «Մեղու Հայաստանի» 1881 № 230, առաջնորդողը։ Սորա մասին Պետրոս Սիմէոնեանցի մեղքը թեթևացնելու համար՝ Ռշ. Նահապետեանցը ասաց ինձ. «Էջմիածնից գրել են, նա էլ տպել է»։—«Եթէ տպէր Էջմիածնից գրողի ստորագրութեամբ, կամ գոնէ անստորագիր նամակ—մեղք չունէր. սակայն նա՝ շինել է խմբ. առաջնորդող, իւ'ր կողմից է գրում. ահա՝ ո՛րն է վարձկան խմբագրի մեղքը...

Երկար սպասում եմ թէ Գր. Արծրունին վերջապէս կը հրատարակէ Դավրիժեցոց այդ հերքումը, կամ կ'ուղարկէ Մասիսին, կամ գոնէ կը վերադարձնէ նոցա. բայց ի զուր։ Նա, այդ տմարդին, գաղեց այն հերքումը, իմ անմեղութեան՝ իսկ զրպարտող դատողներիս անարդարութեան՝ վկայական գոկումէնտը. նպաստեց արատաւորելու ճշմարտութեան զինուորի անմեղութիւնը. ցանկացաւ մեռցնել ճշմարտութիւնը։ Տեսանք թէ նա ինչպէս դարձաւ ոճրագործ, իմ այնքան մաքուր և անձնուէր գործում, ձեռք մեկնեց չարագործներին՝ այդ, ի հարկէ, մեծագոյն չարագործը։ Թող ինչ ուզում են գրած լինեն կամ գրեն Գր. Արծրունու մասին՝ հին ու նոր «պնակալէզները» և նորա «որբերը». սակայն, de facto, նա մի ընդունակ և ճարպիկ,—ինչպէս առհասարակ լինում են Վանեցիք,—դժբախտաբար և ուսեալ եւրոպականացած մի մեծ «բիզնէս» էր։ Նորա մէջ մեռած էր խիղճը, առաքինին, բարոյականը. բացարձակ անազնիւ մարդ էր, իւր կրքերի ստրուկը-գերին։ Իսկ այն՝ որ նա գեներալի որդի, հարուստի որդի էր,— Հ. Առաքելեանի և նմանների յաճախ կրկնած,— այդպիսի առաւելութիւնների վերայ՝ թքում էր հէնց ի՛նքը Արծրունին։ Անհատական ընդունակութեանց եթէ չի ընկերանում ազնիւը, առաքինին—յատակում մնում է անբարոյականը։

Այդ իմ սպասողութեան և ծայրայեղ թշուառութեան ժամանակ, Յունիս-Յուլիս ամսում ստոյգ տեղեկութիւն եմ ստացել, մարնում՝ որ Կաթուղիկոսը շատ ծանր կաթուած է ստացել, մարմնի մի կողմը թուլացել է. Նորա կեանքը օրեր կամ շաբաթներ պիտի տևէր։ Ես տխրեցի. բաւական չէր այնքան զրկանքներով և վշտերով լի վիճակս, այլ ևս երազել իսկ չէի կարող թէ կարող կը լինիմ իմ յարուցած դատը վերսկսել կամ գոնէ Խորվիրապից ազատուել, քանի որ Կաթուղիկոսից յետոյ բացարձակ իշխանութիւն մնում էր Սինոդը, իսկ Սինոդում բացարձակ ոյժ էին իմ մեղադրած Գրիգոր և Ներսէս եպիսկոպոսները. մինչ միւս անդամները,—Մկրտիչ, Մեսրոպը և Երեմիա

եպիսկոպոսները, —անտարբեր, անընդունակ, անգոյն, և ծանր կողմը բռնող մարդիկ էին, մանաւանդ թէ երկու առաջինները՝ նոյնպէս արտաքոյ մարդիկ էին *)։ Բարեկամ մարդիկ, ինչպէս բժիշկ Գ. Տէր Գրիգորեանց, Կարապետ վարժապետ և այլք շտապում են ինձ խորհուրդ տալ, Վահրամ եպիսկոպոսի հետ խօսելուց յետոյ, որ օր առաջ մինչ Կաթուղիկոսը շնչում է Խորվիրապից ազատուելու համար «մի ԼԷԼԼԼ» մեղայական տամ Նորան, գրում են ինձ մինչև անգամ մեղայականի ձևեր։ «Ձեզ հարկաւոր է այժմէն ազատուել, գրում է մեր օծակից Յուսիկ վարդապետը, որ բազմագլխեան վիշապի-անիշխանութեան ժամանակին նշաւակ չլինիք անբարեմիտ մարդկանց ձեռքին»։ Սորան պատասխանում եմ. «Գալով այն կէտին՝ որով եզերում էք Ձեր նամակը։—Սկսելի ընկեր, ցաւում էք իմ վիճակի դառնութեան վերայ և շտապում էք անիշխանութեան ժամանակից առաջ ազատուած տեսնել ինձ. իբրև միակ միջոց՝ առ օջարկում էք ինձ ստորագրել «վէճ զլրման և քար գայթակղութեան» թուղթ։ Ո՜հ, այդ որչափ դժուար է. մեթէ դուք չգիտէք որ իմ վերայ բարդած կեղտերը գլխովին զրպարտութիւններ են։ Բայց եթէ այլ կերպ յոյս չկայ վրկութեան, կը թողնենք ողորմած Աստուծոյ տնօրէնութեանը՝ Որում ամեն ինչ հնարաւոր է։—Դավրիժեցոց եղածչեղած նշանաւոր մարդոց ստորագրութեամբ հերքման պատճէնը ահա խսկութեամբ արտագրում եմ, կարդացէք. եթէ ես այս դրութեան մէջ կը մեկնիմ աշխարհից՝ թերևս ձեզ կը հարկաւորի մի օր։ Ցոդուածը (հերքումը) գրուած է ի 22 Դեկտ. 1881 ամի, հէնց «Արարատի» առթիւ՝ նախ քան իմ յոգուածի լոյս տեսնելը. տես «Պսակ» № 5, 27 Մարտի։ Իմ յոգուածի հրատարակուելուց յետոյ, Ապրիլի վերջին ուղարկած են ինձ սոյն պատճէնը՝ ցաւ և տրտունջ յայտնելով Մշակի անբարեխղճութեան համար»։ 25 Հոկտ. 1882 ամի, ի Խորվիրապ։

*) Իմ աքսորից յետոյ Կաթուղիկոսը 1882 թ. Յունվարից վերսում է վանական կառավարութեան կազմը. նախանդամ է նշանակում Մեսր. եպ. Սմբատեանցին։ Սա այդ ամառն խաղողի սեզոնում Վեհարանի համար Բիւրական ուղարկած օրական 1—2 լիտր խաղողի փոխն առքի ծախս՝ ցոյց է տալիս 400 ռուբլի։ Աւելի աւաղակ քան Գրիգոր եպիսկոպոսը։ Այդպէս, որովհետև խրախուսում են գողերը։

Մերժում եմ բոլորին։

«Մեղայական տամ. ուրեմն ասէ՞մ ԼԷ Վահրամ, Նէրսէս և Գրիգոր եպիսկոպոսները ո՛չ գող են և ոչ կաշառակիր...»*)։

Կաթուղիկոսի անուան դրեցի հետևեալ խնդիրը.—

«Նորին Վեհափառութեան...

«Դառնութեան բաժակին մինչ ցվերջին մրուրն ըմպել չափեաց ինձ Բարձրեալն. նմա փառք յաւէտ։ Ապաքէն և յունկն Վեհափառութեան Ձերում հասեալ ետեն ընտանեաց մերոց պատահեալ սոսկալի չարադէպք, սպանումն ի Ճանապարհի եղբօր հարազատի իմոյ և յուսահատ մահ որդեկորոյս հօրս։ Վիշտս յընտանեկան թշուառութեանց և վիշտս ոչ նուազ քան զայս՝ ի նենգաւոր և ի չարայոյզ եղբարց աստի։ Վտանգեալ է առողջութիւն իմ, զի առաւել քան զայս տանել՝ ի վեր էր քան զկարս հոգւոյ և մարմնոյ։ Եւ արդ, Վեհափառ Տէր, զգթութիւն հայցեմ, խնդրելով ազատել զիս յարգելանաց և յանընմբռնելի վիճակէս, կոչել զիս ի սուրբ Էջմիածին, կամ թոյլատրել ինձ գնալ ի տուն մեր՝ արտասուօք մխիթարիլ ընդ սգաւոր մօր իմում, և միանգամայն ի խնամս բժշկաց առողջութիւն գտանիլ»։ Ի 22 Օգոստ. 1882 ամի, ի Խորվիրապ։

Այս խնդրագիրս Բիւրականում ստանում է Վահրամ եպիսկոպոսը բժ. Տէր Գրիգորեանցի և Կ. վարժապետի ձեռքով, բայց առանց Վեհափառին ցոյց տալու՝ պատասխանում է նոցա. «Ի՞նչ պէտք է յիշել այս-այն հանգամանքներ, թող մի պարզ մեղայագիր տայ թէ՝ Վեհափառ Տէր, սխալուեցի որով և Ձեր արդար բարկութիւնը շարժեցի իմ վերայ. ուստի զղջալով իմ յանցանքը և մեղայ ասելով խնդրում եմ ինձ ներէք»։ Հէնց այսպիսի մի պարզ մեղայագիր թելադրելով էր՝ որ նոյն Վահրամ եպիսկոպոսը մոլորեցրել էր Սուքիաս եպիսկոպոսին և մեղայագիրը կորզել, յետոյ էլ Սինոդի օրագիրը հրատարակել. տես Արարատ 1881 թ. Հոկտեմբեր, եր. 586։ Սորանով էլ չի վերջանում. Կաթուղիկոսի մահից յետոյ լոյս է ընկնում այն կոնդակը՝ որով Սուք. եպիսկոպոս Պարզեանցը դադարում է եպիսկոպոս համարուել!!!. տես Մասիս 1884 ամի, № 3713։

*) Բժ. Գր. Տէր-Գրիգորեանցին պատասխանած նամակից։

Ես նոյն խնդրագիրս արտագրում եմ, և միայն վերջին պարբերութիւնը փոփոխում եմ այսպէս. «Եւ արդ, Վեհափառ Տէր, զգթութիւն հայցեմ և զհայրական քաղցր ներողամտութիւն Ձեր վասն՝ առ երկիւղ վտանգի և յապահովութիւն անձինս՝ յայտնելոյ իմ Գաւառապետին Վաղարշապատայ զսպառնալն բեվօլվերաւ Ներսէս եպիսկոպոսի կենաց իմոց, որով բարկացուցի զՏէրդ, և զոր զղջամ մեղայ ասելով և խնդրեմ ազատել զիս յարգելանացս և յանբմբերելի վիճակէս, կոչել զիս ի Ս. Էջմիածին՝ դարման տանել հիւանդութեանս և արտասուօք մխիթարել ընդ սգաւոր մօր իմում»։ յ 8 Սեպտ. 1882 ամի, ի Խորվիրապ։

Վահրամ եպիսկոպոս Մանկունին-կարդալով և՝ այս խնդրագիրս, դարձեալ առանց Կաթուղիկոսին ցոյց տալու՝ խաչագծում է վերան և թողնում միայն 7 բառ—«զղջամ մեղայ ասելով և խնդրեմ ազատել զիս յարգելանացս», և իւր կողմից տողամիջում և թղթի պարապ տեղում գրում. «և դարձնել իմ վերայ Ձեր ողորմութիւնը և գթութիւնը, զգալով իմ յանցանքը որ Ձեր Վեհափառութեան իրաւացի բարկութիւնը շարժեցի իմ վերայ»։ Այսպէս յետ դարձրին և՝ այս խնդրագիրս, պահանջելով որ թելադրած ձևով «պարզ Ֆէյսֆիր» գրեմ, այսինքն լռելեայն յանձնառնեմ թէ զրպարտել եմ Ներսէս և Գրիգոր (և Վահրամ) եպիսկոպոսներին, թէ՝ նոքա ոչ զող են և ոչ կաշառակեր։ Թքեցի նոցա վերայ և՝ այն կեանքի՝ որ այդ գնով պիտի շնորհէին ինձ. վճռեցի Աստուծոյ կամքին թողնել։

Թ.

1882 թ. Դեկտ. 6-ին վախճանեց Տ. Գէորգ Դ. Կաթուղիկոսը. այո՛ ես տխրեցի և «Հոգւոցն» ասացի։ Նա իսկապէս Մեծ էր. Նորան մանրացնում էին Մանկունիները, Դէմիրճեանները, և դոցա ընկերացող գող և կաշառակեր Սինոդականները։ Կաթուղիկոսի փակ արկղում գտնում են ընդ ամենն 61 ռուբլի և մի ֆէրճ կտակ. տես «Պսակ» 1882 թ. №, №, 33, 34։ Վաղուց էր որ Մանկունին գործում էր իբրև Կաթուղիկոս, իսկ վերջերում, մանաւանդ Կաթուղիկոսի կաթուածահար ժամանակ՝ Կաթուղիկոսի ստորագրութիւնը կեղծ էր արդէն, ապացուցած իրողութիւն է այս։ Այդպիսի կեղծած (Մանկունու) կոնդակներ քանի՛ քանիսը քիչ յետոյ բռնուեց։ Արիստակէս ծպիսկոպոս Սեդրակեանը մի դաստայ այդպիսի կոնդակներ բռնեց հէնց միայն Տփխիսի վիճակում և ուղարկեց Սինոդ, Սինոդը ճանաչեց դորանք կեղծ. կեղծ համարեց և ներկայ Վեհափառ Հայրապետը. տես Դիւանի 1895 թ. մտից մատենում № 540 արձանագրութիւնը։ Կեղծ էր և Մակար արքեպիսկոպոսի անուան տուած Տեղապահութեան կոնդակը. տես Արարատ 1892 թ. Փետրվար, եր. 159։ Կեղծ էին Տ. Գէորգ Դ.-ի անունով բոլոր ստորագրութիւնները՝ գոնէ 1882 թ. Յուլիսի 9-ից հետէ, քանի որ կաթուածահար Կաթուղիկոսը բերնէն վազած ջուրը սրբել դժուարանում էր, պիտի գործով զբաղուէր կամ ստորագրէր թղթեր, այն ինչ գրիչ բռնել անկարող էր։— Էջմիածնի Սինոդը յանձնաժողով նշանակեց՝ Վեհարանի և հանգ. Կաթուղիկոսի կորուսեալ գրամոց և գոյքերի համար քննութիւն և խուզարկութիւններ կատարել. Վահրամ եպիսկոպոսի նոյն իսկ վրան— գլուխը հրապարակաւ խուզարկեցին, նորա ծոցում գտան 25 հազար ռուբլի կանխիկ գրամ և բաւականին թանկնոց իրեղէններ՝ սենեկում։ Նա մեծ գումարները և այլ շատ թանկնոց իրեղէններ վաղուց հետէ տեղաւորել էր, ինչպէս և երեք արկղները, զոր Երեւանում առ ժամանակ արգելեցին Կաթուղիկոսի մահից 2—3 շաբաթ առաջ։ Խուզարկեցին Ստ. Դէմիրճեանի տունը և գտան շատ իրեր։ Քահանայացու տիրացուները, որոց գործերը մնացին անկատար Կաթուղիկոսի մահուան պատճառով, վրաթափեցին և յետ պահանջեցին վճարած փողերը. և այլն, և այլն. տես «Պսակ» 1882 և 1883 №. №։

Ս. Էջմիածնի Միաբանութիւնը կազմում և ստորագրում են խնդրագիր յանուն Տեղապահ Մկրտիչ արքեպիսկոպոս Բաբամեանցի, չնայելով Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսների խան-

գարելու համար թափած ջանքերին. խնդրում են—«յետ բերել Բարդուղիմէոս վարդապետին Էջմիածին, իսկ նորա 1881 թ. Հոկտ. 13-ին տուած յայտարարութիւնը՝ պահել ապագայ Կաթուղիկոսի տնօրէնութեան»։ Խնդրագրին ստորագրում են 3 եպիսկոպոս, 9 վարդապետ և 4 աւագ սարկաւագ։ Տեղապահը, այն փոքրոգի մարդը, վախենալով Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսներից՝ խորհուրդ է տալիս Միաբանութեանը՝ փոխել խնդրագիրը յանուն Սինոդի, որի մէջ յաւելացնել և «միւս աքսորականի»—Արիստակէս վարդապետի անունը։ Միաբանութիւնը փոխում է իւր խնդրագիրը և 1882 թ. Դեկտեմբեր 31 թուով մատուցանում է Սինոդին՝ Գրիգոր Աղափիրեանց և Սերովբէ Աբրահամեան եպիսկոպոսների ձեռքով. բայց Սինոդը մի քանի օրից յետոյ կոչում է չորս ը՞՞ՊՐՈՎ վարդապետներ և «Ներսէսը, ոտքի կանգնելով ու խնդիրը յետ դարձնելով, սկսում է յն ձևով անարգել և պախարակել մի ողջ Միաբանութիւն և բարկանալ վարդապետների վերայ, ինչպէս հանգուցեալ հայրս իւր հոլթերը այգին տարած ժամանակ բարկանում և նեղսրտում էր իւր անմեղ անասունների՝ Ճանապարհում արած անպիտան շարժմանց վերայ։ «Կանոնագրութեանը (Պոլժենիա) նայելով, ասում է Ներսէս եպիսկոպոսը, Միաբանութիւնը ձայն չունի, Միաբանութիւնը Սինոդին մի այպիսի բան առաջարկելու իրաւունք ևս չունի։ Ձեր ինչ գործն է թէ կապեալ ունինք, ձեր ինչ գործն է թէ արձակեալ ունինք. այդ ամենը Սինոդի գործն է։ Թող Միաբանութիւնը իւր տրէտների վերայ մտածէ, թող իւր սենեակների վերայ մտածէ...» (Պսակ 1883 թ. № 5. Զանգակ Վաղարշապատի), և խնդրագիրը յետ է տալիս. իսկ միւս Անդամները և Տեղապահը լսում և լռում են գլխակոր։ «Վաղարշապատի Զանգակի» այդ նամակի մէջ խիստ դառն թախիծով պատմուած են Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսների զողութիւնները, կաշառակերութիւնները, Էջմիածնին հասցրած բազմաթիւ վնասները և ամօթանքը։ Այդ ստորագրութեամբ մի քանի սիրուն և հետաքրքիր նամակներ լոյս տեսան Պսակում. այսօր ևս չգիտեմ ով լենելը, սակայն անշուշտ Միաբաններից մին լինելու էր։

Մի ուրիշը նոյն խնդրի առթիւ՝ ի միջի այլոց գրել է—«... թափելով սպառնալիքներ Գրիգոր և Ներսէս եպիսկոպոսները՝ յետ են տալիս Միաբանութեան տուած խնդիրը... Ի՞նչ հիանալի դատաստան։ Դատաւոր են հանդիսանում նրանք, որոնք յանցաւորի դեր պիտի կատարեն, որոնք այդ գործում Սինոդում ձայն տալու իրաւունք չունին, որովհետև մեղադրուած են նրանք... Այս հարցում Սինոդը պէտք է դրանց ձայնի իրաւունքից զրկէր...» (Պսակ 1883 թ. № 1. տես և № 2)։

Էջմիածնի Միաբանութեան խնդրագրի պատճէնը —

«Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Ս. Էջմիածնի,
Ի Միաբանութենէ Մայր Աթոռոյս

Խնդիր.

«Ողջոյն Միաբանութիւն Մայր Աթոռոյս խնդրէ ի սրբազան Սինոդէդ՝ տնօրինել զարժանն ի մասին վերակոչելոյ 'ի Մայր Աթոռս ի միաբանակցութիւն զԱրիստակէս և զԲարդուղիմէոս վարդապետսն ի Խորվիրապէ, ըստ արդարացի ցանկութեան մերում և կարեկցութեան, բաւական համարելով զոր ենչ և ցորչափ կրեցին, Թողելով զայն ամենայն հանգամանս որոց վասն աքսորեցանն՝ ի տնօրէնութիւն նորոգ ընտրելի Վեհափառ Հայրապետի»։ Ի 1882 ամի 31 Դեկտ. ի Ս. Էջմիածնի։

Սերովբէ եպիսկոպոս	Հմայեակ վարդապետ
Գրիգոր եպիսկոպ. Աղափիրեանց	Դաւոնդ վարդապետ
Յարութիւն եպիսկոպոս	Յակոբ վրդտ Նորատունկեան
Բառնաբաս Ծ. վարդապետ	Անտոն վրդտ. Վարդազարեանց
Եղիշէ վարդապետ Ամատունի	Սահակ Սարկաւագ
Գրիգորիս վարդապետ	Սարկաւագ Եփրեմ Սուքիասեանց
Կիւրեղ վարդապետ Սրապեան	Սարկաւագ Գասպար
Սահակ վարդապետ	Դաւիթ սարկաւագ Ռշտունի

Միաբանութեան այս խնդրագրին չեն ստորագրել գլուխ երկու հոգի, մին՝ Աղարակի կառավարիչ, ընթերցողին ծանօթ՝ Մամբրէ վարդապետը, և միւսը՝ Գայեանէի վանահայր Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանը. որոց մեղադրել՝ իրաւացի չէր լինի, մին գողակիցն էր, միւսն՝ նոցա դասընկեր և «՞՞ՊՐՈՎ բարեկամը։

«Պսակի» նոյն համարում կարդում ենք հետևեալը, որից

ա. Գիւտերը և նորա իւրանման «բարեկամները» որքան և կարդացած լինէին՝ համ—ճաշակ չէին զգայ։

«Ո՛վ էր Բարդուղիմէոսը եւ ի՛նչ էր պահանջում.

«Այն ժամանակ երբ ամեն իրաւունք, ամեն արտօնութիւն Մանկունուն և ընկերութեան յանձնուած՝ ամեն մինը մի անկիւն էր քաշուել իր գլուխը պահելու, այն ժամանակ երբ Մանկունին, Ստեփանիկ աղան և ընկ. ձեռք ձեռքի տուած յառաջ էին գնում վանքի սիւները սղոցելու մէջ. այն ժամանակ, ասում ենք, երբ ամեն մի եպիսկոպոս մտածելով իւր անձը հաճոյական դարձնել այդ խմբին, հոգալով որ ինքն էլ մասն ու բաժին ստանայ այդ ընդհանուր աւարառութիւնից, փակում էր իւր աչքերը Մայր Աթոռին հասցրած վնասները չտեսնելու համար, խցկում էր ականջները՝ հարիւրաւոր տիրացուներից, հարիւրաւոր անմեղ զոհերից դէպի երկնից թռչող անէծքները, հայհոյանքները չլսելու համար (1)—գտնուեց միայն մի մարդ, Բարդուղիմէոս վարդապետն Գէորգեան, որ արհամարհելով դրանց նուիրաբերելի պարգևներն ու խոստումները, ձայն բարձրացրեց, աղաղակ հանեց, բողոքագրեր ներկայացրեց մինը Կաթուղիկոսին, մինը Սինոդի անուններով, դատաստան, արդար դատաստան խնդրեց Գ. և Ն. եպիսկոպոսների դէմ, քննութիւն պահանջեց։ Նա գիտէր, որ ինքը արժանանալու է դրա համար ամեն տեսակ զրկանքների, ամեն տեսակ խայտառակութեանց. բայց և այնպէս ազնիւ հոգին տանել չկարողացաւ սէրը, արատը, խաւարը, անպատիւը։

«Նա այդ բողոքով միմիայն մատնացոյց էր եղել Գ. և Ն. եպիսկոպոսների վերայ. այդ միայն ձև էր։ Նա ի հարկէ չէր կարող ուղղակի ցոյց տալ թէ ովքեր են իսկական չարագործները, թէ՝ որտեղից է չարութեան աղբիւրը. ուստի և մատնացոյց եղաւ այդ երկուսի վերայ միայն, յուսալով թէ քննութիւնը ամեն բան դուրս կը բերի։

Ծան. 1) Այո, այն ժամանակ՝ երբ ուրիշները գրում էին (օրինակ՝ Ալէքսանդրապոլից 1880 թ. Յունիս 18 թուակիր նամակով)։—«Մեծապատիւ Ստեփան Աղա... ահաւասիկ սորանով վերստին դիմում եմ առ Ձեզ և խնդրում եմ խնայարհաբար մեծահոգութեամբ կատարէք Ձեր խոստումը Ձեր հոգը միջնորդութեամբը ձեռնադրել տալ եպիսկոպոս, որով և ինձ շատերի նման անմոռաց բարերար կը հանդիսանաք, իսկ ես պատրաստ եմ ամենայն հոգւով և ուրախութեամբ կատարել իմ խոստումս անպակաս»։

Իսկական ձեռագիր նամակը ինձ տուել է բժ. Եփրեմ Տէր Դաւթեանցը։ Աւելի հետաքրքիր բաներ կան այս նամակի մէջ։ Նորա՝ մի այլ նամակ ևս կար Սարգիս եպիսկոպոսի մօտ, որի մէջ խոստանում է 1,500 ռուբլ. կարդացել է Արխատակէս արքեպիսկոպոս Դաւթեանը...

Սակայն Ճշմարտախօս այդ ձայնին խեղդել տուին շնչափողի մէջ։ Գ. Ն. և Վ. եպիսկոպոսները նրան անպատուեցին, նրան ծեծել տուին, ոտնակոխ անել տուին նորա վերարը նոյն իսկ այն Միաբանութեան մէջ, ուր որ ամենքը վերար են կրում. և ամենքն էլ եպիսկոպոս թէ վարդապետ, սարկաւագ թէ տիրացու—իրենց խցերն էին մտել ծածկուել։

«Ճշմարտութեան համար այդ հալածուած անհատը յոյս էր տածում թէ գոնէ հայ մամուլը իրեն պաշտպան կը հանդիսանար. սակայն այդ վատերը մի քանի ոսկի էլ նրա բերանը գցելով՝ կարողացան նաև այնտեղ սուացնել տալ։ Հայ մամուլն էլ, հայ լրագիրն էլ թաթախեց իւր գրիչը անօրէնութեան տղմի մէջ։ Բարդուղիմէոսը կապուած ու կոտրուած ոտք ու ձեռքով Խորվիրապ աքսորուեցաւ. և տակաւին այն տեղ է, թէ և անօրէն և անարդ ձեռքերից հալածուած, բայց անդորը խղճով, բարձր իւր անարատ հոգով, սիրելի և յարգելի իւր Ճշմարտասէր բնաւորութեամբ ու գործերով։

«Սակայն այսօր, երբ գահընկից է եղած չար միաբանութիւնը (ընկ.), երբ հանդէս է դուրս եկած արդարադատութիւնը, չպէտք է մնայ Խորվիրապում Բարդուղիմէոսը։ Վերջապէս ժամանակ է նորան իրաւիրելու։ Արդէն նրանով, որ նոյն իսկ Սինոդն ինքը յանձնաժողով նշանակեց տեղի ունեցած զեղծումները երևան հանելու համար, ապացուցեց՝ որ Ճշմարիտ, արդարացի էր հայր Բարդուղիմէոսի պահանջը, որ նա վանքին և նրա շահուց հաւատարիմ զաւակն էր, որպիսիներին գնահատելու ժամանակ է այժմ։

«Բարդուղիմէոսը անմեղ զոհ է բռնութեան. իսկ բռնակալների ժամանակը անցած է։ Նա Միաբանութեան սրտի բողոք էր. նա վանքի աւարառութեանց դէմ օգնութիւն կանչող ձայն էր. նա հայի պատմական Հոգևորականութեան վսեմ վարկը ոտնակոխ անողներին արդար դատաստան խնդրող Ճիչն էր։ Նորան պէտք է յետ հրաւիրել այն աքսորանքից ուր քշել է վատթարութիւնը։ Նրան պէտք է գնահատի սինոդը առանց ուշ դարձնելու հակառակորդներին, որովհետև նա—Բարդուղիմէոսը արդարութիւն էր պահանջում» («Պսակ» 1883 թ. № 5. տես և № 1.)։

Այսօր էլ չգիտեմ, չեմ լսել թէ ո՞վ էին այդ գրողները։ Հաւանական է որ ս. Էջմիածնի Միաբաններից լինին։ Լեզուները բացուել էր։ Միայն թէ տեղիք ունիմ կարծելու՝ որ Յուսիկ վարդապետը (եպիսկոպոս) պիտի լիներ այս վերջինը։

Դեռ ևս սկզբում, երբ ուղարկեցին ինձ Խորվիրապ՝ 8—9 օր յետոյ կոչեցին Էջմիածին վանահայր Պողոս վարդապետին և հրահանգեցին նեղել վշտացնել ինձ. յայտնուեց այս։ Վանահայրը ինքը խեղճ մարդ լինելով, մանաւանդ թէ մի քանի անյաջող փորձերից յետոյ և սկզբում իւր օգնական գործակից վարդապետից քաջալերութիւն չգտնելով՝ թուլացաւ և իւր կաշին ազատելու համար ապսպարեց իւր Մելքոնի միջոցաւ Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսներին թէ՝ «ես ուզում եմ ձեր պատուէրի համաձայն վարուել Բարդուղիմէոս վարդապետի հետ, բայց ձեր բարեկամ Գրիգոր վարդապետը դիմադրում է ինձ»։

Այդ Գրիգոր վարդապետը Հին Նախիջևանի Յաջորդական պաշտօնից զրկուած լինելու պատճառաւ՝ վշտացած էր իւր առաջուայ բարեկամ Վահրամ Գրիգոր և Ներսէս եպիսկոպոսներից։ Երբ Մեղուի մէջ հրատարակուած Յ. Գեղամեանցի նամակի դէմ՝ լոյս տեսաւ Պսակում իմ պատասխանը (տես եր. 120—121), Ներսէս և Գրիգոր եպիսկոպոսները մի կերպով յարմարեցրին և Երևանում Վ. Եղիազարեանցի տանը հաշտուեցին այդ վարդապետի հետ. խոստումներ ևս արեցին։ Ինչպէս մի եզնագլուխ փաստաբան նորան խրախուսում էր—«պօչ—նի, դու մի քանի ամիս քեզ ղգայշ պահիր, Զորրորդի հակառակ բան մի խօսիլ կամ անիլ՝ ես քեզ եպիսկոպոս ձեռնադրել տամ»։ Լսում էինք ես և Արիստակէս վարդապետը։ Այնուհետև աւելի քան մի տարի սարսափելի կերպով տառապեցրին ինձ վանահայրը մանաւանդ նորա այդ օգնականը։—Իմ անունով եկած լրագիրը ինձ չէին տալիս որ կարդամ։ Ամբողջ վեց ամիս ես մնացի առանց թէյ խմելու, չնայելով որ իմն էր շաքարը։ Մի վերստ հեռու Թուրքի գիւղից էի ինձ համար կաթն բերել տալիս, այն ինչ վանքը կաթն շատ ունէր։ Կերակուրի յաւելցուկն էր իմ բաժինը՝ այն էլ եթէ մնար, հակառակ դէպքում՝ ցամաք հացը։ Այն ժամանակներում ես սաստիկ ծխում էի. մի օր ճաշից յետոյ ուզեցի ծխել և յանկարծ պատասխանեցին—«թող իւր համար լուցկի գնէ»...։ Նեղուեցի, 2—3 օրից յետոյ հազիւ կարողացայ ապսպարել ստանալ Ղամարլուից լուցկի։ Համազասպ եղբօրս սպանումը և վշտամեռ Հօրս մահը ինձնից ծածուկ էր պահուած. Մեղուի մի անորոշ լուրից հասկացայ. գիշեր էր։ Ես իմ կեանքում այնպիսի սկծեցուցիչ վիշտ չէի զգացել, բայց հէնց դորա առաւօտը ինձ թողեցին Խորվիրապում—այն անապատում՝ մի՛ այն, և իրենք բոլորը գնացին հեռու գիւղերը պտտելու, այլ և նախ քան հեռանալները՝ ասացին իմ աչքի և ականջի մօտ մի մասալ—«ես իմ քէֆը չանեմ՝ թէ ձին սատկում է։ *)։ Ա՛խ, Աստուած, Աստուած։ Գործակալութիւնից արձակելու սպառնալիքներով և Ներսէս եպիսկոպոսի կողմից՝ ծածուկ թելադրել էին Արտաշատ գիւղացի տ. Շմաւոն քահանային և նորա որդի տ. Ղուկաս քահանային՝ պաշտօնական յայտարարութիւն գրել Սինոդին թէ՝ Բարդուղիմէոս վարդապետը Խորվիրապ գնացող ուխտաւորներին գայթակղեցնում և ասում է. «ինչու՞ էք վանքերին կամ Էջմիածնին նուէրք տալիս, գող Սինոդականներն են ուտում»։ Գործակալը հրաժարուել էր այդպիսի «ղրպրպոՀՒ» գրել՝ քընութիւնից միայն վախելով։ Այսպէս հարիւրաւոր վշտեր և աւելի սկծեցուցիչները հասցրին ինձ այդ հրէշները։ Այդ բոլորին՝ ականատես վկայ է Արիստակէս վարդապետը, այժմ արքեպիսկոպոս։ Ես խելամուտ լինելով՝ տանում էի անխախտ լռութեամբ, բայց վա՛յ այն տանելուն. Ի՞նչ անէի կամ ո՞ւմ դիմէի, մի կողմից այսպէս նեղում էին, և միւս կողմից, ինչպէս գիտէ ընթերցողը, Ղեղայ՚ի սպասում։ Շատ դառն էր իմ օրը և իսկապէս անհանդուրժելի։

Տեղեկացայ Միաբանութեան խնդրագրի յետ դարձնելը։ Յունուարի 16-ին գրեցի Տեղապահ Մկրտիչ արքեպիսկոպոսի անուան մի խնդրագիր, ծրարելով ընդ նմին և վանահօր

*) Շատ տարիներ յետոյ՝ ակամայ պատմել եմ այս մասալը՝ Սիսն վարդապետին և նկարիչ Ռ. Բաշինջաղեանցին։

վկայական յայտարարութիւնը թէ՝ «Բարդուղիմէոս վարդապետը հիւանդացել է թոքախտով, արիւն է թքում»։ Խնդրեցի կամ վերակոչել ինձ Էջմիածին, կամ թոյլ տալ ինձ գնալ մեր տունը և «դարման տանիլ հիւանդութեանս»։ Գլուխը մեռած այն Տեղապահը,—որի խորհրդով 1881 Հոկտ. 12-ին յաւելացրել էի իմ յայտարարութիւնների մէջ «ի սոյն օրինակ պուա- ֆ- ի Սինոդն», և որը մեծ-մեծ բրդում էր՝ թէ «Սինոդում պիտի պնդեմ որ արդար քննութիւն կատարուի», սակայն երկիւղից և տմարդութեամբ հետևել էր իմ թշնամիներին և այն իմ դէմ զրպարտական օրագիրներին էլ ստորագրել,—այժմ իմ այդ խնդրագրի վերայ Յունուարի 28-ին մակագրում է. «Վերադարձուցանելով առ Ձեզ ուղղեալն առ մեզ Յայտարարութիւն՝ պատուիրեմ, նոյնն իսկութեամբ արտագրել և առաքել յանուն Սինոդի։ Այսպէս. «Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն և այլն։

Մկրտիչ Արքեպիսկոպոս»։

Արտագրում եմ և Փետրվարի 5-ին ուղարկում Սինոդին, միասին և վանահոր յիշեալ յայտարարութիւնը.—

պատճէն.

«Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն սրբոյ Էջմիածնի,
ի վանահօրէ վանուց Խորվիրապայ՝
յայտարարութիւն.

«Բարդուղիմէոս վարդապետն Գէորգեան, որ հրամանաւ Սինոդիդ է աստ ի Խորվիրապ առաւել քան զամ մի, գտանի ի վտանգաւոր հիւանդութեան։ Յանցելում ամարան պատահեալ աստ ռուս բժիշկ սահմանապահ կազակաց Շտապլի, որ յայնմանէ տեղավոխեալ են յԱմբրատ, յիշեալ վարդապետն զգացեալ յինքն տկարութիւն՝ խնդրեաց նմա նկատել զինքն, որ և ի ներկայութեան մերում ի զննելն յայտնեաց թէ՝ ի ձախակողմն կրծոցն ստացեալ է թոքախտութիւն։ Այլ ի սկսանել աւուրց ցրտութեան տակաւ առ տակաւ աստիճանացեալ է հիւանդութիւն նորա, մինչ զի այժմ անդադար բաղխամ և մերթ արիւնախառն թքանի։

«Զայսմանէ յայտնելով ս. Սինոդիդ, և առ ի ազատ կացուցանելոյ զիս յապայն պատասխանատուութենէ՝ խնդրեմ առնել բարեհաճ տնօրէնութիւն»։ Ի 4-ն Փետրվարի 1883 ամի, ի Խորվիրապ։

Վանահայր Պօղոս վարդապետ Մալխասեան։

պատճէն.

«Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն սրբոյ Էջմիածնի,
Խոնարհաբար խնդիր.

«Ըստ բարեհաճ կամաց հանգուցեալ Հայրապետի ս. Սինոդն առաքեաց զիս յաքսոր ի Խորվիրապ հրամանաւ ի 21-ն Հոկտեմբերի 1881 ամի, համարաւ 2662, ուր և գտանիմ երբև զամ մի և կէս։ Այլ արդ, որպէս տեսանի և ի յայտարարութենէ արժ. վանահօր Պօղոս վարդապետի Մալխասեան ընդ սմին առաքելոյ՝ ենթարկեալ եմ ընդ հիւանդութեամբ թոքախտութեան և որ օր ըստ օրէ սաստկացեալ վտանգ անհնարին սպառնայ կենաց իմոց. թող զի չիք աստ և ոչ ի մերձակայս բժիշկ, ոչ դեղ և ոչ գէթ դոյզն ինչ յարմարութիւն պաշտպանելոյ զիս ի հիւանդութենէս։ Վասն որոյ յայտարարեալ զներկայ դրութենէ իմմէ, ամենախոնարհաբար խնդրեմ յԱտենէ ս. Սինոդիդ ողորմածաբար ի նկատի առեալ զխնդիրս իմ՝ կամ վերակոչել զիս ի ս. Էջմիածին, որ ունի իւր առանձին բժիշկ և դեղատուն, և կամ թոյլատրել ինձ գնալ ի տուն մեր առ ի դարման տանիլ հիւանդութեանս»։ Ի 5-ն Փետրվ. 1883 ամի, ի Խորվիրապ։

Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեան։

Մասնաւոր կերպով տեղեկանում եմ որ «բան չի գլուխ գալիս, սպասում են նոր Տեղապահ Մակար արքեպիսկոպոսի Քիշնևից գալուն»։ Մակար արքեպիսկոպոսը ժամանում է Էջմիածին Մարտի 4-ին և ստանձնում Սինոդի նախանդամութիւնը և Տեղապահութիւնը։ Ով ճանաչում էր և գիտէր, ինչպէս բոլոր Վաղարշապատը, Մակար արքեպիսկոպոսին և Ներսէս եպիսկոպոսի ծագումը, դորանց յարաբերութիւնը Ներսէսի տղայութեան օրից, երբ Խոյից գաղթական սորա հայրը—Թուանքչի, ապա Ներսի դռնապան՝ Խուդոն—իւր թաչին օրական ոստիները (վանքի մշակաց հացի տեսակը) կռնատակին ամեն օր անցնում էր մեր փողոցով, ոչինչ արդար բան պիտի չյուսար Մակար Տեղապահից այս իմ գործում, Ներսէսը, գիտեն, Մակարի երախտիքը վայելել է՝ ինչպէս Համադանցի Հաճի Յակովբը կամ Տփխիսեցի տ. Գիւտը և ուրիշ փողոցից վերցրածները։ Ներսէսը ինչպէս դէմքով Մակարի հարազատն են գտնում, այնպէս էլ նորա ներքին յատկութիւններն է ժառան-

գել, օրինակ՝ քսութիւն, խորամանկութիւն, շահամոլութիւն, կաշառակերութիւն, անբարոյական անառակ կեանք։ Վաղարշապատցիք տիրացու և սարկաւագ Համբարձումին (Ներսէսի առաջին անունը) կոչում էին մօր անունով—«Վա-ոյի ողէն», իսկ ոմանք միայն՝ «Խուդոյի տղէն». բայց ով ճանաչում և գիտէ հայկական սովորութիւնները՝ նա գիտէ և՝ թէ որոնց են կոչում մօր անունով...

Զմոռանամ պատմել Մակարի ծագումը.—Փոքրիկ Մակարը և սորա հայր ու մայրը՝ Կորուեցի (գաւառ թէ գիւղ) են, տեղափոխւում են Մշոյ Յաղգօնց անուն գիւղը և տ. Մատթէոս քահանայի տանը վարձվում են հայրը և մայրը մշակ-խոզմաթքեար (պատմել է Տէր Մատթէոսի դուստրը—եղբօրս տան մշակ Մուրատի պառաւ մայրը 1888—1890 թուերում)։ Սպա գնում են Թեղուտ գիւղը և վարձւում խոզմաթքեար «Մանուկ աղայի» տանը։ Ահա այդ վերջին տեղից թափառելով հասել են Վաղարշապատ։ Տղայ Մակարին վերցնում է իւր մօտ ֆոչրա-որ Պետրոս անունով մի հարուստ վարդապետ և կարդացնում. քրոջը պսակում են Դալալենց Ղազարի հետ. հայրը և մայրը մեռնում են և թաղւում «Ղարիբանոց» կոչուած գերեզմանատանը։ Մակարի հայրը (քուրդ Սարգիս) եղել է վերին աստիճան ֆէյոյած մարդ, մի զզուելի արարած. այնպէս որ՝ Մակարը նորա երեսից շատ ամօթանք է կրել. գիտեն ազգականները (Դալալենք) և պատմում էին տեսնող ճանաչողները։ Մակարը երբ Կաթուղիկոս դարձաւ՝ հօր և մօր վերա նոր գերեզմանաքարեր դնել տուեց։ Մակար արքեպիսկոպոսին կոչում էին, ոչ երեսին, «Մակար Սէրգէիչ», իսկ ընդհանրացած և քնորոշ անունն էր՝ «Հոոոած Մակոր»։ Մակարը գրւում էր «Տէր Պետրոսեան՝» իւր քարէրի անունով, նոյնը պատուաստել էր և՝ իւր քրոջ՝ Դալալենց Ղազարից ծնուածների վերայ, դոքա էլ գրւում են «Տէր Պետրոսեանց»։ Փոքր եղբայրները—Արսէնը, որ մեր ժառանգաւորաց դպրոցի աշակերտ էր, երբ հասաւ խելքի և հասկացաւ որ «Տէր Պետրոսեանց» կոչուելը

քերում է ընտանեկան պատիւը, յարմար առթից օգտուելով՝ կոչուեց «Արսէն քահանայ Բագրատունի»։ Այս գիտեն Մակարի բոլոր մերձաւորները։ Մակարի սկզբնական հարստութիւնը, ասում են դոքա, մնացած է Պետրոս վարդապետից։—Երևի Պետրոս վարդապետի հարստութեան հետ է ժառանգել և՝ Հաճի Յակովբներ, Ներսէսներ, Տէր Գիւտեր, Տէր Գէորգներ և շատ այդպիսի փողոցից վերցրած տղաների որդեգրելու և բարերարելու սովորութիւնը... Անշուշտ։

«Սպասում են նոր Տեղապահ Մակար արքեպիսկոպոսի գալուն»։ Գալիս է։ Սա ոչ միայն չի յօժարում ինձ վերադարձնելուն, այլ և ինձ աւելի յուսահատեցնելու համար՝ Ապրելի 2-ին վերադարձնում է Արիստակէս վարդապետին,—որ գոնէ վշտակից էինք միմեանց,—ինքը պատրաստւում է գնալ Մոսկուայ՝ Կայսր Ալէքսանդր III-դի թագադրութեան ներկայ գտնուելու։ Հասկանում են որ նա հազիւ ոտքը Երևանից դուրս դրած՝ Սինոդի միւս Անդամք համբերութիւնները հատած՝ պիտի ոչ միայն Էջմիածին վերադարձնեն Բարդուղիմէոս վարդապետին, այլ և հաւանական է թէ նորա պահանջած քննութեան դատը սկսուի, ստիպւում են խորհել,—«երկու չարեաց փոքրագոյնն է ընտրելի»,—համաձայնում են ոչ միայն արձակել ինձ աքսորանքից, այլ և վերադարձնել ինձ, չնայելով որ ես այդ չեմ խնդրել, վեղարս, փիլոնը (ասենք թէ այսքանը Սինոդը կարող էր) և Հայրապետի պարգևած՝ Նոյնի և չեպ ոոած խաչը, որպէս զի խնդիրը իբր թէ փակուած համարուի, առիթ չմնայ յառաջ վարել իմ յարուցած դատը։ Եւ որպէս զի Էջմիածնից հեռու լինիմ՝ նշանակում են ինձ Նոր-Բայազէտի և Դարաչիչակայ կողմանց գործակալ։ Ահա և Սինոդի հրամանը.—

«Հրաման Նորին Բարձրագոյն Մեծութեան Ռուսիոյ Ամենայն Ռուսաց և Լուսաւորչական Հայոց Սինոդէ սրբոյ Էջմիածնի. Նորոգ կարգեալ Գործակալի կողմանցն Նոր Բայազիտու և մասանցն Դարաչիչակայ Բարեշնորհ Բարդուղիմէոս վարդապետի Գէորգեան, ըստ

հրամանի Նորին Կայսերական Մեծութեան ի սինոդիս լուան Զնդիը Ձեր ի 5-ն Փետրվարի տարւոյս, որով մատուցմամբ յայտարարութեան վանահօրն Խորվիրապայ վանից Պողոս վարդապետի Մալխասեանց ի մասին հիւանդագին դրութեան Ձեր խնդրէք վերակոչել զՁեզ ի Սուրբ Էջմիածին, և տեղեկութիւնս ի գործոց Սինոդիս, Հրամայեցին, Զիջեալ ի ներկայ Թախանձագին աղերս և ի հիւանդագին դրութիւն Ձեր զորմէ վկայէ և վանահայր Պողոս վարդապետն՝ բաւական համարելով զայսչափ ժամանակեայ տառապանս Ձեր ի վանս Խորվիրապայ, յուսացեալ զի արդէն վերականգնեալ էք զբարոյական անկումն անդաստիարակ բնաւորութեան Ձերոյ *), արձակել զՁեզ յապաշխարանաց դարձուցանելով հանդերձ Ձեզ զբարձեալ ի Ձէնջ զիրաւունս և զպարգևսն և զգոյս Ձեր։ Եւ ի յարգանս հիւանդագին դրութեանդ՝ որ յառաջացեալ է յանսովոր օդոյ տեղւոյն՝ կարգել զՁեզ գործակալ կողմանցն Բայազիտու և Դարաչիչակայ, ուր ի բարելաւութեան եղանակի և դրեցն կազդուրեսցի խանգարեալ առողջութիւն Ձեր։ Եւ առ այս վաղձան հրամանագրել Ձեզ փութով գնալ ի տեղի պաշտաւմանդ...»։ Ի 12 Ապրիլի 1883 ամի, № 1396. ի ս. Էջմիածին։

Սնդամ Սինոդի Երեմիա եպիսկոպոս։

Մակար Արքեպիսկոպոսը կամենալով ինձ տեսնել՝ շտապեցնում է և նոյն օրը 12-ին Ապրելի հասցնում են վանահօրը իմ արձակման հրամանը. 13-ին երեկոյեան ուշ ժամանակ հասնում եմ Էջմիածին և իջնում վանքի հիւրատանը, այստեղ ստանում եմ վերոյիշեալ հրամանագիրը։ 14-ին առաւօտը ինձ հրաւիրում է «Էֆոպրա» Տեղապահ Մը-կրտիչ արքեպիսկոպոսը, գնում ենք Հիւրընկալ Գրիգորիս վարդապետի հետ. բարևելուց յետոյ՝ նստում ենք և նա բարբառում է. «Սիրելի՛ն, բարձր սրբազան Մակար արքեպիսկոպոսը դեռ երէկ չէ մեկնել օրը պատրաստւում էր մեկնել դէպի Մոսկով, բայց յաջողելով ձեր վերադարձը՝ յատկապէս սպասեց ձեզ տեսնելու համար։ Այժմ կը գնանք նորա մօտ. նա մեծ մարդ ա, գուցէ ձեզ խրատ կը խօսի, բայց ես խնդրում եմ՝ որ դուք ուրիշ բան չասէք, այլ միայն ասէք թէ՝ շնորհակալ եմ որ ինձ ներեցիք և բերիք»։

*) Գրել են՝ ինչպէս ուզել է քեֆները։ Այս մի նախադասութիւնը ես եմ ընդգծում, սրա մասին փոքր ինչ յետոյ։

Փղձկեց սիրտս, արտասուքս չկարողանալով բռնել՝ գոչեցի. «ինչ. ասեմ ներեցիք. ո՞ր յանցանքս ներեցիք. եթէ իբրև քրիստոնեայ ներելու բան կայ՝ այդ ես պիտի Ձեզ ներեմ, որ փոխանակ գող-աւազակ կաշառակերներին դատելու՝ ինձ այնպիսի տանջանքներով աքսորեցիք և յետոյ էլ այնքան սուտ բարուրանքներ դրիք իմ վերայ»։

Տեղապահը շփոթուեց, 4 — 5 րոպէ տիրեց լռութիւն։ Ապա հազիւ յուզմունքս չափաւորելով՝ ասացի. «չեմ կարող ասել թէ՝ «ներեցիք», այլ Ձեր խօսքը կատարած լինելու համար՝ կասեմ. Շնորհակալ եմ որ ինձ վերջապէս արձակեցիք իմ կրած տառապանքներից»։

Հաւանեց Տեղապահը, որ գոնէ ուրիշ բան չասեմ։ Սա հրահանգուած էր՝ նախապէս իմ բերանը պտրել-պատրաստել։ Ելանք գնալ դէպի Մակար արքեպիսկոպոսը. ճանապարհին ինքս որոշեցի որ այդքանն էլ չ՛ասեմ, քանի որ նա անմիջապէս ճանապարհ պիտի ընկնէր։ Աւագ հինգշաբթի օրն էր, նա նոյն իսկ չ՛սպասեց պատարագին, այնքան շտապում էր։ Բարձրացանք բալկոնը. առաջին դրան մէջ կանգնած էր Հաճի Յակովբը, իսկ նորա հետևում Ներսէս եպիսկոպոսը՝ սեղանի մէջ։ Երկրորդ դռնից մտանք դահլիճը. նստեց Մկրտիչ արքեպիսկոպոսը (որին ասենք Տեղապահ), ես առաջելով՝ պատշաճ յարգանօք առայ Մակար արքեպիսկոպոսի աջն և կանգնեցի միջավայրում, իսկ հայր Գրիգորիսը՝ մի քանի քայլ յետ՝ դրան մօտ։

«Բարի՛ եկաք», ասաց. ես գլխով խոնարհութիւն արի։ «Շտապում եմ ճանապարհ ընկնել, շարունակեց, բայց ցանկացայ նախ ձեզ տեսնել։ Մարդիկ երբ նոր տուն են ուզում շինել՝ հիմքը ամուր են դնում, որպէս զի շէնքը կամ վերին յարկերը հաստատուն լինին. այսպէս էլ պէտք է որ մարդ իւր երիտասարդութիւնից սկսէ ապագայն պատրաստել (խելօք)։ Գալով ձեզ,—փոխեց և՛ տոնը և շեշտը.—ձեր ինչ պէտքն էր ասել թէ այս ինչը գող է, այն ինչը կաշառակեր է (թերևս

ուղիղ). Հ՞ը, դուք ձեզ ի՞նչ իրաւունք համարեցիք կամ ձեզ ո՞վ իրաւունք տուեց գրել ասել թէ այս ինչը գող է, այն ինչը՝ կաշառակեր, ասացէք տեսնեմ, որով և պատճառեցիք ձեզ այնպիսի նեղութիւններ»։

Պէտք է յիշել՝ որ այս խօսած ժամանակ թէ նա և թէ ես նայում էինք միմեանց աչքերի մէջ, նա այնքան իրաւացի էր կարծում իրեն։ Եւ չէ՞ որ Ներսէս եպիսկոպոսը դրան յետևից ծառայի սենեկում լսում ուրախանում էր՝ թէ ինչպէս իւր պապն ինձ յանդիմանում է։ Ակամայ մտքովս անցաւ՝ «քարը հանել լեզուի տակից».—

—Սրբազա՛ն, ափսո՛ս որ շտապում էք, շատ բան ասել չեմ կարող։ Բայց հարցնում էք. «դուք ձեզ ի՞նչ իրաւունք համարեցիք...»։—Գողանում էին Էջմիածնից, ես նոյն Էջմիածնի Միաբան եմ. կաշառակերութեամբ գայթակղեցնում էին ժողովրդին և Էջմիածնի և Հոգևորականութեանս պատիւն հողին հաւասարեցնում, ես հոգևորական եմ և Էջմիածնի հոգևորականը։ Այստեղ հասկացողութեան խնդիր կայ, դուցէ իրաւունք չունէի, ինչպէս Սրբազնութիւնդ է ասում։ Սակայն այն հարցին թէ՝ «ձեզ ո՞վ իրաւունք տուեց գրել ասել թէ այս ինչը գող է, այն ինչը կաշառակեր», պատիւ ունիմ պատասխանելու որ՝ ուրիշ Հայրապետի կամ Ձեզ չեմ գրել յայտնել թէ այս ինչ այն ինչ եպիսկոպոսները գողանում են, կաշառքներ են առնում. այլ հէնց այն Հայրապետին՝ որ 1874 թուին կոնդակով հրամայեց Սինոդին պաշտօնանկ անել Սբէլ արքեպիսկոպոսին վանքական կառավարութեան նախանդամութիւնից այն բանի համար, որ նորա ծառայն վանքի մառանից ստացել տարել էր 2—3 ֆունտ պանիր. որով և պատուիրեց Միաբանից՝ որ «եթէ այնուհետև նկատեն վանքական կառավարութեան անդամոց վերայ անհաւատարմութիւն դէպի Մայր Աթոռը, գրաւոր յայտնեն Իրեն և Սինոդին»։ Ահա հէնց այն Հայրապետին էլ գրեցի-յայտնեցի թէ՝ այս ինչը, այն ինչը գող են, կաշառակեր են...

Նա դարձաւ դէպի Մկրտիչ արքեպիսկոպոսը. «Ճշմարիտ է թէ Սինոդին այդպիսի կոնդակ կայ տրուած»։—Այո՛, ճշմարիտ է. պատասխանեց։ Կրկին դարձաւ դէպ ինձ,—այս անգամ յաղթահարուած և կիսահամարձակ,—«Ասենք թէ այդպիսի կոնդակ կայ, բայց Սինոդը՝ ձեզ կանչե՞լ ասե՞լ է այդ»։

—1874 թուին ես սարկաւագ էի. այո՛, ինձ չեն կոչել և յայտնել, իսկ ժամանակի վարդապետներին հարկաւ պիտի կոչած և հաղորդած լինի Սինոդը՝ իբրև Հայրապետի պապ-էր...

Քիչ առաջ այնքան խիզախ խրոխտացող Մակարը՝ ճակատը խոնարհեցրեց, աչքերը ձգեց ուղիղ սեղանի տակ՝ ինչպէս սովորական գետին նայող ամօթապարտ առաջուայ մարդը։ Իսկ թէ Ներսէս եպիսկոպոսը ինչպէս եղաւ՝ Հաճի Յակովբը միայն կարող էր տեսնել...։ Ես յարգանօք գլուխ խոնարհեցրի և դուրս ելայ, ինձ հետ և Գրիգորիս վարդապետը։ Հազիւ թէ սանդուղքներն իջանք՝ հայր Գրիգորիսի լեզուն բացուեց.—«այ մարդ, քու տունը չքանդուի՞, այդ պատասխանը որտեղից գտար, խեղճին սպանեցիր թողի՞ր»...

—Ինչո՞ւ սպանեցի, ստիպուեցայ գոնէ իւր հարցերին միայն պատասխանել արդարութեամբ. չէ՞ր տեսնում ինչպէս պնդութեամբ կրկնում էր. «ձեզ ո՞վ իրաւունք տուեց...»։

Վերադարձանք հիւրատուն. այնտեղ էր ապրում և Կիւրեղ վարդապետ Սրապեանը, հայր Գրիգորիսը կանխելով պատմել էր նորան։ Կիւրեղը ի-բոպէսոչ խնդալով ասաց. «ադ խաղերը, գլուխնին դատարկ է, կանուխէն սերտած խօսքերով կը խօսին ստորադրեալներուն հետ. իսկ երբ պատշաճ պատասխան ընդունին՝ կը շուարին—կը մոլորին»։

Ոմանք Միաբաններ և ծանօթ-բարեկամներ եկան գնացին. ես ժամանակ գտայ և հէնց միւս օրը—ուրբաթ՝ ծոցս դրած Սինոդի № 1396 հրամանագիրը (եր. 143—144), մտայ Երեմիա եպիսկոպոսի սենեակը. «Այս ի՞նչ էք գրել և ստորագրել», մատս դրի վերան և նա կարդաց—«յուսացեալ զի արդէն վերականգնեալ էք ղբարոյական անկումն անդասկիրակ

բնաւորութեան Ձերոյ»։ Խեղճ մարդը նոյն իսկ վախեցած շփոթուեց և ասաց. «այդպիսի բան չկար օրագրի մէջ, իսկ հրամանը այն պիտի լինի ինչ որ օրագիրը։ Այս հրամանը բերին ինձ վառազ թէ՝ ստորագրէք որ ուղարկենք գայ, ես էլ ստորագրել եմ առանց կարդալու»։ Իսկոյն կոչեց մի թուանքչի, հրամայեց որ Սինոդի Դատաստանական մասի գործավարը վերցնէ այն օրագիրը և գայ։ Եկաւ գործավար Փիլիպպոս Նաւասարդեանցը՝ բերելով և պահանջուած օրագիրը. տեսանք՝ որ այդ ամբողջ նախադասութիւնը գրել են տողամիջում. պատմեց այդ գործավարը — «Ներսէս եպիսկոպոսի խնդրանօք կոչեց ինձ Մակար արքեպիսկոպոսը իւր սենեակը՝ պահանջելով և այս օրագիրը, որ արդէն Պրօկուրօրն արձակել էր. հրամայեց և ինքը թելադրեց ինձ հէնց իւր գրասեղանի վերայ՝ գրել այդ բառերը տողամիջում, պատուիրեց ոչ ոքի չասել. տեսէք, ապաստանիս չի արուած, որովհետև Անդամներից մին պիտի ստորագրէր և այդ դէպքում կը յայտնուէր»...

Ընթերցողք, ահա տեսաք թէ որքան լիրբ էին իմ թշնամի դատաւորները. ինչ սրտներն ուզում և կարողանում էին՝ գրում էին իմ մասին, ինչ էլ չէ՝ թագուն կեղծում էին...*)

Այդ ժամանակներում Յուսիկ վարդապետ Մովսիսեանը նշանակուեց Արարատի խմբագիր. ես նորան առաջարկեցի և շատ խնդրեցի, սկզբում և՝ Կիւրեղ վարդապետը, որ հրատարակէր Դավրիժեցոց հերքումը (պատճէնը)՝ իբրև պատասխան Արարատի 1881 թ. Հոկտեմբեր տետրակում այն հրատարակուած՝ Սինոդի—իմա՛ իմ թշնամիների զրպարտութեանց. բայց նա այնքան քաջութիւն չունեցաւ։ Ես նորան նկատեցի—«եթէ ես ձեր տեղն լինէի՝ չէի սպասի որ դուք ինձ խնդրէիք»...

*) Մկրտիչ և Մեսրոպը եպիսկոպոսները չքմեղանում էին—«Կաթուղիկոսը մեզ երկուսիս մի ժամ բանտարկեց Վեհարանի մի սենեակում և ստիպեց համաձայնել ստորագրել՝ ձեզ Խոշվիրապ աքսորելու օրագրին»...

Մշակը արդէն չէր հրատարակում, Պսակն էլ կանոնաւոր չը-հրատարակուելուց յետոյ՝ընդհատուել-դադարել էր։ Իսկ Մասիսը իմ առաջին նամակները հրատարակել էր կամ ինչպէս—իմ ձեռքը չէին հասել և տեղեկութիւն չունէի բնաւ։ Ուստի այդ հերքման պատճէնը մնաց առանց հրատարակելու։

Նոր-Բայազիտու և Դարաչիչակայ Գործակալութիւնը կատարեցի շատ արդիւնաւոր կերպով։ Այդ գաւառը աւելի քան վեց հազար ոտնաչափ բարձր է ծովի հաւասարութիւնից, խոնաւ և ցուրտ կլիմայ ունի, այնպէս որ ամառն էլ ես այնտեղ մրսում էի։ Եւ դժբախտութիւնը չուզեց ինձ թողնել, փոքր եղբայրս—Ստեփանը, այն որ 10—15 օրէն մի անգամ պիտի հանդիպէր իմ աքսորավայրը, և շաբաթը մի-երկու նամակ գրէր ինձ, հիւանդացաւ թոքերի բորբոքումով և յետոյ դառնալով թոքախտաւոր՝ վախճանեց, 16 ամսուայ ամուսնացած։ «Զաւակս և իմ նամուսը ընկնում եմ քեզ ա-ռանդ՝» եղաւ մեռնողի վերջին ցանկութիւնը և խօսքը։ Եղբօրս թաղելուց յետոյ կրկին հրաժարագիր տուի Նոր-Բայազիտու և Դարաչիչակայ Գործակալութիւնից՝ 1884 թ. Մարտի 31-ին։ Նախքան այս՝ Փետրվարի 6-ին ևս ուղարկել էի հրաժարական։ Մեծ դժուարութեամբ և միջնորդութիւններով հազիւ համաձայնեց Տեղապահ Մակարը՝ որ Սինոդը լսելով իմ հրաժարականը, նոյն թուի Մայիսի 23-ին օրագրով և հրամանաւ № 1204 արձակելով ինձ յիշեալ տեղեաց Գործակալութիւնից՝ նշանակեց «Գործակալ կեդրոնատեղւոյն Վաղարշապատայ և Սարդարապատայ»։

Տակաւին Նոր-Բայազէտից չմեկնած, գրով ծանուցած էի Տեղապահ Մակար արքեպիսկոպոսին՝ Բայազիտու տ. Սահակ քահանայի ունեցած մի կեղծած կոնդակի մասին. Սինոդը ի 20 Յունվարի 1884 ամի, № 72 հրամանաւ պատուիրեց ինձ ստանալ այն կոնդակը և ուղարկել Տեղապահի անուան, և ես յայտարարութեամբս ի 16-ն Փետրվարի 1884 ամի, № 12, ուղարկեցի նորան յիշեալ կոնդակը, որը գրուած

է ի 17 Ապրիլի 1879 ամի, № 160։ Զննութիւնից յայտնուեց՝ որ կոնդակը տրուած է եղել աւագ քահանայութեան համար մի՞ այն, բայց նախորդ ամառը յիշեայ քահանայն նախ հանդիպելով Երևանի Փոխանորդ Գէորգ եպիսկոպոս Սուրէնեանցին և ապա սորա միջնորդական գրով և 100 ռուբլ ոչ-համբոյրով ներկայանալով էքստրա Տեղապահ Մկրտիչ արքեպիսկոպոսին և Սա կոչելով ձեմ. աւագ վերակացու Ղևոնդ վարդապետին՝ պահանջել է մի աշակերտ որ ձեռքը նման լինէր կոնդակի գրին, նա էլ յայտնելով տեսուչ Արշ. Նահապետեանցին՝ ուղարկուել է տշակերտ, որի ձեռքով կոնդակի տողամիջում յաւելացնում են — «ընդ «մն» էրէլ ղնուչ և ղնոմնը-էյ» բառերը. և քահանայն կրում էր խաչ և արշինանոց կամիլաւկայ։

Մակար և Մկրտիչ արքեպիսկոպոսները յայտնի հին թշնամիներ էին. թշնամութիւնը բացարձակ հրապարակ եկաւ 1884 և 1885 թուերի Կաթուղիկոսական ընտրութեանց ժամանակ, Մկրտիչը Մակարին չ'ուզողների առաջինն էր Հոգեւորականներիս մէջ. իսկ Մակարը Կաթուղիկոս օծուեց թէ չէ՝ առաջին հոգսն այն եղաւ որ Մկրտչին արձակել տուեց Սինոդի նախանդամութիւնից և պարապ երեսի վերայ ձգեց տուն։ Որ Մակարը կաշկանդուեց—չկարողացաւ իւր այդ հակառակորդին նախքան Կաթուղիկոսական ընտրութիւնները ձգել քրէական պատասխանատուութեան տակ և գոնէ զրկէր նորան ընտրող լինելու իրաւունքից, պատճառը եղաւ այն՝ որ Մկրտիչը իւր մերձաւոր Ցովակիմ եպիսկոպոսի միջոցաւ խորհրդաբար քաշեց Մակարի ականջը և սպառնաց—«եթէ դուք գործ կը շինէք այդ, ես էլ մէջ կը բերեմ և գործ կը շինեմ՝ որ դուք էլ Սինոդի աւարտած օրագրի վերայ—նոյնպէս տողամիջում—ծածուկ միւս Անդամներից՝ յաւելացրել էք Բարդուղիմէոս վարդապետի մասին—«յուսացեալ զի արդէն վերականգնեալ էք զբարոյական անկումն անդաստիարակ բնաւորութեան Ձերոյ»։ Իմ արածով ես գոնէ ոչ ոքի վնաս չեմ

տուել, մինչ դուք ձեր արածով՝ զրպարտել և անպատուել էք վարդապետին»։ Եւ Մեսրովբ եպիսկոպոս Սմբատեանցի միջոցաւ ապսպարում է Մակարին. «Ասա, լաւ-ՐԼԻՆ չ-ՆԻ՞, ինչ եղել է՝ եղել, գործ մի՛ շենէ՛ք»... Այսօր ևս պատմում է Մեսրովբ արքեպիսկոպոսը։

Այսպէս՝ երկու Տեղապահներս դուրս եկան ֆուիլը...

Ընթերցողը զարմացած պիտի հարցնէ.—իսկ դո՞ւք ինչու լռեցիք, չբողոքեցիք։ Ես էլ նորան հարցնում եմ.—Ումի՞ց և ո՞ւմ բողոքէի...

1884 թ. միաձայն ընտրուեց Կաթուղիկոս՝ Կ. Պոլսոյ Պատրիարգ Ներսէս արքեպիսկոպոս Վարժապետեանը, իսկ կանդիդատ՝ Մելքիսեդէկ եպիսկոպոս Մուրադեանը։ Այս ընտրութեան բեկանուելու դարձուածքներում թեթև դեր չկատարեցին Տեղապահ Մակարը և Մակարականք։ 1885 թուի ընտրութեանը միաձայն ընտրուեց Կաթուղիկոս Մելքիսեդէկ եպիսկոպոս Մուրադեանը, իսկ Մակարը կանդիդատ՝ միայն 16 բարեկամ և կաշառուած Հոգևորականների ձայներով, ժողովրդեան և ոչ մի պատգամաւոր Սորան քուէ չտուեց։ Մակարը հաստատուեց Կաթուղիկոս։ Սորա ընտրութեան նախընթաց օրը ես արեցի շատ վճռական գործ՝ Սագինեանց Գ. արքեպիսկոպոսին և Ղամէքեանց Ցովակիմ վարդապետին յետ դարձնելով. գիտէ Սեդրակեանը։ Սակայն յետոյ գինին, բեվօլվերը և Բեսարաբիոյ վիճակաւորութեան խոստումով պայմանաւորելը՝ աւելի զօրեղ կերպով ներգործել էին Ղամէքեանցի և Սագինեանցի վերայ, քան իմ արտասուքները։

1885 թ. Սեպտեմբերի սկզբում Տփխիսի Առաջնորդից, Ներսէսեան դպրոցի Հոգաբարձութիւնից և Տեսչի հեռագրերով հրաւէր ստացայ յանձնառնուլ բարձր դասարաններում Հայոց լեզուի և մատենագրութեան դասերը աւանդել. ընդունեցի Հ. լեզուի դասերը միայն։ Փակագծում ասեմ՝ որ 6-րդ դասարանի աշակերտները—16 հոգի—քերականութիւնից ոչ-ինչ չգիտէին, փորձի համար տրուած կէս երես աշխարհաբա-

ռից գրաբառ թարգմանութեան մէջ քերականական սխալներն յուսահատեցուցիչ էին. մէկի շարադրութիւնը միայն տանելի էր փոքր ինչ։ Իսկոյն տեղի ունեցաւ ուսուցչական ժողով, ներկայացրի 16 տետրակները, ժողովը հասկացաւ աշակերտաց վիճակը։ Այդ տետրակներում հոլովուած էին (սէր) «էրի», (հայր) հօրոյ, և այլն. մոռացած չեն լինի տեսուչ Արշ. Նահապետեանցը (այժմ եպիսկոպոս), ուսուցիչներ Փիլիպպոս Վարդանեան, Աբիսողոմ Յովհաննիսեան, Խաչ. Զիլինկարեան և այլք. առանձին տեղեկացաւ և Առաջնորդը։ Ինձնից առաջ դոցա երեք տարի շարունակ ուսուցիչ էր եղել Հ. լեզուի՝ Կարապետ Կոստանեանցը։ — Ուսուցիչ էի. Հոկտեմբեր ամսում Քիշնևից ժամանեց Տփխիս Կայսերահաստատ Մ. Կաթուղիկոսը։ Նա հէնց այնտեղից չկարողացաւ սանձել կամ ծածկել իւր կիրքը, 16 օր մնաց Տփխիսի Ռաջնորդարանում, ուր և ես էի ներքին յարկերում, գոնէ մի անգամ թոյլ չտուեց որ ներկայանամ իբրև նորեկ Կաթուղիկոսի։ Այցելութեան պիտի գար Ներսէսեան դպրոցը, Տեսչի շատ խնդրանօք՝ գրեցի և խօսեցի նորան ընդունելութեան ճառը. այնտեղ իբրև մի օտար՝ աջն առայ ուսուցչաց հետ։ Տեսուչը և ուսուցչական ամբողջ խումբը շնորհակալութիւն արին ինձ՝ շատ գոհ մնացած ճառի տպաւորութիւնից. իսկ Մակարը՝ ոչ մի խօսք։

Միւս եղբօրս—Թադէոսի մահամերձ վիճակը (թոքախտ) և շուտով մահը,—սա միակն էր իմ հայրենի օճախը ծխողը և մօրս և երկու եղբարցս այրիներին և որբերին խնամողը, —հարկադրեց ինձ 1886 թ. Փետրուարի կիսին հրաժարուելով այդ ուսուցչութիւնից՝ վերադառնալ ի Ս. Էջմիածին։ Մակար կաթուղիկոսը ինքը որոշեց. և բնակեցրեց ինձ մի խոնաւ և մութ սենեկում. հայր Եղիա վարդապետը միայն զգաց իմ վիճակը, նա իւր սենեակը տուեց ինձ, իսկ ինքը ուրիշ տեղ տեղափոխուեց. իմ այն սենեակը այնուհետև դարձաւ ցախատուն կամ ժամկոչ էր ընակւում։ Նոյն Մ. Կաթուղիկոսը գաղել տալով հանգուցեալ Թադէոս եղբօրս՝ վան-

քական կառավարութեան հետ ունեցած կանտրակտը,—Յուսիկ վարդապետի ձեռքով գրուած և ստորագրուած,—զրկեց նորա $1^1/_2$ տարեկան որբին Ձեմարանի ննջարանի պարտիզի 6—7 դեսեատին վարելահողից՝ Հինգ տարի ժամանակ օգտուելու իրաւունքից, որի հարթելու և պատրաստելու համար եղբայրս ծախսել էր 80 ռուբլի, ծախսը գոնէ չ'վերադարձրեց։ Այդ հողիցը օգտուեցին իւր ազգական Դալալենց տղայքը։— Առանց և ոչ մի առիթի կտրեց մի անգամ երեք ամսոց ռոճիկներս. տեսաւ որ ձանձրութիւն չտուի իրեն, սարքեց մի անպատկառ խաղ՝ և այնպէս տուեց. չարժէ պատմել, գիտեն Միաբաններ։—Մի այլ անգամ, կողքիս ցաւ ունենալով՝ բժշկի խորհրդով գնացի Տփխիս բաղանիքներում լողանալու, իհարկէ Իւր նախահաճութեամբ Սինոդից գրաւոր հրաման ստանալով՝ 40 օր Էջմիածնից բացակայելու համար. ես պարտք վերցրի պ. Զաքար Աբելեանից 150 ռուբլի և Սահակ սարկաւագից՝ 25 ռուբլի. վերադարձայ Էջմիածին 39-րդ օրը. յայտնուեց որ Կաթուղիկոսը դարձեալ կտրել է Օգոստոսի իմ ռոճիկը։ Անցաւ ժամանակ, պատահեց Ներսէս եպիսկոպոսը —նորա մերձաւորը, հարցրի. «փոխանակ նպաստ տալու՝ ռոճիկս է կարճել. արդեօք ինչո՞ւ»։

—Մի անգամ Վեհափառին այդ մասին խօսեցի, Նա ասաց թէ կտրել է՝ կարծելով թէ որոշեալ ժամանակից կ'ուշանաք։

—Ուրեմն պատժում է դեռ չ'գործած յանցանքի համար... Եւ նա չ'տուեց իմ այդ ռոճիկը։

Նա ինձ մի-երկու յանձնարարութիւններ արեց, իսկ ես ամենայաջող կերպով կատարեցի, օրինակ՝ հրամանագիր Սինոդի ի 20 Մայիսի 1886 ամի № 1938, գնալ վաճառել Կոտայքում, Դարաչիչակում, Բճնիում և Նոր Բայազիտում ամբարուած Էջմիածնապատկան ցորեան և գարի՝ 420 խալաբ, 19 լիտր և 5 ֆունտ։—Հրամանագիր Սինոդի ի 10 Հոկտ. 1886 ամի № 3818, շրջել Էջմիածնի և Սուրմալուի գաւառները

և բանալ փակուած դպրոցները։ Վաղարշապատի երկսեռ դպրոցները բանալուս համար Կաթուղիկոսը կամայ ակամայ շնորհակալութիւն յայտնեց ինձ՝ նորընտիր Հոգաբարձուաց ներկայութեամբ. որովհետև երեք փորձ արել էր ուրիշների միջոցաւ, որ ոչ միայն անյաջող էին անցել՝ այլ և խնդիրը աւելի բարդուել էր։

1887 թ. Մայիսի 13-ին հիւանդ պարկած էի, ստանում եմ հրամանագիր Սինոդի. № 1346, որով նշանակում են ինձ Յաջորդ և նախանդամ Ղզլարի Հոգևոր Կառավարութեան՝ տարեկան 600 բուբլ ռոճիկով, մի և նոյն հրամանում գրելով—«ի վարումն ստանձնեալ պաշտամանցդ նաև... ա-ռանդել յերկոսեա- դպրոց հաղորդեն զբաս զիրանգիսո-ևեան առ-ոնց պահանջելոյ ա- այն պատանդեն վարչապետ-ևեան»։

Ես յայտարարութեամբս ի 16 Մայիսի 1887 ամի պատասխանեցի Սինոդին՝ գրելով ի միջի այլոց.—

«Գերապատիւ Տեառք Ատենակալք, ի պատճառս հիւանդութեան քանիցս ետ հրաժարական յաղագս վատութեան օդոյն և արձակիլ ներկայ Յաջորդն տեղւոյն. արդ զիս, որ առաւել հիւանդ եմ քան զնա (Գառնակերեանց Գր. Վարդապետն), կարգելն յայն պաշտօն և ի տեղին՝ չգիտեմ զինչ ասել...։ Յաւօք սրտի հրաժարիմ և խնդրեմ հրաժարեցուցանել զիս ի նշանակեալն պաշտօնէ և, եթէ են կարիք՝ կարգել զիս աստ յայլ պաշտօն յարմարաւոր կամ գէթ վանահայր վանուցն սրբոյն Հռիփսիմեայ։ Ուր... տեսից եթէ ելցէ յարմարութիւն ինչ և հնարաւորութիւն՝ ունիմ 'ի մտի կազմել և առաջի առնել ծրագիր և խնդրել զտնօրէնութիւն Նորին Վեհափառութեան՝ տալ կարգադրել, զի զիւղական անպատրաստ քահանայսոյս տիրացուք նահանգիս ժողովեսցին անդ եւ ուսցին զանհրաժեշտ ուսմունս եւ զդիտելիս եւ ըղհրահանգս կրօնի եւ հաւատոյ վարդապետութեան»։

Ընդունուեց այդ հրաժարականս, բայց ս. Հռիփսիմէի վանքի վանահայր կարգել զիս՝ չբարեհաճեցին։ Իսկ իմ յղացած և արծարծած մտքից օգտուելով և ի չար գործ դնելով՝ յետոյ Սուքիաս եպիսկոպոսը Երևանի Առաջնորդարանին կից բացեց «Ընծայարան» անուն մի տուն, որտեղի անունով

դարձեալ սկսեցին կեղեքել քահանայացուներին։ Այդ ժամանակի տակսան 400 բուբլի էր։

Անցնում է 9—10 ամիս, 1878 թ. Մարտին յանկարծ նշանակում են ինձ ս. Գայեանէի վանքի վանահայր։ Այդ վանքի եկամուտն էր տարեկան $1^1/_2$—2 խալվար ցորեան և 8—10 բուբլի դանձանակադրամ կամ մոմավաճառութեան արդիւնք. մի այդի ունի, որոյ տարեկան եկամուտը, ըստ նախորդ վանահարց ելևմտից մատենի՝ հազիւ ծածկում էր ծախսը. ուրեմն ինչով պիտի ապրէ վանահայրը—ես։ Իմ նախորդ կամ յաջորդ վանահայրերը ապրել էին և ապրում են Էջմիածնի օժանդակութեամբ։ Մակար Կաթուղիկոսը այս յայտնի հանդամանքը քաջ գիտելով հանդերձ՝ չհասկանալն էր դնում իրեն. վերջապէս ակամայ համաձայնում է որ Սինոդի նոր օրագրով որոշուի տալ ինձ, քանի վանահայր լինիմ, Էջմիածնի միաբանական ռոճիկս և սննդեղէն։ Երբ պատրաստուել գնում էի՝ ներկայացայ Կաթուղիկոսին, ներկայ էր և նորա դիւանապետ Սահակ վարդապետ Բաղդասարեանը, ասացի. «Վեհափառ Տէր, եկայ Ձեր օրհնութիւնը ստանամ և գնամ իմ վանքը, սակայն նախ քան գնալս բարուոք եմ համարում վերջին անգամ խնդրել՝ որ ինձ փոխանակ Գայեանէի վանքը ուղարկելու, ուղարկէք գոնէ Հռիփսիմէի վանքը վանահայր, ուր ես կարող եմ, ինչպէս քանի ամիս առաջ գրաւոր յայտնել եմ Սինոդին, Եկեղեցուն մի օգտակար ծառայութիւն մատուցանել, գիւղական քահանայացուները պատրաստել»։

—Ես ձեզ համար այդ վանքն եմ որոշել՝ այդ տեղ էլ պիտի գնաք. պատասխանեց։

Գնացի ս. Գայեանէի վանքը. հէնց առաջին տարին նորոգեցի և կարգի բերի վանահայրական անբնակելի դարձած սենեակները. այս նորոգութեան նպաստեցին պ. Սիմէոն Հախումեանց՝ 25 բուբլ նուիրաբերելով, իսկ բոլոր դեղագործութեան (ներկ) ծախքը 45—50 բուբլ՝ մեր խնամի պ. Սահակ Բաբայեանցը։ Անցաւ 10 ամիս՝ 1889 թ. Յունվարին Մ. Կաթու-

ղիկոսը կտրեց ինչ որ նշանակել էր Սինոդը իմ և վանքի կառավարութեան համար, օրական հացն էլ բաղարիցն էինք գնում, ես տառապում տուայտում էի կարօտութեան մէջ։ Վանքի դարվազէն քանդուել ընկել էր, անցուդարձ անողների առաջ ես էի ամաչում։ Մտածեցի շերամ պահել, մի կերպով ապրուստ հայթհայթել. անձամբ ներկայացայ խնդրեցի՝ թոյլ տալ օգտուիմ անտառի թթենիներից, ներկայ էր իւր դիւանապետը, բայց նա մերժեց. միջնորդ ձգեցի Մամբրէ եպիսկոպոս Սանասարեանցին, դարձեալ չ'զիջաւ։—Հնդկահաւեր պահեցի. թխսեցին, ձագերը խնամքով մեծացրի, աշունքներին գնում էին Վեհարանի համար, կերան Հաճի Յակովբները դիրացան. իսկ ես մի հատի համը գոնէ չտեսայ, աղքատի համար դա շռայլութիւն կը լինէր։—Ներել կարող եմ, բայց ոչ մոռանալ.—մի օր ես պատելով անցայ վանքիս հիւսիսային կողմը, հէնց այդ ըոպէին դէմ ու դէմ հանդիպեցին ինձ Ղևոնդ վարդապետը (այժմ եպիսկոպոս) և Պետրոս Սիմէօնեանցը։ Նոքա գալիս էին Պլանի վերակացու Յովսէփ վարդապետ Խարազեանցի մօտից՝ սեր ու կարագով կշտացած և պիտի անցնէին դէպի անտառը պտտել՝ մարսել։ Դեռ 20—25 քայլ հեռուից Ղևոնդ վարդապետը ուրախ ուրախ ասաց. «Հայր Բարդուղիմէոս, լաւ հաւարած ես դարձել»։ Սիմէօնեանցը նորա կողքին թևով մշտեց։

—Ձարս ինչ, Մակարը Կաթուղիկոս և դուք նորա մերձաւորներ — խորհրդականներ, ինձ մնում է բաժին հաւարած լինել...

Հէնց այս իմ տառապանքի օրերում յանկարծ նամակով տեղեկութիւն եմ ստանում բժ. Գր. տ. Գրիգորեանից՝ որ Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցական Խորհուրդը դիմել խնդրել է Մ. Կաթուղիկոսին՝ նշանակել ինձ այնտեղ պաշտօնով։ Ոչ միայն չ'նշանակեց, այլ և խիստ գաղտնի էին պահում ինձանից այդ. ես էլ իհարկէ ոչինչ չէի ասում։ Կարապետ Եղեանը երկու անգամ նամակ է գրած լինում Էջմիածին Սիմէօնեանցին՝ որ յիշեցնէ և միջնորդէ Կաթուղիկոսին՝ Բարդուղիմէոս վարդապետին ուղարկելու համար, սա էլ նամակը տալիս է դիւանապետին՝ որ դնէ Կաթուղիկոսին մատուցուելիք թղթերի վերայ. դարձեալ ոչինչ, Մ. Կաթուղիկոսի վրէժխնդրութիւնը դեռ չի յագեցել։ Եղեանցի յիշեալ նամակների մասին պատմեց Սահակ վարդապետ Բաղդասարեանը՝ Մ. Կաթուղիկոսի մահից յետոյ։ 1895 թ. Մայիսին Ս. Պետերբուրգում Կ. Եղեանի հետ խօսակցութիւն ունեցանք այդ մասին։—Տփխիսի Առաջնորդ Մամբրէ եպիսկոպոսը պատահելով Էջմիածին՝ եկաւ ինձ մօտ, իմ յօժարութիւնը հարցրեց գնալ Տփխիս ս. Սարգսի վանահայր և Կոնստանդնուպոլսի Նախանդամութեան պաշտօններով. ապա դիմեց անձամբ խնդրեց Մ. Կաթուղիկոսին. բայց մերժումն ստացաւ։ Իմ այդ դառն վիճակում,—թէպէտ ես քաղցր վիճակ չեմ յիշում թէ ունեցած լինիմ,—դէպի ամենքը սիրալիր և կարեկից Երեմիա եպիսկոպոսը ինքնին յորդորում է իւր բարեկամ Պրոկուրոր Նիկողայոս տ. Յովսէփեանցին՝ միջնորդել Կաթուղիկոսին իմ դրութիւնը փոքր ինչ տանելի դարձնել. նա միջնորդում է, իսկ Կաթուղիկոսը պատասխանուն է—«Նորան այդ դէռ ինչ է, ը

նեղութիւններ էին պատճառում. վերջապէս մինչև անգամ շառ ու շուռ անելով փորձել էին մարդասպան դուրս բերել ինձ, այն ինչ մարդը—իմ վանքի գոմի ձմրան մշակը, Վանայ Ալիւր գիւղացի խառատ Աւետիսը, իմ վանքից մեկնելուց յետոյ երեք օր էլ մնացել գիշերել էր Պլանում, եղել էր Ձիւնական Թադէոս եպիսկոպոսի մօտ և Վեհարանում, ապա Խարազեանցը Նորան Հայրենակից մշակների հետ ճանապարհ էր ձգել իրենց Հայրենիքը։ Ես միամիտ, ոչնչից տեղեկութիւն չունիմ. Մ. Կաթուղիկոսը ինքը կոչում է Վաղարշապատի Գալաւայ—Տանուտէր Գէորգ Ղարիբեանին և ասում. «Պարոն Տանուտէր, ասում են թէ Բարդուղիմէոս վարդապետը իւր մշակին սպանել և ձգել է լիճը. վերցրէք մեր թուանքչիները և այլ մարդիկ և չանգալներով խուզարկէք լիճը՝ հանէք»։ Տանուտէրը պատասխանում է. «Վեհափառ տէր, Բարդուղիմէոս վարդապետը մարդ սպանող չէ, մի հաւատաք»։ Խեղճ Տանուտէր, կարծում է թէ Մ. Կաթուղիկոսը հաւատացած է ասում, չգիտէ որ նա ցանկանում է շաՀՀՀՎ տալ Բարդուղիմէոս վարդապետին, մի փորձանք բերել Նորա գլխին. լոկ անհասկացողութիւն չէ՝ որ Կաթուղիկոսը ոստիկանապետի պարտականութիւն է ուզում կատարել։ Տանուտէրը իհարկէ չի անում, մտածում է։ Ապա ես լսում եմ դրսէ դուրս միայն, որովհետև ինձնից ծածուկ էին պահում դեռ՝ մինչև մշակը սահմանը անցնէր գոնէ։ Մակար Կաթուղիկոսի ՆՀՄ շՀՀ-ին ազատուելու համար՝ շտապեցի ծախսեր արեցի՝ երկու մարդ—իմ քեռորդի Փիլիպպոս Բէկան-Բաղդասարեանցին և Մանուկ Քեալաշեանին ուղարկեցի Ցաճկաց սահմանագլուխը. խնդրեցի Գաւառապետին, սա էլ հեռագրեց Իգդիրու Գաւառապետին՝ որ երբ իմ ուղարկած մարդիկը գտնեն փնտրած մշակին՝ օգնէ վերադարձնելու Վաղարշապատ։ Երեք—չորս օրից հազիւ գտան բերին մշակին. նա ընկաւ երեսի վերայ դետին, ուզեց գոնէ ոտքերս համբուրել, արտասուեց, պատմեց և՝ ինչ որ չէի

լսել—չգիտէի՝ թէ ինչպէս սարքած են եղել իմ ստոր թշնամիները այդ զրպարտութիւնը։ Երեկոյ էր, մշակին տարան պահ տուին Տանուտէրին. հետևեալ օրը մի կողմից Տանուտէրը առած իւր հետ մշակին, միւս կողմից ես՝ ժամադրուած գնացինք Վեհարան, իմաց տրուեց Կաթուղիկոսին՝ որ Բարդուղիմէոս վարդապետը և Տանուտէրը մշակին ահա բերել են ողջ և խնդրում են ներկայանալ. վերադարձաւ դիւանապետը որի հետ և Ներսէս եպիսկոպոսը՝ ներսից, և մեզ պատասխանեցին. «լաւ, հաւատացինք որ մարդը ողջ է, թող գնան»։ Ես Ներսէս եպիսկոպոսին նկատեցի. «որպէս թէ նախ քան սորան այժմ ողջ տեսնելներդ համոզուած էիք թէ սպանել եմ»?!!

Ես Տանուտէրին խնդրեցի տանել՝ բայց պահել մշակին, մինչև օրինական քննութիւն կատարուի այս զրպարտութեան հեղինակներին պատժել տալու համար։ Խնդրեցի որ ես ներկայանամ Կաթուղիկոսին, խօսելիք և խնդիր ունիմ. երկու անգամ դիւանապետը և Հաճի Յակովբը մտան յայտնեցին, բայց Կաթուղիկոսը չընդունեց ինձ ներկայանալ։ Այնտեղ Կաթուղիկոսի Դիւանի գործավար Ռուբէն Մէլիք Ադամեանցը ասաց ինձ. «ինչ որ ունիք ասելու՝ գրէք և գրաւոր տուէք»։ Հէնց այնտեղ Վեհարանի դրսի դահլիճում նստեցի և գրեցի խնդիր Մ. Կաթուղիկոսի անուան, որով խնդրում էի թոյլ տալ ինձ՝ որ յանձնեմ քննիչին քննել և դուրս բերել այս անտեղի զրպարտութեան հեղինակներին։—Նոյն օրը իրիկնադէմին, Սպահանի Առաջնորդութիւնից արձակուած Գրիգորիս արքեպիսկոպոս Յովհաննիսեանը եկած էր ինձ այցելութեան՝ ծերունի Յովհաննէս եպիսկոպոսի հետ, թէյ էինք խմում. բերին ինձ Կաթուղիկոսի դիւանապետից նամակ, որով հաղորդում էր Կաթուղիկոսի բանիւ մի երկդիմի և նենգաւոր պատասխան։ Ցիշեալ եպիսկոպոսները ևս խելամուտ լինելով՝ խորհուրդ տուին չ՚շարունակել այդ գործը,

«ոչ-վիճակ՝ ինչ-ի ԸՆ Կալա-ինչոսի հոգը քարի չէ»...։ Տանուտէրին լուր ուղարկեցի՝ որ արձակէ մշակին գնալ։

«Հզօրաց հզօրագոյն դատաստան» (Սօղ.)։ Հազիւ մի տարի անցած՝ մեռաւ Մակար կաթուղիկոսը ի-ր ոչ-ին մահով։ Իսկ Խարազեանից ես վրէժխնդիր լինելու փոխանակ՝ փրկեցի նորան յատկապէս պատրաստուած անպատուութիւնից և պատժից, գիտէին Երեմիա և Սեդրակեան եպիսկոպոսները, ծածուկ չէ և միւս անդամներից. սակայն նա յետոյ իւր պատիժը ստացաւ Աստծուց, գտան նորան թելեթի վանքում գլուխը մուրճով ջախջախուած և ուղեղը յատակի վերայ ցրուած. «Իմ է վրէժխնդրութիւն և ես հատուցից», ասել է Աստուած։

Մակար Կաթուղիկոսը մեռաւ 16 Ապրիլի 1891 ամի։ Առ ժամանակ շունչ քաշեցի, պակասեց իմ վերայ այնքան խստութեամբ ծանրացող ձեռքը։ Կաթուղիկոսին ոչ-չ ինչ՝ նորա ձեռնասուն Սուք. եպիսկոպոսը ինչ-ին առաջին ձայն բարձրացնողն եղաւ Սինոդում և նշանակուեց ինձ սնունդ և ռոճիկ. սկսեցին հաճոյանալու ձգտել այնուհետև։ Նոյն թուի Հոկտեմբեր 16.ին ստանձնեցի Սինոդի անդամութեան այլ և ս. Էջմիածնի և Սինոդի Գանձապահութեան պաշտօնները. Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանը՝ Երեմիա եպիսկոպոսի (Տեղապահ) և իւր կողմից մի քանի անդամ խնդրեց որ համաձայնեցի։ Բայց հէնց վեց ամիս յետոյ, յանկարծ, երբ ես մոռուբ ի ոնոբոպ խղճով գործում էի անշեղ ուղղութեամբ, ոչ յաջ և ոչ յահեակ խոտորուելով *), 1892 թ. Ապրիլի 8.ին պաշտօնական հեռագիրը հաղորդեց Երեմիա եպիսկոպոսին՝ իմ պաշտօնանկութիւնը Սինոդի անդամութիւնից. առանց պատճառը ինձ կամ Սինոդին յայտնի լինելու մինչև ցայսօր։ Անդամութիւնից արձակուելուց յետոյ ևս շարունակէի վարել Գանձապահ-ինոն ուելի պոպոսիոնոպոս պաշտօնը՝ այլ ես երեք ամիս։ Ես կողմնակի և 8 ամիս յետոյ միայն տեղեկութիւն ստացայ՝ վրէժխնդրութեամբ եղած սուտ ամբաստանութեան մասին,

*) Այդ առանձին հեռաբբիը պատմութիւն ունի (ձեռագիրը)։

ամբաստանութիւն՝ որ Կայենի ոճիրից չարագոյնն է *)։ Այն օրից՝ ես տարապարտ տանում եմ պատուոյ և անհատականութեան ամենածայրայեղ զրկանքը։

Իսկ հայ ինտելիգենցիայն, արատաւոր գործեր արդարացնելու համար ոգևորուած ճառեր խօսող իրաւաբանները, մանաւանդ մեր անբարոյականացած մամուլը, — նորա՛նք, որ իբրև հայրենիքի դաւաճան ամբաստանուած՝ ինչպէս ինծնէլ Դրէյֆուսի յայտնի դատով ոգևորուում էին և դափնիներ հիւսում Զոլայի և Լաբօրիի տարած արդարութեան յաղթանակին,—խնամքով ծածկում են և լռում իրենց աչքի առաջ կատարուած մեծագոյն ոճիրի մասին։ Դէպ իմ աղաղակը և մահացու վէրքը խուլ են և անտարբեր՝ որպէս յերուսաղէմէ յերիքով անցնող տմարդի Ղևտացին. և գիտէք մանաւանդ թէ ով, ո՞ր տմարդին և ապերախտը՞...

Սակայն կայ մի յուրա մխիթարութիւն, որ համոզուած գիտակցում եմ թէ՝ ճշմարտութիւնը թէպէտ նահատակուում, բայց գոնէ չի մեռնում։

*) Սուտ և վրէժխնդրութեամբ ամբաստանողներիս շարժառիթներից մի քանիսը, իբրև նմուշ՝ տես «Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ» Բ. հատ. եր. 156—157, ծան. 2, և եր. 174—203։

ՅԱՒԵԼՈՒԱԾՔ

Ա. (Եր. 8)

պատճէն.

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Մկրտչի Սրբազնագոյն Պատրիարգ Կաթուղիկոսի ամենայն Հայոց,

ի միաբանէ սրբոյ Աթոռոյ Էջմիածնի

յայտարարութիւն.

Յերէկի ի սենեկի իմում, ի ներկայութեան Մեսրովբ սրբազան արքեպիսկոպոսի, գոհութեամբ իմն պատմեաց Յ. Տէր Եսայեանն թէ՝ Ներքին գործոց պ. Նախարարն, ի պատասխանի առաջարկութեանց Վեհափառութեան Ձերոյ՝ ի միջի այլոց գրէ. «Մարթ է կարգադրել, եթէ կամիք՝ զի օրագիրք Սինոդի ստորագրեսցին յԱնդամոց և նախ ի Պրոկուրորէն և ապա յետ այնորիկ մատուսցի ի ստորագրութիւն Նախագահի Սինոդի—ամենայն Հայոց Հայրապետի։ Յաւել Տէր Եսայեանն, որպէս ի մօտոյ տեղեակ ոք, թէ՝ գոհութեամբ հաւանութիւն գտեալ է և՛ աստ և՛ ի Տփխիս, իբր օգտակար իմն փոփոխութիւն օրինաց և կարգի։

Արդ, Վեհափառ Տէր, որովհետև խնդիրն վերաբերի բարձր իրաւասութեան Նուիրապետութեան Եկեղեցւոյ մերոյ, վասն որոյ և ես, իբրև տրուպն պաշտօնէից նոյն Եկեղեցւոյ, պարտ անձին համարելով համարձակիմ խոնարհաբար յայտնել այսու զիմ կարծիս՝ թէ աւելի՛ քան վտանգաւոր է այդպիսի փոփոխութիւնն, զոր կարծեն և կարծեցուցանեն իբր օգտակար։ Եւ յայդմ արդարացի այն առած հայկական. «Փոխանակ յօնքը շինելու՝ աչքն էլ կուրացնելոյ։—Զի եթէ ի ժամանակին թափուր կալոյ Հայրապետական Աթոռոյն արկին զԴիւանատունն Սինոդի ընդ իշխանութեամբ Պրոկուրորին, այժմ նոր փոփոխութեամբն՝ նպատակ ունին և՛ զգործառնու-

թիւն Ատենի Սինոդի արկանել ի նոյն վիճակ։ Եւ որ մեծն է.—Սինոդն հատանէ երբեմն վճիռ ինչ՝ որում անհամաձայն լինի Պրոկուրորն, որ ոչինչ կարէ առնել՝ բաց ի ստանալոյ զպատճէնն. սակայն նոր փոփոխութեամբն՝ Նախագահին Սինոդի մնայ ստանալ զպատճէնն...

Եթէ տակաւին մնայ ինչ բացատրութեան՝ թող հաճեսցի Վեհափառութիւնդ լսել զաղաչանս *)։

Բարդ. վարդապետ Գէորգեան.

Ի 4 Դեկտ. 1894 թ.
ի Ս. Էջմիածին։

Բ. (Եր. 15)

Ակամայ պատասխան *)

Գաբ. վ. Նահապետեանը իրաւունք ունի պարծենալու, որ կարող է «ստիպել» ինձ՝ մի վերջին անգամ ևս ակամայ պատասխանել։ Կը կատարեմ Սողոմոնի խրատը (Առակաց ԻԶ. 4—5)։

Յիսուս Իւր աշակերտաց համար աղաչեց Հօրը—«Սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ քով, զի քո բանդ ճշմարտութիւն է»։ Իսկ Աշակերտացը պատուիրել էր—«Եղիցի ձեր բան, այո՝ այո, և ոչն՝ ոչ. զի աւելին քան զայն ի չարէն է»։—«Սուտն ի հօրէ սատանայէ է» (Աւետարան)։— Կեղծն կամ կեղծողն էլ ստի եղբայրն է։

Վենետկի Մխիթարեան հարք Կ. Տէր Սահակեան և Ն. Անդրիկեան յաջորդաբար, մի զկնի միոյ գողացան իմ գրա-

*) Այդ փոփոխութեամբը, զոր ուրախութեամբ ընդունել էին և մեռում էր Կաթուղիկոսի համաձայնութեան թուղթը փոշոյ ձգել, Հայոց Հայրապետին չեզոքացնում էին Հոգևոր վարչութեան մէջ ներգործական մասնակցութիւն ունենալուց...

*) Հովիւի անբարեխիղճ խմբագիրը, իմ դէմ Գ. վ. Նահապետեանի՝ ծայրէ ի ծայր խեղաթիւրումներով և հայհոյանքներով լի յօդուածը տպեց հինգ—վեց համարներում, իսկ իմ պատասխանը վերադարձրեց ինձ անտիպ... Ստիպուած՝ այստեղ եմ պատասխանում։

կան վաստակների արդիւնքները, սակայն բռնուեցին։ Ինչպէս հրապարակական յանցանքը, այնպէս և հրապարակական կշտամբանքը և ամօթանքը խիստ ծանր էին (տես Հովիւ №, № 4, 9)։ Այն ինչ սպասւում էր թէ մեղադրեալները ինչ կ'ասեն, յանկարծ անկիւնից դուրս թռաւ և մէջ ընկաւ Գ. վ. Նահապետեանը՝ որպէս գիւղացոց մի ֆեոմֆէէ։ Բայց ինչով փորձեց պաշտպանել յանցաւորներին, ընթերցող,— կեղծելով, կեղծաւորելով, չհասկանալով մանաւանդ չհասկանալ ձևանալով, ճշմարտութիւնից փախչելով, պարզ խնդիրը աշխատելով շփոթել. և այդ իւր «բաց նամակը» կնքեց ձրի և անպէղի հայհոյանքով (տես Հովիւ № 11)։

«Ակամայ պատասխանով» (Հովիւ № 14) արձանագրեցի նորա այն կեղծութիւնները և զգացրի՝ որ «մաքուր մարդիկ չեն կեղծում»... և հէնց դորա համար էլ «անարժան է ուրիշ պատասխանի»։

Դորանից յետոյ նա դարձեալ գրեց (№, № 17, 18, 19, 21, 22, տես և 25)։ Այս անգամ արդէն պատկառանքի հետ գլուխն էլ կորցրած, հանդէս բերեց իւր բարոյական այլանդակութիւնը։— Պղնձի նման ղողանջում է Պողոսի խրատը, ինքը մնալով անխրատ։ Ցաւ է արտայայտում՝ որ «Կ. Տէր Սահակեանը, անփորձ երիտասարդութիւն, լուսնի շողով իջեր է ձեր (իմ) տունը գողութիւն անելու»։

—Արջի ծառայութիւն չէ։

Եւ Կ. Տէր Սահակեանի գողացածը՝ «եղէգն է, որ կոտրելով խրել է ձեռքը և արիւնոտել»։

—Հա՛, խաղողը թթո՛ւ է։

Կամաւ տգիտանում է, ասում է — «եթէ մինչև ցարդ չեմք ասուպի նման սահած գրական հորիզոնում, պատճառն եղել է մեր համեստութիւնը, տեղի տուել ենք մեզանից աւելի գիտնականներին»։

—Չի՞ զառանցում։ Ո՞ր գիտնականին կը խանգարէր Նա-

Հայրապետեանը՝ եթէ մի պիպանի բան ունենար ասելու և ասած լինէր...

Խոստանում է «պաշտպանել կրօնակիցներին գրական գողութեանց և ուրիշների վաստակը իւրացնելու մէջ»։ Եւ արդարև հաստատում է, հակառակ իւր ցանկութեան, «կրօնակիցների գողութիւնը»։ Մի մեծ մասն էլ կտուրն է ձգում։ Ինքն էլ գողանում է իւր բաժինը. օրինակ՝ իմ բացատրութիւնը, թէ՝ որն է Մեծամօրը...

Խոստանում է իմ «բարակափոր գրքերը մաղել». սակայն տեսանք՝ որ մաղիցը անցաւ Նահապետեանի գլուխը, առանց կարողանալու մի բառ, մի պառ գոնէ իմ գրածներից մաղելու։ Ի հարկէ մուկը եթէ յանդգնի երկաթ ծամել՝ իւր ատամները պիտի փշրէ։

Վերագրում է ինձ խօսքեր և մտքեր, զոր ես երբէք չեմ ասել. բայց իսկապէս ասածներս՝ խնամքով ծածկում է և խուսափում, կամ՝ խեղաթիւրում։

Ինչ որ խորհրդաւոր ակնարկներով վախեցնում է Ս. Էջմիածնի մասին. թւում է թէ սպառնում է Էջմիածինը տանել Զուարթնոցի տեղը։—Էջմիածնի դէմ ամբողջ չորս տարի նման արշաւանք կատարողների լեզուները այնպէս չեմ կտրել, որ Նահապետեանները կրկին փորձեն արշաւել *)։ Արշաւանքի այն չորս տարին՝ Մխիթարեանք չեն ձայնակցել արշաւողներին. սակայն դարան մտած՝ խորհրդաւոր լռութեամբ համակերպուել են նոցա։ Նահապետեանը ասում է թէ՝ Փափական Հայք «ժամասացութեան ժամանակ աղօթում են. Միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեայց»??։ Անդաստանի ժամանակ էլ երևի թէ ասում են—«Օրհնեսցի և պահպանեսցի... Հայրապետութիւն Հայոց»...

Ինքն իրեն անարգում է և դառնում «արտերու մէջ

*) Տես «Վաղարշապատը եւ Ս. Էջմիածինը իրենց սկզբնական տեղումն են». Մոսկուա, 1905։

ցցուած խրտուիլակ». այն ինչ ես, նայելով նորա կատարած դերին, նմանեցրել էի մարդ խրտուիլակի=խարտաւիլակ։

Կեղծում-կերպարանում է հեզ, միւս ծնօտն է դարձնում ապտակուելու։ Բայց մի և նոյն ստորնութեան մէջ՝ հայհոյում է թոյնը լեզուի տակ, թշնամանում է, յիշոցներ է տալիս ջհուդի ցինիկութեամբ։ Տղայամիտ սպառնալիքներ է կարդում. պարսատիկով է խօսում։ Մի խօսքում գոնէ չհրաժարուելով ժեզուիթական փեշակ ՝ՀԷՂԾԷԼՈՒ, ՊԷԼՈՒ, ՅԷՂՇՐՋԷԼՈՒ։ Եւ այսպէս նա փրփրում է՝ իբրև որսը փախցրած, շրթունքներն է կրծում, 'ի հարկէ որ այնքան ուժգնութեամբ պաշտպանել եմ իմ իրաւունքը, թոյլ չտալով որ Մխիթարեանք գողանան և իւրացնեն։ Միւս կողմից՝ պահանջում է որ «եպիսկոպոսը,—վարդապետը ոչ,—լինի հեզ, խոնարհ, չը բարկանայ, չը թշնամանի»։

Ախ, որպիսի սերտ նմանութիւն։ Ոչ շատ առաջ հէնց այդպէս ղազախներն էլ Ֆրէյլիխի առաջնորդութեամբ Վարանդայի հայ գիւղերին խրատեցին՝ թէ ինչու նոքա փոխանակ հեզ, խոնարհ դառներ լինելու, Բարկացել էին թաթարական ասպատակող հորդաների դէմ և պաշտպանել իրենց անձը, պատիւը, ՊԵՊՀՈՎՈՒԹԻՆԸ...

Անիրաւութեան քաջալերող և կուսակցող Նահապետեանների և ղազախների նման բռնաւորական ՈՒՈՐԴՈՒ բարկութեան համար է Պօղոսի խրատը—որ եպիսկոպոսը «մի՛ իբրև պիրելոյ վիճաբանի՝» իշխանասիրութեամբ, գոռոզութեամբ և ամբարտաւանութեամբ չ՝բռնանայ իւր ստորադաս եկեղեցական պաշտօնէից և հօտի վերայ։ Եւ ոչ թէ եպիսկոպոսը չինարար ՈՒՈՐԴՈՒԹԻՆ ՈՒՆԷԼ—«յանդգնանել, սաստել, մխիթարել»։—Նահապետեանները ըստ կամս յեղաշրջում են և ս. գրոց և մեր ս. հարց վարդապետութիւնները. մոլորւում և մոլորեցնում են տգէտներին։

Վայ այն մարդուն՝ որ անտարբեր է դէպի անիրաւութիւնը. ուր կը մնայ անիրաւութեան կուսակցողը։ Վայ նո-

բան՝ որ զուրկ է արդար բարկութեան ա-ա-ֆ-ֆ-ա-ա-ն-ից—մաքրութեան աստուածային կայծից։ Այդպիսիներին վաղ անուանում էին ֆարիսեցի, անցեալներում՝ ծեղ-ին, այժմ՝ խաչագող։ Դոքա արդար-ար բարկութիւնը ունին լիով յանձինս իւրեանց, այնինչ իսպառ թափուր են «բ-ա-ղ-ա» բարկութեան առաքինութիւնից։ Ախտաւոր սիրով գնացող պոռնկին՝ անհասկանալի պիտի լինի ընտանեկան սէրը. երկուսն էլ թէպէտ «էր» են կոչում։

Աստուածների և Եհովայի քստմնեցուցիչ բարկութեան մասին շատ գիտենք։ Գիտենք և որ Մովսէսը արդար բարկութիւնից՝ զարկեց Իսրայելի գլխին աստուածատուր պատգամաց քարեայ տախտակները և փշրեց։ Գիտենք՝ որ ամենախոնարհ Քրիստոսը ինչպէս խարազանեց, մտրակով դուրս քշեց «աղօթից տունը՝ այրս ա-ա-ղ-ա-յ շինողներին», կործանեց նոցա սեղանները իւր ձեռքով։ Գիտենք՝ թէ Սողոս-Պողոսը, իւր աշակերտ եպիսկոպոսին խրատ գրողը,—խրատ տալուց հետո ինչ կայ,—Անտիոքում ի՞նչ... թափեց Կեփաս-Պետրոսի գլխին, վերջնոյս կեղծելու, կերպարանելու, կեղծաւորելու համար (Գաղ. Բ. 9—21)։ Գիտենք՝ թէ մեր ս. Յուսիկ Հայրապետը, Ս. Լուսաւորչի թոռը, ինչպէս Տիրան մեր թագաւորի ձեռքից խլեց Յուլիանոսի պատկերը և յգէյ «ֆ-էրի ֆ-ոչ ֆ-ա-ն-ի-ն-ի-ց». և այլն, և այլն։

Տեսնում էք. սոքա Աստուածներ և կիսաստուածներ են։

Մինթէ գրական վաստակի սեպհականութեան իրաւունքը փո՞քը սրբութիւն է, քան Հրէից կամ մեր աղօթատունը։ Եւ ես ինչ արի, բացի գողօնքը,—թող կարծէ «եղէգն»,—և կեղծածները բռնելուց և գլխներին հարամ անելուց։ Ուրիշի իրաւունքը չյարգողների դէմ՝ աւելի խիստ միջոցներ արժան է գործադրել։ Գաբ. վ. Նահապետեանը եթէ մաքուր մարդ լինէր, պէտք է վրդովուէր յիշեալ Մխիթարեան հարց ա-ա-ֆ-ֆ-ա-ա-ն արարմանց դէմ, որոնք «լուսնի շողով մտել են ուրիշի (իմ) տունը գողութեան և բռնուել են». և ոչ թէ իրերապաշտպանութեան երամակն բնազդից տարուած՝ ատամները կրճտէր իմ դէմ և վայր ի վերոյ շաղակրատէր։

Նահապետեանը իւր պաշտպանողական և յարձակողական պատասխաններով՝ ողորմելի ձեռնածուի (աճպարար) տպաւորութիւն է թողնում, հեռու քննադատի կամ լուրջ հակառակորդի շնորհից։ Եւ ինչպէս կարող է այդպիսին քննադատ կամ ուշադրութեան արժանի հակառակորդ համարուել, քանի որ նորան պակասում են անաչառութիւն, անկողմնապահութիւն, նուրբ ըմբռնողութիւն և թափանցող միտք, յարուցուած հարցերին գիտակցութիւն և առողջ լոգիկայ. այլ որը, ընդհակառակն, օժտուած է արատաւոր կողմերով, օրինակ, ինչպիսի անպատկառութեամբ Հայհոյում է։ Ինչպէս Մ. Զերազի՝ իւր ամսաթերթում (L' Arménie 1903, 1-er Mars) գրած վկայածի (եր. 9) մասին սուտ ասում է—«գրած է եղեր չէ՞ի»։ «Զեմ սկանատես Բոլորին»—շինում է «չեմ ականատես Բոլորովին», որպէս զի խեղաթիւրելով մոլորեցնէ ընթերցողին։ Ես նախ փաստեր և թուեր բերելով ապացուցել եմ (տես Խոr. Խորենացվ. Բ. հատ. եր. 90—102) որ «Խոսրով սպանուել է 234 թուին, և Տրդատը թագաւորել է 241—242 թուին»։ Զոր Տէր Սահակեանը ուզեց գողանալ և իւրացնել ի միջի այլոց։ Ապա «ի հակառակէն ձեռնարկութեամբ» յառաջ բերելով Նեօլդէքէի, Գուրշմիդի, Գելցերի և այլոց մատնացոյց արած տարեթուեր և պարագայներ, և ըստ ինքնին ցոյց տուած թուերի՝ ասել եմ—«Տրդատ թագաւորել է... կամ առ առաւելն 255 թ. կամ 261 կամ 265 թ., զոր Փիրմելիանոս († 269—272) դարձեալ պատմագրել կարող էր»։ Այն՝ զոր սուտ աղբիւր էին համարում ամենքը, Գաթրճեանից սկսած, և Խորենացուն համարում էին կեղծող։ Բայց տգէտ կամ տգէտ ձևացող և կեղծող Նահապետեանը տեսանք թէ ինչ «կամէր» է առել և ընկել չօլերը, անտեղեակ ու միամիտ ընթերցողներին քարշ տալով իւր հետ։—Ես ասել եմ. «Հին Հռովմայեցոց և Յունաց մատենագիրների՝ Հայոց մայրաքա-

ղաք Արտաշատը՝ էր մեր Երուանդակերտը և Վաղարշապատը. իսկ Արտաշէս Բ.-ի շինածը, ուր է Խորվիրապը, էլլոր մի Արտաշատ է՝ որ անծանօթ էր յիշեալ օտար մատենագիրներին» (Խոր. Խորենացւոյ. Բ. հատ. եր. 132—154)։ Արտաշատից Դուին մայրաքաղաք վոխադրելու մասին՝ ես առիթ չեմ ունեցել մի քառ անգամ գրելու. այդ ասել են Խորենացուց սկսեալ մեր բոլոր հին ու նոր պատմագիրները, պատմութեան գասագրքերը և բանասէրները—Շամչեան, Ինճիճեան, Գաթրճեան, Ալիշան, Մ. Գարագաշեան, Ս. Պալասանեանց, և այլք. առանց մի հոպի բացառութեան։ Վերջին ասողն էր Հ. Կ. Տէր Սահակեանը։ Ահա սա, գողանալով իմ բացատրութիւնը, և որի վերայ յենուած ուզելով մի քայլ էլ յառաջ անցնել՝ գրեց, ի միջի այլ գողութեանց. «Խոսրով Բ. Արտաշատու տեղ իրեն մայրաքաղաք ըրաւ Դուինը. որու քով Խոսրովակերտ աւանը կանգնեց...։ Նա Վաղարշապատէն Դուին գնաց *), ինչպէս Կոստանդիանոս Հռովմէն Բիւզանդիոն» (Բազմ. 1905 թ. Դեկտ. երես 543—545)։ Սակայն գրական ձեռնածու Նահապետեանը, Դուինի շինութեան մասին անգիտանալով հանդերձ,—նա գիտէ, ճանաչում է մեծ Տաճար մայրի ուր և Տիկնունի հովանոցը և Խոսրովակերտ անտառները և նոցա վայրի գազան բնակիչները,—երկար վայրիվերոյ խօսքերի հետ գրում է. «Խորենացին Խորենացւոյ «նոր ը-սոբ-ռած անուանով գիւղ-պով Դուին փոխադրուած մայրաքաղաքի...։ Սրբազան, սիրտ կանէիք չէր հիշած մայրաքաղաքին (Խոսրովակերտ գազանանոցին) էպիսկոպոսը չինէր»...

Այսպէս անվերջ ճշգարարութիւններ է անում այդ անպատկառ Գ. վ. Նահապետեանը, որպէս զի իւր զրախօսութիւններով մոլորեցնէ միամիտ, անտեղեակ և տգէտ ընթերցողներին *)։

Կարիք չկայ որ մի առ մի առաջ բերեմ այդ ձեռնածուի բոլոր խծբծածները, կեղծածները, յեղաշրջածները, զրպարտութիւնները, խաբեբայութիւնները, ստելը, գողանալը՝ դարձեալ իմ բացատրութիւններից, «լուսնի շողով». այլ և ապիկարութիւնը արծարծուած խնդիրների հանդէպ։ Ուշադիր և միայն ձեռնհաս ընթերցողը դիւրաւ կը տեսնի ասածներիս ապացոյցներ նորա բոլոր խօսքերի մէջ. մանաւանդ երբ «ուղղամտութեամբ դիմացէ դիմաց բերէ իմ և նորա ասածները։

«Արտերու մէջ ցցուած խրտուիլակի» գլխին սուրը չեն իջեցնում կամ նորա հետ մենամարտում։ Բազէն իւր ոյժը չի լարում մի ըզէզ որսալու, որքան էլ վերջինը անհանգիստ անէր նորան։ Բայց միայն ընթերցողին ծանօթացնելու համար՝ այսքանը գոնէ պէտք էր։

Հովիւի խմբագիրը վերադարձրել էր ինձ յօդուածը, երբ նոյն օրը (16 Յուլիս) հասաւ ձեռքս Բազմավէպի տարեոյս Յուլիսի համարը։ Մխիթարեանց մի քանակ—չորս հոգի միաժամանակ գրոհ են տուել իմ դէմ Հովիւի և Բազմավէպի ընդարձակ էջերում, զինուած բամբասանքներով, հայհոյանքներով, խեղաթիւրումներով, կեղծելով, ստելով և զրպարտելով.

---

*) Բայց մեր բոլոր պատմագիրները և բանասէրները գրել են՝ որ Արտաշատէն, այն էլ Խորվիրապի՝ միակ Արտաշատէն գնաց Դուին... Չի՞ գողանում իմ բացատրութիւնը։

*) Գաբ. վ. Նահապետեանին մօտից ճանաչող՝ իւր կոլեգը Սարուխան՝ մի յօդուածում, Մշակ 1906 № 150, նորա մասին փաստերով գրում է.—«Հ. Գ. Ն... Հայ կաթոլիկ հասարակութեան մտքերը պղտորելու համար... յայտնի իրողութիւններ նրապարակաւ խեղաթիւրող... ի՞նչպէս խեղաթիւրում է մի յայտնի դէպք, որի մասին այդչափ կենդանի վկայներ կան... Բոլորովին անհիշող... դարձեալ անհնդութիւն, դարձեալ խեղաթիւրում... արդէն Հ. Գ. Ն. զառանցում է... խեղաթիւրած է միջնեւ անբարեխղճութեան ասիճան... ընկնում է մաշած դիմակը... պատուաւոր դատան մրթի տակից երևում է եկեղեցական ադուէսի մուշտակը... ի՞նչպէս է կարողանում նա այս ասիճան կեղծել... ստորնեկ ընդդիմախօս... Հ. Գ. Ն.-ի անբարեխղճութիւնը այն ասիճանի է հասնում, որ նա այս պարագայում էլ կեղծում է... եթէ չէ կարող ձեռ բաշել խեղաթիւրումներից, գոնէ զգուշանայ...»։

Ահա ի՞նչպիսի աբարած է այդ Նահապետեանը...

միշտ հաւատարիմ ժեզուիթական սկզբունքին — «նպատակի համար ամեն միջոց սուրբ է»...

Հ. Ն. Անդրիկեանի «ժպիs մը» պատասխանը՝ գողութեան մէջ բռնուածի ամօթանքի ժպիտն է ի Հարկէ։ Բացի այդ. Անդրիկեանի պաշտպանութիւնը իւր վերայ է առել Բազմավէպի ներկայ խմբագիր, — իւր արատաւոր բարք ու վարքովն՝ «իւր մերձաւորաց շրջանին և հեռաւորացս ծանօթ»,—Հ. Ա. Տիրոյեանը։ Սա, ի՜նչ ուղղածի պէս դէմ առ դէմ դնելով իմ և Անդրիկեանի բացատրութիւններից կտորներ, որոց մասին չէր խնդիրը, մոլորեցնում է անպատասխանատու և տգէտ ընթերցողներին՝ որ իբր թէ Անդրիկեանը չի գողացել. այնինչ գողութեան խնդիրը Խորենացու «գրիչ» բառի վերծանութեան և բացատրութեան մէջ է, այն՝ զոր Հայկական բառգրքերը և բոլոր բանասէրները հասկանում էին «ՈՐ ԲՈՒՍԾ ԲԱՆ ԿԱՄ ԾԻԼԸ. «ԱՆԾԱՆՕՂ ԲԱՅ ԻՆՉ».— ուղղական հոլով։ Ե՛ս եմ առաջին անգամ ցոյց տուել և բացատրել թէ՝ «գրիցը» – պէտ բառն է...։ Իսկ Անդրիկեանը երեք տարի յետոյ՝ գրեց—«Ե՛ս կարծեմ ԼԷ ՂՐԻՑԸ՝ պէտ բառն է»։ Ահա այսքան աշկեար գրական գողութեան հետ՝ և՝ ուրանալ աշխատելու աներեսութիւնն ունին այդ Մխիթարեանք։

Իսկ Հ. Կ. Տէր Սահակեանի, ինչպէս և Հ. Ն. Անդրիկեանի, գրական գողութեանց մասին ինչ որ գրել եմ Հովիւի մէջ (№, № 4, 9), մնում են անխախտ իրենց զօրութեան մէջ։ Ապարդիւն ջանք է անում Տէր Սահակեանը՝ պատիպատ պատճառանքներով և հարցը մլնոյնելով արդարանալ։ Եւ այն որ ասում է իբր թէ ես և ես ուրիշների բացատրութիւններ իւրացրած լինիմ—քա՛ւ լիցի. դա անպատկառ սուտ է, ստորնագոյն զրպարտութիւն, վայել միայն Մխիթարեանց գրական գողերին։ Ես ինչ որ առել եմ ուրիշից, ոչ մի անգամ չեմ համարել իմը, միշտ ցոյց եմ տուել տերը և տեղը։—Գալանոսի կամ Լըքիէնի կարծիքը Արտաշատի մասին՝ գիտեմ Ինճիճեանից, և այն չափով միայն։ Ինճիճեանը մերժել է նոցա

կարծիքը. իսկ ես՝ և՝ նոցա և՝ Ինճիճեանի կարծիքները հերքելուց յետոյ, դրել եմ իմ եզական կարծիքը, զոր «լուսնի շողով» գողանալ հրապարուեց Տէր Սահակեանը։—«Խոսրովից յետոյ թագաւորող Արտաւազդ և Կոստանդիանոսի ժամանակակից ոմն Տրդատ, ըստ արտաքին պատմիչների, որը և Հռոմի գնացած» գրելու համար յայտնի է որ օգտուել եմ Գար. Քնն. պատմութիւնից։—Տրդատի թագաւորելու և մեր քրիստոնէութեան դարձի՝ Տաշեանի և Գութշմիդի ենթադրած թուականները՝ գիտեմ Արշ. Տէր Միքէլեանի գրածից—«Խոսրովի մահը չենք կարող 238-ից ուշ դնել... Խոսրովի մահից յետոյ Արտաշրի տիրապետութիւնը 27 տարի (Խոր. II Հէ.) հաշուելով, կ'ստանանք առ առաւելն 265 թուականը՝ Տրդատի թագաւորութեան հիմնական սկիզբը։ Աւելացնենք զորա վերայ և Գրիգոր Լուսաւորչի չարչարանքների 15—17 տարին—կունենանք 280—282 թիւը Հայոց գարձի և քրիստոնէութիւն։ (Տես և Հ. Յակոբոս Տաշեանի Թիւը Հայոց գարձի և քրիստոնէութիւն։ (Տես և Հ. Յակոբոս Տաշեանի հետազօտութիւնը «Ագաթանգեղոս առ Գէորգայ ամանրամաղնին

շեան՝ ողջ են, ունին իմ քրքերը, կ'ուղարկեմ նոցա և՝ այս գրքից մ՝ մ՝ օրինակ։ Բարոյական պարտականութիւն է նոցա, մանաւանդ թէ պահանջում եմ՝ որ ասեն հրապարակաւ թէ՝ իրենց որ կարծիքը կամ բացատրութիւնը ի-բոյրել է։ Լռութեան դէպքում՝ համաձայնած կը լինին որ իրենց «կրօնակից» գրական գողերը և նոցա «խրտուիլակ» պաշտպանները՝ և՝ ղրպարտիչներ են, ինչպէս ես արդէն ճանաչեցի և ճանաչեցրի ընթերցողին։

Մխիթարեան հարք գրական գողութեանց և կեղծիքների մէջ բռնուելուց յետոյ՝ ոչ միայն ուրանում—լղում են «դիպողութեանց հանձարեղ և համոզիչ շարժերը» և միւս վկայութիւնները, այլ և իբրև բարոյական սնանկներ՝ դիմում են, en revanche, բամբասանքի և զրպարտութեան։ Այդ արդէն պարտուածի վերջին հառաչանքն էր զոր լսեցրին։

Եւ Մխիթարեանց ձեռագրական և մատենագրական խարդախութեանց մասին՝ ինչու մոռանում են, օրինակ, Մատթէոս Կաթուղիկոսի, Կար. Վ. Շահնազարեանցի, Սրշ. Տէր Միքէլեանի, Գօշի (Նոր-Դար 1901) և այլոց մերկացումները։ Ես ևս կը յաւելացնեմ այդ մերկացումների թիւը, եթէ, ինչպէս ասել եմ, Մխիթարեանց Գերապայծառը այդ կը խնդրէ, այլ և պատուաւոր խօսք կը տայ՝ նոյնութեամբ տպագրելու իրենց Բազմավէպ ամսագրում։

Բարդ. եպիսկ. Գ. Ծուղուրեանց.

Յ. Գ. Գար. վ. Նահապետեանի ինձ առաջարկելուց յետոյ (Հով. № 19), գրեցի Խոսրովակերտի բնակիչներին և հարցրի նորանց հաճութիւնը, որովհետև Առաջնորդները մեզանում ընտրութեամբ են լինում։ Նոքա մխիթարուելով հանդերձ որ Նահապետեանը իրենց սէրը չի մոռացել, պատասխանում են.—«Մենք արջ, գայլ, խոզ, կուզ և աղուէս՝ է քնէ որսացողներ, յափշտակողներ և գողեր ենք, իմ ու քոյ չգիտենք։ Մեր այս փոշետեսակ մեղքերը քաւելու համար մեզ վռակել են այստեղ՝ այսքան երկար դարեր։ Դուք Լուսաւորչական

ներդ Քաւարանի վարդապետութիւնը չընդունելէ զատ, լսած ենք և կարդացել ձեր մասին, Սրբազան, որ գողութիւնը յանցանք էք համարում և դատապարտում. ուստի ձեր անյարմարութիւնը մեր մայրաքաղաքին՝ ակներև է։ Մեր բնոյթին և սովորութեանց յարմար են Փափի պրօպագանդայի հայ գործակալ որսացող Մխիթարեանց Գերապայծառը, Նահապետեանն էլ իբրև նորա փոքրուոր. «նմանն զնմանն սիրէ», նոքա էլ մեր աշխարհայեացքն ունին գողութեան և յափշտակութեան մասին։ Սպասում ենք նոցա»։

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եր.	տող.	սխալ.	ուղիղ.
3.	10.	չարի լոյսի	չարի, լոյսի
7.	23.	1894 Թ.	1895 Թ.
15.	17.	յայտնի մէկը··,	յայտնի մէկը ··›
30.	16.	յիշատակած	յիշատակաց
33.	19.	բաձատրութիւնը	բացատրութիւնը
38.	9.	նամանակով	նամակով
39.	30.	Սիրզա	Միրզա
43.	2.	հրաժարուել է և	հրաժարուել և
55.	20.	պատարագը	պատարագը
67	15.	980 դէզ	870 դէզ
88.	32.	Գավառապէին	Գաւառապետին
90.	34.	յայտնել իմ	յայտնել եմ
92.	1.	ակմ	ամի
120.	7.	Ախալցխայի Ց.	Ախալցխացի Ց.
137.	16.	գահընկից	գահընկեց
140.	26.	յԱամրատ	յԱմարատ
150.	3.	յիշեայ	յիշեալ

Կան և՛ մուրը լաւ չ՚առած տառեր.—

Եր.	տող.	
6.	2.	Լուր աշխատակից
10.	1.	առնչութիւն չ՚ունէր
43.	1.	Վճռել էի
47.	31.	Համեմատ կտաւ
18.	16.	«վարժապետների
»	18.	չ՚տաք›

ԲԸԲՊ. ԵՊԻՍԿ. Գ. ՃՈՒՂՈՒՐԵՑՆԾԻ

	Ր.	Կ.
1. Խորենացուն Խորենացո՛վ պէտք է հասկանալ. Ա. հատոր.	—	50
2. Խորենացուն Խորենացո՛վ պէտք է հասկանալ. Բ. հատոր	1	—
3. Վաղարշապատը եւ Ս. Էջմիածինը իրենց սկզբնական տեղումն են (տակառամէջ) . .	—	20
4. Ճշմարտութիւնը չի մեռնում	—	50

Գումարով գնողներին 25% զիջումով

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊԵԿ

Շուտով լոյս կը տեսնի

5 Խորենացին է Մնացորդաց գրքերի առաջին հայ բարգմանողը Ասորական հին բնագրից—Թարգումից . . . . . — —

Դիմել Տփխիսի և Երևանի գրավաճառներին, կամ Ս. Էջմիածին՝ Հեղինակին։

«Ազգային գրադարան»
NL0170100